21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

3 (31)

ԵՐԵՎԱՆ

2010

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **3 (31), 2010**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան (համակարգող)
Արա Մարջանյան
Բենեդեկ Ժիգմոնդ
Կարեն Վ. Կարապետյան
Մուշեղ Լալայան
Սերգեյ Գրինյան
Սևակ Սարուխանյան
Տիգրան Սարգսյան

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գագիկ Հարությունյան
(գլխավոր խմբագիր)
Սևակ Սարուխանյան
(գլխ. խմբագրի տեղակալ)
Աննա Ժամակոչյան
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Гагик Арутюнян (координатор)
Ара Марджанян
Бенедек Жигмонд
Карен В. Карапетян
Мушег Лалаян
Севак Саруханян
Сергей Гриняев
Тигран Саркисян

РЕДАКЦИЯ
Гагик Арутюнян
(главный редактор)
Севак Саруханян
(заместитель гл. редактора)
Анна Жамакочян
Лусине Баграмян
(ответственный секретарь)
Рубен Мелконян
Тигран Арутюнян
Хонарик Караугланян
(ответственный редактор)
Эдуард Даниелян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Զարգացման ռազմավարություն և աշխարհաքաղաքական սցենարներ 3

Արա Մարջանյան
ՌԵՆԴ կորպորացիան և մենք. Հայաստան - Թուրքիա հարաբերությունները 14

Արծրուն Հովհաննիսյան
Ավիացիոն բեռնափոխադրումները Հայաստանում 46

Աշոտ Մարկոսյան, Ռուբեն Ղանթարչյան
Կրթական համակարգի դերը տնտեսության զարգացման գործընթացում 56

Թամարա Վարդանյան
Վրաստան. ինքնությունը քաղաքական ծրագրերում և գործողության մեջ ……..…… 87

Լևոն Հովսեփյան
Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի ռեֆորմները եվրաինտեգրման քաղաքականության համատեքստում 111

Հուշագիր հեղինակին 128

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐ

Գագիկ Հարությունյան[*]

Հայ-թուրքական վերջին զարգացումները և Մեծ եղեռնի 100-ամյակի տարելիցի մոտեցումը առիթ հանդիսացան նորովի դիտարկելու Հայության ներկայիս հիմնախնդիրները, անդրադառնալու մեր քաղաքական պատմությանն ու հնարավոր հեռանկարներին: Նման միտումները խիստ ակտուալ են, քանի որ և՛ մեզանում, և՛ մեզ շրջապատող աշխարհում ընթանում են փոփոխություններ, որոնք թելադրում են մշակել նոր իրողություններին ադեկվատ ռազմավարություն: Ցանկալի է, իհարկե, որ ազգային հիմնահարցերի շուրջ քննարկումները կրեն շարունակական բնույթ. դեռևս 19-րդ դարում անգլիացի մտածող Ջոն Սթյուարտ Միլն արտահայտվել է այն ոգով, թե հիմնարար սկզբունքների շուրջ լուրջ բանավեճերի բացակայությունը կազմալուծում, աղճատում է անգամ այդ նույն հիմնարար գաղափարները, և նման պնդման հետ դժվար է չհամաձայնել: Ակնհայտ է, որ առանց նոր մոտեցումների՝ համահայկական հիմնախնդիրների (իսկ դրանց թիվը մեծ է) լուծումն առնվազն վիճահարույց է: Փորձենք համառոտակի անդրադառնալ դրանցից մի քանիսին:

Սփյուռք. ավանդույթներ և նոր հրամայականներ

Սփյուռքում տիրող իրադրությանն անգամ հպանցիկ ծանոթությունից հետևում է, որ առանձին հաջողությունների հետ մեկտեղ այդ ոլորտում ունենք լուրջ հիմնախնդիրներ և կորուստներ: Ընդհանուր տպավորությունն այնպիսին է, որ գոյատևմանն ուղղված «հայկական գաղութների» ռազմավարությունն այսօր բավարար չէ, որպեսզի հայ համայնքներին նետված բազմաբնույթ մարտահրավերներին տրվեն արդյունավետ պատասխաններ: Նախկինում ընդունված կացութաձևն այժմ կազմալուծվում է տարաբնույթ արտաքին և ներքին գործոնների ազդեցության հետևանքով, ու մեղմել, կամ առավել ևս՝ արգելել այդ ազդեցությունները՝ գրեթե անհնար է: Գաղտնիք չէ, որ այդ իրողությունները մասամբ բնորոշ են նաև հայաստանյան (ՀՀ, ԼՂՀ և Ջավախք) իրականությանը:

[*] «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն:

Կարելի է արձանագրել, որ ստեղծված իրադրությունը հասունացել է, որպեսզի հայկական ընտրանին փորձի վերիմաստավորել ավանդական դարձած ինքնակազմակերպման ընտանեկան, համայնքային, կուսակցական, կրոնական ձևաչափերը և փորձի մշակել ազգային նոր հայեցակարգեր: Սակայն եթե նշված ուղղություններով իրոք կատարվեն քաղաքական ինովացիաներ, ապա պետք է խուսափել «քանդենք հինը, կառուցենք նորը» բոլշևիկյան կարգախոսի կիրառումից (հատկապես, երբ դեռ «նորի» վերաբերյալ պատկերացումներն աղոտ են, և երբ դեռ չեն ձևավորվել նորին անցնելու անհրաժեշտ նախապայմանները): Նման թվացյալ (*քվազի*) հեղափոխական մոտեցումներն առաջացնում են, այսպես կոչված, «խզումներ» ազգային հոգևոր ու մտավոր ոլորտում, որոնք և արգելակում են հանրության առաջընթացը:

Մասնավորապես, այսօր կարելի է լսել կարծիքներ, թե Ցեղասպանության խնդիրն արդեն իրեն «սպառել» է, և ժամանակն է Հայությանը համախմբել ոչ թե «անցյալի ողբերգական» դեպքերի, այլ «այժմեական և պոզիտիվ» գաղափարների շուրջ: Նման հարցադրումը, անշուշտ, դիլետանտական է. պետք է հստակ տարանջատել ազգային հիշողության խնդիրը, միջազգային ճանաչման քաղաքական գործընթացները և նոր, համահայկական նախագծերի ձևավորումն ու իրագործումը:

Հոգևոր տեսանկյունից Ցեղասպանության և հայրենազրկության (գուցե ավելորդ չէ միջազգային շրջանառության մեջ դնել «դեպատրիացիա»[1] եզրը և, «գենոցիդին» զուգահեռ, տալ դրա քաղաքական-իրավաբանական գնահատականները) իրողությունն ազգային գիտակցության մասն է կազմում և, համաձայն այդ սահմանման, քննարկման առարկա չի կարող լինել (եթե, իհարկե, տոտալ չկիրառվեն մանիպուլյատիվ տեխնոլոգիաներ): Նկատենք նաև, որ հոգեբանական տեսակետից էլ այդ ողբերգության հիշողությունը պարունակում է հատուցման գործողությունների դիմելու շարժառիթ (մոտիվացիա), և դրա արտահայտություններից մեկը Ցեղասպանության միջազգային ճանաչման քաղաքական գործընթացն է:

Ցեղասպանության ճանաչման խնդիրը

Այս գործընթացը Հայության համար ոչ միայն բարոյական, այլև քաղաքական նշանակություն ունի: Միջազգային հանրությունում խնդրի նկատմամբ ձևավորված մոտեցումներն անդրադառնում են Թուրքիայի և, մասամբ, նրա դաշնակից Ադրբեջանի «վարկանիշի» վրա՝ նրանց որակելով որպես «գենոցիդոգեն» երկրներ: Այդպիսով, Ցեղասպանության միջազգային ճանաչումը թուրք–ադրբեջանական հնարավոր ոտնձգությունների տեսանկյունից յուրօրինակ զսպաշապիկ է և բարձրացնում է Հայաստանի ազգային անվտանգության մա-

[1] Որոշ հետազոտողներ առաջարկում են «պատրիցիդ» տերմինը:

կարդակը: Այդ գործոնը լրացուցիչ հիմնավորում է նաև մեր դիրքորոշումը ԼՂՀ խնդրում վարվող բանակցություններում, իսկ հայ-թուրքական վերջին դիվանագիտական զարգացումներում խնդրի միջազգային արծարծումը որոշակիորեն նպաստեց ՀՀ վարած քաղաքականությանը: Նկատենք նաև, որ Ցեղասպանության ճանաչման գործընթացի ածանցյալները՝ մշակութային ժառանգության պահպանման հարցերը և առանձին գույքային-նյութական արժեքների վերաբերյալ դատավարությունները, ինչպես հայտնի է, բավական արդյունավետ են և արժանի են հատուկ ուշադրության:

Միևնույն ժամանակ, առայսօր Ցեղասպանության քաղաքական գործոնն առավել օգտագործվում է այլոց կողմից: Օրինակ, ԱՄՆ նախագահի կողմից այդքան սպասվող «գենոցիդ-ցեղասպանություն» բառն արտասանվել է, ինչպես հետևում է Հ.Նահապետյանի հոդվածից [1], դեռևս 1981թ. ապրիլի 22-ին: Հոլոքոստի հիշատակի օրվա առիթով թիվ 4838 նախագահական ելույթի տեքստում Ռոնալդ Ռեյգանը նշել է. «Հոլոքոստի դասերը չպետք է մոռացվեն, ինչպես չպետք է մոռացվեն Հոլոքոստին նախորդած Հայերի ցեղասպանությունը և հաջորդած Կամբոջայի ցեղասպանությունը...»: Նման հայտարարությունն ակնհայտորեն ենթարկվում էր Սառը պատերազմի տրամաբանությանը և ուղղված էր ԽՍՀՄ-ի դեմ, քանի որ խորհրդային տարիներին Հայաստանում (ինչպես նաև այլ հանրապետություններում) ծայր առած ազգային շարժումների աջակցումը բխում էր Միացյալ Նահանգների ազգային շահերից[1]: Ներկայումս իրավիճակն այլ է, և մոտ ապագայում ԱՄՆ նախագահը դժվար թե արտասանի «գենոցիդ» բառը, քանի որ դա առայժմ հակասում է այդ տերության ներկայիս քաղաքականությանը:

Սակայն հասկանալի է նաև, որ եթե անգամ ողջ աշխարհն ընդունի Ցեղասպանության փաստը, ապա դա դեռ ամենևին չի նշանակում, թե Արևմտյան Հայաստանը կվերադարձվի Հայությանը և անգամ նման պարագայում կլուծվեն մեր բոլոր խնդիրները: Այդ հարցում, թերևս, պետք է հրաժարվել հրեականության նախադեպի գերագնահատումից. Գերմանիայի կողմից Հոլոքոստի ընդունումը և ռեպարացիաների կատարումը պայմանավորված էին այդ երկրի պարտությունով՝ դաշնակիցների զորքերը կանգնած էին Բեռլինում, իսկ Նյուրնբերգում ընթանում էր հայտնի դատավարությունը: Նկատենք նաև, որ հրեաներն իրենք էին «նախապատրաստել» իրենց պետության ստեղծումը տասնամյակներ տևած մտավոր-գաղափարախոսական և կազմակերպչական-տնտեսական նպատակաուղղված աշխատանքով: Մեր պարագայում անգամ Թուրքիայի կողմից Ցեղասպանության փաստի ընդունումը (սա ավելի

[1] Ինչպես հայտնի է, Ղարաբաղյան հակամարտությունում հաջողության հասնելը պայմանավորված էր Երկրորդ Հանրապետությունում շարունակական ազգային շարժման առկայությամբ և, այդ համատեքստում, արդարությունը պահանջում է նշել, որ ազգային խնդիրներում «դրսից» ստացվող աջակցությունը, որքան էլ փոքր լիներ, համընկնում էր նաև մեր ազգային շահերին:

քան տեսական տարբերակ է և չի առնչվում այդ երկրի առնվազն ներկա իշխանությունների հետ), ամենայն հավանականությամբ, կընդունի մոտավորապես այն ձևը, որին ականատես եղանք, երբ Սերբիայի պառլամենտը զղջում արտահայտեց Բոսնիայի բնակչության դեմ կատարված գործողությունների կապակցությամբ: Անկարան կհամաձայնի փոխհատուցումների միայն այն պարագայում, երբ կունենա կազմալուծված երկրի կարգավիճակ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, ընդհանուր առմամբ դրական նշանակությամբ հանդերձ, ունի արդյունավետության որոշակի սահմանափակումներ և չի կարող վերջնանպատակ ծառայել Հայաստանի և Հայության համար: Այլ խոսքերով, եթե Ցեղասպանության փաստը համընդհանուր ճանաչվեց, ապա խիստ մշուշոտ է, թե ինչպիսին պետք է լինի դրանից հետո Հայության քաղաքական ռազմավարությունը: Հարցին հստակ պատասխան չունենալը վկայում է, որ առայժմ հայ հանրությունում բացակայում են անհրաժեշտ ռազմավարական մտածողության և ռազմավարական պլանավորման ռեսուրսները, մինչդեռ նման ընդհանրական ռեսուրսների չափն անմիջականորեն կապված է Ազգային անվտանգություն (ԱԱ) հասկացության հետ:

Ազգային անվտանգության արդիական մեկնաբանություններ

Այսօր ԱԱ հասկացությունը ենթարկվում է վերափոխումների և, ի լրումն անվտանգության ապահովմանն անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ նախկին պատկերացումների, ԱԱ գլխավոր չափանիշներից են դարձել հանրության գաղափարախոսական դաշտի կայացումը և զարգացման կարողությունը [2-4]: Վերջինիս համատեքստում, մասնավորապես, ընդունվում է, որ նախկինում արդյունավետ համարվող «մարտահրավեր-ադեկվատ պատասխան» ԱԱ համակարգն արդի պայմաններում արդեն բավարար չէ, և միայն այդ սկզբունքի կիրառումը կարող է անգամ փակուղի տանել[1]: Նոր մոտեցումները ենթադրում են, ըստ Ալ.Վլադիմիրովի հիմնարար աշխատության, որ «զարգացման և անվտանգության համաձայնեցման պարադիգմը հնարավոր է իրագործել «անվտանգություն՝ զարգացման միջոցով և զարգացում՝ անվտանգության միջոցով» սկզբունքի դիալեկտիկայով»: Նման մեթոդաբանությամբ դիտարկելով անվտանգության խնդիրները՝ կարելի է հանգել ոչ այնքան բարդ եզրահանգման, թե զարգացման գործընթացի (այսինքն՝ անվտանգության) հիմնական

[1] Այս առիթով նկատենք, որ «մարտահրավեր-ադեկվատ պատասխան» ԱԱ դասական սկզբունքը փոքր- ինչ կրավորական ձևակերպում ունի և կարծես թե չի ենթադրում մրցակիցների հանդեպ պրևենտիվ «մարտահրավերի» ձևավորումը: Ինչպես հայտնի է, ԱԱ այդ սկզբունքը զգալիորեն «խմբագրվեց» համեմատաբար վերջերս, Բուշի վարչակազմի օրոք, երբ հայեցակարգային մակարդակով մշակվեց և իրագործվեց «հիպերպրևենտիվ» դոկտրինը, որի արտահայտությունները հանդիսացան Աֆղանստանի ու Իրաքի ռազմական կամպանիաները:

«պատասխանատուն» կամ, այլ խոսքերով՝ *կրիտիկական ենթակառուցվածքը,* մարդը և մարդկային հանրությունն են, որոնց զարգացման (մեր մեկնաբանությամբ՝ կազմակերպման, գիտելիքների ձեռքբերման և դրանց կիրառման ունակությունների) մակարդակն է, որ պայմանավորում է ազգ-պետության անվտանգությունը: Այստեղից հետևում է նաև, որ զարգացումը ռազմավարության արտահայտություններից է, որը ենթադրում է և՛ «փոքր քայլերի», և՛ «թռիչքային» («փոքր քայլերով» ձեռքբերումների կրիտիկական քանակի կուտակումից հետո) ռազմավարություն, ինչն էլ, համաձայն չինական դասական սահմանման, ապահովում է «ապագայի նվաճումը և նրա օգտագործումը սեփական շահերին համաձայն»: Կարծում ենք նաև, որ այդ համատեքստում ընկալվող զարգացման ռազմավարությունը պետք է վերաճի գերակայող ազգային գաղափարի:

Վերոնշյալի համատեքստում դիտարկելով Հայության և Հայաստանի ապագայի խնդիրները՝ պետք է արձանագրենք, որ զարգացման տեսանկյունից ունենք լուրջ հիմնախնդիրներ: Հայտնի է, որ Հայաստանի մտավոր ներուժը վերջին քսանամյակում որակապես նվազել է, իսկ ոլորտի զարգացման նախագծերն առայժմ մեծ լավատեսություն չեն ներշնչում և, ի լրումն, տեսական բնույթ են կրում: Մինչդեռ պետության ինստիտուցիոնալ կարևոր կառույցները պետք է լինեն ռազմական և գիտական համակարգերը, ու եթե առաջինը Հայաստանում կայացել է, ապա երկրորդի առնչությամբ ունենք բազում խնդիրներ: Հատկանշական է, որ, այսպես կոչված, ռազմավարական հետախուզության թիվ մեկ խնդիրն է գնահատել պայմանական հակառակորդի գիտատեխնիկական ռեսուրսները, որի ներքո առաջին հերթին հասկացվում են գիտելիք և տեխնոլոգիաներ կրող անձինք [5, c. 27]: Համարվում է, որ մնացած ոլորտները (բանակ, արդյունաբերություն, ֆինանսական համակարգ և այլն) գիտատեխնիկական ներուժի ածանցյալներն են:

Առավել վատ են գործերը Սփյուռքում, որտեղ դեռևս չեն ձևավորվել ազգային շահերին ծառայող գիտության անհրաժեշտության գիտակցությունը, համապատասխան մտածողությունը և մշակույթը[1]: Ինչպես հայտնի է, արտերկրում գործում են հայկական հազարավոր հասարակական-քաղաքական կազմակերպություններ, որոնք, սակայն, գիտակրթական ոլորտին սակավ են անդրադառնում (նկատենք, որ սփյուռք ունեցող այլ ազգեր գիտակրթական գործունեությունը հովանավորող բազմաթիվ հիմնադրամներ են ստեղծել): Այդ համատեքստում ամրագրենք նաև, որ առայժմ բացակայում է «ազգային կապիտալ – ազգային գիտություն» գիտակցված կապը, ինչն անհրաժեշտ պե-

[1] Այս երևույթը բնորոշող օրինակ կարող է ծառայել հետևյալը. ամերիկահայ Գաֆեսճյանի աջակցությամբ ՀՀ-ում ստեղծված ջրածնային էներգետիկայի խնդիրներով և վառելիքային մարտկոցներով զբաղվող *«H2 ECOnomy»* լաբորատորիան, որն իր տեսակի մեջ միակն էր տարածաշրջանում, արդյունավետ գործելով շուրջ 8 տարի՝ վերջերս փակվեց «ցածր եկամտաբերության» պատճառով:

տական ռեսուրսների բացակայության պայմաններում կարող էր մասամբ մեղմել իրավիճակը (այդ առումով Հայաստանում բացառությունների թվում է *ARG* (ՀայՌուսգազարդ) ընկերությունը, իսկ Սփյուռքում, թերևս, *Գալուստ Գյուլպենկյան հաստատությունը*)։ Շեշտենք, որ այստեղ չենք դիտարկում համայնքային ու կիրակնօրյա դպրոցների խնդիրը, որոնք առավել հայապահպանական ուղղվածություն ունեն և սակայն այդ առումով էլ այսօր բավական ճգնաժամային իրադրության մեջ են հայտնվել։

Ըստ մեզ, վերոնշյալ ռազմավարական թերացումը պայմանավորված է ոչ թե նյութական միջոցների հարաբերական սակավությամբ[1], այլ նրանով, որ հայկական ընտրանու առօրյա կենցաղային աշխարհընկալումները դեռևս չեն վերաճել ազգային աշխարհայացքային մոտեցումների։ Հաճախ որպես գերխնդիր ընկալվում է միմիայն Ցեղասպանության ճանաչման գործընթացը, որի լոբբինգի վրա, օրինակ՝ ԱՄՆ-ում, ծախսվում են բավական մեծ միջոցներ, արտակարգ նշանակություն է տրվում եկեղեցիների, հուշարձանների կառուցմանը։ Անվիճելի է, որ այդ ամենը խիստ կարևոր է, սակայն, դրա հետ մեկտեղ, անուշադրության է մատնվում ամենաառաջնայինը՝ մարդկային կապիտալի ձևավորումը և զարգացումը, այսինքն՝ վտանգվում է մեր ազգային անվտանգությունը։

Միևնույն ժամանակ, այստեղ հիմնավորված է այն հարցը, թե ինչպիսի հեռահար նպատակների պետք է ուղղված լինի Հայության զարգացման ազգային ռազմավարությունը։

Հնարավոր աշխարհաքաղաքական տեղաշարժեր

Նորագույն պատմությունում Հայաստանի և Հայության համար առանցքային իրադարձությունները կապված են եղել աշխարհաքաղաքական տեղաշարժերի հետ։ Առաջին համաշխարհային պատերազմը և հեղափոխությունը հանգեցրին Ցեղասպանության և Արևմտյան ու, մասամբ, Արևելյան Հայաստանի կորստին, Առաջին և Երկրորդ հանրապետությունների ստեղծմանը։ Երկրորդ համաշխարհայինից հետո մեծ էր ԽՍՀՄ–Թուրքիա ռազմական բախման հավանականությունը, որի ելքը կասկած չէր հարուցում և որն ինչ-որ չափով կարող էր լուծել Հայկական հարցը. սակայն նախկին դաշնակիցների՝ ԽՍՀՄ և ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի միջև «աշխարհի վերաձևման» վերաբերյալ տարաձայնությունները խանգարեցին նման սցենարի իրականացմանը։ Առաջին սառը պատերազմի ավարտի և երկբևեռ աշխարհակարգի փլուզման արդյունքում ստեղծվեցին ՀՀ-ն և ԼՂՀ-ն։

[1] Նկատենք այս առիթով, որ նյութական միջոցների որոշակի սահմանափակությունը նույնպես պայմանավորված է Հայության գիտակրթական ոլորտի թերզարգացմամբ. մասնավորապես հայկական կապիտալի ներկայացուցիչները (և՛ Սփյուռքում, և՛ Հայաստանում) ավելի քան համեստ են ներկայացված տնտեսության բարձր տեխնոլոգիաների ոլորտում, որոնք այսօր համարվում են ամենաշահութաբերը

Ներկայումս ձևավորվում է քաղաքական մի նոր իրադրություն, երբ հասունանում են նոր գլոբալ տեղաշարժեր՝ պայմանավորված բազմաբևեռ համակարգի բավական հիվանդագին ձևավորմամբ: Հայտնի է, որ նման բնույթի համակարգային փոփոխությունները մշտապես հղի են դժվար կանխատեսելի հետևանքներով, և պատահական չէ, որ որոշ քաղաքագետներ ներկա իրողությունները համեմատում են մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը տիրող իրավիճակի հետ: Համաձայն որոշ տեսակետների, որոնք հիմնվում են արդեն այսօր նշմարվող միտումների վրա, ներկայիս բազմաբևեռ համակարգի ձևավորման տրամաբանությանը ենթարկվող «բաժանման» գործընթացներին հետևելու է նոր, քաղաքակրթական հատկանիշների հիման վրա ստեղծված ռազմաքաղաքական ասոցիացիաների ձևավորում:

Այդ պայմաններում Հայաստանի համար հեռանկարային քաղաքականության մշակման տեսանկյունից կարևորագույն գործոններից է մասնավորապես տարածաշրջանում Միացյալ Նահանգների ազդեցության հարաբերական նվազումը: Դրա արտահայտություններից են, օրինակ, Թուրքիայի հետ կապված այն դժվարությունները, որոնք ունեցավ այդ տերությունը հայ-թուրքական զարգացումներում միջնորդական առաքելություն կատարելիս: Այդ համատեքստում հատկանշական է նաև, որ այսօր ԱՄՆ ընտրանու ներկայացուցիչները սկսել են ավելի հաճախ անդրադառնալ ԱՄՆ-ի կողմից «մեկուսացման» (անշուշտ՝ հարաբերական) քաղաքականություն վարելու անհրաժեշտությանը: Մինչդեռ ամերիկյան նահանջը, համաձայն մի շարք վերլուծաբանական մշակումների, կարող է հանգեցնել Մերձավոր և Միջին Արևելքի, Հարավային Ասիայի (այսպես կոչված Եվրասիական Բալկանների) տարածքում պայթյունավտանգ իրավիճակի ձևավորմանը: Նկատենք, որ այդ տարածաշրջանն այժմ նույնպես, հաշվի առնելով Իրանի հետ կապված հայտնի հարցերը և հատկապես Իրաքում, Աֆղանստանում և Պակիստանում տեղի ունեցող գործընթացները, գտնվում է բավական անկայուն վիճակում, ինչը հիմնականում հարուցվել է նույն ամերիկացիների կողմից: Սակայն ամերիկյան ներկայությունը, որքան էլ տարօրինակ է հնչում, ապահովում է այդ «անկայունության կայունությունը»: Այսինքն՝ ստեղծված քաոսն այս կամ այն չափով կառավարելի է, ինչը դժվար թե պահպանվի ամերիկացիների հեռանալուց հետո, և դա, բացառված չէ, որ կարող է և նախապես հաշվարկված լինել նրանց կողմից: Ընդունված է համարել, որ անգլոսաքսերի նահանջն ավելի վտանգավոր է, քան նրանց հարձակումը...

Ակնհայտ է, որ նման անկառավարելի տարածաշրջանի ձևավորումը, որի երկրները կամ ունեն, կամ էլ ձգտում են ունենալ միջուկային զենք (որոնց թվում՝ Թուրքիան), Հայաստանի համար նոր մարտահրավեր է, որին դիմակայելու համար անհրաժեշտ են նոր ռեսուրսներ և քաղաքական գործընկերներ: Այդ առումով որոշակի հնարավորություններ են պարունակում Եվրոպայում ընթացող նոր զարգացումները:

Գերմանիա, Ռուսաստան և «Մեծ Եվրոպա». Հայտնի է, որ ԵՄ-ը ստեղծվել էր որպես մի կառույց, որի հենքում դրված է փոխկապվածությունը, ինչը և պետք է խոչընդոտեր առանձին երկրների և առաջին հերթին՝ հետպատերազմյան Գերմանիայի ինքնուրույն գործելու և որպես հզոր տերություն վերականգնվելու հնարավորությանը: Այդ մեխանիզմը բավական արդյունավետ էր գործում երկբևեռ և բավարար՝ միաբևեռ համակարգերում: Արդյունքում՝ ԵՄ-ը, լինելով աշխարհի ամենամեծ տնտեսությունը, գլոբալ հարթությունում չունի որևէ լուրջ աշխարհաքաղաքական դերակատարում: Սակայն բազմաբևեռ աշխարհակարգի և ֆինանսական ճգնաժամի պայմաններում, երբ սկսեցին առավել կարևորվել սեփական ազգային շահերը, մեկնարկեցին տարանջատման գործընթացները: Դա պայմանավորված է և՛ ԱՄՆ-Եվրոպա կապերի թուլացումով ու նրանց միջև մրցակցության աճով, և՛ ԵՄ երկրների տնտեսական և այլ ոլորտների զարգացման մակարդակների տարբերության խորացմամբ:

Ստեղծված նոր իրավիճակներին առավել պատրաստ գտնվեց Գերմանիան: Բավական է նշել, որ վերջին 10 տարում գերմանական ապրանքների և ծառայությունների մրցունակությունը՝ ԵՄ այլ երկրների համեմատ, աճել է 25%-ով: Արդյունքում՝ Գերմանիան այսօր տնտեսական առումով ոչ միայն Եվրոպայի ամենահզոր տերությունն է, այլև այն երկիրն է, որը թելադրում է (և արդեն ավելի քիչ հենվելով հարևան Ֆրանսիայի վրա) ԵՄ գործունեության կանոնները: Բնորոշ է, որ կանցլեր Անգելա Մերկելին համաշխարհային ԶԼՄ-ում հաճախ անվանում են «ֆրաու Եվրոպա»:

Աճել են նաև այդ երկրի ռազմաքաղաքական հավակնությունները. ներկայումս գերմանական ընտրանու ներկայացուցիչները հնչեցնում են ՆԱՏՕ-ի բարեփոխման (նկատի ունենալով բուն եվրոպական դերակատարման մեծացումը), միջուկային զենքին տիրապետելու, ամերիկյան ռազմակայանները երկրից դուրս բերելու և նման այլ գաղափարներ: Դա վկայում է այն մասին, որ ոչ հեռու ապագայում «գերմանականացված» ԵՄ-ը կամ, որոշ սցենարներում՝ ԵՄ ձևաչափից դուրս իր առանձին դաշնակիցների հետ գործող Գերմանիան, ձգտելու է իրեն վայել տեղ զբաղեցնել գլոբալ աշխարհաքաղաքական հարթությունում (տե՛ս, օրինակ, [6-8]): Մասնավորապես, այդ երկիրը կարող է մեր տարածաշրջանը որպես հարթակ դիտարկել իր աշխարհաքաղաքական հավակնություններն իրագործելու նպատակով (ներկայումս այդօրինակ միտումներ են ցուցաբերում գերմանացիները, օրինակ, Աֆղանստանում), և նման պարագայում այդ հավակնությունները պետք է որ չհակասեն մեր ազգային շահերին: Դրա մասին են վկայում, մասնավորապես, հետևյալ հանգամանքները.

- Գերմանիան տարածաշրջանում չունի շեշտված նավթային շահեր, ինչը որոշիչ գործոն է այլ արևմտյան տերությունների քաղաքականությունում և վերջիններիս կողմից արտահայտվում է Ադրբեջանի նկատմամբ կողմնակալ վերաբերմունքով:

- Պաշտոնական Բեռլինը լուրջ խնդիրներ ունի Թուրքիայի հետ, և այստեղ դերակատարում ունի այն փաստը, որ Գերմանիայում ապրում է շուրջ 3 մլն թուրք, որոնցից 1.7 մլն-ը Թուրքիայի քաղաքացի է, նրանց զգալի մասը սկզբունքորեն, իսկ մասամբ էլ հետևելով Անկարայի ուղղակի ցուցումներին՝ չի ձգտում ինտեգրվել տեղի հանրությանը: Այդ գործոնը քաղաքակրթական և ժողովրդագրական բնույթի խնդիրներ է առաջացրել գերմանական հանրությունում, ինչն էլ մասամբ արդեն արտահայտվում է արտաքին քաղաքական մոտեցումներում:

Վերոնշյալի համատեքստում առանձնապես ուշագրավ է գերմանական զինվորական շրջանակների առաջարկած «արևելյան սպառնալիքներին հակազդելու» նպատակով «Մեծ Եվրոպա» ձևավորելու նորովի խմբագրված նախագիծը, համաձայն որի՝ ենթադրվում է Ռուսաստանի ներգրավումը Հյուսիսատլանտյան կառույցին և այսպիսով, փաստորեն, այդ կառույցի կոնցեպտուալ վերակառուցումը: Ակնհայտ է, որ նման զարգացումն առաջին հերթին ենթադրում է Ռուսաստանի պատրաստակամությունը՝ հաշվի առնելով վերջինիս հիմնավորված բարդույթը ՆԱՏՕ-ի և նրա «ընդարձակման» հանդեպ: Սակայն այսօր ռուսական քաղաքականությունում ևս նկատվում են միտումներ, որոնք կարող են իրատեսություն հաղորդել «Մեծ Եվրոպա» նախագծին, և դա պայմանավորված է ոչ միայն Մոսկվա-Բեռլին աշխարհաքաղաքական առանցքի վերաբերյալ ավանդական պատկերացումներով:

Ներկայումս Գերմանիան ՌԴ-ի հիմնական տնտեսական գործընկերն է, նրանք իրագործում են խոշոր, աշխարհատնտեսական էներգետիկ ծրագրեր: Քաղաքական ոլորտում նույնպես առկա են որոշակի համաձայնություններ (մասնավորապես, Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամագրվելու խնդրում): Եվրոպացիների կողմից Ուկրաինայի նախագահական ընտրություններին տված բարձր գնահատականները ցույց են տալիս, որ այդ երկիրը ՌԴ-ի և ԵՄ-ի միջև կռվախնձոր հանդիսանալուց կարող է վերածվել համագործակցության հարթակի: Նման բնույթի օրինակները բազմաթիվ են, և առանց մանրամասնելու կարելի է փաստել, որ «Մեծ Եվրոպա» ձևավորելու գաղափարը, ադեկվատ լինելով և՛ քաղաքակրթական ընդհանրությունների տրամաբանությանը, և՛ բազմաբևեռ աշխարհի իրողություններին, կարծես թե ընդունելի է դառնում կողմերի համար: Ստեղծված պայմաններում ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան, ի տարբերություն նախկինում Գերմանիա-Ռուսաստան հարաբերությունների հարցում ունեցած կտրուկ բացասական դիրքորոշման, նույնպես պետք է որ սկզբունքորեն դեմ չլինեն «Մեծ Եվրոպա» նախագծին. նման դաշինքը, որոշ աշխարհաքաղաքական սցենարներում, կարող է բնական պատնեշ հանդիսանալ հնարավոր արևելյան-չինական էքսպանսիայի պարագայում:

Նման ուղղվածության և թվով արդեն Երրորդ սառը պատերազմի պայմաններում Հայաստանի տեղը, առավել հնարավոր է, որ լինի պայմանական

«Եվրոպա-ՌԴ» բլոկում, իսկ մեր թուրքալեզու հարևանները՝ պայմանական «Արևելքում»: Այդ պարագայում Հայաստանը կարող է ձեռք բերել «սահմանային» կամ «ֆորպոստային» պետության կարգավիճակ (ինչպիսին որ ունի Իսրայելը Մերձավոր Արևելքում)՝ դրանից բխող մեծ ռիսկերով և հնարավորություններով: Մեզ համար դրական որոշակի զարգացումների պարագայում այդ «հնարավորությունները» կարող են ներառել Թուրքիայի կազմալուծումը և Արևմտյան Հայաստանի մասնակի վերադարձը:

Անշուշտ, վերոնշյալ սցենարը տեսական բնույթ է կրում և այս առիթով հարկ է շեշտել, որ նման կարգի սցենարային մշակումները պահանջում են համալիր, արդի մեթոդաբանությունների կիրառումով կատարված հետազոտություններ: Սակայն միշտ պետք է հիշել, որ դեռ 1980թ. գրեթե անհնար էր պատկերացնել, որ մեկ տասնամյակ հետո կընթանա պատերազմ, և կստեղծվեն հայկական երկու հանրապետություններ: Միևնույն ժամանակ, հայտնի է, որ որևիցե «դրական սցենարի» իրագործումը հնարավոր է միայն այդ զարգացումներին նախապես պատրաստվելու և շահեկան սցենարներն իրականություն դարձնելու համար ջանքեր գործադրելու պարագայում, որն էլ, իր հերթին, հնարավոր է միայն ռազմավարական զարգացման պայմաններում:

Մայիս, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Айкарам Наапетян*, Разве Соединненые штаты не признали Геноцид Армян? http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=2430
2. *Гагик Арутюнян,* Идеология и информационная безопасность, 21-й Век, #4, с.3, 2009.
3. *Гагик Арутюнян, Полиидеологические сообщества и информационная безопасность,* О некоторых проблемах информационной безопасности (по материалам осенней школы по информационной безопасности, организованной НОФ “Норавank” и Госкомитетом по науке РА), с. 38, Ереван, 2009.
4. *Александр Владимиров,* «Государство и война», Политический класс, #2 (50), с. 95, 2009.
5. *Вашингтон Плэтт*, Стратегическая разведка, М., 1997.
6. *Гагик Тер-Арутюнян,* Россия-Германия. Возможные сценарии в контексте региональной безопасности (http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=24579).
7. *Джордж Фридман*, Германия после ЕС и российский сценарий ("Stratfor", США http://www.inosmi.ru/europe/20100526/160170476.html; *George Friedman,* Germany After the EU and the Russian Scenario, http://www.stratfor.com/weekly/20100524_germany_after_eu_russian_scenario?utm_source=GWeekly&utm_medium=email&utm_campaign=100525&utm_content=readmore&elq=566b155cbee94b86b4644322cb43ae5c
8. «Российско-германские отношения в контексте европейской безопасности», под ред. проф. В.И. Дашичева, - М.: ИЭ РАН, 2009.

СТРАТЕГИЯ РАЗВИТИЯ И ГЕОПОЛИТИЧЕСКИЕ СЦЕНАРИИ

Гагик Арутюнян

Резюме

Известные процессы в сфере армяно-турецких отношений сынициировали в армянском сообществе обсуждение и переосмысление стоящих перед Армянством актуальных задач и методов их решения. Даже из беглого ознакомления с ситуацией в армянских общинах следует, что ранее применяемые стратегии выживания сегодня не эффективны и могут привести к весьма отрицательным последствиям. В качестве основной причины существующей неблагоприятной ситуации и препятствия для разработки адекватных национальных стратегий рассматривается снижение интеллектуального потенциала армянского сообщества. В этом контексте представляется перспективным взять в качестве основополагающего принципа национальной безопасности *стратегию развития,* предполагающую в первую очередь развитие человеческого капитала. Наличие высокоинтеллектуальных ресурсов, с учетом формирования новых военно-политических ассоциаций в многополярной системе, позволит не только выстоять в предполагаемых геополитических катаклизмах, но и даст возможность решить значительную часть проблем, стоящих перед Армянством.

ՌԵՆԴ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆ ԵՎ ՄԵՆՔ. ՀԱՅԱՍՏԱՆ - ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արա Մարջանյան[*]

> Սառը պատերազմի ավարտից հետո, հակառակ ոմանց սպասումների, Թուրքիայի ռազմավարական նշանակությունը ԱՄՆ-ի համար ոչ թե նվազել, այլ էապես բարձրացել է:
>
> ***Ս. Լարաբի, ՌԵՆԴ կորպորացիա, 2010թ. փետրվար***

Հայաստան–Թուրքիա հարաբերությունների հաստատմանն ուղղված վերջին գործընթացները մեր տարածաշրջանի ապագան ուրվագծող, թերևս, ամենաէական (եթե ոչ՝ ամենաէական) գործոններից են: Սևեռուն ուշադրությունն այս խնդրի նկատմամբ մեծ է թե՛ տարածաշրջանի երկրների, թե՛ աշխարհի ուժային կենտրոնների կողմից: Մյուս կողմից, անցած տասնամյակների ընթացքում մեկ անգամ չէ, որ ԱՄՆ *ՌԵՆԴ* կորպորացիայի որոշ ուսումնասիրություններ լրջորեն ներազդել են աշխարհում ԱՄՆ վարած քաղաքականության վրա, նույնիսկ կերտել կամ ձևափոխել են ԱՄՆ ռազմավարական մոտեցումները, անգամ մտածելակերպը՝ թե՛ միջազգային, թե՛ ներքին խնդիրների լայն տիրույթում:

Ուստի, զարմանալի չէ, որ հոդվածը նվիրված է մեր տարածաշրջանում Թուրքիայի դերակատարմանը և Հայաստան–Թուրքիա հարաբերությունների կարգավորման արդի գործընթացին վերաբերող ԱՄՆ հեղինակավոր *ՌԵՆԴ* կորպորացիայի ժամանակագրորեն վերջին ու համեմատաբար ամբողջական հրատարակման քննությանը:

---

[*] Համաշխարհային բանկի վերականգնվող էներգետիկայի ծրագրի համակարգող, տեխնիկական գիտությունների թեկնածու:

1. Դժվարին գործընկերություն. ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների դարաշրջանում

2010թ. փետրվարի 3-ին *ՌԵՆԴ* կորպորացիայում կայացավ Սթիվեն Լարաբիի «Դժվարին գործընկերություն. ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների դարաշրջանում» ուսումնասիրության *MG-8893-AF* հաշվետվության շնորհանդեսը [1]: Այն իրականացված էր 2007թ. բյուջետային տարվա միջոցներով՝ *ՌԵՆԴ* կորպորացիայի «Ռազմավարություն և դոկտրին ծրագիր» ստորաբաժանման կողմից *(Strategy and Doctrin Program of RAND),* որպես, ամենայն հավանականությամբ՝ ավելի լայնածավալ «Դժվարին գործընկերություններ. ԱՄՆ հարաբերությունների անվտանգության պահպանումն աճող մարտահրավերների պարագայում և դրա հետևանքները ԱՄՆ օդային ռազմուժի համար» ուսումնասիրության բաղկացուցիչ մաս[1]: Ուսումնասիրությունը կատարվել է *ՌԵՆԴ* կորպորացիայի ԱՄՆ օդային ռազմուժի ծրագրի *(Project Air Force)* շրջանակներում և պատվիրվել է ԱՄՆ օդային ռազմուժի գլխավոր հրամանատարության Օպերացիոն պլանավորման, քաղաքականության և ռազմավարության դիրեկտորատի տնօրենի կողմից [1, pp iii-iv]:

Ստորև, առանց մեկնաբանությունների, ներկայացնում ենք [1] հիմնական դրույթները և եզրակացությունները: Թարգմանության ժամանակ խստագույնս հետևել ենք բնագրին: Բառերը, որոնք բացակայում են անգլերեն բնագրում, բայց որոնց առկայությունը համարժեք է դարձնում հայերեն թարգմանությունը, բերվում են քառակուսի փակագծերում: Մեր դիտարկումները կատարում ենք միայն տողատակում, իսկ որոշակի վերլուծություն և մեկնաբանություններ կատարվում են հոդվածի վերջին բաժնում:

ԱՄՆ - Թուրքիա հարաբերությունները

Համաձայն [1]-ի, վերջին տարիներին ԱՄՆ–Թուրքիա հարաբերությունները որոշակիորեն սառեցին և, անգամ, վտանգվեցին: Որոշ մեկնաբանների կարծիքով, սա պայմանավորված էր Սառը պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի համար Թուրքիայի ռազմավարական նշանակության դերի կորստով: Պրն Լարաբիի կարծիքով, դա այդպես չէ: Հակառակը: Թուրքիան գտնվում է Բալկանների, Միջին Արևելքի, Կովկաս/Կենտրոնական Ասիայի և Պարսկական ծոցի տարածաշրջանների խաչմերուկում: Տարածաշրջաններ, որոնց ռազմավարական

[1] *"Troubled Partnerships: The Growing Challenge of Managing U.S. Security Relationships and Implications for the United States Air Force".* Մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ այս ուսումնասիրությունը ոգով և բովանդակությամբ ԱՄՆ միջազգային ռազմական համագործակցության և ռազմավարության կերտման գործում *ՌԵՆԴ*-ի վաղեմի փառքը կազմած *R-244* ուսումնասիրության ժառանգն ու տրամաբանական շարունակությունն է: Դա է վկայում այն փաստը, որ Ինջիրլիք (և այլ) ռազմական հենակայանների հետ կապված հարցերը կարմիր թելով անցնում են աշխատության գրեթե բոլոր էջերով:

նշանակությունը [ԱՄՆ-ի համար] Սառը պատերազմի ավարտից հետո միայն աճեց: Եվ այս բոլոր տարածաշրջաններում ԱՄՆ-ի համար իր քաղաքական նպատակներին հասնելու գործում, գրում է պրն Լարաբին, Թուրքիայի համագործակցությունը կրիտիկական է համարվում: Դե, իսկ ԱՄՆ–Թուրքիա հարաբերությունների որոշակի սառեցման, վերջին տարիներին Թուրքիայում հակաամերիկյան տրամադրությունների շոշափելի աճի գործում վճռորոշ դերակատարում ունեին հետևյալ երեք հանգամանքները:

Նախ, 2003թ. [ԱՄՆ] ներխուժումը Իրաք և այս երկրի հյուսիսում քրդական անջատողական պետության հիմնման հեռանկարը լրջորեն ջղաձգում են Թուրքիայի իշխանություններին, որոնք այստեղ վտանգ են տեսնում իրենց երկրի տարածքային ամբողջականության տեսանկյունից: Այս վախն էլ ավելի է խորանում Քրդական աշխատավորական կուսակցության (ՔԱԿ) կողմից ապստամբության վերսկսմամբ *(resumption of an insurgency),* որը Հյուսիսային Իրաքում գտնվող ապաստարաններից ահաբեկչական գրոհներով հատում է իրաքա-թուրքական սահմանը: Այս ահաբեկչական գրոհները Թուրքիայի անվտանգության թիվ մեկ խնդիրն են:

Այնուհետև, Անկարայի այս մտավախությունները համալրվում (եթե ոչ՝ ամրապնդվում) են Իրանի և Սիրիայի նկատմամբ սեփական մոտեցումների համեմատ ԱՄՆ քաղաքական մոտեցումների տարբերությամբ: Իրոք, ԱՄՆ-ը ձգտում է մեկուսացնել Իրանը և Սիրիան, մինչդեռ Անկարան հետևողականորեն իրականացնում է այս երկրների հետ մերձեցման քաղաքականություն: Քաղաքական այս մոտեցումների տարբերությունը տեսանելի էր նույնիսկ մինչև Թուրքիայում Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության գալը (2002թ.), որը դարձավ էլ ավելի ընդգծված դրանից հետո:

Վերջապես, Իրանի միջուկային ծրագրի իրականացմամբ մտահոգված լինելով հանդերձ՝ Թուրքիան, այնուամենայնիվ, խստորեն դեմ է Իրանին ռազմական հարված հասցնելուն: [Թուրքիայի տեսանկյունից] դա լրջորեն կվտանգի Միջին Արևելքի կայունությունը: Պրն Լարաբին մանրամասնում է այս հարցը՝ պնդելով, որ «ԱՄՆ-ի կողմից Իրանին ռազմական հարված հասցնելը ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում ճգնաժամ կառաջացնի և կարող է ստիպել Էրդողանի կառավարությանը դժվարացնել կամ կասեցնել Թուրքիայում ԱՄՆ ռազմական կառույցների, մասնավորապես՝ Ինջիրլիքի օդային ռազմակայանի օգտագործումը» [1, pp. xii, տե՛ս նաև pp. 36-37][1]:

[1] Իսրայելի կողմից նման հարվածի հավանականության գնահատումը և դրա հետևանքների վերլուծությունը [1]-ում բացակայում են, թեև կասկածից վեր է, որ այդպիսի վերլուծություններ արվել են վերը նշված լայնածավալ ուսումնասիրության շրջանակներում: Արժե նշել նաև, որ Իսրայելի քաղաքականության դիտարկումը Թուրքիայի և Կովկասի առնչությամբ [1]-ում ընդհանրապես բացակայում է: Կարծում ենք, սա լուրջ բացթողում է պրն Լարաբիի 2003թ. ավելի վաղ ուսումնասիրության համեմատ [2]: Այս վերջինից մենք տեղեկացել էինք, որ նոր դարասկզբին «Իսրայելն էականորեն ընդլայնեց իր դերակատարումը Եվրասիայում և հատկապես Ադրբեջանում: …Իսրայելը վճռականորեն սատարում է Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի պատերազմում …ընդհուպ մինչև սպառազինության մատակարարում և հետախուզական աջակցություն» [2, pp. 119-121]: Ի՞նչ է կատարվում այս հարցում հիմա՝ [1]-ից պարզ չէ:

Ի մի բերելով այս հանգամանքները ԱՄՆ-Թուրքիա ռազմական համագործակցության տեսանկյունից՝ պրն Լարաբին նշում է, որ այն ևս վերջին տարիներին անկում է ապրել: Այսպես, ԱՄՆ Կոնգրեսը, ելնելով Թուրքիայում մարդու իրավունքների և Կիպրոսի խնդիրներից, կասեցրել է Թուրքիա սպառազինություն վաճառքի մի շարք ծրագրեր: Ընդհանրապես, այս համագործակցությունը ճահճացել է, և *Միհոկ* տիպի 17 ուղղաթիռների վաճառքից հետո (2006թ. աշուն) այս ուղղությամբ ոչինչ չի արձանագրվել[1]: Թուրքիան սկսում է լրջորեն կասկածել ԱՄՆ հուսալի ռազմական գործընկեր լինելու հարցում և ընդլայնում է ռազմական համագործակցությունն այն երկրների հետ, որոնք սպառազինության մատակարարման գործում ավելի «մեղմ» քաղաքականություն են վարում: Դրանք առաջին հերթին Իսրայելն ու Ռուսաստանն են [1, pp. xii, տե՛ս նաև pp. 77-78]:

Որո՞նք են Թուրքիա-ԱՄՆ [ռազմավարական] համագործակցության վերակենդանացման համար [1]-ում արվող առաջարկները: Դրանք ընդհանուր առմամբ 18-ն են և ձևակերպված են 7 տարբեր հարթություններում հարցի դիտարկման արդյունքում: Այդ հարթություններն են. 1. Թուրքիան և Հյուսիսային Իրաքը, Քրդական հարցը [1, Ch. 3], 2. Թուրքիան և Միջին Արևելքը [1, Ch. 4], 3. Թուրքիան և Եվրասիան ու Կովկասը [1, Ch. 5], 4. Թուրքիան և ԵՄ-ը [1, Ch. 6], 5. Թուրքիան և Կիպրոսն ու Հունաստանը [1, Ch. 6], 6. Թուրքիայի հետ ԱՄՆ ռազմական համագործակցությունը [1, Ch. 7], 7. Ժողովրդավարացումը ու Թուրքիայի ներքին ռեֆորմները [1, Ch. 8]: Ստորև ներկայացնենք դրանցից վեցը: Մեզ համար առավել հետաքրքրական «Թուրքիան և Եվրասիան ու Կովկասը» հարթությունում արվող դիտարկումներն ավելի հանգամանալի կներկայացվեն հոդվածի հաջորդ բաժնում:

Թուրքիան և Հյուսիսային Իրաքը, Քրդական հարց

Այստեղ Թուրքիա-ԱՄՆ համագործակցության վերակենդանացմանն ուղղված առաջարկները հինգն են: Նախ, ԱՄՆ-ը պետք է ուժեղացնի քաղաքական և հետախուզական օժանդակումը Թուրքիային՝ ընդդեմ ՔԱԿ ահաբեկչության: Պրն Լարաբիի գնահատմամբ, այս հարցն այն «լակմուսյան թեստն» է, որի արդյունքներով Թուրքիան կգնահատի ԱՄՆ իրական դիրքորոշումը ԱՄՆ-Թուրքիա ռազմավարական հարաբերությունների դաշտում:

Երկրորդ, ԱՄՆ-ը պետք է հավելյալ ճնշում գործադրի [Իրաքի հյուսիսում գործող] Քրդստանի տարածքային կառավարության վրա (ՔՏԿ, *KRG)*՝ վերջինիս մղելով ՔԱԿ-ի դեմ, նրան զրկելով քաղաքական և լոգիստիկ օժան-

[1] Պրն Լարաբին նկատի ունի ԱՄՆ-ից Թուրքիա սպառազինությունների միայն *կոմերցիոն* բնույթի մատակարարումները: Միջպետական պայմանագրերով նախատեսված $15 մլրդ ընդհանուր արժողությամբ մատակարարումները բավական տպավորիչ են:

դակումից: Պրն Լարաբիի գնահատմամբ, սա թույլ կտա որոշ առումով մեղմել հակաամերիկյան տրամադրությունների աճը Թուրքիայում:

Երրորդ, ՔԱԿ վտանգը [Թուրքիայի համար] չի կարող չեզոքացվել բացառապես ռազմական ուժով: Ուստի, այն պետք է լրացվի Քրդական բողոքի *(Kurdish grievances)* արմատներին հասցեագրված սոցիալական և քաղաքական բարեփոխումներով: Ըստ [1]-ի, այստեղ դրական տեղաշարժ է հանդիսանում Էրդողանի կառավարության կողմից 2009թ. ամռանը մեկնարկած «Քրդական հարցում բաց լինելու» նախաձեռնությունը *("Kurdish Opening"):*

Չորրորդ, ԱՄՆ-ը պետք է հորդորի և էապես աջակցի Թուրքիայի ջանքերին Հյուսիսային Իրաքի ՔՏԿ լիդերների հետ անմիջական երկխոսություն սկսելու ուղղությամբ: Այս ուղղությամբ որշակի քայլեր արդեն իսկ իրականացվել են 2008թ. վերջին: Սակայն գործընթացը մնում է փխրուն և պահանջում է ԱՄՆ ուժեղ օժանդակումը: «Երկարաժամկետ հեռանկարում Թուրքիայի հարավային սահմաններում կայունությունն անհնար է առանց Թուրքիայի կառավարության և ՔՏԿ-ի միջև [որոշակի] համաձայնության *(accommodation):* Սա չի նշանակում, որ Թուրքիան պետք է ճանաչի Քրդական ինքնուրույն պետությունը, բայց և այնպես տարածաշրջանային կայունության բուն գոյության համար Թուրքիան պետք է մշակի [իր] *modus vivendi*-ն ՔՏԿ-ի հետ: Իսկ սա անհնար է առանց ՔՏԿ լիդերների հետ անմիջական երկխոսության»,- գրում է պրն Լարաբին:

Եվ վերջապես, հինգերորդ, Իրաքից զորքերը դուրս բերելու հետ մեկտեղ ԱՄՆ-ը պետք է ուժեղացնի ջանքերը Բաղդադի կենտրոնական կառավարության և ՔՏԿ-ի միջև լարվածությունը ցրելու ուղղությամբ: Այս լարվածությունը լրջագույն վտանգ է Իրաքի՝ որպես միացյալ պետություն, գոյության համար և էապես խճողում է Թուրքիայի անվտանգության խնդիրները: Եվ այստեղ վճռորոշ է ժամանակի գործոնը: Իրոք, մի կողմից ԱՄՆ ռազմուժի ներկայությունը Հյուսիսային Իրաքում այս երկրի իրավիճակի վրա ԱՄՆ քիչ թե շատ ներազդման լծակներ է ապահովում: Սակայն, մյուս կողմից, ԱՄՆ ռազմուժի ներկայությունն այստեղ չպետք է հակասի [Իրաքում] Մալիքի կառավարության հետ ստորագրված «Ռազմուժի կարգավիճակի մասին համաձայնագրի» դրույթներին[1]:

[1] Այլ խոսքերով՝ այն բանից հետո, երբ ԱՄՆ նախագահ Բ.Օբաման ի լուր աշխարհի հրապարակեց Իրաքից ԱՄՆ ռազմուժի դուրսբերման ժամանակացույցը, այս հարցում «հաշվիչը միացված է»: Ի դեպ, ժամանակի գործոնի հենց այսպիսի ճնշումից խուսափելու անհրաժեշտությամբ էր պայմանավորված ԱՄՆ նախկին նախագահ Բուշ-կրտսերի վարչակազմի համառ դիմադրությունը՝ Իրաքից ամերիկյան զինուժի դուրսբերման ժամանակացույցի որևէ հրապարակման հարցում: «Դրա ժամանակը կգա, երբ գործը կարվի». սա էր մոտեցումը (տե՛ս նաև ստորև):

Թուրքիան և Միջին Արևելքը

Միջին Արևելքի տարածաշրջանային գործընթացների հարթությունում [1]-ում ձևակերպված առաջարկները երեքն են: Նախ, ԱՄՆ քաղաքականություն կերտողները պետք է դադարեցնեն Թուրքիան Միջին Արևելքի երկրների համար իբրև մոդել ներկայացնել: Սա Թուրքիայի ազդեցիկ քեմալիստական շրջանակներում տհաճություն է առաջացնում, քանի որ նրանք կարծում են, թե այսպիսով թուլացվում է Թուրքիայի արևմտամետությունը, և իրենց երկիրն ավելի է մոտեցվում Միջին Արևելքին: Մյուս կողմից, ի հակադրություն [ԱՄՆ] այսպիսի քարոզչության, Թուրքիայում կարող է ուժգնանալ քաղաքական իսլամը, իսկ երկրի աշխարհիկ [արժեհամակարգի] սկզբունքները կենթարկվեն էրոզիայի: Վերջին մտավախությունը հատկապես ուժեղ է Թուրքիայի ռազմական շրջանակներում:

Երկրորդ, ԱՄՆ-ը պետք է շարունակի պատրաստակամ լինել Իրանի և Սիրիայի հետ երկխոսություն բացելու մեջ՝ Իրաքի կայունացման հարցում այս երկրների ներառման դիվանագիտական ջանքերի ուղղությամբ:

Եվ երրորդ, ԱՄՆ-ը պետք է մեծացնի ջանքերը Թեհրանին միջուկային զենք ունենալու փորձերից հրաժարվել տալու համար:

Թուրքիան և ԵՄ-ը

Եվրամիության հետ կապված գործընթացների հարթությունում [1]-ում ձևակերպված առաջարկները երկուսն են: Առաջին. ԱՄՆ-ը պետք է շարունակի ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության օժանդակումը: Այս գործընթացի հաջող ավարտը ցույց կտա, որ Արևմուտքը մահմեդականների համար բնածին թշնամական չէ: Մինչդեռ, հակառակ դեպքում, Թուրքիայում կուժեղանան հակաարևմտյան դիրքորոշում ունեցող ուժերը, ինչը շահեկան չէ ոչ Արևմուտքի, ոչ էլ Թուրքիայի համար:

Երկրորդ. հաշվի առնելով ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության խնդրի նկատմամբ զգայունությունը ԵՄ անդամ մի շարք երկրներում[1]՝ այս հարցում ԱՄՆ օժանդակումը Թուրքիային պետք է լինի վարագույրների հետևում իրականացվող ոչ հրապարակային լուռ դիվանագիտության տեսքով: Այս հարցում ԱՄՆ-ը պետք է խուսափի բացահայտ ճնշումներից և «ձեռքերի ոլորումից»:

Թուրքիան և Կիպրոսն ու Հունաստանը

Հունաստանի և Կիպրոսի հարցում առաջարկները նույնպես երկուսն են: Առաջին. ԱՄՆ-ը պետք է ինտենսիվացնի ջանքերն Էգեյան ծովում Հունաստանի և Թուրքիայի տարաձայնությունների հաղթահարման ուղղությամբ: Այն ժամա-

[1] Պրն Լարաբին առաջին հերթին նկատի ունի Ֆրանսիան, Գերմանիան և Ավստրիան [տե՛ս 1, Ch. 9, p. 112]:

նակ, երբ ՆԱՏՕ-ն լրջագույն մարտահրավերների է դիմակայում Աֆղանստանում և հետխորհրդային տարածքում [*Ա.Մ.*], վերջին բանը, որը պետք է ԱՄՆ-ին, նոր հակամարտությունն է Էգեյանում, գրում է պրն Լարաբին: Երկրորդ. ԱՄՆ-ը պետք է օժանդակի և խրախուսի Կիպրոսի երկու համայնքների միջև ՄԱԿ հովանու ներքո ընթացող միջհամայնքային երկխոսությունը: Այս հարցում առաջխաղացումը կնպաստի ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության խնդրին:

Թուրքիայի հետ ԱՄՆ ռազմական համագործակցությունը

Այս առնչությամբ [1]-ում ձևակերպված է երկու առաջարկ: Նախ, ԱՄՆ նախագահ Օբամայի այցի հետքերով[1] ԱՄՆ-ը պետք է անմիջապես նախաձեռնի Թուրքիայի հետ լայն ռազմավարական երկխոսություն՝ Թուրքիայում ռազմական հենակայանների, հատկապես Ինջիրլիք հենակայանի ապագա օգտագործման ուղղությամբ: Այս կապակցությամբ պրն Լարաբին նշում է, որ հաշվի առնելով Թուրքիայի աճող հետաքրքրությունը Միջին Արևելքի նկատմամբ, ամենայն հավանականությամբ Թուրքիան չափազանց զգայուն կլինի Ինջիրլիք (և այլ) հենակայանները միջինարևելյան ճգնաժամերի ժամանակ օգտագործելու հարցում: Այսպիսով, Միջին Արևելքում ծագած ճգնաժամերի ժամանակ ԱՄՆ-ը չի կարող ավտոմատ կերպով եզրակացնել, որ կկարողանա օգտագործել Ինջիրլիք (և այլ) հենակայանները Թուրքիայում, եթե միայն դա Թուրքիայի ազգային շահերից բխող չհամարվի:

Երկրորդ. բալիստիկ հրթիռներից պաշտպանությունը կարող է կարևոր հարց դառնալ ԱՄՆ-Թուրքիա ռազմական համագործակցության ապագայի համար: Իրանի՝ միջուկային զենք ձեռք բերելու հեռանկարի ֆոնին ԱՄՆ-ը պետք է ուսումնասիրի [Թուրքիայում] հակաբալիստիկ պաշտպանության [համակարգի տեղակայման] հնարավորությունները՝ երկկողմ և ՆԱՏՕ առումներով: Պրն Լարաբիի կարծիքով, սա թույլ կտա ապահովագրել Թուրքիային Միջին Արևելքից արձակվող բալիստիկ հրթիռների աճող վտանգից[2]:

[1] (in the wake of …). Պրն Լարաբին նկատի ունի 2009թ. ապրիլի սկզբին նախագահ Օբամայի այցը Թուրքիա:

[2] Ցավոք, *ՌԵՆԴ* կորպորացիայի մեր տարածաշրջանի համար այս, թերևս, սենսացիոն առաջարկն ըստ արժանվույն չլուսաբանվեց ոչ հայրենական, ոչ այլ հրապարակումներում (եթե չհաշվենք *Finacial Tims*-ի ս.թ. փետրվարի 19-ի սեղմ հաղորդագրությունը: Հիշեցնենք, որ [1]-ի շնորհանդեսը կայացավ ս.թ. փետրվարի 3-ին): ԱՄՆ-Թուրքիա ռազմական համագործակցության խնդիրները մանրամասնող [1]-ի 7-րդ գլխում այս կապակցությամբ ոչ մի բան չի ասվում: Ընդհանրապես, այս առաջարկը կարծես թե դուրս է մնում քննվող հաշվետվության համատեքստից: Տպավորություն է ստեղծվում, թե այն արված է վերջին պահին՝ Պենտագոնից կամ Սպիտակ տնից եկած ազդակներին ի պատասխան:

Ժողովրդավարացումը և Թուրքիայի ներքին ռեֆորմները

Այս հարթությունում [1]-ում ձևակերպված առաջարկները հետևյալներն են.

1. ԱՄՆ-ը պետք է խրախուսի Թուրքիայում ժողովրդավարացման և ներքին բարեփոխումների գործընթացները,
2. ԱՄՆ-ը պետք զերծ մնա Թուրքիայում աճող կրոնական գիտակցությանը գերարձագանքելուց:

2. Թուրքիան և մենք՝ ըստ ՌԵՆԴ-ի

Որոշակի պատկերացում կազմելով վերը նշված յոթ հարթություններից վեցում ԱՄՆ-Թուրքիա ռազմավարական համագործակցության վերակենդանացմանն ուղղված [1]-ում արվող առաջարկների մասին՝ անդրադառնանք «Թուրքիան և Եվրասիան ու Կովկասը» հարթությունում արվող առաջարկներին, որոնք հատկապես հետաքրքրական են մեզ համար: Դրանք ընդամենը երկուսն են և բավական լակոնիկ: Մենք դրանք կներկայացնենք սույն բաժնի վերջում, իսկ այստեղ ավելի հանգամանալի կդիտարկենք այն վերլուծությունները, որոնք և պրն Լարաբիին հանգեցնում են այդ երկու առաջարկներին:

Թուրքիան և Եվրասիան ու Կովկասը

«Թուրքիան և Եվրասիան ու Կովկասը» հարթությունում արվող վերլուծությունները կենտրոնացված են [1] աշխատության 5-րդ գլխում, որը հաշվետվության բուն տեքստում, բավական հատկանշականորեն, վերնագրված է արդեն «Ռուսաստանը և Եվրասիան»: Դիտարկումն իրականացված է հինգ ուղղություններով.

1. ռուսական գործոն,
2. թուրք-հայկական մերձեցում,
3. Հայկական գենոցիդի [մասին] որոշում,
4. ընդլայնված տարածաշրջանային [հարաբերությունների] չափողականություն *(dimension),*
5. էներգետիկ [հարաբերությունների] չափողականություն[1]:

Ռուսական գործոնի վերաբերյալ նշվում է հետևյալը [1, Ch.5, pp. 48-51]: ԽՍՀՄ փլուզումից հետո թուրքական էյֆորիան Կենտրոնական Ասիայում

[1] [1]-ի 5-րդ գլխում Հայաստանի և ողջ Հայության հետ կապված Թուրքիայի խնդիրներին նվիրված ընդհանուր էջերի թիվը (5 էջ) հավասար է էներգետիկ խնդիրների քննարկմանը նվիրված էջերի թվին, գերազանցում է ռուսական գործոնին մեկ էջով (4 էջ) և էականորեն ավելի է տարածաշրջանային խնդիրներին նվիրված էջերից (1 էջ): Այսպիսով, ֆորմալ տեսանկյունից «Թուրքիան և Եվրասիան ու Կովկասը» հարաբերությունների ընդհանուր «չափողականության» 40%-ը պայմանավորված է Հայաստանի և Հայության հետ Թուրքիայի խնդիրներով:

վճռական դերակատարում հաստատելու ուղղությամբ էապես նվազեց ՌԴ-ում Վ.Պուտինի և Դ.Մեդվեդևի նախագահության օրոք: Պարզվեց, որ ՌԴ ազդեցությունն այստեղ շատ ավելի ուժեղ է, քան դա պատկերացնում էին Թուրքիայում[1]: Միևնույն ժամանակ, վաղեմի և պատմական հակառակորդ Ռուսաստանի հետ[2] Թուրքիայի հարաբերությունները նկատելիորեն բարելավվեցին հենց Վ.Պուտինի նախագահության ժամանակ, մանավանդ 2004թ. «Բարեկամության խորացման և բազմակողմանի համագործակցության» երկկողմ հռչակագրի կնքումով: Ներկայումս ՌԴ-ն ապահովում է Թուրքիայի բնական գազի 65% և հում նավթի 40% մատակարարումը: Թուրքիան միջազգային շինարարական պայմանագրերի քառորդ մասն իրականացնում է ՌԴ-ում կամ ՌԴ պատվերով[3]:

Ավելին, Կովկասյան և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններում Թուրքիայի մոտեցումները հետզհետե հարում են ավելի շատ ՌԴ, քան ԱՄՆ մոտեցումներին, օրինակ, ԱՄՆ նախագահ Բուշ-կրտսերի վարչակազմին այնքան բնորոշ ժողովրդավարացման քարոզչության գործում: Թուրքիան այստեղ տեսնում է գոյություն ունեցող ռեժիմների ապակայունացման և քաոսային իրավիճակի հաստատման վտանգ: Որոշ թուրքական ստրատեգներ սկսում են նայել Ռուսաստանին որպես ռազմավարական այլընտրանք Թուրքիայի համար: Ու թեև սա փոքրամասնության կարծիքն է, սակայն վերջին տարիներին այս «կարծես թե խենթ» տեսակետը նոր համախոհներ է ձեռք բերել[4]: Այնուամենայնիվ, գրում է պրն Լարաբին, Թուրքիայի լուրջ, ռազմավարական վերուղղորդումը Արևմուտքից դեպի Ռուսաստան քիչ հավանական է, քանի որ դրանց միջև առկա են հետևյալ չորս հակասությունները.

1. Ռուսաստանի նկատմամբ Թուրքիայի կասկածամտությունը դարավոր է, խոր արմատավորված Թուրքիայի պատմական հիշողությունում:
2. Թուրքիայի և Ռուսաստանի նպատակները և նկրտումները *(goals and ambitions)* բախվում են տարբեր վայրերում և հատկապես Կովկասում,

[1] Եվ այլուր: Հիշեցնենք, որ [1] աշխատությունը ներկայացվեց Դրոզստանում հերթական հեղաշրջումից և ԱՄՆ օդային ռազմուժի «Մանաս» հենակայանի այլևս մշուշոտ հեռանկարի բացումից բավական առաջ: Հանգամանք, որը վկայում է [1] աշխատության այս պնդման համարժեքությունը:

[2] «Վերջին դարերում Թուրքիան և Ռուսաստանը միմյանց նկատմամբ վարել են 13 պատերազմ, որոնց մեծամասնությունում Թուրքիան պարտվել է: …Ստալինի ագրեսիվ քաղաքականությունը Թուրքիայի հանդեպ 1952թ. վերջինիս մղեց դեպի ՆԱՏՕ» [1, p. 48]: Հատկանշական է պրն Լարաբիի կողմից Օսմանյան և Ռուսական կայսրությունների խոսուն նույնականացումը համապատասխանաբար Թուրքիայի Հանրապետության և ԽՍՀՄ/ՌԴ-ի հետ:

[3] «Էներգակիրների կամ էլեկտրական էներգիայի մատակարարման դիմաց՝ շինարարական պայմանագրեր ներկրող երկրում» բանաձևը հատկանշական է արդի Թուրքիայի էներգետիկ քաղաքականության համար: Ավելին, հաճախ այն օգտագործվում է որպես յուրօրինակ պատժամիջոց: Այսպես, Բուլղարիայից էլեկտրական էներգիայի ներկրումները Թուրքիա կասեցվեցին այն բանից հետո, երբ թուրքական որոշ շինարարական ընկերություններ դուրս մնացին Բուլղարիայում շինարարական աշխատանքների իրականացման համար հայտարարված մրցույթներից:

[4] Այստեղ մեջբերվում է Բուրաք Բեկդիլի հետևյալ հոդվածը. *Burak Bekdil,* “An Incursion Which Is Not—and Russophiles in Ankara,” Turkish DailyNews (Istanbul), June 8, 2007.

ուր Թուրքիան ունի խոր և երկարաժամկետ ռազմավարական շահեր *(deep and long-standing strategic interests):*

3. Ռուսաստանը և Թուրքիան էներգետիկ ասպարեզում մրցակիցներ են Կասպիական և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններում: Ռուսաստանը ձգտում է վերահսկել էներգակիրների հոսքն այս տարածաշրջաններում և դեմ է, օրինակ, Տրանսկասպյան և «Նաբուկո» ծրագրերին:
4. Դեպի Ռուսաստան ռազմավարական ուղղորդումը և Արևմուտքից հրաժարվելը Թուրքիայի համար կնշանակի քեմալիզմի ժառանգության դավաճանում և կզայրացնի այս երկրի ռազմական վերնախավին: Պրն Լարաբիի կարծիքով, սա ամենակարևոր հակասությունն է:

Եզրափակելով այս բաժինը՝ պրն Լարաբին գրում է, որ Վրաստան Ռուսաստանի ներխուժումից հետո[1] Թուրքիա-Ռուսաստան հարաբերությունները մեծապես կպայմանավորվեն Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի հետ Ռուսաստանի կապերի հետագա զարգացումով: Նա մեջբերում է Յան Լեսերի[2] այն դիտարկումը, համաձայն որի՝ Թուրքիան այլևս զրկված է իր արևմտյան և եվրասիական, հատկապես կովկասյան շահերի մեջ ընտրություն չկատարելու շռայլությունից: Շռայլություն, որը Թուրքիան կարող էր իրեն թույլ տալ Սառը պատերազմի տարիներին: Այս առումով պրն Լարաբին գտնում է, որ ԱՄՆ-Ռուսաստան մրցակցության սրման հետ մեկտեղ Թուրքիայի համար ռազմավարական մանևրի դաշտն էապես կնեղանա, հատկապես Կովկասում, ուր Թուրքիան կգտնվի ընտրություն կատարելու անհրաժեշտության ճնշման տակ:

Թուրք-հայկական մերձեցման վերաբերյալ [1, Ch. 5, pp. 51-54] հատվածը սկսվում է հետևյալ ուշագրավ պարբերությամբ. «2008թ. ռուս-վրացական օգոստոսյան 5-օրյա պատերազմը Կովկասում տարածաշրջանային փոփոխությունների նոր փուլ սկսեց: Մի կողմից, երերաց Կովկասում նախկինում հաստատված քաղաքական հավասարակշռությունը և ուժեղացավ Կովկասում Ռուսաստանի՝ որպես *Ordnungsmacht* (տարածաշրջանային հեգեմոնի)[3] դերակատարումը: Մյուս կողմից, այս իրողությունն Անկարային Կովկասում

[1] Այդպես է բնագրում *(In the aftermath of the Russian invasion of Georgia…):*

[2] *Ian O. Lesser,* "After Georgia: Turkey's Looming Foreign Policy Dilemmas," *On Turkey*, German Marshall Fund of the United States, August 26, 2008a, p. 2:

[3] Գերմանական աշխարհաքաղաքական *Ordnungsmacht* եզրը այնքան էլ «տարածաշրջանային հեգեմոն» չի նշանակում, ինչպես այն անգլերեն ներկայացվում է [1, p. 51]-ում: Ավելի ճշգրիտ այն կարելի է թարգմանել որպես «օրինապահ կամ կարգը պահող ուժ»: «Ոստիկան»՝ եթե կուզեք (հիշո՞ւմ եք «Ռուսաստանը՝ Եվրոպայի ոստիկան» XIX դարի եզրը): Եվ հետո, չափազանց ուշագրավ է այս հաշվետվությունում չգիտես որտեղից հայտնված գերմանական աշխարհաքաղաքական եզրը, այն էլ թուրք-հայկական մերձեցման վերաբերյալ հատվածում: Սթիվեն Լարաբիի նման վերլուծաբանի մոտ նման բաներ պատահական չեն լինում: Եվ որ ավելի կարևոր է, մեր տարածաշրջանում ևս այսպիսի բաները պատահաբար չեն լինում (տե՛ս ստորև):

ակտիվություն դրսևորելու նոր հնարավորություն ընձեռեց՝ տարածաշրջանում կայունության ամրապնդման և ռուսական ներխուժումով առաջացած քաղաքական ապակայունացման մեղմման համար»[1]: Այս առումով, շարունակում է [1] հեղինակը, «[Թուրքիայի] ակտիվության ամենակարևոր դրսևորումը Անկարայի փորձն էր՝ լավացնել հարաբերությունները Երևանի հետ», որոնք լարված էին մասնավորապես երկու խնդրով. ա) Հայաստանի՝ Թուրքիային գենոցիդի՝ հայերի 1915թ. զանգվածային մահացությունների համար մեղավոր պիտակավորելու կամպանիայով[2], բ) Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղ Հայաստանի ներխուժմամբ և գրավմամբ: Սրանից հետո, շարունակում է պրն Լարաբին, Անկարան փակեց սահմանները Հայաստանի հետ և կասեցրեց Երևանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման [ի՞ր] ջանքերը: Սակայն 2008թ. օգոստոսին Վրաստան Ռուսաստանի ներխուժումը[3] խթանեց Թուրքիային բարելավել հարաբերությունները Հայաստանի հետ: Այս ջանքերը նոր թափ ստացան 2008թ. սեպտեմբերին նախագահ Գյուլի Հայաստան կատարած պատմական այցով և ազդարարեցին երկկողմ հարաբերությունների բարելավմանն ուղղված ինտենսիվ դիվանագիտության մեկնարկը: Առավել ևս, գրում է պրն Լարաբին, որ սա Հայաստան Թուրքիայի ղեկավարի երբևէ իրականացված առաջին այցն էր[4]: 2009թ. ապրիլի 22-ին,

[1] Խոսքն այստեղ, իհարկե, Թուրքիայի տխրահռչակ «Կովկասյան պլատֆորմի» մասին է: Քանի որ դժվար թե այսօր որևէ մեկը հիշի 2000թ. հունվարի թուրք-վրացական վաղամեռիկ «Հարավային Կովկասի կայունության պակտ»-ի մասին: Չնայած արժե, որ դրա մասին հիշեն հայրենական մեր որոշ վերլուծաբանները և գործիչները:

[2] Բնագրում օգտագործված է *"Armenia's campaign to brand Turkey guilty of genocide for the mass deaths of Armenians in 1915"* [1, p. 51] անճոռնի տրամաբանությամբ և անգլերեն անճոռնի շարահյուսությամբ արտահայտությունը: Անշուշտ, ստիպված, այլ ոչ թե պրն Լարաբիի մայրենիին կամ տարրական տրամաբանությանը լավ չտիրապետելու հետևանքով (զանգվածային մահացությունն՞ե՞ր: Օրինակ, ցոփ կյանք վարելու գերհոգնածության պատճառո՞վ): Թարգմանության ժամանակ փորձել ենք պահպանել այս անճոռնիությունը: Պատկերացնում եմ, թե ինչ աղաղակ կբարձրանար *ՌԵՆԴ*-ի հեղինակավոր հրատարակումների էջերում 1941-45թթ. հրեաների ինչ-որ անհասկանալի զանգվածային մահացությունների մասին արտահայտության հայտնվելուց հետո: 2003թ. պրն Լարաբին արտահայտվում էր ավելի համարձակ՝ նշելով «1915-16թթ. Օսմանյան ուժերի կողմից հայերի կոտորածի (massacre) ժառանգությունը» [2, p. 106]:

[3] Դժվար է թոթափել այն զգացումը, որ 2008թ. Հ. Օսիայի և այստեղ տեղակայված ՌԴ խաղաղապահների նկատմամբ Վրաստանի օգոստոսյան ագրեսիային Ռուսաստանի ռազմական պատասխանը խորապես ազդել է պրն Լարաբիի և շատ այլ վերլուծաբանների վրա ԱՄՆ-ում և այլուր: Իրոք, «2008թ. օգոստոսը» տարածաշրջանային զարգացումներում վճռական գործոնի ենթատեքստով [1]-ի 5-րդ գլխում հիշատակվում է առնվազն 9 անգամ: Համոզված ենք, որ ՌԴ կողմից Հ. Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումն ավելի է խորացրել այս տպավորությունը (էլ չենք ասում Ղրղզստանում և Ուկրաինայում ներկայիս զարգացումները, ՌԴ Սևծովյան նավատորմի հետ կապված վերջին որոշումները և այլն):

[4] Ավելի համարժեք չէ՞ր լինի արդյոք ասել, որ «երկկողմ հարաբերությունների բարելավմանն ուղղված այս գործընթացը նոր թափ ստացավ Հայաստանի նախագահ Սարգսյանի՝ Թուրքիայի նախագահ Գյուլին ուղղված պատմական հրավերով՝ այցելել Հայաստան և վերջինիս՝ այդ հրավերն ընդունելով»: Առավել ևս, որ «սա Հայաստանի ղեկավարի՝ Թուրքիայի ղեկավարին երբևէ արված առաջին հրավերն էր»: Ընդհանրապես, հայ-թուրքական մերձեցման խնդրում նախաձեռնությունը գրեթե ամբողջությամբ Թուրքիային վերագրելու պրն Լարաբիի (և ոչ միայն) ջանքերն այնքան ակնառու են և միակողմանի, որ ստիպում են ենթադրել այս հարցում նրա (և այլ վերլուծաբանների) ունեցած որոշակի շփոթմունքի մասին:

շարունակում է նա, մեկ տարի վարագույրների հետևում տարվող դիվանագիտական բանակցությունների արդյունքում, հրապարակվեց Հայաստանի և Թուրքիայի միացյալ հայտարարությունն այն մասին, որ երկու երկրները համաձայնել են հարաբերությունների կարգավորմանն ուղղված «ճանապարհային քարտեզի» շրջանակների շուրջ: Ըստ պրն Լարաբիի, այս շրջանակները ներառում են.

1. երկու երկրներում դիվանագիտական ներկայացուցչությունների հիմնումը,
2. թուրք-հայկական սահմանի աստիճանական բացումը,
3. Հայաստանի կողմից Թուրքիայի միջազգային սահմանների ճանաչումը,
4. պատմական [հարցերով] հանձնաժողովի ստեղծումը, որը, ըստ պրն Լարաբիի, պետք է ուսումնասիրի 1915թ. վիճահարույց դեպքերը[1]:

Եվ այստեղ պրն Լարաբին շատ հատկանշական պարզաբանում է մտցնում տողատակի իր մեկնաբանությունում. «Այս հայտարարության ժամանակագրությունը Հայոց հիշատակի օրվանից (*Armenian Remembrance Day*) ընդամենը 2 օր առաջ, երբ ԱՄՆ նախագահներն ավանդաբար հանդես են գալիս հիշատակի իրենց ուղերձներով՝ Հայերի զանգվածային մահացության կապակցությամբ սպանված 1915թ.[2], ենթադրել է տալիս, որ միացյալ հայտարարությունն ի սկզբանե նախատեսված էր, որպեսզի կանխի «գենոցիդ» բառի օգտագործումը Օբամայի հայտարարությունում և կանխավ ցրի *(diffuse)* գենոցիդի խնդիրը 2009թ. ապրիլի 6-8-ը Օբամայի Թուրքիա կատարած այցի [օրակարգից]»[3]:

Այնուհետև, ԱՄՆ-Թուրքիա ռազմավարական համագործակցության տեսանկյունից [1]-ում թվարկվում են այն կարևոր ձեռքբերումները, որոնք կարձանագրվեն թուրք-հայկական հարաբերությունների բարելավումից: Նախ՝ դա թույլ կտա Հայաստանին թուլացնել տնտեսական և քաղաքական կախվածությունը Մոսկվայից: Երկրորդ՝ նոր լիցք կհաղորդվի ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործում: Երրորդ՝ Հայաստանին հնարավորություն կտա ինտեգրվել տարածաշրջանային էներգետիկ և տնտեսական սխեմաներին, «որոնցից այն ներկայումս արտաքսված է»: Եվ վերջապես, չորրորդ՝ թույլ կտա վերացնել ճնշումը ներկայումս [ԱՄՆ Կոնգրեսի] Ներկայացուցիչների պալատի առջև կանգնած, Հայոց գենոցիդի բանաձևի անցկացման [հարցում]:

[1] Ինչպես տեսնում ենք, պրն Լարաբին մի փոքր տարվում է այս շրջանակների *իր* նկարագրումով: Դրանց տպագրված բնագրերում բացակայում են «սահմանների *աստիճանական* բացում» և «1915թ. վիճահարույց դեպքերը» արտահայտությունները: Եվ նույնիսկ այսպիսի տարվածության պարագայում, պրն Լարաբին այստեղ, միանգամայն հիմնավոր կերպով, չի հիշատակում ոչ «Ադրբեջանի գրաված տարածքները», ոչ «Լեռնային Ղարաբաղի» խնդիրը, ոչ էլ նման մի բան:

[2] (… mass deaths of the Armenians killed in 1915): Նորից այս անճոռնի տրամաբանությունն ու շարահյուսությունը:

[3] Նկատենք, որ պրն Լարաբիի տրամաբանությունը սայթաքում է ոչ միայն Հայոց եղեռնի հետ կապված ձևակերպումներում: Հասկանալի է, որ 2009թ. ապրիլի 22-ի հրապարակումը, գոնե մեր տիեզերքում, չի կարող «կանխավ ցրել» 2009թ. ապրիլի 6-8-ը պլանավորված ու իրականացված և ոչ մի բան, նույնիսկ այնքան կարևոր, որքան ԱՄՆ նախագահի Թուրքիա պաշտոնական այցի օրակարգային խնդիրը:

Այնուամենայնիվ, ընդգծում է պրն Լարաբին, Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման խնդիրը [Թուրքիայում] հեռու է վճռված լինելուց: Այս հարցը լուրջ խոչընդոտներ առաջացրեց Ադրբեջանի հետ Թուրքիայի հարաբերություններում: Բաքուն, վախենալով, որ թուրք-հայկական դիվանագիտական հարաբերությունների հաստատումով կորցնում է այն լծակը, որն օգտագործում է Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի շուրջ [վարվող] բանակցությունների ընթացքում, թուրք-հայկական մերձեցման գործում Թուրքիային իր օժանդակումը պայմանավորեց այս բանակցություններում արձանագրվող առաջխաղացմամբ: Անսալով Ադրբեջանի այս մտավախություններին՝ Անկարան վստահեցրեց Բաքվին, որ թուրք-հայկական սահմանը չի բացվի այնքան ժամանակ, մինչև որ Երևանը չհեռացնի զորքերը Լեռնային Ղարաբաղից[1]: [Այսուհետ] Անկարան տեսնում է Հայաստանի հետ իր սահմանների բացման գործընթացը շաղկապված և զուգահեռ Լեռնային Ղարաբաղի [հարցում] առաջընթացի հետ: Ամենայն հավանականությամբ, շարունակում է պրն Լարաբին, սա կբարդացնի թուրք-հայկական հարաբերությունների նորմալացումը[2]:

Ռուսաստանը նույնպես կարող է որոշակի արգելքներ դնել թուրք-հայկական հարաբերությունների լիարժեք նորմալացման հարցում, գրում է պրն Լարաբին: Իրոք, Երևանի կարիքը Մոսկվայի աջակցության նկատմամբ այս պարագայում կնվազի և Հայաստանի համար կբացի Արևմուտքի հետ կապերի ընդլայնման հեռանկարներ[3]: Այսպիսի զարգացումը Ռուսաստանի շահերից չի բխում, քանի որ թուլացնում է Երևանի վրա ներազդման լծակը և ավելի լայն՝ իր ազդեցությունը Կովկասում: Հետևաբար, ինչ-որ մի պահ Մոսկվան կարող է որոշել, որ այս մերձեցումը չափից ավելի է վտանգում իր շահերը Կովկասում և ճնշում կբանեցնի Երևանի վրա հետ կանգնել [գործընթացից]՝ այսպիսով սառեցնելով կամ կասեցնելով թուրք-հայկական մերձեցումը[4]:

Այնուհետև, թվարկելով թե՛ Թուրքիայում, թե՛ Հայաստանում թուրք-հայկական մերձեցման ներքին լուրջ դժվարություններն ու խոչընդոտները, պրն Լարաբին վերջապես հասնում է 2009թ. օգոստոսի 31-ին՝ հայտնի զույգ արձա-

[1] Այստեղ պրն Լարաբին հղում է կատարում Էմրուլա Ուսլուի 2009թ. մայիսի 14-ի հոդվածին (*Emrullah Uslu,* "Erdogan Reassures Azerbaijan on Turkey's Border Policy with Armenia," *Eurasia Daily Monitor*, Vol. 6, No. 93, May 14, 2009): Այսպիսով, կամա թե ակամա, պրն Լարաբին հստակորեն ֆիքսում է «մեկ տարի վարագույրների հետևում տարվող դիվանագիտական բանակցությունների» արդյունք հանդիսացող «ճանապարհային քարտեզի» շրջանակներից Թուրքիայի հստակ շեղումը: Ահա թե ինչու էր, ակամայից դառնալով սատանայի փաստաբանը, մի փոքր վեր իր տեքստում պրն Լարաբին անհիմն կերպով ավելացնում «սահմանների *ամբողջական* բացում» արտահայտությունը:

[2] *Как в воду глядел,* ինչպես ասում են ռուսները:

[3] Ցավոք, այստեղ պրն Լարաբին չի մանրամասնում Հայաստանի համար Արևմուտքի հետ համագործակցության այս նոր բացվող հեռանկարները: Եթե խոսքը Հայաստանի ՀԱԴԿ լիարժեք անդամակցությանն է վերաբերում, ապա, ամենայն հարգանքով հանդերձ, կառաջարկեինք պրն Լարաբիին վերհիշել այս կապակցությամբ *ՌԵՆԴ*-ի մի այլ՝ չափազանց հետաքրքիր ուսումնասիրության արդյունքները (տե՛ս [3], նաև [4]): Եվ հետո, ինչպես ասում են հայերը, վրացիներն այս հարցում «դորթ ու բեշ արեցի՞ն, որ մենք անենք»:

[4] *All is right, what is right*, ինչպես ասում են անգլիացիները (և աջակողմյան քաղաքական ուժերի ջատագովներն ԱՄՆ-ում): Ափսոս, սակայն, որ պրն Լարաբին այստեղ չի հիշատակում 2010թ. հունվարի 12-ի ՀՀ Սահմանադրական դատարանի հայտնի վճիռը: Ժամանակագրական առումով նա դա կարող էր անել, բովանդակային առումով՝ պարտավոր էր:

նագրությունների հրապարակմանը [1, p. 54]: Նա նշում է, որ դրանցից առաջինում «կողմերը խոստանում են դիվանագիտական հարաբերություններ հաստատել արձանագրությունների վավերացման ժամկետի առաջին ամսվա առաջին օրը և բացել սահմանը՝ *արձանագրությունների վավերացման ժամկետից երկու ամսվա ընթացքում»*[1]:

Հայկական գենոցիդի [մասին] որոշման խնդրին նվիրված [1, p. 55]-ի ընդամենը երեք պարբերությունում նշվում է հետևյալը: Թուրք-հայկական մերձեցման գործընթացը հավելյալ բարդանում է ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության *(genocide)* հարցով, որը կանոնավոր կերպով բարձրացվում է ԱՄՆ-ում հայկական գաղութի (դիասպորայի) կողմից: Այս գործընթացը խստորեն դատապարտվում է Թուրքիայի կողմից և ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների համար տարաձայնությունների լուրջ աղբյուր է հանդիսանում: 2007թ. աշնանը Բուշի վարչակազմը հազիվ, վերջին րոպեին կարողացավ կանխել Անկարայի հետ լուրջ ճգնաժամի [ծագումը]՝ խոչընդոտելով Հայոց ցեղասպանության *H.R.* 106 Որոշման քվեարկումը ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում: Այն նորից ներկայացվեց 2009թ.: [Ընդ որում,] 2008թ. նախագահական ընտրությունների կամպանիայի ժամանակ Օբաման (ինչպես և Հիլարի Քլինթոնը) սատարել էին այս որոշումը, շարունակում է պրն Լարաբին: Սակայն [արդեն] նախագահ Օբաման գերադասությունը տվեց Թուրքիայի հետ կապերի սերտացմանը՝ խնամքով խուսափելով «գենոցիդի» հիշատակումից 2009թ. ապրիլի 24-ի իր ուղերձում՝ Հայոց հիշատակի օրվա առթիվ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ կարճաժամկետ հեռանկարում նա չի սատարի [ԱՄՆ Կոնգրեսում] այս որոշման ընդունումը:

Եզրափակելով այս հատվածը՝ պրն Լարաբին նշում է, որ այս՝ *H.R.* 106 որոշման ընդունումը լուրջ հարված կհասցնի Օբամայի վարչակազմի՝ ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններն ավելի կայուն հիմքերի վրա խարսխելու ջանքերին, կստիպի Թուրքիային հակադարձ քայլեր ձեռնարկել, ներառյալ՝ իր տարածքում հենակայաններից ԱՄՆ օգտագործման հնարավորությունների սահմանափակումը[2]: Բացի այդ, *H.R.* 106 որոշման ընդունումը կարող է

[1] Ընդգծումը մերն է - Ա.Մ.: Արձանագրությունների այս մասով հստակ մեջբերումից հետո, որից պարզ է դառնում, որ սահմանի բացումն ամենևին էլ շաղկապված չէր «Ղարաբաղյան խնդրի» այս կամ այն ասպեկտների հետ, պրն Լարաբին, իհարկե, պետք է որ վերաշարադրեր վերն արված իր դիտարկումները: Բայց, ինչ արած, բոլորս մարդ ենք և իդեալական չենք:

[2] Պրն Լարաբիի գնահատումներով, ներկայումս ռազմուժի, սպառազինության և այլ նյութերի 70% շարժը Իրաք և Իրաքից իրականացվում է Ինջիրլիք հենակայանից [1, p. 113]: Ստիպված ենք փաստել, որ 2009 և 2010թթ. ապրիլի 24-ին ԱՄՆ նախագահի շուրթերից «գենոցիդ» բառը չարտաբերելը և ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության որոշման ընդունման հերթական (հավանական) ձախողումը պարադոքսալ կերպով կանխորոշված էր դեռ 2008թ. նոյեմբերին, երբ նախագահական ընտրություններում իշխանության եկավ ԱՄՆ դեմոկրատական կուսակցությունը: Պարզվում է, որ այս կուսակցության նախընտրական քարոզարշավի *մեզ* հետաքրքրող ամենակարևոր դրույթը ոչ թե Հայ դատի այս կամ այն ասպեկտին Բ.Օբամայի և Հ.Քլինթոնի սատարման խոստումներն էին, ինչպես դա թվում էր ոմանց, մասնավորապես՝ ԱՄՆ հայ համայնքում, այլ Իրաքից ԱՄՆ զորքերի դուրսբերման ժամանակացույցի հրապարակման խոստումը և *Ռեալփոլիթիկ*-ի վերադարձը:

էապես խոչընդոտել ներկայումս ընթացող թուրք-հայկական մերձեցման գործընթացին և ական հանդիսանալ վերջերս Թուրքիայում Հայկական հարցի նկատմամբ ձևավորվող ավելի բաց մոտեցումների համար[1]:

Ընդլայնված տարածաշրջանային [հարաբերությունների] *չափողականություն (The broader regional dimension)* հատվածում [1, p. 56] պրն Լարաբին խոսքն սկսում է հետևյալ պնդումով. «Թուրքիայի կողմից Հայաստանի հետ հարաբերությունների լավացման շարժառիթը (*drive*) հանդիսանում է Կովկասում խաղաղություն ու կայունություն հաստատելու Թուրքիայի ավելի լայն ջանքի (*effort*) բաղկացուցիչ մաս: Այս ջանքի գլխավոր մասը Էրդողանի կառավարության՝ Կովկասում կայունության և համագործակցության պլատֆորմի նախաձեռնությունն է[2], որը հայտարարվել է Վրաստան Ռուսաստանի ներխուժումից հետո»:

Այս պլատֆորմը, սակայն, շարունակում է պրն Լարաբին, հապճեպ իրար միացված նախաձեռնությունների կույտի տպավորություն է թողնում, «որի մանրամասները չէին համակարգվել [Թուրքիայի] արևմտյան դաշնակիցների հետ»: Այն ունի մի քանի թերություն, որոնք քիչ հավանական են դարձնում դրա անմիջական հաջողությունը: Նախ, ռուսական ռազմական ներխուժման ենթարկված Վրաստանը դժվար թե համագործակցի մի պլատֆորմում, որը կուժեղացնի ՌԴ տնտեսական և քաղաքական ներգրավվածությունը տարածաշրջանում: Լեռնային Ղարաբաղի շուրջ Ադրբեջանի և Հայաստանի միջև չլուծված տարածքային հակամարտությունն այս ծրագիրը կյանքի կոչելու երկրորդ հիմնական արգելքն է, գտնում է պրն Լարաբին[3]: 3-րդ հիմնական արգելքը, ըստ պրն Լարաբիի, Ռուսաստանի կողմից Վրաստանի անջատողական շրջանների՝ Հ. Օսիայի և Աբխազիայի ճանաչումն է: Ռուսաստանի այս գործողությունն անջատողականության նախադեպ է ստեղծում, որը տարածաշրջանի քիչ թվով երկրներ *(countries)* հակված կլինեն օրինականացնել: Սա հատկապես ճիշտ է Թուրքիայի պարագայում, քանի որ [այս նա-

[1] Այստեղ պրն Լարաբին մեջբերում է Շաբան Քարդաշի հոդվածը (Turkey Confronts a Disputed Period in Its History. Şaban Kardaş *Eurasia Daily Monitor*, Vol. 5, No. 240, December 17, 2008. Ուշադրություն դարձրեք ժամանակագրությանը), համաձայն որի Թուրքիան բացել է Օսմանյան ժամանակների իր արխիվները թուրք և միջազգային ուսումնասիրողների առջև, իսկ 2009-ից կսկսի դասավանդել Հայոց պատմությունն ու լեզուն թուրքական համալսարաններում:

[2] Տարօրինակ է, որ պրն Լարաբիի (և ոչ միայն նրա) ուշադրությունից վրիպում է այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանության համառ չճանաչման պարագայում, Թուրքիայի՝ *մեզ* մոտ խաղաղություն և կայունություն հաստատելու այսպիսի յուրօրինակ նախաձեռնությունը նման կլինի 3-րդ Ռայխում ռայխսֆյուրեր Հ.Հիմլերի կողմից հրեաներին արված «խաղաղության և կայունության հաստատման» կոչին: Իրոք որ, ո՞վ անմահ Եզովպոս, «աղվեսին հավաքնում կարգ ու կանոն հաստատող կարգեցին»: Սակայն, ինչ-որ այսպիսի մի բան պրն Լարաբին, հավանաբար, զգում էր, քանի որ հետագա տողերում քարը քարին չի թողնում Թուրքիայի այս նախաձեռնությունից՝ թեև այլ հիմնավորումներից ելնելով:

[3] Ցավալի է, որ պրն Լարաբին չի ցանկանում տեսնել այս դրույթի շատ ավելի համարժեք և տրամաբանական շարադրումը, այն է՝ Ադրբեջանի՝ աղերսները հասցեագրած Թուրքիային և դրանց արձագանքումը Թուրքիայի կողմից լուրջ արգելք են հանդիսանում իր իսկ՝ Թուրքիայի կողմից առաջարկվող ծրագրի իրականացման համար:

խաղեպը] կարող է ոգևորել Քրդական անջատողականությանը Թուրքիայում[1]: Եվ վերջապես, գրում է պրն Լարաբին, Թուրքիայի այս նախաձեռնությունը չի ներառում ԱՄՆ-ը, ԵՄ-ը կամ Իրանը, որոնք բոլորը Կովկասում գործող կարևոր *ակտորներ* են: Տպավորություն է ստեղծվում, որ դրանք տեղյակ չէին նախաձեռնությանը մինչև վերջինիս հրապարակումը և ընդունեցին այն, համենայնդեպս, առանց խանդավառության: Այսպիսով, եզրակացնում է հեղինակը, այս նախաձեռնությունը դժվար թե անմիջապես որևէ հաջողություն ունենա: Սակայն, հավելում է պրն Լարաբին, թուրք պաշտոնյաները դիտարկում են այն որպես Հայաստանին ներգրավելու *(ingaging)* լրացուցիչ տարբերակ և հուսով են, որ այն՝ երկարաժամկետ հեռանկարում, կօգնի տարածաշրջանային ավելի մեծ համագործակցություն խրախուսելու գործում:

Էներգետիկ [հարաբերությունների] *չափողականություն* հատվածը [1, pp. 57-61] ավանդաբար սկսելով «Վրաստան Ռուսաստանի ներխուժման» մասին հիշատակումով՝ հեղինակը խոսքը հիմնականում տանում է «Նաբուկո» և այլ հարակից ծրագրի շուրջ[2]:

* * *

Ի մի բերելով այս բոլոր դիտարկումները՝ պրն Լարաբին ձևակերպում է «Թուրքիան և Եվրասիան ու Կովկասը» հարթությունում ԱՄՆ-Թուրքիա ռազմավարական համագործակցության վերակենդանացմանն ուղղված *ՌԵՆԴ*-ի առաջարկները:

1. ԱՄՆ-ը պետք է օժանդակի Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների բարելավմանն ուղղված ճիգերին, մասնավորապես՝ թուրք-հայկական սահմանի բացման ուղղությամբ:
2. Օբամայի վարչակազմը պետք է սերտորեն աշխատի Կոնգրեսի հետ, որպեսզի կանխի Հայկական գենոցիդի բանաձևի ընդունումը[3]:

---

[1] Այն հանգամանքը, որ Թուրքիան խորապես տպավորված է Ռուսաստանի կողմից Հ. Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչումով (և ոչ միայն դրանով), չի վրիպել նաև մեր աչքից: Սակայն, այստեղ չափազանց հետաքրքիր կլիներ ծանոթանալ այն թվաբանությանը, որը հանգեցնում է պրն Լարաբիին մեր տարածաշրջանում այս նախադեպով հետաքրքրված թվով «քիչ երկրներ» գնահատականին: Թվաբանական այս հաշվարկները, ինչպես նաև մեր տարածաշրջանի երկրների (*countries*) մասին պրն Լարաբիի սահմանումներն ու պատկերացումները (օրինակ, ինչո՞վ, ինչպե՞ս և ինչո՞ւ են մեր տարածաշրջանի երկրները՝ *countries*, տարբերվում պետություններից՝ *states*, մանավանդ գաղութատիրական, վերազգային համակարգերի փլուզման և ազգային մտածելակերպի զարթոնքի մեր ժամանակներում) *ՌԵՆԴ*-ի քննվող նյութում, ավաղ, բացակայում են: Հավանաբար, դրանք կարելի է գտնել *ՌԵՆԴ*-ի *Nation Building*-ին նվիրված հրատարակումների շարքում, բայց սա դուրս է մեր հոդվածի շրջանակներից:

[2] Բոլոր այս հարցերը հանգամանալի կերպով լուսաբանվել և լուսաբանվում են «21-րդ ԴԱՐ» հանդեսի էջերում և «Նորավանք» ԳԿՀ կայքեջում: Ուստի, մենք չենք ծանրանա դրանց վրա:

[3] Ինչպես տեսնում ենք, դրանք բացառապես վերաբերում են Հայաստանին և Հայությանը: Այսինքն՝ «Թուրքիան և Եվրասիան ու Կովկասը» հարաբերությունների ընդհանուր «չափողականության» մեջ Հայաստանի և Հայության հետ Թուրքիայի խնդիրները կազմում են ոչ թե 40%, ինչպես դա կարելի էր եզրակացնել դիտարկումների ծավալից (տե՛ս վերը), այլ 100%, ինչը հետևում է այդ դիտարկումների արդյունքում ձևակերպված առաջարկներից:

3. Թուրքիայի ապագայի սցենարները՝ ըստ ՌԵՆԴ-ի

ՌԵՆԴ-ի աշխատության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար մեզ մնում է միայն դիտարկել Թուրքիայի ապագա զարգացումներին նվիրված այն սցենարները (այլընտրանքային ապագաները), որոնք բերվում են [1]-ի 9-րդ գլխում: Դրանք չորսն են. ա. արևմտամետ Թուրքիա, բ. իսլամացող Թուրքիա, գ. ազգայնացող Թուրքիա, դ. ռազմական հեղաշրջում: Միանգամից նշենք, որ [1]-ում միջնաժամկետ հեռանկարում ամենահավանականն է համարվում ապագայի «Ազգայնացող Թուրքիան» սցենարը, ուստի և սկսենք դրանից: Ինչպես և վերը, դիտարկումն իրականացնում ենք՝ խստիվ հետևելով բնագրին: Մեր դիտարկումները բերում ենք տողատակում:

Ազգայնացող Թուրքիա. ապագա զարգացումների սցենար

Հիասթափված և ջղաձգված ԵՄ անդամակցության հարցում Եվրոպայի կողմից առաջադրվող նորանոր պահանջներով՝ Թուրքիան հրաժարվում է ԵՄ [լիարժեք] անդամակցության հարցապնդումից, թեև պահպանում է Եվրոպայի հետ իր տնտեսական ու առևտրային սերտ կապերը՝ բավարարվելով «արտոնված համագործակցության» այս կամ այն մոդելով. օրինակ, ինչպես որ դա առաջարկում են [Ֆրանսիայի նախագահ] պրն Սարկոզին կամ Գերմանիայի քրիստոնեա-դեմոկրատները: Թուրքիան շարունակում է պահպանել նաև ԱՄՆ-ի հետ իր կարևոր ռազմական կապերը, թեև վարում է շատ ավելի ինքնուրույն քաղաքականություն, հատկապես Միջին Արևելքի և Կենտրոնական Ասիայի նկատմամբ: Ամրապնդվում են Ռուսաստանի հետ տնտեսական կապերը, ընդլայնվում է այս երկրների միջև ռազմական համագործակցությունը: Իրաքի քրդերի նկատմամբ Թուրքիան կոշտացնում է դիրքորոշումը և հակված է ՔԱԿ-ի դեմ միակողմանի ռազմական գործողություններ իրականացնելուն:

Նման պարագայում Թուրքիան ԱՄՆ-ի համար դառնում է ավելի դժվար գործընկեր, իսկ այս երկրում գտնվող ռազմական հենակայանների օգտագործումը ԱՄՆ-ի կողմից դառնում է ավելի սահմանափակ: Քաղաքական և ռազմական առումներով ԱՄՆ-ը այլևս չի կարողանա հույս դնել Թուրքիայի օժանդակման վրա Ինջիրլիքի և այլ հենակայանների օգտագործման հարցում հատկապես Միջին Արևելքի հետ կապված խնդիրներում:

Ապագայի այսպիսի զարգացումն ամենահավանականն է միջնաժամկետ հեռանկարում: Որ գործերը զարգանում են այս սցենարով, կարելի կլինի դատել հետևյալ բնութագրիչներից: Ամրապնդվում է ազգայնական քաղաքական կուսակցությունների օժանդակումը հանրության կողմից, մամուլում ուժեղանում է հակաարևմտյան հռետորականությունը, խափանվում են [Թուրքիայի] քրեական օրենսգրքից 301 հոդվածի[1] վերացման փորձերը,

[1] Այս հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն այսպես կոչված «Թուրքականության դեմ» գործունեության համար:

ուժգնանում է փոքրամասնությունների, հատկապես քրդերի նկատմամբ բացահայտ թշնամական վերաբերմունքը, վերածնվում է Կիպրոսի նկատմամբ ազգայնական հռետորականությունը, թուլանում է Հունաստանի հետ մերձեցման գործընթացը, ուժեղանում է հակակրանքը ԵՄ-ի հանդեպ, թուլանում են կապերը ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ:

Իսլամացող Թուրքիա. ապագա զարգացումների սցենար

Ապագայի այս սցենարում Թուրքիան թեև չի բռնի Իրանի ուղին և շարիաթը չի դարձնի կառավարման հիմք, սակայն կընդգծի իր իսլամական ինքնությունը: Կապերն Արևմուտքի հետ կթուլանան, հակառակը՝ կուժեղանան կապերը մահմեդական աշխարհի հետ: Սա հնարավոր է, եթե՝ ա. Էրդողանի մեղմ իսլամիստական առաջնորդումը փոխարինվի ավելի ռադիկալ մահմեդականով, բ. ԵՄ-ը կշարունակի խոչընդոտել Թուրքիային անդամակցության հարցում, գ. ԱՄՆ-ը կձախողվի ՔԱԿ-ի դեմ Թուրքիային կրիտիկական կարևոր օժանդակություն ցուցաբերելու գործում:

ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների համար ապագայի այս սցենարն ունի ամենալուրջ բացասական հետևանքները: Էականորեն կնվազի կամ նույնիսկ զրոյի կհավասարվի Թուրքիայում տեղակայված հենակայաններից ԱՄՆ օգտվելու հնարավորությունը: Ինջիրլիք հենակայանի կորուստը լրջագույն ազդեցություն կունենա Իրաքում ԱՄՆ [ռազմական] առաքելություններ իրականացնելու կարողության վրա: Ռազմական հենակայանների հարցում ԱՄՆ-ը կկանգնի տարածաշրջանում այլընտրանք որոնելու հարցին դեմ-հանդիման: Շատ հարցերում, և հատկապես արաբա-իսրայելական հակամարտությունում, Թուրքիան կզբաղեցնի բացահայտ արաբամետ դիրքորոշում: Իսրայելի հետ անվտանգության և հետախուզության գծով Թուրքիայի համագործակցությունն էապես կնվազի կամ նույնիսկ ընդհանրապես կդադարի: Փոխարենը, կուժեղանա Սիրիայի և Իրանի հետ անվտանգության գծով համագործակցությունը: Թուրքիան դուրս կգա ՆԱՏՕ-ից և կհրաժարվի ԵՄ անդամակցության հարցապնդումներից:

Պրն Լարաբիի կարծիքով, թեև այս սցենարի առանձին դրվագներ ներկայումս արդեն իսկ մարմնավորվում են, սակայն դրա ամբողջական իրականացման հավանականությունը փոքր է, մանավանդ եթե ԱՄՆ-ը բավարար զգայունություն և ընդարձակ օժանդակություն ցուցաբերի Թուրքիայի առջև կանգնած կարևորագույն խնդիրների հետ կապված: Այստեղ հատկապես կարևոր են ՔԱԿ-ի հետ կապված խնդիրները:

Որ գործերը զարգանում են այս սցենարով, կարելի կլինի դատել հետևյալ բնութագրիչներից: Կրթական և իրավական ոլորտներում թուլանում է աշխարհիկ վերահսկումը, թուլանում է նաև Թուրքիայի ռազմական շրջանակնե-

րի ազդեցությունը քաղաքականության վրա: Էրդողանի գլխավորած Արդարություն և զարգացում կուսակցությունը (ԱԶԿ) կորցնում է գերիշխող դիրքը, հասարակությունում աճում է ներքին բևեռացումն աշխարհիկ և մահմեդական հատվածների միջև, սահմանափակվում են ոգելից խմիչքների վաճառքն ու օգտագործումը: Ուժեղանում են Թուրքիայի կապերն Իրանի և այլ ռադիկալ մահմեդական ռեժիմների հետ, ուժգնանում է Պաղեստինի պահանջատիրությանը Թուրքիայի օժանդակումը, ակտիվանում են կապերը «Հիզբալլահի» և «Համասի» հետ: Թուրքիան վճռում է դուրս գալ ՆԱՏՕ-ից:

Արևմտամետ Թուրքիա. ապագա զարգացումների սցենար

Ապագայի այս սցենարում Թուրքիան կդառնա ԵՄ անդամ կամ այդ հարցում էականորեն առաջ կգնա: ԵՄ-ը կհրաժարվի կենտրոնացած ուժեղ ֆեդերալ միավոր դառնալու իր նպատակից և ազգ-պետությունների ավելի արձակ կոնֆեդերացիա կներկայացնի, ինչը կդյուրինացնի Թուրքիայի անդամակցության գործընթացը և քաղաքական տեսանկյունից կհեշտացնի Թուրքիայի ԵՄ անդամ լինելու իրողության ըմբռնումը ԵՄ այլ անդամների կողմից[1]: Էականորեն կբարելավվի Թուրքիայում մարդու իրավունքների պաշտպանությունը, կուժեղանա ռազմական շրջանակների վրա քաղաքացիական վերահսկողությունը, կփոքրանա ԵՄ երկրների համեմատ Թուրքիայի տնտեսական զարգացածության մակարդակի տարբերությունը:

Այս ապագայում կխարսխվի Թուրքիայի եվրաատլանտյան կողմնորոշումը: Միևնույն ժամանակ, Թուրքիան Արևմուտքի համար կդառնա մահմեդական աշխարհին կապող կարևոր կամուրջ: Ընդ որում, երկարաժամկետ հեռանկարում Թուրքիան անվտանգության հարցերով կկողմնորոշվի ավելի շատ դեպի Բրյուսել, քան Վաշինգտոն: Թուրքիայի քաղաքականությունը կդառնա ավելի եվրոպակենտրոն, պակաս տրամադրված կլինի ԱՄՆ-ի կողմից իրականացվող այն գործընթացներում, որոնք կարող են հակադրվել ԵՄ նպատակներին:

Որ գործերը զարգանում են այս սցենարով, կարելի կլինի դատել հետևյալ բնութագրիչներից: Ամրապնդվում է ներքին բարեփոխումների իրականացման ընթացքը, մանավանդ [Թուրքիայի] քրեական օրենսգրքից 301 հոդվածի վերացման գործում, լավանում է վերաբերմունքը փոքրամասնությունը-

[1] Փաստենք, որ ըստ *ՌԵՆԴ*-ի, ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցի հաջող ավարտը ենթադրում է ԵՄ որոշակի կառուցվածք, այն է՝ արձակ կոնֆեդերացիա, հիմնված «փոփոխական աշխարհագրություն» կամ «համակենտրոն շրջանների» գաղափարների վրա, և պահանջում է ԵՄ-ում ընթացող գործընթացների «վարագույրների հետևում իրականացվող» որոշակի ուղղորդում [1, pp. 111-112]: Բնականաբար, այս մոտեցումը հակասում է «ուժեղ Եվրոպայի» տեսլականի ջատագովների մոտեցմանը, կարծում ենք՝ Ֆրանսիայում և հատկապես Գերմանիայում:

ների, հատկապես քրդերի հանդեպ, ուժեղանում է ռազմական շրջանակների վրա քաղաքացիական վերահսկողությունը, տեսանելի հաջողություններ են արձանագրվում Կիպրոսի հարցում:

Ռազմական հեղաշրջում. ապագա զարգացումների սցենար

Ապագայի այս սցենարում Թուրքիայում ուժգնացող քաղաքական և սոցիալական լարումը ստիպում է այս երկրի ռազմական շրջանակներին միջամտել գործընթացներին: Այսպիսի [ներքին] հակամարտությունը կարող է ծագել այն բանից հետո, երբ ռազմական շրջանակները համարեն, որ ԱԶԿ-ն խախտել է որոշ կարևոր «կարմիր գծեր»: Առկա է այսպիսի միջամտության երկու հնարավոր ենթասցենար. «փափուկ հեղաշրջում», երբ ռազմական շրջանակները կմոբիլիզացնեն սոցիալական ճնշումը ԱԶԿ-ի հանդեպ՝ ստիպելով հրաժարական ներկայացնել ԱԶԿ-ի կողմից գլխավորվող կառավարությանը, և ուղղակի «ռազմական հեղաշրջում»: Այս վերջինն ավելի քիչ հավանական է, քանի որ ռազմական շրջանակները հիմա ավելի սթափ են նախորդ հեղաշրջումների [փորձառությունից] ելնելով: Բացի այս, [Թուրքիայի] նշված շրջանակներն ուղղակի ղեկավարման գործում առանձնապես հետաքրքրված չեն, և իրենց նպատակներին հասնելու համար ոչ հեռավոր անցյալում գերադասում էին հենվել անուղղակի մեթոդների վրա[1]:

Սակայն, 1997թ. օրինակով [այն ժամանակվա] վարչապետ Էրբաքանի հեռացման հետ կապված՝ «փափուկ հեղաշրջման» կրկնության հնարավորությունը ներկայումս՝ ԱԶԿ-ի հանդեպ, նույնպես սահմանափակ է: Իրոք, Էրբաքանի կուսակցությունը ԱԶԿ-ի համեմատ շատ ավելի նվազ հանրային օժանդակում ուներ: Ուստի, անհնարին է ակնկալել համանման հասարակական ճնշման մոբիլիզացիա այժմ՝ ԱԶԿ-ի հանդեպ: Ավելին, պրն Լարաբիի կարծիքով, ԱԶԿ տպավորիչ հաղթանակը 2007թ. հուլիսի 7-ի ընտրություններում պարզապես ապտակ էր՝ հասցված [Թուրքիայի հասարակության կողմից] 2007թ. ապրիլի 27-ին «կեսգիշերային վերջնագիր» ներկայացրած ռազմական շրջանակներին[2]:

Բոլոր դեպքերում, Թուրքիայում ուղիղ ռազմական հեղաշրջումը ԱՄՆ-ի

[1] Ի հավաստումն պրն Լարաբիի այս դիտարկման՝ նշենք, որ *«Էրգենեքոն»*-ի հետ կապված վերջին զարգացումները կարծես էլ ավելի են թուլացնում Թուրքիայում կարճաժամկետ հեռանկարում ռազմական ուղիղ հեղաշրջման իրականացման հավանականությունը:

[2] Փակագծերում նկատենք, որ հայրենական մասնագիտական հրապարակումներում դժվար է, եթե չասենք՝ անհնարին, գտնել մի կողմից՝ 1997թ. Թուրքիայի վարչապետ Էրբաքանի հեռացման հետ կապված «փափուկ հեղաշրջման» և մյուս կողմից, մեկ տարի անց Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի հրաժարականի հետ կապված գործընթացների միջև զուգահեռների վերլուծություն՝ աշխարհաքաղաքական լայն համատեքստում: Սա ասում ենք՝ քաջ գիտակցելով այս երկու գործընթացների միջև առկա էական տարբերությունները, միևնույն ժամանակ կարծելով, որ դրանցում առկա ոչ պակաս կարևոր նմանությունների վերլուծությունը շատ օգտակար կլիներ:

համար շատ դժվարություններ կառաջացնի, բացասաբար կազդի ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործում՝ ԵՄ հարաբերություններում առաջացնելով իսկական ճգնաժամ: Եվ այստեղ պրն Լարաբին շատ ուշագրավ կերպով շարունակում է. «[այս դեպքում] ԱՄՆ Կոնգրեսը Թուրքիա սպառազինությունների մատակարարման հարցում կարող է պատժամիջոցներ կիրառել կամ կասեցնել դրանք: Իսկ Հայոց ցեղասպանության *(Genocide)* որոշման ընդունումը [ԱՄՆ Կոնգրեսի կողմից] կդառնա ավելի հավանական»[1]:

Եզրափակելով այս սցենարի քննարկումը՝ պրն Լարաբին գտնում է, որ նույնիսկ ուղիղ հեղաշրջման պարագայում բոլորովին էլ երաշխավորված չէ, որ այս շրջանակները կշարունակեն իրենց արևմտամետ քաղաքական գիծը: Ավելի հավանական է, որ դրանք կորդեգրեն ավելի ազգայնական մոտեցումներ, Քրդական հարցում կզբաղեցնեն ավելի կոշտ դիրքորոշում՝ ի դերև հանելով այս հարցում ԱԶԿ ձեռքբերումները, ավելի հարձակողական կլինեն ՔՏԿ հանդեպ ու կոշտ՝ Կիպրոսի հարցում[2]:

4. Մենք և Թուրքիան. լրջանալու պահը

Ինչևէ. ապրիլը ծանր ամիս է հայերի համար: Այն հեշտ ամիս չէ նաև Թուրքիայում, նույնիսկ ԱՄՆ-ում այն որոշակի խնդիրներ է առաջացնում այս երկրի նախագահների աշխատակազմերի և Պետդեպարտամենտի աշխատակիցների շրջանում[3]:

Եվ ընդհանրապես, մեր ժամանակները դյուրին չեն (եթե երբևէ եղել են այդպիսին): Իրոք, աշխարհը, գլոբալ մասշտաբի բազմաթիվ խնդիրների բեռի տակ կքած, դառնում է ավելի խրթին ու անկայուն: Ապագա զարգացումները մշուշոտ են, լի վտանգներով: Գոյանում են աշխարհաքաղաքական նոր ուժա-

[1] Այսպիսով, ըստ *ՌԵՆԴ*-ի, ԱՄՆ Կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանության որոշման ընդունման բարձր հավանականությունն ընկալվում է որպես Թուրքիայում ռազմական ուղիղ հեղաշրջման վտանգի դեմ ուղղված ԱՄՆ պատժամիջոցների բաղկացուցիչ մաս միայն: Ահա *Ռեալփոլիթիկ*-ն իր ողջ վանող մերկությամբ:

[2] Փաստենք, որ քննարկվող բոլոր 4 սցենարների թվարկված և որևէ բնութագրիչ չի առնչվում Թուրքիայում հայերի իրավունքների, Հայաստանի Հանրապետության հետ Թուրքիայի հարաբերությունների հաստատման ու մերձեցման գործընթացներին: Նույնը կարելի է ասել Թուրքիա-Սիրիա հարաբերությունների համար: Այսպիսի մոտեցումն ապշեցուցիչ է: Այն հիմնովին հակասում է հենց պրն Լարաբիի [1]-ում արված այլ եզրակացություններին: Այս ճչացող հակասության պատճառը, կարծում ենք, այն է, որ «ապագայի մոդելավորումների» այս սցենարները կազմվել են մինչև 2008թ. օգոստոսը՝ ժամկետ, որն այդքան շատ է սիրում հիշել պրն Լարաբին:

[3] «Եթե ուզում եք իմանալ, երկրի (իմա՝ Միացյալ Նահանգների - *Ա.Մ.*) բնակիչները եղեռնը շատ տհաճ բան են համարում: Նրանք չեն սիրում առավոտյան լրագրերում դրա կամ դրա նման մի բանի մասին կարդալ: Մարդն իրեն լավ չի զգում, երբ առավոտյան սուրճն ըմպելիս եղեռնի մասին է կարդում: Այդպիսի լուրը կարող է մարդու ամբողջ օրը փչացնել: Երեք-չորս եղեռն, և մարդ կարող է այնքան զայրանալ, որ, մեկ էլ տեսար, ընտրություններին իր ձայնը տա այլ թեկնածուի»,- հեռավոր 1965թ. դառը հեգնանքով գրում էր XX դարի հանճարեղ ֆանտաստներից մեկը՝ Ռոբերտ Շեքլին իր *«Մի քիչ չխոսե՞նք»* սքանչելի պատմվածքում (տե՛ս [5], մեջբերում ենք ուղղված՝ ըստ բնագրի): Արժե, որ այն մտցվի աշխարհաքաղաքականություն, գաղութատիրական համակարգի պատմություն (և լեզվաբանություն) դասավանդող մեր ձեռնարկներում:

յին կենտրոններ, սրվում են ազգային միջպետական հարաբերությունները և տարածաշրջանային հակասությունները, սաստկանում է մրցակցությունը բնական ռեսուրսների համար: Դեղին մամուլի էջերը, կինո- և հեռուստաէկրանները, անգամ հեղինակավոր, ակադեմիական հրապարակումները ողողված են մարդկությանը սպասող տարատեսակ *Արմագեդոնների* գունազարդ պատկերումներով, ապագայի հոռետեսական սցենարների մանրակրկիտ ու սիրատոչոր նկարագրումով: Տարբեր մայրցամաքներում ականավոր մտավորականներ իրենց անունը թնդացրին «Աշխարհն առանց Արևմուտքի» կամ «Աշխարհն առանց ԱՄՆ-ի» կամ «Աշխարհն՝ անդունդի եզրին» թեմաների մասին իրենց գրքերով, հոդվածներով և ֆիլմերով: Նրանք նույնիսկ որոշակի կարողություն կուտակեցին այս ամենի հաշվին, էլ չենք խոսում նորօրյա մարգարեների մասին, որոնք չեն զլանում գրեթե ամեն օր ու աշխարհի տարբեր լեզուներով ավետել նոր աշխարհակարգի գալուստը:

Ի՞նչ է նշանակում այս ամենը, ի՞նչ է նշանակում մեզ համար՝ պրակտիկ հարթությունում:

Պրագմատիկ տեսանկյունից այս ամենի հիմքում ընկած է երկբևեռ («Սոցաշխարհ-Արևմուտք») և միաբևեռ («ԱՄՆ հեգեմոնիա») աշխարհակարգերի ավարտի իրողությունը: Սակայն, կարծում ենք, որ այստեղ ավելի կարևոր է այն, որ 2008թ. նոյեմբերից հետո ԱՄՆ քաղաքական ու հասարակական մտքի հսկա ճոճանակը *մեսիականությունից* թեքվում է դեպի մեկուսացում (*իզոլյացիոնիզմ)* ՝աշխարհի քաղաքական պատմության մեջ ազդարարելով նոր փուլի սկիզբը: Զուր չէ, որ միջազգային հարաբերությունների գործում որոշ բազմափորձ վետերաններ այս առումով նախանշում են XIX կամ նույնիսկ XVIII դարերի Եվրոպայում տիրող իրավիճակի վերադարձը: Բոլոր դեպքերում, ընկնելով ներկայիս վերլուծական մամուլին այդքան բնորոշ պաթոսի գիրկը՝ կարելի է պնդել, որ «նոր աշխարհակարգի գալստյան» բոլոր այս խոսակցությունների հետևում ընկած է միայն մեկ իրողություն. ***մեսիական Ամերիկան լքում է աշխարհը:*** Լքում է աշխարհի շատ տարածաշրջաններ, այդ թվում և Կովկասը, լքում է, միգուցե և մեր ողջ տարածաշրջանը՝ իր սիրելի զավակ «Մեծ Միջին Արևելքը»: Լքում է՝ տեղը թողնելով ավելի պրագմատիկ ԱՄՆ-ին (ոմանք կասեին՝ իր պատմական առաքելությունում ձախողված ԱՄՆ-ին): Կարճ ասած՝ ԱՄՆ-ին, որն այլևս որդեգրելու է աշխարհաքաղաքական տարբեր շահերի հավասարակշռման այսպես կոչված իրատեսական, *ռեալիստական*[1] ու պրագմատիկ հաշվարկի քաղաքականությունը՝ *Ռեալփոլիթիկը*:

[1] Նկատենք, որ երբևէ իրականությունը չի դառնում այնքան դյուրաթեք ու խեղաթյուրումների հակված, որքան «իրատեսական քաղաքականության» հաստատման ժամանակներում: Քանզի այդ ժամանակ է, որ վճռորոշ է դառնում, թե հատկապես ով, ինչպես և ինչ շահերից է համարելու, թե ինչպիսին է իրականությունը, ինչն է իրականը և, հետևաբար, իրատեսականը: Ինչպես ասում էին Մարտնչող թագավորությունների Չինաստանում, «երկրում քաոսը հաստատվում է այն ժամանակ, երբ ի հայտ են գալիս *կարգ ու կանոնի մարտիկները*: Երկրում անարդարությունը հաստատվում է այն ժամանակ, երբ հայտնվում են *արդարության զինվորները*»:

Հասկանալի է, որ ԱՄՆ այս «գաղափարական նահանջը» տեղի չի ունենա մեկ օրում կամ մեկ տարում, այն կարող է լինել տևական, *"smart force"*-ի[1] այս կամ այն կիրառման հետ կապված բազմաթիվ ելևէջներով: Մեզ համար այս ելևէջների արտահայտման վառ օրինակը հանդիսացավ մի կողմից հայ-թուրքական մերձեցման հարցում ԱՄՆ քաղաքական օժանդակումը Հայաստանին, մյուս կողմից՝ ԱՄՆ նախագահի շուրթերից «գ-բառի»[2] արտաբերումից «խնամքով խուսափումը»՝ ճիշտ ինչպես խորհուրդ էր տրվում *ՌԵՆԴ*-ի վերը քննվող աշխատությունում: Հասկանալի է նաև, որ այս ռազմավարական նահանջն ինչ-որ ժամանակ իր տեղը կարող է զիջել և հակադարձ շարժման: Բայց դրա համար շատ բան պետք է փոխվի աշխարհում, առաջին հերթին դրա համար էական տեղաշարժ է պետք հենց ԱՄՆ հասարակությունում: Իսկ մինչ այդ, կարճաժամկետ-միջնաժամկետ հեռանկարում ԱՄՆ այս գաղափարական, բարոյական, եթե կուզեք՝ նահանջն է, որ հանդիսանալու է մեր իրականության աշխարհաքաղաքական ամենահիմնական գործոնը: Պրակտիկ հարթությունում մեզ համար սա նշանակում է երկու բան:

* * *

Նախ, կարծում ենք, անհրաժեշտ է ընդունել և գիտակցել այն ցավագին հանգամանքը, որ ելնելով մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից՝ Հայաստանը և Հայությունը ողջ XX դարի ընթացքում (հատկապես դարասկզբին ու դարավերջին) և նոր դարի առաջին տասնամյակում ձախողվեցին Հայոց դատի և պահանջատիրության խնդիրը քաղաքական իրողություն դարձնելու հարցում, հատկապես այն ժամանակ, երբ ԱՄՆ-ում գերիշխում էր *մեսիականությունը,* և աշխարհի բեմահարթակում այս երկիրն, իրոք, պատմություն էր կերտում: Իր հերթին, ի թիվս այլ հանգամանքների, սա հետևանք է ԱՄՆ Հայության կառույցների՝ այս երկրի միայն մեկ կուսակցության՝ Դեմոկրատական կուսակցության կայուն և հաստատակամ սատարման, *անկախ այն բանից, թե որ փուլում է գտնվում ԱՄՆ հասարակական մտքի հսկա ճոճանակը, և որ կուսակցությունում են մարմնավորված մեսիականության գաղափարները:*

[1] «Խելացի ուժ» եզրը բազմիցս օգտագործվել է ԱՄՆ նախագահ Բ.Օբամայի և Պետդեպարտամենտի ղեկավար Հ.Քլինթոնի կողմից՝ ԱՄՆ ներկայիս արտաքին քաղաքականությունը բնութագրելու համար: Ի դեպ, հավելենք, որ *"smart force"*-ի գաղափարը վաղ թե ուշ պետք է ծնվեր որևէ *"think tank"*-ում (կներեք այս բառախաղի համար):

[2] *"The G-word". Genocide* (գենոցիդ, եղեռն) բառի *էվֆեմիզմն* է՝ օգտագործված այս տարի ապրիլին, Սպիտակ տան մամլո խոսնակի կողմից: Այն միանգամից կրկնօրինակվեց ԱՄՆ և միջազգային մամուլի շատ էջերում: Գիտակցո՞ւմ են արդյոք այս էվֆեմիզմի հեղինակները, թե ինչ ահավոր, վիրավորական, ինչ անբարո հնարք և արարք է սա: Սփոփիչ է, սակայն, գիտակցել, որ ԱՄՆ երկու մեծագույն և խորապես հավատացյալ նախագահներն ընդունել են Հայոց ցեղասպանության իրողությունը և անվարան արտաբերել «գենոցիդ» բառը՝ բարերար (և դեմոկրատ) Վուդրո Վիլսոնը, խաչակիր (և հանրապետական) Ռոնալդ Ռեյգանը:

Մեր խորին համոզմամբ, Հայոց եղեռնի ճանաչումը, Հայոց պահանջատիրությունը, առաջին հերթին լինելով արդարության և բարոյականության պահանջ, առավելագույն հավանականություն ունեին (ունեն) դառնալ քաղաքական և աշխարհաքաղաքական իրողություն միայն այն ժամանակ, երբ *մեսիական* Միացյալ Նահանգները գիտակցում էր (է) իր պատմական ու վսեմ առաքելությունը ողջ աշխարհում ու աշխարհի առջև: Այդպես էր նախագահ Վ.Վիլսոնի ժամանակ[1], այդպես էր «Ատլանտյան խարտիայի» ժամանակ[2], այդպես էր նախագահ Ռ.Ռեյգանի ժամանակ[3]: Եվ այստեղ ԱՄՆ նախագահի կուսակցական պատկանելության խնդիրը երկրորդական է: Շատ ավելի կարևոր է հաղորդ լինել այս երկրի հիմնարար արժեհամակարգին և շարժիչ ուժերին: Գործել դրանց ներդաշնակ: Լինել *սինաֆազ* (նույն պարբերականությամբ տատանվող) այս ուժերի տևական պարբերական տատանումներին: Այլ ոչ թե գործել միապաղաղ հաստատունությամբ՝ դուրս ընկնելով պատմության ռիթմից: Գործել *հակաֆազ* և ձախողվել այն բարերար ռեզոնանսի առաջացման գործում, երբ, վերջապես, *մեր* արդարության պահանջը կհամընկնի *իրականության* արդարության պահանջին:

Իսկ մինչ այդ, այնքան ժամանակ և մինչև որ ռազմավարական ու վերլուծաբանական հանրությունների կարկառուն ներկայացուցիչները ԱՄՆ-ում, ՌԴ-ում և այլուր, արձագանքելով աշխարհում տիրող իրողություններին, նույնականացնում կամ շփոթում են կայսրությունները հանրապետությունների հետ, Հայաստանը և ողջ Հայությունը պարտավոր են լինել զգոն, աչալուրջ ու հավասարակշիռ: Մենք պարտավոր ենք վարել մեր տարածաշրջանում գործող *բոլոր* աշխարհաքաղաքական վեկտորները հավասարակշռող քաղաքականություն, լինել ուժեղ ու հավաք: Այլ ոչ թե ապավինել միայն ԱՄՆ-ին, ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին՝ Մ.Սահակաշվիլու Վրաստանի նման, ապավինել հիմնականում ԱՄՆ-ին, Թուրքիային և Իսրայելին՝ հայր և որդի Ալիևների Ադրբեջանի նման:

Մինչ այդ, այնքան ժամանակ և մինչև որ Անկարան չի ճանաչի Թուրքիայի կողմից կազմակերպված հայերի հայրենազրկող ցեղասպանության կազմակերպման ու իրականացման իրողությունը, Հայաստանի Հանրապետությունը և ողջ Հայությունը կարող են, ո՛չ, պարտավոր են ընկալել «Կովկասում Թուրքիայի խոր և երկարաժամկետ ռազմավարական շահերը *(deep and long-standing strategic interests)*» որպես «Հայկական հարցի» վերջնական լուծմանն ուղղված ռազմավարություն: Որպես մեր ազգային շահերի համար

[1] Այլ ոչ թե Բրեստ-Լիտովսկի ժամանակ:
[2] Այլ ոչ թե Յալթայի կոնֆերանսի ժամանակ:
[3] Այլ ոչ թե նախագահ Քլինթոնի ժամանակ, երբ մշակվեց և գործի դրվեց Ալիև-Շևարդնաձե-Նաթանյահու «Կ. Ասիա-Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա-Իսրայել» էներգետիկ և աշխարհաքաղաքական միացյալ տարածաշրջանի խելացնոր դոկտրինը, որով հիմք դրվեց Հայաստանի, Իրանի և ՌԴ տարածաշրջանային մեկուսացման ջանքերին: Սին ջանքերին՝ կարող ենք ասել այժմ (ավելի մանրամասն տե՛ս [4]):

ուղիղ, լուրջ և անմիջական սպառնալիք *(direct, serious and immediate threat):* Մասամբ կրկնելով պրն Լարաբիին՝ ասենք. Թուրքիայի նկատմամբ Հայաստանի և Հայության կասկածամտությունը դարավոր է և խորապես արմատավորված մեր պատմական հիշողությունում:

Վերջապես, մինչ այդ անհրաժեշտ է ամեն գնով խուսափել «Հայաստանի զարգացում՝ զիջելով Հայոց պահանջատիրությունը», թե «Հայաստանի զարգացում՝ առանց զիջման» անպտուղ, դիխոտոմիկ հարցադրումից: Իրականում այն կեղծ է, համարժեք չի արտացոլում իրականությունը և հարցը փակուղի է տանում[1]: Փոխարենը, կարծում ենք, անհրաժեշտ է առաջնորդվել և տարածաշրջանային *ակտորներին* հորդորել ընթանալ հետևյալ տրամաբանությամբ: Հայոց ցեղասպանության ճանաչում՝ առաջին հերթին Թուրքիայի կողմից, որպես Կովկասի զարգացումը սանձող կապանքներից ձերբազատման, ողջ տարածաշրջանում իրական, երկարաժամկետ հեռանկարում՝ կայուն տնտեսական ու քաղաքական համագործակցության հաստատման լրջագույն գրավական: Այս խնդիրը ողջ Հայության խնդիրն է, եթե կուզեք՝ ողջ առաջադեմ մարդկության խնդիրը: Առանց այս խնդրի լուծման անհնարին է XXI դարի անխոռով ընթացքը՝ ոչ ավելի, ոչ պակաս:

* * *

Պրակտիկ հարթությունում Կովկասից *մեսիական* ԱՄՆ նահանջով պայմանավորված գործոնը մեզ համար կարևոր է նաև հետևյալով: Արդի աշխարհաքաղաքականությունը, ինչպես և բնությունը, «վակուում չեն հանդուրժում»: Մեր տարածաշրջանում ու Կովկասում ԱՄՆ այս նահանջով պայմանավորված վակուումը պետք է լրացվի ինչ-որ ուժով կամ ուժերի համամասնությամբ:

Իսկ որ գործերը զարգանում էին հենց այս ուղղությամբ, քաջ գիտակցվում էր թե՛ ՌԴ-ում, թե՛ Գերմանիայում, թե՛ Թուրքիայում, թե՛ Իսրայելում և թե՛ Վրաստանում ԱՄՆ նախագահական ընտրությունների տարվա գրեթե սկզբից և հատկապես 2008թ. ամռանից: Թող տարօրինակ չթվա հատկապես այս երկրների թվարկումը: Մեր հոդվածներից մեկում, տալով այսպես կոչված «Ֆարլեյի օրենքի» աշխարհաքաղաքական մեր սահմանումը, առիթ ունեցել էինք փաստել, որ «ԱՄՆ նախագահական ընտրությունների տարվա ամռանից սկսած

[1] Հիշո՞ւմ եք «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն», ոչ թե կոմս Տոլստոյի (նա օգտագործում էր ավելի իմաստուն «և» շաղկապն ու ավելորդ հարցեր չէր տալիս), այլ մեր ոչ այնքան վաղ անցյալի միանգամայն ժամանակավրեպ հարցադրումը: Կամ, Լ. Տեր-Պետրոսյանի և Վ.Մանուկյանի անպտուղ, հետևաբար և վտանգավոր բանավեճը՝ «ունիկալ ա՞զգ են արդյոք հայերը, թե՞ ոչ», որի բացասական հետևանքները, սպասելի կերպով, չուշացան: Մինչդեռ, իրականության սթափ ըմբռնումը՝ զերծ պահի անցողիկ լարվածությունից և հիմնված լրացման սկզբունքի վրա, միանգամից կհուշեր, որ մարդկային քաղաքակրթության (վերջին 5 հազար տարիների) ընթացքում խաղաղությունը կազմել է ընդամենը մոտ 300 տարի (6.0%), իսկ հայերը, իհարկե, ունիկալ ազգ են, պատմական իրենց չափազանց ուրույն առաքելությամբ՝ ճիշտ ինչպես աշխարհի շատ ազգեր: Եվ կարիք չկա այստեղ դես ու դեն ընկնել:

մինչև հաջորդ տարվա սկիզբ, առավել վառ, հաճախ՝ ողբերգական հետևանքներով, ի հայտ են գալիս արդիականության ամենացավոտ խնդիրները, սրվում են հակասությունները, բացահայտվում ու մերկանում են մինչ այդ մշուշոտ գործընթացները և միտումները» [3, c. 24]: Եվ սա հատկապես ճշմարիտ է ԱՄՆ նախագահական այն ընտրությունների համար, երբ ակնկալվում է աշխարհում ԱՄՆ ռազմավարական գծի փոփոխությունը: «Մեծ Միջին Արևելքում» և հատկապես Կովկասում 2008թ. օգոստոսյան իրադարձություններն ու դրանց հաջորդող և մինչ օրս ձգվող գործընթացներն ասվածի վառ ապացույցն են:

Իրոք, Վրաստանը, հասկանալով, որ անխուսափելիորեն մոտենում է ԱՄՆ Հանրապետական կուսակցության պարտությունը գալիք ընտրություններում և տագնապելով «ջուրը զցել» այն հսկայական *լոբբիստական*[1] ջանքերը, որոնք գործադրել էր ԱՄՆ հատկապես այս կուսակցությանն իր աջակիցը դարձնելու համար, շտապեց դիմել Հ. Օսիայի ռազմական ավանտյուրային՝ ելնելով ընկերներ Ջուղաշվիլու, Օրջոնիկիձեի և Բերիայի կողմից ժառանգված մինի-կայսերապաշտական նկրտումներից: Այս արկածախնդրությունը լրջորեն վտանգեց ոչ միայն Կովկասի, այլև ողջ տարածաշրջանի, գուցե և ողջ աշխարհի անվտանգությունը[2]:

Ռուսաստանը, հստակ գիտակցելով ԱՄՆ գալիք ռազմավարական նահանջի իրողությունը, գիտակցեց նաև, որ իր համար Կովկասում եկել է «ճշմարտության պահը»: Վրաստանի ագրեսիային նա պատասխանեց ամենայն վճռականությամբ՝ «հարվածային ալիքներ»[3] սփռելով ողջ տարածաշրջանում ու աշխարհում: Թուրքիան, որը դեռ 2004-ից հետևողականորեն ընդլայնում և զարգացնում էր հարաբերությունները ՌԴ-ի հետ, տպավորված Վրաստանի ագրեսիայի նկատմամբ ռուսական հակահարվածի վճռականությամբ, շփոթված փորձեր սկսեց ձեռնարկել Կովկասում ազդեցությունը վերագտնելու և վերիմաստավորելու ուղղությամբ: Թուրքիայում շփոթը խորացավ ՌԴ-ի կողմից Հ. Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչմամբ, Հայաստանի նախագահի՝ Թուրքիայի նախագահին ուղղված պատմական հրավերով և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված Հայաստանի

[1] Հիշում եմ գործընկերներիս հեգնական ժպիտը, երբ խոսքը տանում էի ԱՄՆ-ում վրացական *լոբբիի* անհավատալի արդյունավետ աշխատանքի մասին, մանավանդ ԱՄՆ Հանրապետական կուսակցության ամերիկա-հրեական *նեոկոնների* այդ ժամանակ չափազանց ազդեցիկ միջավայրում:

[2] Զվարճալի է, որ 2008թ. մարտի 27-ի *"The New York Times"*-ում իր *"Georgia on their minds"* հոդվածում պրն Լարաբին, հակադրվելով Գերմանիայի կանցլեր Ա.Մերկելի 2008թ. մարտի 10-ին հստակ արտահայտած կարծիքին, որ «սառեցված հակամարտություններով երկրները տեղ չունեն ՆԱՏՕ-ում», փրփուրը բերանին պնդում էր Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու անհապաղ անհրաժեշտությունը, «չափազանց անհավանական» համարելով այն, «որ Ռուսաստանը երբևէ կճանաչի Հ. Օսիայի և Աբխազիայի անկախությունը» (http://www.nytimes.com/2008/03/27/opinion/27iht-edlarrabee.1.11471355.html): Այո, սա զվարճալի է այժմ: Իսկ այն ժամանակ՝ դեպքերի մի փոքր այլ ընթացք, և ողջ տարածաշրջանը կընկղմվեր աներևակայելի մղձավանջի մեջ:

[3] Չշփոթել *"Oil shockwave"* մոդելավորումների «հարվածային ալիքների» հետ:

նախաձեռնողական քայլերով, որոնք, ամենայն հավանականությամբ, ի սկզբանե ունեին ՌԴ ծավալուն սատարումը: Ադրբեջանը, շունչը պահած, հետևում էր իրադարձություններին և գիտակցելով, որ կարող է կորցնել այն լծակը, որն օգտագործում է Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շուրջ վարվող բանակցություններում, թուրք-հայկական մերձեցման և սահմանի բացման հարցում Թուրքիային իր ռազմավարական, էներգետիկ, քաղաքական և այլ օժանդակումը պայմանավորեց այս բանակցություններում արձանագրվող իր համար նպաստավոր առաջխաղացմամբ: Այսօրինակ պայմանավորումը՝ հակառակ «ճանապարհային քարտեզի» տառին և ոգուն, փաստորեն վիժեցրեց թուրք-հայկական մերձեցման գործընթացի ներկայիս փուլը[1], որի տրամաբանական միջակետը դրվեց Հայաստանի նախագահի՝ ս.թ. ապրիլի 22-ի հրամանագրով: Ասում ենք միջակետ, որովհետև վստահ ենք, որ թուրք-հայկական մերձեցման գործընթացը դեռ շարունակվելու է: Պետք է շարունակվի: Ի բարօրություն Կովկասում և ողջ տարածաշրջանում ապրող ժողովուրդների:

Վերջապես, Իսրայելը, վերաշեշտադրեց իր ռազմավարական նպատակներին ԱՄՆ ներքաշվածության խնդիրը՝ առաջին պլան բերելով նավթային գործոնը և Իրանին պատժելու անհրաժեշտությունը: Մինչ այդ, այն շտապեց կրկին խուժել Գազայի հատված, կոշտացնել դիրքորոշումը հրեական բնակավայրերի կառուցման գործում և, փաստորեն, հակադրվել «երկու ժողովուրդ - երկու պետություն» գաղափարին: Իսկ Գերմանիան, որը ոչ պակաս հստակությամբ գիտակցում էր ԱՄՆ ռազմավարական նահանջի մոտալուտ սկիզբը, հոգնած ԵՄ անաշխատունակությունից ու տձևությունից, վիրավորված այն քաղաքական նվազ դերակատարումով, որն ունի եվրոպական այս հսկան՝ Միության քաղաքական գործերում, իր աշխարհաքաղաքական հայացքները սկսեց ուղղել դեպի Ռուսաստան և անդին՝ Կովկաս ու Միջին Արևելք[2]:

Կովկասում *մեսիական ԱՄՆ* նահանջով պայմանավորված վակուումը մեզ մոտ, ամենայն հավանականությամբ, կլրացվի ՌԴ և Գերմանիայի, ինչպես նաև Իրանի և Թուրքիայի ուժային աշխարհաքաղաքական վեկտորների հավասարակշռումից գոյացած համամասնությունով: Մեզ համար նորությունն այստեղ Գերմանիայի տարածաշրջանային աշխարհաքաղաքական դերակատարման հնարավորությունն է և սկիզբը: Հանգամանք, որը, կարծում

[1] Փաստենք, որ ԼՂՀ բացառապես խաղաղ և օրինական ճանապարհով ինքնորոշման իրավունքի արտահայտմանը հակադարձված ռազմական ագրեսիայից հետո սա Ադրբեջանի արդեն երկրորդ գործողությունն է, որը լրջորեն վտանգում է Կովկասի և ողջ տարածաշրջանի անվտանգությունը, հեռացնում տևական խաղաղության, կայուն զարգացման ու համագործակցության հաստատման բաղձալի հեռանկարը: Մի՞թե բավական չէ արդեն, մի՞թե Շահդենիզի կամ Կասպիականի այլ նավթադաշտերն այդքան արժեն: Մի՞թե նավթն ավելին է, քան կյանքն ու ժողովուրդների խաղաղությունը:

[2] Հիշո՞ւմ եք «Գերմանիան և Ռուսաստանը, այս երկու հսկաները, այս էլ քանի տասնամյակ հառնում են միմյանց՝ ինչպես հայելում, երազկոտ սպասելով իրական ռազմավարական երկխոսության գալուստին» հանճարեղ ասույթը:

ենք, գուցե ենթագիտակցաբար, ստիպել էր պրն Լարաբիին օգտագործել *Ordnungsmacht* եզրը *ՌԵՆԴ*-ի վերը քննվող նյութում՝ հայ-թուրքական մերձեցմանը նվիրված հատվածում: Ուրախալի է, որ մեր տարածաշրջանում Գերմանիայի աշխարհաքաղաքական դերակատարման աճի հանգամանքը չի վրիպել հայրենական վերլուծաբանների աչքից: Այս առումով կուզենայինք ընդգծել ժամանակագրորեն, թերևս, առաջին հրապարակումը [6]: Համաձայնելով այստեղ կատարվող վերլուծության հետ՝ կուզենայինք պարզապես հավելել հետևյալը:

Անհրաժեշտ է հիշել մեզ ու չզլանալ հիշեցնել այլոց, որ անցած՝ XX դարի ընթացքում առնվազն երեք անգամ Վրաստանի ռազմավարական շահերը հակադրվել էին Հայաստանի ռազմավարական ու ազգային շահերին, իսկ վարվող գործողությունները Հայաստանի ազգային շահերի և հայ ժողովրդի համար հանդիսացել էին ուղիղ, լուրջ և անմիջական վտանգ: Եվ Հայաստանը վճարել է դրա աշխարհաքաղաքական, ռազմավարական, ազգային և բարոյական էական գինը: Եվ նոր՝ XXI դարի կարճ պատմության ընթացքում առնվազն մեկ անգամ Վրաստանի ռազմավարական[1] շահերը հակադրվել են Հայաստանի ազգային շահերին: Եվ նորից Հայաստանը վճարել է դրա գինը: Իսկ այս ամենի ակունքում ընկած է դեռ կայսերական Գերմանիայի գենշտաբի ռազմավարական ծրագիրը՝ մեկուսացնել Ռուսաստանը Կովկասից ու Միջին Արևելքից, Կովկասում ստեղծելով միայն մեկ քրիստոնեական բուֆերային պետություն, այն է՝ ուղղափառ Վրաստանը: Բացի այդ, Կովկասում նախատեսվում էր ունենալ ևս մեկ՝ մահմեդական պետություն, Կովկասի թաթարներից բաղկացած երկիր: Խոսքը ներկայիս Ադրբեջանի մասին է: Ինչպես տեսնում ենք, այս տեսլականում տեղ չկա ոչ հայերի, ոչ Հայաստանի համար: Այս ամենը հանգիստ խղճով կարելի էր թողնել պատմաբանների և հարցի պատմությամբ զբաղվող աշխարհաքաղաքագետների դատին, եթե չլիներ հետևյալ կարևոր հանգամանքը:

Աշխարհաքաղաքական կոնստրուկտները մեծ կենսունակություն ունեն: Մի անգամ ձևակերպվելով «ուժային կենտրոնների» կողմից ու կյանքի կոչվելով բեկումնային ժամանակներում՝ նրանք չեն վերանում քաղաքական տվյալ իրադրության սպառումով և գործընթացների ավարտով: Դրանք նորից ի հայտ են գալիս նոր բեկումնային ժամանակներում: Մեզ համար, մեր տարածաշրջանի համար այսպիսի բեկումնային ժամանակներ եղան Ռուսական կայսրության հոգեվարքը XX դարի սկզբին և ԽՍՀՄ փլուզումը XX դարի վեր-

[1] Մենք օգտագործում ենք «Վրաստանի ռազմավարական շահ» արտահայտությունը, քանի որ խորապես համոզված ենք, որ անցած տասնամյակի ընթացքում Վրաստանի Հանրապետությունն ունեցել է ռազմավարական շահեր, բայց չի հաջողել համարժեք կերպով ձևակերպել իր ազգային շահը, քանի որ ձախողվել է իր ազգային քաղաքականությունը մշակելու և վարելու գործում: Հայաստանի Հանրապետության պարագայում, կարծում ենք, այս հասկացությունները գրեթե հոմանիշ են:

ջին: Եվ հին աշխարհաքաղաքական կոնստրուկտների նոր կյանքի երևան գալն այս ժամանակ չուշացավ: Խոսքս նախկին ԽՍՀՄ քաղբյուրոյի անդամ, ԽՍՀՄ ՊԱԿ նախկին ղեկավար Հ.Ալիևի, նախկին ԽՍՀՄ քաղբյուրոյի անդամ և ԽՍՀՄ արտաքին գործոց նախարար Է.Շևարդնաձեի և մի շարք թուրք, հրեա ու ամերիկացի այն ռազմավարների մասին է, որոնք 90-ականների կեսին հղացան «Ալիևի դոկտրինը», այն է՝ կապել Ադրբեջանը և Կենտրոնական Ասիան Թուրքիայի, Իսրայելի և Եվրոպայի հետ էներգետիկ, տնտեսական, քաղաքական, իսկ այնուհետև՝ անվտանգության տիրույթներով ու համակարգերով, կտրել Կովկասը Ռուսաստանից, մեկուսացնել Իրանը և Ռուսաստանը ողջ տարածաշրջանից, խեղդամահ անել Հայաստանը[1]: Ու թեև, դատելով գոնե ներկայումս բաց աղբյուրներից, այստեղ գերմանական մասնակցությունը փաստագրված չէ, չի կարելի չնկատել, որ «Ալիևի դոկտրինը» նման է կայսերական Գերմանիայի գենշտաբի XX դարի սկզբի տեսլականին երկվորյակ եղբոր պես:

Հետևաբար, մեզ համար ԵՄ ամենաուժեղ տերության՝ Թուրքիայի վաղեմի բարեկամ, ԵՄ-ում Վրաստանի կուրատոր Գերմանիայի Դաշնային Հանրապետության վերադարձը Կովկաս հասկանալի է, ողջունելի և օգտակար միայն մեկ պարագայում: Այն չպետք է սատարի Կովկասի ներկայիս պառակտումը, չպետք է խրախուսի Հայաստանը «տարածաշրջանային էներգետիկ և տնտեսական ծրագրերից արտաքսելուն»: Այն պետք է ուղղված լինի Հայաստանի, Իրանի և ՌԴ տարածաշրջանային լիարժեք ինտեգրմանը՝ առանց մեզ խեղդամահ անելու կամ մեր «ձեռքերը ոլորելու» սպառնալիքի:

Իսկ ընդհանրապես, մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ կարճաժամկետ հեռանկարում մեր տարածաշրջանում կմեկնարկի վերը նշված վակուումի լրացմանն ուղղված տենդագին ակտիվություն: Ամենաբարձր մակարդակի այցելությունները տարածաշրջանում կարձանագրվեն աննախադեպ հաճախությամբ, մամուլի էջերը կողողվեն այս ամենի տարաբնույթ վերլուծություններով և այլն: Այս գալիք եռուզեռի ժամանակ մեզ համար, կարծում ենք, կտրականապես կարևոր է ամրագրել մի քանի բազիսային իրողություն, որոնք և ուրվագծում են մեր տարածաշրջանում *իրականության* աշխարհաքաղաքական հենքը:

Բացառապես խաղաղ և օրինական արտահայտված ԼՂՀ ինքնորոշման իրավունքին ի պատասխան Ադրբեջանը դիմեց ռազմական ագրեսիայի և կրեց ռազմական չոր պարտություն[2]: Այս երկիրը կամ պետք է սանձազերծի նոր պատերազմ, կամ մշակի ինքնուրույն Լեռնային Ղարաբաղի հետ իր *modus vivendi*-ն: Ճիշտ այնպես, ինչպես որ [1]-ում դա առաջարկվում է անել Թուր-

[1] Զևակերպումը մերը չէ: Այն կարելի է գտնել ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության կողմից 1998թ. դեկտեմբերին կազմված և 2007թ. ապրիլին գաղտնազերծված *OREA CEI-9812* փաստաթղթում:

[2] Զևակերպումը մերը չէ: Այն կարելի է գտնել ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության կողմից 1999թ. նոյեմբերի 15-ին կազմված և 2007թ. ապրիլին գաղտնազերծված *SEIB 99-264CX* փաստաթղթում:

քիային՝ ՔՏԿ-ի հանդեպ: Տարածաշրջանում միակ երկիրը, որն ունի «Ղարաբաղի խնդիր», Ադրբեջանն է[1]: Հայաստանի Հանրապետությունն այդպիսի խնդիր չունի:

Թուրքիան, 1993թ. փակելով սահմանը Հայաստանի հետ, Հայաստանի Հանրապետության նկատմամբ դիմեց ռազմական գործողության և, հետևաբար, զրկեց իրեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում միջնորդ հանդիսանալու բարոյական ու տրամաբանական հիմքերից՝ գոնե մինչև այն պահը, երբ նորից կբացի սահմանը Հայաստանի հետ՝ առանց երրորդ կողմերի խնդիրների արծարծման: Բացի այս, Թուրքիան կանգնած է ինքնության խոր ճգնաժամի առջև և տարածքային չկարգավորված վեճեր ունի Հունաստանի, Կիպրոսի, Սիրիայի և Իրաքի հետ: Տարածքային վեճը Հայաստանի հետ կարգավորված չէ, բայց նաև ակտիվ վիճակում չէ: Թուրքիան շարունակում է եռանդուն կերպով մերժել հայերի հայրենազրկող ցեղասպանության կազմակերպման և իրականացման իրողությունը: Այսպիսի դիրքորոշումը մեր ողջ տարածաշրջանը զրկում է զարգացման ռազմավարական հեռանկարից:

Վրաստանը հիմնովին ձախողվեց իր հետխորհրդային սահմանների ներսում ազգային համաձայնության քաղաքականություն մշակելու և վարելու գործում: Դիմելով ռազմական ավանտյուրայի՝ այն վտանգեց ողջ տարածաշրջանի անդորրն ու կայունությունը և ուղղակիորեն կանգնեց տարածքային ամբողջականության պահպանման հարցի առջև:

Իրանի մեկուսացումը տարածաշրջանային զարգացումներից հանգեցնում է նրան, որ «այս տարածաշրջանն աննորմալ է զարգանում»[2]: Ռուսաստան – Հայաստան – Իրան տնտեսական, էներգետիկ, մշակութային, քաղաքական և աշխարհաքաղաքական համագործակցությունը մեր տարածաշրջանը կայունացնող ու հավասարակշռող արդյունավետ ռազմավարական գործոն է: Այն կարող է ընդլայնվել և ներառել Ռուսաստան – Հայաստան – Թուրքիա համագործակցության բաղադրիչը, որը կլրացնի Թուրքիա-Իրան համագործակցության անխուսափելի զարգացումը: Գերմանիան կարող է սատարել և օժանդակել այս ամենին:

Արևմուտքի անտարբեր աչքերի առջև Հայաստանը շարունակում է շնչահեղձ լինել պարտադրված շրջափակման և տարածաշրջանային ենթակառուցվածքների զարգացումից «արտաքսվածության» հետևանքով: Հայաստանի Հանրապետության անվտանգության ռազմավարական նշանակության

[1] Եթե չհաշվենք Թուրքիայի վարչապետ Էրդողանի կողմից այդքան սիրված Հ.Ալիևի «մեկ ժողովուրդ՝ երկու պետություն» ասույթը: Չեմ հասկանում, ինչո՞ւ պրն Էրդողանը նույն բանը չի կարողանում ասել Հայաստանի և Արցախի դեպքում:

[2] Զևակերպումը մերը չէ: Այն կարելի է գտնել ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության կողմից 1999թ. նոյեմբերին պատրաստված և 2007թ. ապրիլին գաղտնազերծված *OTI 99-10031* հաշվետվությունում:

հիմնական գործոնը եղել է, է և կլինի հայ զինվորի մարտունակությունն Արցախում և հայ-ադրբեջանական սահմանին: Միջազգային տիրույթում կարճաժամկետ-միջնաժամկետ հեռանկարում Հայաստանի անվտանգության համակարգը կշարունակի հենվել ՌԴ-ի հետ մեծ պայմանագրի և ՀԱՊԿ-ի վրա: Անցած երկու տասնամյակների ընթացքում Արևմուտքը ձախողվեց այս հարցում Կովկասյան տարածաշրջանին ռազմավարական այլընտրանք առաջարկելու գործում՝ ոչ վերջին հերթին այն բանի հետևանքով, որ որդեգրեց և իրականացրեց հիմքում արատավոր և վերջին հաշվով՝ անիրատեսական «Ալիևի դոկտրինը»:

Եզրափակելով՝ դիմենք պրն Լարաբիի օրինակին և փաստենք: 2008թ. օգոստոսից հետո շատ բան փոխվեց Կովկասում, մեր ողջ տարածաշրջանում, մեր մտածելակերպում և հաշվարկներում: Եվ ամենակարևոր փոփոխությունն այն է, որ վերջապես կարելի է ասել. եկել է լրջանալու պահը: Այն հասունացել է թե՛ Հայաստանում, թե՛ Թուրքիայում, թե՛ աշխարհում:

22 ապրիլի - 9 մայիսի 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Ս.Լարաբի,* Դժվարին գործընկերություն. ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների դարաշրջանում (Troubled partnership: U.S.–Turkish relations in an era of global geopolitical change. F. S. Larrabee. RAND, Project Air Force, MG-8893-AF. 2010. xxiii + 138 pages).
2. *Ս.Լարաբի, Յ.Լեսսեր,* Թուրքիայի արտաքին քաղաքականությունը անորոշության դարաշրջանում (Turkish foreign policy in an age of uncertainty. F. Stephen Larrabee, Ian O. Lesser. RAND, Center for Middle East Public Policy, MR-1612. 2003. xxi + 217 pages).
3. ՆԱՏՕ-ն և Կասպիական տարածաշրջանի անվտանգությունը. Չափազանց հեռո՞ւ առաքելություն (NATO and Caspian Security: A Mission Too Far? RAND, Project Air Force. 1999. xix + 113 pages).
4. *Марджанян А.,* Наше будущее – глазами *NIC.* НОФ «Нораванк», «21-й Век» (русскоязычное издание), No 3, 2009, с. 74-98:
5. *Ռ. Շեքլի,* Մտքի բուրմունք, Սովետական գրող, Երևան, 1984թ.: Թարգմ.՝ Ռ.Ավետիսյան (R. Shekley. Shall We Have a Little Talk? *Galaxy*, 1965).
6. *Տեր-Հարությունյան Գ.,* Ռուսաստան-Գերմանիա. հնարավոր սցենարներ տարածաշրջանային անվտանգության համատեքստում: 26 ապրիլի, 2010թ. http://www.noravank.am: Տե՛ս նաև *Հարությունյան Գ.,* Զարգացման ռազմավարություն և աշխարհաքաղաքական սցենարներ, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», # 3, 2010:

КОРПОРАЦИЯ *RAND* И МЫ: АРМЯНО-ТУРЕЦКИЕ ВЗИМООТНОШЕНИЯ

Ара Марджанян

Резюме

В статье приводятся основные положения и выводы относительно роли Турции в регионе и установления взаимоотношений между Арменией и Турцией по материалам недавнего исследования корпорации *RAND* (США). Коментируется специфика этих выводов. В свете стратегического отката «мессианской Америки» из нашего региона, обрисованы некоторые геополитические реалии, стоящие перед Арменией и регионом.

ԱՎԻԱՑԻՈՆ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արծրուն Հովհաննիսյան[*]

Նախաբան

ԼՂՀ և ՀՀ ղեկավարությունը որոշում է կայացրել Ստեփանակերտի օդանավակայանը հիմնովին վերակառուցել՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Օդանավակայանի շինարարությունը նախատեսվում է ավարտել 2010թ. հոկտեմբերին: Սկզբում կօգտագործվեն 14-16 տեղանոց փոքր ինքնաթիռներ, և չվերթներ կիրականացվեն Ստեփանակերտ-Երևան ուղղությամբ, որոնք ընդհատվել էին դեռ տասը տարի առաջ: Քաղաքացիական ավիացիայի ներկայացուցիչները հայտարարել են, որ մինչև այս տարվա ավարտը պիտի կայանա ինքնաթիռների առաջին թռիչքը:

Նշենք, որ այսօր հստակ և անխափան գործում է Երևան-Գորիս-Ստեփանակերտ մայրուղին: Բացի դրանից, կա նաև այլընտրանքային, ոչ այնքան բարվոք, սակայն երթևեկելի Վարդենիս-Մարտակերտ ճանապարհը: Սակայն անգամ հպանցիկ դիտարկումից հետևում է, որ օդային կամուրջն ավելի քան անհրաժեշտ է, և ոչ միայն զբոսաշրջության, սպորտի կամ այլ ոլորտների զարգացման համար, ինչպես կարծում են շատերը:

1. Հիմնախնդիրը

Ինչպես հայտնի է, Երրորդ Հանրապետությունն իր ստեղծումից ի վեր ապրում է շրջափակման պայմաններում: Նույն շրջափակումն ու զրկանքներն է կրում նաև ԼՂՀ-ն:

Բնակչության գոյատևման համար ներկրվում են առաջին անհրաժեշտության բազում ապրանքներ, որոնք չեն արտադրվում մեր երկրում: Տնտեսական թեկուզ չնչին աճի հետ, բնականաբար, ավելանում են արտահանման և ներկրման ծավալները, զբոսաշրջությունը և այլն:

Նման շրջափակման պայմաններում Հայաստանն արդեն մեկ տասնամյակից ավելի է, ինչ կատարում է ավիացիոն բեռնափոխադրումներ:

[*] ՀՀ ԶՈՒ կապիտան:

Տնտեսական լուրջ աճը մեզ կարող է կանգնեցնել բեռնափոխադրման աննախադեպ ծավալների իրականության առջև: Հաշվի առնելով այս իրավիճակը՝ պետք է փաստել, որ օդային բեռնափոխադրումն առանձնապես է կարևորվում: Հետևաբար, պետք է լրջորեն ուսումնասիրել օդային բեռնափոխադրման առանձնահատկությունները, խնդրի տեխնիկական, տնտեսական, ապահովման և այլ կողմերը: Մարդատար ինքնաթիռների թռիչքների ծավալների աճն այսօր «Արմավիա» և այլ ավիաընկերությունների կողմից ընդունել է օրինաչափ և դինամիկ բնույթ:

Օդային բեռնափոխադրումների խնդիրը պետք է ուսումնասիրել նաև ռազմական տեսանկյունից, որը կարևոր է հատկապես Արցախի պարագայում: Արցախյան շարժման սկզբից Հայաստանի հետ ցամաքային սահման չունեցող Արցախի միակ փրկությունն օդային բեռնափոխադրումներն էին: Թռիչքներն իրականացնում էին հիմնականում «Էրեբունի» օդանավակայանի չորս-հինգ *«Ми-8Т»* ուղղաթիռները, տասը-տասներկու փոքրիկ *«Ан-2»* և մի քանի *«Як-40»* ինքնաթիռները:

«Ми-8Т» ուղղաթիռները և *«Як-40»* ինքնաթիռները հասցնում էին օրական մի քանի թռիչք կատարել (ընդհանուրն օրական մի քանի տասնյակ թռիչք): 1990թ. հոկտեմբերի 17-ից Արցախի միակ օդանավակայանը գտնվում էր ադրբեջանական ՕՄՕՆ-ի հսկողության տակ [1, էջ 30], որի պատճառով հայկական կողմը հրաժարվում է *Як-40* ինքնաթիռների կիրառումից: Արցախահայության հույսը մնում են միայն ուղղաթիռները, որոնք ստիպված վայրէջք էին կատարում ամեն մի հարմար դաշտում: Թեև ուղղաթիռները հին էին և աշխատում էին գերբեռնվածության պայմաններում, սակայն հայ օդաչուներն ուղղաթիռներով կատարում էին տասնյակ թռիչքներ: 1990թ. ընդհանուր կատարվել է 5200 ժամ թռիչք [2, էջ 7]: Ուղղաթիռները բարձում էին սահմանվածից կրկնակի ավելի բեռ: Եղել է դեպք, երբ 25-30 տեղանոց *«Як-40»* ինքնաթիռը Ստեփանակերտի օդանավակայանից վերադարձել է 86 ուղևորով: Տասից քիչ *«Ми-8Т»* ուղղաթիռները քանակապես և որակապես ի վիճակի չէին դիմանալու 1988-90թթ. թռիչքների ինտենսիվությանը: Օդանավակայանի ղեկավարությունը դիմում է երկրի կառավարությանը, և մեծ դժվարություններով ՌԴ-ից գնվում է հինգ նոր *«Ми-8 МТВ-1»* ուղղաթիռ: Նոր մեքենաները 3-4 տոննայի փոխարեն կարող էին 5-5.5 տոննա բեռ կրել:

1992թ. փետրվարին Խոջալուի կրակակետը լռեցնելուց հետո օդանավակայանն անցնում է ինքնապաշտպանական ուժերի հսկողության տակ, և վերսկսվում են *«Як-40»* ինքնաթիռների թռիչքները: Դրանք կապված էին անասելի դժվարությունների և վտանգների հետ: Հակառակորդի զենիթային սպառազինության հակազդեցությունից խուսափելու համար ինքնաթիռները Ստեփանակերտին մոտենում էին 5000 մ բարձրության վրա, իսկ հետո սկսում էին փոքր շառավղի զսպանակավոր պտույտներով իջնել: Նույն ձևով վեր էին բարձրանում և ուղղվում դեպի Երևան: Հնարքն այնքան էլ դյուրին չէր, իսկ այս

հատուկ մարտավարությանը տիրապետում էին ոչ բոլոր օդաչուները:

Շուշին ազատագրելու գործողության նախապատրաստման ընթացքում *«Як-40»*-ներն օրական մինչև 15 թռիչք էին կատարում: Մարտի 12-ից մինչև մայիսի 5-ը կատարվել է 690-ից ավելի թռիչք: Արցախ է տեղափոխվել ավելի քան 2700 տոննա բեռ [3, էջ 437]: Ցավոք, օդանավակայանի առավելագույն հնարավորությունը *«Як-40»*-ներն էին, որոնք կրում էին ընդամենը 3-3.5 տ բեռ: Ահա Արցախյան գոյամարտի ավիաբեռնափոխադրումների քրոնիկոնը:

Ընդհանուր առմամբ քաղաքացիական ավիացիայի օդաչուները միայն տրանսպորտային նպատակներով կատարել են ավելի քան 3700 թռիչք՝ ընդհանուր 11000 թռիչքաժամով, որից միայն 1500-ը՝ գիշերային ժամերին, մնացածը՝ հիմնականում բարդ օդերևութաբանական պայմաններում[1]: Հաշվված չեն մատյաններում Գորիսի կամ Կամոյի գրանցումով դեպի Արցախ կատարված թռիչքների տարբերությունը կազմող ժամերը: Այս թռիչքաժամերի ընթացքում տեղափոխված բեռների քանակը դժվար է գերագնահատել: Դրանք եղել են պատերազմին անհրաժեշտ զինամթերք, վառելանյութ, զենք, հանդերձանք ու սննդամթերք: Վերադարձին հայ օդաչուները բերում էին վիրավոր հայրենակիցներին, ծերերին, երեխաներին ու կանանց:

Իրադրությունը կարող է կրկնվել մեր հարևանների թեթև ձեռքով: Այնպես որ, հիմնախնդիրը պետք է ուսումնասիրել ամենայն մանրամասնությամբ:

2. Բեռնատար ինքնաթիռները

Այսօր և անցնող մեկ ու կես տասնամյակի ընթացքում հայկական ավիացիոն բեռնափոխադրումները կատարվում են հիմնականում խորհրդային արտադրության բեռնատար ինքնաթիռներով: Դրանք են՝ *«Ан-26», «Ан-12», «Ил-76»* ինքնաթիռները [4, с. 8-11]: Ոչ հաճախ կիրառվում են նաև այլ պետությունների արտադրության մի քանի ինքնաթիռների տեսակներ և խորհրդային արտադրության *«Ан-22», «Ан-124 Руслан»* ինքնաթիռները: Հետաքրքրական էր այն, որ 2009թ. Երևանի ջերմաէլեկտրակայանի համար Հայաստան բերվեց առանձնապես մեծ չափերի և քաշի (187,6 տոննա) գեներատոր: Այն իրականացվեց աշխարհում ամենամեծ բեռնատար ինքնաթիռի՝ *«Ан-225 Мрия»*-յի շնորհիվ, քանի որ Հայաստանը գտնվում է շրջափակման մեջ: Թվարկված ինքնաթիռները, իհարկե, կարող են տարբեր ծավալի և քաշի բեռները հասցնել տարբեր հեռավորությունների վրա: Նշվածները պատկանում են տարբեր ժամանակների և տարբեր դասակարգումների: Ամբողջ աշխարհում հիմնականում կիրառվում են միջին բեռնատարները, որոնցից է *«Ил-76»*-ը, որի բեռնատարողությունը կազմում է մինչև 50 տոննա [5, с . 153]:

Թվարկված ինքնաթիռների մեջ կան տեսակներ, որոնք մեր պայմանն-

[1] Այս տվյալները վերցված են «Էրեբունի» օդանավակայանի գրանցման մատյաններից:

րում կիրառվում են ավելի հաճախ, չնայած վաղուց արդեն հնացել են: Մինչև ռեակտիվ շարժիչներով բեռնատարների լայն կիրառումն աշխարհում գոյություն չուներ 50 (բացառությամբ *«Ан-22»*-ի) [6, с. 9-12] և ավելի տոննա բեռնատարողություն ունեցող ինքնաթիռ:

Բեռնատար ինքնաթիռների շահագործման համար կարևոր դեր է խաղում նրանց տեսակը՝ ըստ շարժիչների, որոնք լինում են պտուտակավոր և ռեակտիվ: Պտուտակավոր շարժիչներով ինքնաթիռներն ի հայտ են եկել ավելի վաղ և հիմնականում ներկայացված են միջինից փոքր ծանրությունների տեղափոխման ոլորտում: Ռեակտիվ շարժիչներով ինքնաթիռներն ի հայտ են եկել ավելի ուշ, ավելի արդիական են և կարող են կրել ավելի մեծ բեռներ: Սակայն այս երկու տեսակի ինքնաթիռներն ունեն մեկ լուրջ, էական տարբերություն՝ նրանց շահագործման ծախսատարությունը: Քանի որ, ինչպես նշեցինք, աշխարհում հիմնականում կիրառվում են միջին բեռնատարները, իսկ այդ ասպարեզում գործում են ռեակտիվ, թանկարժեք մեքենաները, ուստի մասնագետները կատարելագործում են ավելի էժան պտուտակավոր շարժիչները՝ փորձելով բարձրացնել հզորությունը, որպեսզի միջին բեռնատարների ասպարեզը լցվի ավելի էժան ինքնաթիռներով: Արդյունքում՝ ստացվում է, որ ռեակտիվ թանկարժեք ինքնաթիռների շահագործումը դառնում է քիչ ցանկալի և օգտակար: Որպես կանոն, նման ինքնաթիռների արագության առավելությունն այնքան էլ չի գրավում բեռնափոխադրողներին: Միտումը չի վերաբերում ծանր բեռների փոխադրմանը, որոնց ծավալն այնքան էլ մեծ չէ: Այսինքն՝ նման ինքնաթիռներն ստիպված են օգտագործում: Ամբողջ աշխարհում շահագործվում են ընդամենը մի քանի տասնյակ *«Ан-124 Руслан»* և *«C-5 Galaxi»* ռեակտիվ շարժիչներով ծանր ինքնաթիռներ և քիչ ավելի մարդատար ինքնաթիռների հիման վրա ստեղծված ծանր բեռնատարներ (*«Boeing-747-400»*, *«Boeing-777-200LR», «Ил-96Т»,* հեռանկարային *«A-380-800Ф»* և այլն) [7, с. 119-120]:

Նոր պտուտակավոր ինքնաթիռների դասին են պատկանում *«Ан-70»* և *«C-130J»* բեռնատար ինքնաթիռները, ինչպես նաև նոր ստեղծվող համաեվրոպական *«A-400»*-ը [5, с. 158, 8, с. 230-231]: Համեմատության համար նշենք, որ *«Ан-70»*-ն ԱՊՀ երկրներում լայն տարածում գտած *«Ил-76 МФ»*-ի մրցակիցն է և նույն հեռավորության վրա թռչելիս ունենալով բեռնափոխադրման գրեթե նույն տվյալները՝ աչքի է ընկնում վառելիքի ծախսման կրկնակի բարելավված տվյալներով: Այն պահանջում է նաև զգալիորեն կարճ թռիչքուղի [6, с. 25-29]: Նոր ինքնաթիռի հիմնական գաղտնիքը նոր տեսակի հովհարապտուտակային տիպի շարժիչներն են (ինչպես *«C-130J»* և *«A-400»* ինքնաթիռների շարժիչները): Նշված շարժիչների պտուտակներն ունեն զգալիորեն բարելավված աերոդինամիկ ցուցանիշներ: Մասնագետները չեն ցանկանում մեծացնել բեռնատար ինքնաթիռների տարողունակությունը: Ահա այսպիսի զարգացման մի-

տում ունեն բեռնափոխադրող ինքնաթիռները: Զարգացումը, բնականաբար, մեծ կարևորություն է ներկայացնում նաև հայկական բեռնափոխադրումների համար, սակայն այս ինքնաթիռները դեռ լայնորեն չեն կիրառվում:

Կատարելով անհրաժեշտ հետևություններ այս ամենից և հաշվի առնելով հայկական բեռնափոխադրումների աճի ծավալները՝ անհրաժեշտ է փաստել, որ ապագայում մեծ դեր կարող է հատկացվել նաև մեծ ծավալների բեռնափոխադրումներին (հիսուն և ավելի տոննա բեռների հաճախակի փոխադրումներին):

Հիմք ընդունելով այս ամենը՝ անհրաժեշտ է մտածել նոր ինքնաթիռի և ծավալների մասին: Մենք ակնարկեցինք մի ինքնաթիռի մասին, որը միաժամանակ համարվում է միջինից ծանր բեռների կրող և իր քիչ ծախսատարությամբ ռեկորդակիր է: Աշխարհում եղած բոլոր միջին բեռնատարները, անկախ շարժիչների տեսակից, վառելանյութի ծախսի առումով ունեն *«Ан-22»*-ից վատ ցուցանիշ: Ծախսի ցուցանիշով *«Ан-22»*-ին են մոտենում միայն վերը նշված *«Ан-70»*-ը և *«А-400»*-ը: Վերջինս դեռ խմբաքանակային արտադրության մեջ չկա, ավելի թանկարժեք է և ունի ընդամենը 40 տոննա բեռնատարողություն [4, с. 8-11]: *«Ан-22»*-ը 50 տոննա բեռով կարող էր թռչել 5000 կմ՝ օգտագործելով 43 տոննա վառելանյութ այն ժամանակ, երբ *«Ан-70»*-ը 35 տոննա բեռով կարող էր թռչել 3800 կմ՝ օգտագործելով 38 տոննա կերոսին: Համեմատության համար նշենք, որ լայնորեն կիրառվող *«Ил-76»*-ը 42 տոննա բեռով կարող էր թռչել 4000 կմ՝ օգտագործելով 81 տոննա կերոսին [9, с. 1-13]:

«Ан-22»-ի միջին բեռնատարողությունը կազմում է 40-60 տոննա, իսկ 100 տոննա բեռով այս ինքնաթիռը սահմանել է համաշխարհային ռեկորդ: Բացի ծանրաքարշ «Ռուսլանից» և «Գելեքսիից», աշխարհում միայն *«Ан-22»*-ը և ամերիկյան *«С-17»*-ը կարող են տանել 60 տոննայից ավելի բեռ [4, с. 136] (չհաշված ռեակտիվ մարդատար ինքնաթիռների հիման վրա ստեղծված մի քանի բեռնատար ինքնաթիռները, որոնց ծախսը ևս թանկ է): Հենց այս երկու ինքնաթիռներն են հայկական ավիացիոն բեռնափոխադրումների ապագա երաշխիքները: Ամերիկյան բեռնատարը ռեակտիվ ինքնաթիռ է, և նրա չափորոշիչները բոլորովին այլ են, սակայն վերջինիս տվյալները ևս գրավիչ են:

Նախ անդրադառնանք *«Ан-22»*-ին, որի ընդարձակ բեռնախուցը թույլ է տալիս օգտագործել իր մեծ բեռնատարողությունն ամբողջությամբ: Այս ինքնաթիռների շահագործումը, մեր խորին համոզմամբ, մեծ հետաքրքրություն պիտի ներկայացնի հայկական բեռնափոխադրումների համար: Ներկայումս *«Ан-22»* ինքնաթիռները սահմանափակ քանակությամբ շահագործվում են ռուսական ՌՕՈ-ում [6, с. 13] և «Աերոֆլոտ» կազմակերպությունում (ընդհանուր քանակը 80-ից պակաս է): Հնարավոր է մի քանի ինքնաթիռ գնել կամ վարձակալել, ինչը ներկայումս շատ տարածված է: Սակայն, հաշվի առնելով այդ ինքնաթիռների տարիքը, պետք է ասել, որ դրանք չեն կարող մեզ երկար

ծառայել: Այսօր Կիևում գտնվող «Անտոնով» ընկերության մասնագետները համապատասխան պայմանագրերի դեպքում պատրաստ են արտադրել համապատասխան քանակությամբ նման ինքնաթիռներ՝ նույնիսկ որոշ կատարելագործումներով: Քանակությունը կարող է կազմել մինչև 20-30 ինքնաթիռ: Մոտ ապագայում տարվա կտրվածքով կկատարվեն նման ինքնաթիռների առնվազն մի քանի հարյուր թռիչքներ: *«Ан-22»*-ի երեք թռիչքով կտեղափոխվի *«Ил-76»*-ի չորս անգամով տեղափոխած բեռը՝ միաժամանակ ծախսելով երկու անգամ պակաս վառելանյութ: Դժվար չէ հաշվարկել, թե ինչքան վառելանյութ կարելի է խնայել 300 կամ 400 թռիչքների դեպքում:

Նշենք, որ նման ինքնաթիռները կարող են ձևափոխվել և կիրառվել որպես մարդատար ինքնաթիռներ: *«Ан-22»*-ի ձևափոխված տարբերակը բարձրակարգ սրահներում կարող է տանել մինչև 250-300 ուղևոր՝ ունենալով մինչև 10-15 հազար կիլոմետր թռիչքի հեռավորություն:

Իսկ նման ինքնաթիռով թռչող ուղևորներն անպայման կվճարեն զգալիորեն պակաս գումար: Ներկայումս աշխարհում կիրառվում են նաև ուղևորատար մեծ ինքնաթիռների բեռնատար տարբերակներ, որոնց բեռնատարողությունը հասնում է վերը նշված բեռնատարների մակարդակին, սակայն նման ինքնաթիռները նախ և առաջ թանկարժեք են և ծախսատարությամբ զիջում են «Անթեյ»-ին:

Կապված միջազգային պահանջների հետ՝ «Անթեյ»-ին թույլ չեն տա մուտք գործել Եվրոպա, սակայն թեկուզ միայն ԱՊՀ տարածքում թռչելու համար *«Ан-22»*-ը լուրջ միջոցներ կխնայի: Չէ՞ որ հիմնական ապրանքաշրջանառությունը Հայաստանը կատարում է ԱՊՀ պետությունների հետ:

Տնտեսական զարգացման այս նոր փուլում հարկավոր է մտածել ապագայի գործերի մասին: Անհրաժեշտ է չմոռանալ նաև հայ ժողովրդին ապագայում սպասվող պատերազմը, որը ներկայումս գտնվում է գաղափարական և նախապատրաստական փուլում: Ռազմական գործողությունների ժամանակ մեզ հարկավոր է խնայել ամեն մի գրոշը: *«Ан-22»* ինքնաթիռը, լինելով անցնող ժամանակների ներկայացուցիչ, կարող է դառնալ ապագայի ձեռքբերումների երաշխիք:

Եվրոպական այլ և ավելի հեռավոր երկրների հետ օդային բեռնափոխադրումը անհրաժեշտ է կառուցել հենց ամերիկյան *«C-17»* ինքնաթիռի հիմքի վրա, քանի որ այն իր տեսակի մեջ ամենամեծ բեռնատարն է և ամենաքիչ ծախսողը: Ունի լայն և ընդարձակ բեռնախուց և հաջողությամբ վայրէջքներ է կատարում նաև ոչ կարծր ծածկույթների վրա:

3. Օդանավակայանները

Օդանավակայանները երկրի անվտանգության ապահովման համար ունեն առանցքային նշանակություն: Ինչպես վերը ներկայացվեց, Հայաստանի Հանրապետությունը ներկայումս նույնիսկ անթույլատրելի չափով է կախված օդային բեռնափոխադրումներից: Սակայն իրավիճակից դուրս գալու լավագույն լուծումն այդ բեռնափոխադրումներն ավելի շահավետ դարձնելն ու ճիշտ կազմակերպելն է: Ինքնաթիռների մասով առաջնային լուծումները ներկայացնելուց հետո պետք է ներկայացնել նաև օդանավակայանային ենթակառուցվածքների առանձնահատկությունները:

Մեզ նախ անհրաժեշտ է, որպեսզի հայրենիքում առավելագույնս շատ օդանավակայաններ ընդունեն մեծածավալ բեռներ բերող ինքնաթիռներ: Տվյալ դեպքում 100 տոննային մոտ բեռներ բերող ինքնաթիռները պետք է կարողանան վայրէջք կատարել առնվազն երեք-չորս օդանավակայանում:

Առաջին պատճառը հենց բեռնափոխադրումների ծավալների աճն է, որը պատերազմի ժամանակ կարող է ընդունել աննախադեպ մեծ ծավալներ:

Երկրորդը բեռների հասցեական ճիշտ բաշխումն է: Օրինակ, 100 տոննա բեռ ընդունող մեկ օդանավակայանի դեպքում տվյալ բեռն այլ քաղաք հասցնելը նորից առաջացնում է լրացուցիչ ծախսեր՝ կապված ավտոտրանսպորտի և երկաթգծի հետ: Այլ օդանավակայանի դեպքում բեռն առավելագույն չափով կմոտեցվի վերջնական հասցեատիրոջը:

Երրորդ պատճառը եղանակային պայմանների առանձնահատկություններն են: Օրերով ու շաբաթներով մեկ օդանավակայանը կարող է փակ մնալ մառախուղի կամ ձնաբուքի պատճառով: Նման դեպքերը մեզանում եզակի չեն:

Նշված խնդիրներն արդյունավետ լուծելու համար այդ երեք-չորս օդանավակայանները պետք է լինեն մեկը մյուսից առնվազն 50-60 կմ հեռավորության վրա: Այսօր եղած օդանավակայանների հարմարեցման, մեծացման աշխատանքներին զուգահեռ պետք է Ջերմուկում սարքել Երևանի և Գյումրիի օդանավակայանների չափերին համապատասխանող օդանավակայան: Նախ՝ հեռավորությունը շատ հարմար է Երևանից, առավելագույնս մոտ է Արցախին և բավարար հեռավորության վրա է ադրբեջանական և թուրքական սահմաններից:

Հաջորդ քայլն այն պետք է լինի, որ Արցախում պետք է գործեն առնվազն երկու-երեք օդանավակայաններ, որոնցից մեկը պետք է պարտադիր կարողանա ընդունել միջին բեռնատար ինքնաթիռներ՝ մինչև 40-50 տոննա բեռնատարողությամբ: Մյուս երկուսը կարող են լինել փոքրիկ օդանավակայաններ՝ հասարակ, ոչ կարծր ծածկույթ ունեցող թռիչքուղով: Արցախին մոտիկ Հայաստանի շրջաններում ևս պետք է գործեն համանման մի քանի օդանավակայաններ:

Օդանավակայանների ռազմավարական նշանակությունը միայն վերը

նշվածով չի սահմանափակվում, դրանք խաղաղ և հատկապես պատերազմի ժամանակ ռազմական ավիացիայի մշտական կամ ժամանակավոր բազաներ են հանդիսանում: Օդանավակայաններն առաջին տեղում են հակառակորդի կողմից հարվածի ենթակա կառույցների ցուցակում: Այս առումով մարտական ավիացիայի համար հետաքրքրական են ջրային մակերեսների վրա առաջարկվող օդանավակայանները, որոնք ապահովված կլինեն հակառակորդի օդային հարձակման միջոցների անակնկալ հարվածներից[1]:

4. Ուղղաթիռները և փոքր ինքնաթիռները

Վերը նշվեց, որ մեր տարածաշրջանում շատ կարևոր են ուղղաթիռները, որոնք լեռնային տեղանքում շատ հարմար են բեռնափոխադրումների համար: Արցախյան գոյամարտի փորձը լավագույնս ապացուցում է այս տեսակետը: Մենք ներկայումս պետք է մեծ ուշադրություն դարձնենք հենց այս խնդրին և, ճիշտ հետևություններ կատարելով Արցախյան գոյամարտից, զարկ տանք ուղղաթիռային ավիացիայի զարգացմանը: Մեզ անհրաժեշտ է միջին բեռներ տեղափոխող, ինչպես նաև մինչև 10-15 տոննա բեռներ տեղափոխող 20-30 ուղղաթիռ:

Բացի վերը նշված ուղղաթիռներից, անհրաժեշտ է զարգացնել նաև փոքր ավիացիայի հետևյալ տեսակները՝

- մինչև 5-10 տեղանոց կամ մինչև 2 տոննա բեռներ տեղափոխող ներքին այրման և ռեակտիվ շարժիչներով ինքնաթիռներ,
- մինչև 30 տեղանոց կամ մինչև 10 տոննա բեռներ տեղափոխող ռեակտիվ շարժիչներով ինքնաթիռներ,
- մինչև 4-5 տեղանոց կամ մինչև 1 տոննա բեռներ տեղափոխող ուղղաթիռներ:

Նման թռչող սարքերը հատկապես կնպաստեն մասնավոր գործարարության, զբոսաշրջության և ավիացիոն սպորտի տեսակների (անկարգելային, պարապլանային, ճախրաթիռային և այլն) զարգացմանը:

5. Եզրակացություն

Արցախյան գոյամարտի ընթացքում մեր կողմից թռիչքների 80-90%-ը կազմել են տրանսպորտային փոխադրումները: Մինչև Լաչինի միջանցքի բացվելը, հայկական կողմից տրանսպորտային բոլոր փոխադրումները կատարվել են ավիացիայի միջոցով: Առանց վարանելու պետք է փաստել, որ ավիացիան թույլ չտվեց հակառակորդին հայաթափել Արցախը: Եվ եթե ավիացիան ունենար ոչ թե 7-8, այլ 30-40 տրանսպորտային ուղղաթիռ, որոնց գոնե մի մասն

[1] Մանրամասն տե՛ս *Հովհաննիսյան Ա.,* Մի քանի հարցեր ավիացիայից, Եր., 2009թ., էջ 111-116:

ունենար ոչ թե մինչև 5, այլ մինչև 10-15 տոննա բեռնատարողություն, ապա շատ հարցեր այսօր այլ պատասխան կունենային: Թերևս, հնարավոր կլիներ նաև հայաթափումից փրկել Շահումյանը:

Պատմությանը հայտնի է մի քանի դեպք, երբ տրանսպորտային ավիացիան որոշիչ դեր է խաղացել այս կամ այն հակամարտության ժամանակ: Մասնավորապես, հայտնի է 1940-45թթ. Չինաստանի փրկության համար դաշնակիցների կազմակերպած կյանքի ճանապարհը՝ «Գորբը», որն անցնում էր Հնդկաստանի ջունգլիների վրայով: 600 տրանսպորտային ինքնաթիռներ ամսական Չինաստան էին հասցնում մոտ 30.000 տոննա բեռ, և դրանց շնորհիվ պայքարը ճապոնացիների դեմ շարունակվեց մինչև հաղթական ավարտ [10, c. 460]:

Մյուս պատմությունը հայտնի է որպես Բեռլինի «փրկության կամուրջ», որն ստեղծեցին ամերիկյան բեռնատար ինքնաթիռները 1948թ. մարտին: Խորհրդային ղեկավարությունը շրջափակել էր Գերմանիայի մայրաքաղաքը՝ նպատակ ունենալով տնտեսապես խեղդել վերջիններիս: Ամերիկյան ղեկավարությունն օրական 4500 տոննա բեռների փոխադրման ծավալներով մի կերպ փրկեց քաղաքը սովահարությունից ու ցրտից [11, c. 271]: Գործողությունը տևել է մոտ մեկ տարի:

Նման մի կամուրջ էին ստեղծել հայ օդաչուներն Արցախի համար: Բացի դրանից, հայկական կողմից ձեռնարկված հիմնական հարձակողական գործողությունների նյութական պաշարների նախապատրաստական աշխատանքները կատարել է ավիացիան: Գոյամարտի փորձից պետք է կատարել ճիշտ եզրակացություններ:

Հաշվի առնելով Հայության և հայկական պետությունների առաջ ծառացած խնդիրները, Արցախյան գոյամարտի վերլուծությունը և համաշխարհային ավիացիայի զարգացման միտումները՝ պետք է փաստել, որ ներկայումս խիստ անհրաժեշտ է զարկ տալ ընդհանուր քաղաքացիական և սպորտային ավիացիայի զարգացմանը: Բացի վերը շարադրված տնտեսական և ռազմավարական նախապայմաններից, նշենք, որ բազմատեսակ ավիացիոն սպորտի զարգացումը մեծապես կարող է նպաստել ճիշտ սերնդակերտմանը և առողջ ապրելակերպի զարգացմանը, որը ռազմավարական խնդիր է յուրաքանչյուր պետության համար:

Մարտ, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Հասրաթյան Ս.,* Ղարաբաղյան պատերազմ, Եր., 2001:
2. *Գեղամյան Գ., Սահակյան Ռ.,* Դրվագներ հայ օդաչուների Արցախում մղած հերոսական պայքարից, Եր., 2006:
3. *Չիբուխչյան Ս.,* Հերոսամարտի պողպատե թևերը, Եր., 2008:
4. *Шевченко О.,* Наше развитие в освоении новых самолетов. Взлет (15) март. 3. 2006.
5. *Jane's.* Д. Рендел, Современные самолеты, М., 2002.
6. *Беляев В., Ильин В.,* Российская современная авиация, М., 2001.
7. *Гордеенко Ю.и др.,* Военная авиация. Ч 1. Минск, 2000, стр. 399, Ч 2.
8. *Архипова М.,* Реактивные самолеты вооруженных сил СССР и России, М.-Минск. 2002.
9. *Таликов Н.,* Самолет Ил-76 и его модификации. Авиация и космонавтика. 4. 2003.
10. *Ченнолт К. Ли.,* Путь бойца, М., 2006.
11. *Хелферс Дж.,* ВМФ США, М., 2004.

АВИАГРУЗОВЫЕ ПЕРЕВОЗКИ В АРМЕНИИ

Арцрун Оганесян

Резюме

Уже более десятка лет Армения фактически находится в блокаде со стороны соседних государств, и поэтому важнейшим средством грузоперевозок остается авиация. Та же ситуация была и во время Нагорно-Карабахской войны. Единственным средством связи была малочисленная гражданская авиация Армянской ССР, в которой были задействованы несколько самолетов Ан-2, Як-40 и несколько вертолетов Ми-8. И эти средства сыграли огромную роль в победной войне.

Авиация в Армении сейчас нуждается в серьезных финансовых вложениях и в особом отношении. Развитию подлежат и аэродромная сеть, и воздушные суда самых разных типов. Очень интересным решением для грузоперевозок может стать советский грузовой самолет Ан-22 «Антей», который, как многие считают, уже устарел. По нашему мнению, этот самолет может решить много вопросов для Армении. Новым подходом также может стать американский самолет С-17, который, будучи военно-транспортным, может и применяться как гражданский.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Աշոտ Մարկոսյան[*], *Ռուբեն Ղանթարչյան*[**]

Ներածություն

Ժամանակակից սոցիալ-տնտեսական կյանքում գլխավոր փոփոխությունն այն է, որ դեռևս 4-5 տասնամյակ առաջ գիտակցվեց և գործնականում օբյեկտիվ անհրաժեշտություն առաջացավ փոխելու վերաբերմունքը տնտեսությունում մարդկային կապիտալի դերի ու տեղի գնահատման նկատմամբ: Շատ երկրներում ինչպես կառավարությունները, այնպես էլ գործարարներն ընդունեցին տնտեսական գերակայության խոր սոցիալական վերակազմավորման անհրաժեշտությունը, որն էլ դարձավ համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը:

Առաջատար երկրներում կրթությունը տնտեսության գլխավոր ճյուղերից մեկն է: Ոչ նյութական կուտակումը, մասնավորապես՝ ներդրումը մարդկային կապիտալում, ընդգրկելով գիտական հետազոտություններն ու մշակումները, արագընթաց տեմպերով աճելով, անցավ այն սահմանագիծը, որից հետո նրա գերակայությունը նյութականի նկատմամբ դարձավ ակնհայտ: Վերջին 40 տարիների հետազոտությունների արդյունքում միջազգային մասշտաբով ձևավորվեց հիմնարար հասկացությունների համակարգ, որոնք կազմում են ժամանակակից կրթական համակարգի հիմքը: Այդ հասկացությունների համաձայն, կրթական համակարգն ընդգրկում է ընտանեկան դաստիարակումից մինչև հետբուհական կրթությունը և ներկայանում որպես տնտեսության առանձին խոշոր ոլորտ, որտեղ ստեղծվում է ազգային հարստության կարևորագույն բաղադրատարրը՝ գիտելիքների ֆոնդը, հմտությունները, աշխատուժի որակական հատկանիշները, որոնք տնտեսագիտական գրականությունում ստացել են «կրթական ֆոնդ» անվանումը [1, c. 10]: Հարկ է նշել, որ վերջինս հանդես է գալիս որպես առավել ակտիվ և ամենաերկարակյաց արտադրական գործոն:

---

[*] ՀՀ կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:
[**] Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դոցենտ, տնտեսական գիտությունների թեկնածու:

Կրթական համակարգի առանձնահատկություններից մեկն այն է, որ հոգևոր մշակույթի ոլորտն առաջինն էր, որի սուբյեկտներին ներկայացվեցին տնտեսական արդյունավետության բարձրացման պահանջներ, այսինքն՝ խնդիր դրվեց պարզել դրանց կողմից «թողարկվող արտադրանքի» մասնաբաժինը երկրի ազգային արդյունքի հավելաճի մեջ: Դա պայմանավորված է արդյունաբերական զարգացման նոր փուլի պահանջներով և տնտեսապես զարգացած երկրների նորամուծական տնտեսության զարգացման ուղուն անցմամբ: Ժամանակակից պայմաններում նորամուծական գործընթացը ձեռք է բերել բազմակողմանի բնույթ՝ ընդգրկելով տեխնոլոգիական, կազմակերպչական և սոցիալական նորամուծությունները:

Տնտեսության վերարտադրության համակարգում զգալի է կրթական ոլորտի դերը, որը նրա հետ կապված է առանձնահատուկ գործընթացներով, մասնավորապես՝ արտադրության գործընթացի ակտիվ բաղադրատարրի զարգացմամբ և կատարելագործմամբ: Երկարաժամկետ հատվածում այս գործընթացը կրթության ոլորտը դարձնում է տնտեսության ամբողջ վերարտադրության համակարգի առանցքային օղակը, որն այլ օղակների գործունեության արդյունավետության բարձրացման հիմնական առանցքն է [1, c. 61]: Այդ մասին են վկայում առանձին տնտեսագետների կատարած հաշվարկները: Այսպես, ամերիկյան տնտեսագետները ցույց են տվել, որ 1929-1982թթ. ընթացքում արտադրության աճի վրա առանձին գործոնների ազդեցությունն ունեցել է հետևյալ տեսքը. ֆորմալ կրթությունը (դպրոց, բուհ)՝ 26%, արտադրության մեջ որակավորման բարձրացումը՝ 55%, կապիտալ սարքավորումները՝ 20% [2, p. 29]:

Տնտեսության և, մասնավորապես, արտադրության զարգացման գործընթացը պահանջում է աշխատուժի, այդ թվում՝ զբաղվածների կրթական մակարդակի անընդհատ բարձրացում: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ աշխարհում տեղի է ունենում միջնակարգ կրթության վրա հիմնված աշխատատեղերի թվի կրճատում և բարձր որակական ու կրթական մակարդակի վրա հիմնված աշխատատեղերի ավելացում: Այսօր կադրերի վերապատրաստման ոլորտը գործում է որպես անընդհատ կրթական համակարգ, որի հիմքում ընկած է միջնակարգ դպրոցը, որտեղ ձևավորվում են բազային մտավոր և հոգեբանական ունակությունները: Համակարգի բազմաթիվ գործոններ անընդհատ ազդեցություն են ունենում դպրոցի վրա և դրանով նպաստում վերջինիս հիմնարար դերի պահպանմանը նեղ մասնագիտական գիտելիքների ուսուցման, ինչպես նաև վերամասնագիտացման գործընթացի ժամանակ:

Բարձրագույն կրթության համակարգը ձևավորում է արտադրական որակավորվածության ընդհանուր տեսական բազան: Բացի այդ, նրա համագործակցությունը գործարար աշխարհի հետ նշանակալի դեր ունի աշխատուժի որակավորվածության բարձրացման գործընթացում: Աշխարհի շատ երկր-

ներում մշակվել և հաջողությամբ գործում են մարդկային կապիտալի վերարտադրության, այսինքն՝ մտավոր ներուժի ձևավորման, զարգացման և կիրառման երկարաժամկետ հայեցակարգեր:

Ժամանակակից պայմաններում բավական փոխվել և ավելի ընդգրկուն է դարձել արհեստավարժ որակավորվածություն հասկացությունը: Ներկայումս այն ընդգրկում է նաև մի շարք հատկանիշներ, որոնք նախկինում վերաբերում էին զուտ բարոյահոգեբանական ոլորտին և ոչ մի կապ չունեին արտադրության արդյունավետության հետ: Այդ որակական հատկանիշներին կարելի է վերագրել պարտքի զգացումը, իր և իր ձեռնարկության տնտեսական գործունեության հնարավոր հետևանքների համար հասարակության առջև պատասխանատվության զգացումը, արտադրական գործընթացում իր դերի գիտակցումը, ինքնուրույն որոշումներ ընդունելու ունակությունը և այլն: Այս հատկանիշները ժամանակակից արտադրության կազմակերպման գործընթացում խիստ անհրաժեշտ են, քանի որ անձնակազմի որակական ցածր մակարդակը և անփութությունը կարող են հանգեցնել ոչ միայն ձեռնարկության ոչ շահութաբեր գործունեության, այլ նաև տարաբնույթ տեխնոգեն աղետների:

Մասնագետների շրջանում ընդունված է այն տեսակետը, որ մարդը, անհատը չի կարող արդյունավետ կիրառել գիտելիքները և ունակությունները, եթե փոփոխությունները նրա մեջ առաջացնում են հոգեբանական անհարմարավետություն: Առավել լավ թեկնածուներ են նրանք, որոնք հոգեպես պատրաստ են նորամուծություններին և դրանց վերաբերվում են որպես բնական գործընթաց: ԱՄՆ-ում աշխատողին վարձելու ժամանակ շատ հաճախ կիրառում են հատուկ թեստեր, որոնց միջոցով պարզում են տվյալ անձի «վերապատրաստվելու ունակությունը» և «փոփոխվելու փորձը»: Թեստերի արդյունքները անձին վարձելու մասին որոշում կայացնելու հիմնական գործոնն են [1, c. 65]:

1. Կրթության գործընթացը պետք է սկսել ծնվելու պահից

Կարևոր բնութագրերից է տեղեկատվության ընկալման արագությունը, տեղեկատվության հսկայական ծավալից առաջնային տեղեկատվության առանձնացման ունակությունը: Խոսքը ոչ այնքան արհեստավարժ գիտելիքների, որքան հոգեբանական ուղղվածության մասին է, որի մշակումն ամբողջ կրթական համակարգի կարևոր խնդիրն է, ընդ որում՝ անհրաժեշտ է նշել, որ հիմնական ծանրաբեռնվածությունն ընկած է համակարգի ստորին օղակի՝ դպրոցի վրա: Մասնագետների կարծիքով, նախապատրաստական համակարգի կատարելագործման մեջ առաջնահերթ քայլերից է երկուսից մինչև տասը տարեկան երեխաների կրթական և դաստիարակչական հիմնախնդիրների լուծումը: Հատկապես այդ ժամանակահատվածում են ձևավորվում անհատի հիմնական հատկանիշները, զարգանում նրա ստեղծագործական միտքը, դրվում է ունակությունների կայուն զարգացման և կատարելագործման հիմ-

քը: Այսպիսի մոտեցումով ճապոնական կրթական համակարգը նշանակալի հաջողությունների է հասել:

Տնտեսական աճի ճապոնական հետազոտողները հանգել են այն եզրակացության, որ ճապոնական տնտեսության և ամբողջ ազգի որակական վիճակի հետագա արագացված զարգացման համար հսկայական պաշարներ են թաքնված յուրաքանչյուր ճապոնացու անհատական ներուժի մեջ՝ սկսած նախադպրոցական տարիքից: Ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր երեխայի դաստիարակման ստեղծագործական և անհատական մոտեցմանը՝ կարելի է զգալիորեն լավացնել ազգային մարդկային ռեսուրսների որակը, որը հետագայում անմիջական ազդեցություն կունենա երկրի տնտեսության գործունեության բարելավման վրա: Ուստի, Ճապոնիայում նախադպրոցական հիմնարկներում, միջնակարգ դպրոցներում, բուհերի մեծ մասում մշակվեցին այնպիսի կրթական ծրագրեր, որոնք ուղղված են մարդու անհատական ունակությունների բացահայտմանը և դրանց զարգացմանը: Այս դեպքում ծնողներն իրենց դրսևորում են որպես ռացիոնալ ներդրողներ, քանի որ ընտրում են այնպիսի կրթական հաստատություններ, որոնք առավել մեծ չափով են նպաստում անհատի զարգացմանը: Այսպես, *«SONY»-ի* հիմնադիր և կրթության մեծ ջատագով Իբուկան իր «Մանկապարտեզը՝ դա շատ ուշ է» գրքում գրում է, որ կրթությունը սկսվում է ծնվելու պահից և չպետք է վերջանա մինչև մահը: Ճապոնացի ծնողների մեծ մասն առաջնորդվում է հենց այս սկզբունքով: Նրանք սուրբ գործ են համարում երեխաների առավել լավ կրթական մակարդակի ապահովումը՝ սկսելով իրենց տներում բարենպաստ պայմանների ստեղծումով: Նրանք ձգտում են երեխաների ուսուցման գործընթացը սկսել որքան հնարավոր է վաղ հասակից: Ճապոնացի նախադպրոցական երեխաների շուրջ 63%-ը (ԱՄՆ 32%-ը) գնում է մսուր, չորս տարեկան երեխաների 80%-ը և հինգ տարեկան երեխաների 90%-ը հաճախում է մանկապերտեզ [3, c. 255]: Այսպիսի վաղ և ինտենսիվ նախապատրաստումն անհրաժեշտ է, որպեսզի երեխաները պատրաստ լինեն տարրական և միջնակարգ ուսուցմանը: Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ-ում նախադպրոցական տարիքի երեխաների միայն 23% է հաճախում մսուր-մանկապարտեզ [4, էջ 105]: Վերջին տարիներին ՀՀ-ում կրթության խնդիրը հայ ընտանիքներում ոչ միայն առաջնային չէ, այլ նաև առաջնայնության տեսակետից անկման միտում է ցուցաբերում [5, էջ 135]:

Ճապոնական ուսուցիչն ունի շատ բարձր սոցիալական կարգավիճակ: Ըստ գործող օրենքների, Ճապոնիայում ուսուցիչը մտնում է երկրի առավել բարձր վարձատրվող աշխատողների 25%-ի մեջ:

Ընտանիքի կողմից ներդրումները մարդկային կապիտալում հիմնականում կախված են երկրի տնտեսական զարգացման մակարդակից: Տնտեսության զարգացածության ցածր մակարդակ ունեցող երկրներում շատ ընտանիքներ ստիպված են ավելի քիչ ուշադրություն հատկացնել իրենց երեխաների «մարդկային կապիտալի» կուտակման գործընթացին: Այս պայմաններում նման բացթողման

փոխհատուցումը դրվում է պետության վրա: Հատկապես նրան է պատկանում ակտիվ դերը մարդկային կապիտալի ձևավորման գործընթացում:

Անհատի որակական ժառանգությունը, այդ թվում նաև առողջությունը, հիշողությունը և այլ հատկանիշներ, նախորդ սերունդների զարգացման համար դաստիարակման, կրթության, առողջապահության մեջ որոշակի միջոցների ներդրման արդյունք են: Այս դեպքում վերջիններս երեխայի անբաժանելի մասն են կազմում: Հ.Բեքերը նշում է, որ շնորհաշատ ծնողների երեխաները, որպես կանոն, ժառանգում են լավագույն կրթություն, տիրապետում են ավելի ընդլայնված կապերի: Սակայն այս առավելությունը հասցվում է զրո մակարդակի երեք սերունդների կյանքի տևողության ընթացքում՝ պապից թոռանը [6, c. 109-119]: Հետևաբար, մեր կարծիքով, ունակությունների ժառանգությունը կարելի է համարել երեխայի մարդկային կապիտալի նախասկզբնական կուտակում, քանի որ նախկին սերունդները դրանց զարգացման համար կատարել են ներդրումներ, սակայն պահանջվում է անընդհատ բարելավել մարդկային կապիտալի ֆունկցիոնալ կառուցվածքը, հակառակ դեպքում անհատի մեջ ձևավորված ունակությունները որակապես կարժեզրկվեն:

Այսպիսով, երեխաների ինտելեկտուալ զարգացումը ոչ միայն իրենց սեփական զարգացման հիմքն է, այլև ծառայում է որպես հենք ապագա սերունդների ամբողջական մարդկային կապիտալի ձևավորման համար:

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ 2000-2008թթ. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական պետական հիմնարկների քանակը թեև անընդհատ նվազել է (2008թ. 2000-ի համեմատ նվազումը կազմել է 17,8%), սակայն նախադպրոցական հիմնարկներ հաճախող երեխաների թվաքանակն ավելացել է 7,3 հազարով կամ 13,6 %-ով:

Աղյուսակ 1

Նախադպրոցական պետական հիմնարկները, տարեվերջին [7, էջ 106; 8, էջ 107]

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Նախադպրոցական հիմնարկների քանակը	764	712	681	682	653	645	645	637	628
Նախադպրոցական հիմնարկներում երեխաների թվաքանակը, հազար երեխա	46.4	44.4	44.9	46.1	46.0	48.7	48.0	50.5	53.7
քաղաքներում	39.1	37.3	37.8	38.5	38.0	40.3	39.2	42.1	44.7
գյուղերում	7.3	7.1	7.1	7.7	8.0	8.4	8.8	8.4	9.0
Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հիմնարկներում (համապատասխան տարիքի երեխաների թվաքանակից, %)	17.2	17.5	18.5	19.1	20.0	21.8	21.8	23.3	29.8
քաղաքներում	27.6	24.3	26.5	27.9	27.4	29.7	29.0	31.1	39.3
գյուղերում	7.8	7.2	7.1	8.1	8.7	9.6	10.5	10.3	13.6

Նշված ժամանակահատվածում ավելացել է նաև (12,6 տոկոսային կետով) նախադպրոցական հիմնարկներում երեխաների ընդգրկվածությունը (համապատասխան տարիքի երեխաների թվաքանակից, %-ով): Ըստ որում, քաղաքներում այդ ցուցանիշը շուրջ 3 անգամ ավելի բարձր է, քան գյուղերում: Այնուհանդերձ, երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հիմնարկներում ցածր է, քան 2008թ. տվյալներով 100 երեխայից, փաստորեն 70,2-ը չի հաճախում նախադպրոցական հիմնարկներ: Համեմատության համար նշենք, որ Խորհրդային Հայաստանում նախադպրոցական մշտական հիմնարկների թիվը (տարեվերջին) 1970թ. կազմել է 892, 1980թ.՝ 1081, 1985թ.՝ 1206, 1988թ.՝ 1215, իսկ նախադպրոցական մշտական հիմնարկներում երեխաների թվաքանակը կազմել է համապատասխանաբար 90,0 հազար, 149,8 հազար, 162,9 հազար երեխա: Այսինքն, եթե համեմատելու լինենք 2008թ. նախադպրոցական հիմնարկներում երեխաների թվաքանակը 1988թ. համապատասխան ցուցանիշի հետ, ապա կստացվի, որ այդ թիվը նվազել է 109,2 հազար երեխայով: Անհրաժեշտ է նաև ավելացնել, որ 1988թ. նախադպրոցական մշտական հիմնարկներում երեխաների թվաքանակը քաղաքներում կազմել է 126,9 հազար երեխա, իսկ գյուղերում՝ 36 հազար երեխա: Այլ կերպ ասած, եթե 2008թ. 1988-ի համեմատ նախադպրոցական պետական հիմնարկներում երեխաների թվաքանակը նվազել է 82,2 հազարով (կամ 64,8 %-ով), ապա գյուղերում՝ 27 հազարով (կամ 75 %-ով) [9, c. 83-84]: Նախադպրոցական պետական հիմնարկների թվի և դրանցում երեխաների թվաքանակի փոփոխությունը պայմանավորված է մի շարք սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործոններով:

Մարդկային կապիտալը զարգացնող ներդրումներին են վերաբերում նաև ընտանեկան կրթությունը, դաստիարակությունը: Ընտանիքում կրթելու և դաստիարակելու արդյունքում ձևավորվում են բազային հոգեբանաֆիզիոլոգիական մտային ունակություններ, որոնց օգնությամբ իրականացվում է անհատի ձևավորման գործընթացը: Փոքր երեխաների դաստիարակման մեջ հատուկ դեր է խաղում մայրը, հատկապես մեր պայմաններում: Այդ պատճառով, պետության համար երկրի ապագա շահերի տեսանկյունից խիստ շահավետ է, եթե ներդրումների օբյեկտ է հանդիսանում հատկապես երիտասարդ մայրերին նախանշված կրթական գործընթացը: Կրթությունն ազդում է մոր հոգեբանաֆիզիոլոգիական վիճակի, ֆիզիկական հատկանիշների վրա, որը փոխանցվում է երեխային ոչ միայն գենետիկորեն, այլ նաև անմիջական դաստիարակման ժամանակ: Իրական կյանքը ցույց է տալիս, որ մեծ մասամբ հենց մայրերի կրթական մակարդակով է պայմանավորված երեխաների ունակությունների զարգացման, կրթման և դաստիարակման գործընթացի արդյունավետության աստիճանը:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ երեխաների ստեղծագործ ունակությունների որակն առավել չափով պայմանավորված է ծնողների կյանքի որակով և պայմաններով, նրանց կրթության և առողջության մակարդակով:

2. Կրթական համակարգի և իրական հատվածի կապը

Աշխատուժի ձևավորման նորամուծական գործընթացների վրա կրթական ոլորտի ազդեցության աստիճանը պարզելու նպատակով, անհրաժեշտ է դիտարկել գիտելիքի նկատմամբ տնտեսության պահանջարկի հաշվառման և կրթության ոլորտում որակական, քանակական կառուցվածքային և այլ բնույթի փոփոխությունների մեխանիզմը, որի գործողությունները որոշում են կրթության ոլորտում ներդրված միջոցների փոխհատուցման չափը: Ռազմավարական տեսանկյունից իրական կյանքում այս հիմնախնդիրն իրականացվում է՝ ելնելով արտադրության պահանջներից: Այստեղից էլ մարդկային ռեսուրսների զարգացումը կարող է իրականացվել.

ա) պետական կրթական քաղաքականության մշակման և իրականացման ճանապարհով, հենվելով աշխատանքի շուկայի զարգացման միտումների անընդհատ ուսումնասիրման վրա,

բ) կադրերի պատրաստման գործընթացում արտադրական կառույցների անմիջական մասնակցության ճանապարհով, հանդես գալով ֆիրմաների և ուսումնական հաստատությունների միջև համագործակցման տարբեր ձևերով [1, c. 68]:

Նման կարևոր փոխազդեցությունների գործընթացում պետության և տնտեսական սուբյեկտների դերը տարբեր է: Պետության դերը դրսևորվում է ոչ այնքան ուսումնական հաստատությունների և բիզնեսի միջև կապերի հաստատմամբ, որքան այդ հարաբերությունների կոորդինացմամբ: Չնայած բիզնեսը կարող է ազդել ուսումնական հաստատությունների նյութական բազայի կատարելագործման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող մշակել կրթության ռազմավարական ուղղվածությունը երկրում [1, c. 69]:

Բանվորների պատրաստման ուսուցման գործընթացում տեղի են ունենում որոշակի փոփոխություններ, ավանդական ուսուցման համակարգը փոխարինվում է ձեռնարկության ուսումնական կենտրոններով: Բարձրագույն կրթությամբ մասնագետների ուսուցման երկարատև ժամանակահատվածում գործառույթների բաժանումը պատրաստման ոլորտների միջև դրսևորվում է առավել ցայտուն: Գոյություն ունեցող ինժեներատեխնիկական աշխատողների ներֆիրմային պատրաստումը մասնագիտական առումով լրացնում է բուհական ուսուցումը, քանի որ այն, կրելով տվյալ ձեռնարկության կամ ֆիրմայի տնտեսական քաղաքականության ուղղվածությունը, ավելի մեծ կիրառական բնույթ ունի: Սակայն անժխտելի է այն փաստը, որ բուհից կտրված լայն ընդհանուր տեսական բազայի ապահովումը վեր է անգամ խոշոր ֆիրմաների հնարավորություններից: Այդ պատճառով գտնում ենք, որ անհրաժեշտ է զար-

գացման գերակայությունների ճանապարհին տեսնել կրթության, գիտության և արտադրության ոլորտների ուղղակի կոոպերացիայի և փոխներգործության անհրաժեշտությունը: Տնտեսապես զարգացած երկրների բուհերը ոչ միայն կրթական համակարգի, այլև գիտության մաս են հանդիսանում, քանի որ իրականացնում են մեծ ծավալի հիմնարար և կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ: Ամբողջ աշխարհում անընդհատ աճում է կորպորացիաների դերը բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման գործում: Այստեղ ուղղակի օգուտն արտաքնապես տեսանելի չէ: Այսպես, ԱՄՆ-ում այդ միջոցներն ամբողջ ծավալով հարկման չեն ենթարկվում, ունակ ուսանողները ծանոթանում և սովորում են կոնկրետ ֆիրմայի սարքավորումների աշխատանքին և ծրագրերին: Ֆիրմայի կողմից կատարվող լրավճարները կրում են ուղղորդված բնույթ. այդ գումարի 74%-ը ստանում է ԱՄՆ բուհերի միայն 14,8%-ը (միայն բարձր վարկանիշ ունեցող համալսարանները) [10, p. 89]: Սակայն դա ունի նաև բացասական կողմ: Այսպես, Գրեյսոնը և Օ'Դելը «Ամերիկյան մենեջմենթը XXI դարի շեմին» գրքում նշում են, որ ԱՄՆ-ը բարձրակարգ կրթություն է տալիս երկրի էլիտային, սակայն հաճախ չի ապահովում ընդհանուր կրթության բարձր մակարդակ: Արդյունքում՝ «ձևավորվում է հմուտ ինժեներների, մեքենաների օպերատորների, ծրագրավորողների, տեխնիկների, գծագրեր կարդացողների և այն մարդկանց պակաս, որոնք կարգավորում, խնամում և վերանորոգում են իրենց սարքավորումները, որոնք լավ են աշխատում կոլեկտիվում, կարող են աշխատելու ընթացքում սովորել» [3, c. 254]: Որակավորվածության բարձր աստիճան անհրաժեշտ է ոչ միայն էլիտային, այլև յուրաքանչյուր աշխատողի: Սակայն պետք է նշել, որ ներկայումս իրավիճակը փոխվում է և կորպորացիաները, ֆինանսավորելով բարձրագույն կրթության ոլորտը, չեն զբաղվում բարեգործությամբ, այլ դրանում տեսնում են իրենց զարգացման հեռանկարները:

Համագործակցության նմանատիպ ձևեր անհրաժեշտ է զարգացնել նաև Հայաստանի Հանրապետությունում: Վերլուծելով նման փոխազդեցության գործընթացը՝ անհրաժեշտ է ընդգծել բուհերի վրա ֆիրմաների ազդեցության երկու միջոցների մասին.

1. Ուսումնական գործընթացի նկատմամբ հսկողության ուժեղացում:
2. Ուսումնական գործընթացի կանոնավորում կամ ճշգրտում:

Ուսումնական գործընթացի վրա ձեռնարկության հսկողություն սահմանելու ձգտումը տրամաբանական շարունակություն է գտնում ֆիրմայի կողմից ընտրված ցածր կուրսերի ուսանողների ուսումնական ծրագրերի համատեղ մշակման մեջ: Եվ չնայած այն բանին, որ ընտրված ոչ բոլոր ուսանողներն են

հետագայում աշխատում այդ ֆիրմայում, այնուամենայնիվ, նման բնույթի ծախսերը ծածկվում կամ փոխհատուցվում են երիտասարդ կադրերի ադապտացման համար կատարվող ծախսերի կրճատմամբ [11, c. 117]:

Նման փոխհամագործակցության գործընթացում պետք է նախատեսել դասավանդող կադրերի փոխանակման հնարավորություն: Հայտնի է, որ կան որոշ բնագավառներ, որոնցում առանձին ֆիրմաներ զգալի չափով գերազանցում են բուհերի հնարավորությունները (օրինակ, համակարգիչների հետ կապված ողջ ոլորտը): Այս դեպքում ճիշտ կլինի, եթե այդպիսի ձեռնարկությունների առաջատար մասնագետները ներգրավվեն ուսումնական ծրագրերի մշակման մեջ (որպես խորհրդականներ) կամ մասնագիտացված համալսարանների դասավանդման գործընթացին: Այսպես, Սթենֆորդի համալսարանում արդյունաբերությունից եկած դասախոսների և խորհրդականների բաժինը կազմում է 75%, իսկ Ֆրանսիայի Մեծ դպրոցներում (Առաջատար տեխնիկական ուսումնական հաստատություններ)՝ 78% [12, p. 27-29]: Ամերիկյան ֆիրմաների բարձրակարգ աշխատողները հանդես են գալիս որպես ցածր կուրսերի ուսանողների ուսուցիչ-խորհրդատու պարտադիր պրակտիկայի շրջանում, ինչպես նաև կիրառական մասնագիտությունների գծով ապագա մագիստրոսների և դոկտորների խորհրդականներ, իսկ առանձին դեպքերում՝ նաև գիտական ղեկավարներ:

Գործում է նաև հակառակ գործընթացը, երբ բուհական կադրերը մասնակցում են ֆիրմայի ուսումնական կենտրոնի ուսումնական ծրագրերի մշակմանը և դասավանդմանը: Այսպես, օրինակ, «Վեսթերն էլեքթրիկ» ուսումնական կենտրոնում ընդգրկված կադրերի 71%-ը կազմում են բուհական կադրերը [13, p. 56]: Համեմատության համար նշենք, որ Հայաստանում այս գործընթացը մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով կամ չի գործում, կամ արտադրական պրակտիկան անց է կացվում մակերեսորեն, որն, ինչ խոսք, բացասական ազդեցություն է ունենում ժամանակակից պահանջներին համահունչ մասնագետների պատրաստման արդունավետության վրա:

Յուրաքանչյուր երկրում կրթության զարգացումը բնութագրվում է ցուցանիշների համակարգի միջոցով, որոնց շարքում կարևոր տեղ է զբաղեցնում պետության կողմից կատարված ծախսերի բաժինը ՀՆԱ-ում և կառավարության կողմից կատարված ընդհանուր ծախսերում: Հիմնականում այս ցուցանիշի միջոցով են կատարվում կրթության ոլորտի գնահատման միջերկրային համեմատությունները: Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են նախկին համայնավարական երկրների, Եվրոպական Միության և ՏՀԶԿ երկրների նշված ցուցանիշները:

Աղյուսակ 2

Նախկին համայնավարական երկրներում կրթության համար կատարված պետական ծախսերը [14, pp. 80-83, 208-210]

ՀՀ	Նախկին համայնավարական երկրները	Կրթության համար կատարված պետական ծախսերը		ՀՆԱ, $մլն	Կրթության համար կատարված պետական ծախսերի մեծությունը, $մլն
		%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	%-ով կառավարության ընդհանուր ծախսերի մեջ		
		2007	2007	2007	2007
1	Հայաստան	2.7	15.0	9204	248.5
2	Ադրբեջան	2.6	12.6	31248	812.4
3	Բելառուս	5.2	9.3	44773	2328.2
4	Վրաստան	2.7	7.8	10175	274.7
5	Ղազախստան	2.5	...	104853	2621.3
6	Ղրղզստան	5.6	...	3745	209.7
7	Էստոնիա	4.9	14.6	20901	1024.1
8	Մոլդովա	8.3	19.8	4396	364.9
9	Ռուսաստան	3.1	...	1290082	39992.5
10	Տաջիկստան	3.7	19.3	3712	137.3
11	Լիտվա	5.0	14.7	38332	1916.6
12	Ուկրաինա	5.4	20.2	141177	7623.6
13	Կուբա	13.3	20.6	...	...
14	Չեխիա	4.3	9.5	174998	7524.9
15	Հունգարիա	5.5	10.9	138429	7613.6
16	Բուլղարիա	4.5	...	39549	1779.7
17	Չինաստան	3.9	...	3205507	125014.8
18	Խորվաթիա	4.6	9.3	51278	2358.8
19	Սլովենիա	5.8	12.7	47182	2736.6
20	Մոնղոլիա	5.1	...	3930	200.4
21	Լեհաստան	5.5	...	422090	23215.0
22	Ռումինիա	3.5	...	165976	5809.2
23	Սերբիա	4.2	9.4	40122	1685.1
Աշխարհ		**4.5**	**14.2**	**54583788**	**2456270.5**

Ծանոթություն. Լատվիայի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Ալբանիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի, Կորեայի Ժող. Հանրապետության, Չինաստանի, Մակեդոնիայի, Վիետնամի վերաբերյալ տեղեկությունները բացակայում են:

Աղյուսակ 3

ՏՀԶԿ երկրներում կրթության համար կատարված պետական ծախսերը [14, pp. 80-83, 208-210]

ՀՀ	ՏՀԶԿ երկրները	Կրթության համար կատարված պետական ծախսերը		ՀՆԱ, $մլն	Կրթության համար կատարված պետական ծախսերի մեծությունը, $մլն
		%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	%-ով կառավարության ընդհանուր ծախսերի մեջ		
		2007	2007	2007	2007
1	Ավստրալիա	4.8	...	820974	39406.8
2	Ավստրիա	5.4	10.9	373192	20152.4
3	Բելգիա	6.0	12.1	452754	27165.2
4	Կանադա	4.9	...	1329885	65164.4
5	Չեխիա	4.3	9.5	174998	7524.9
6	Դանիա	8.3	15.5	311580	25861.1
7	Ֆինլանդիա	6.3	12.5	244661	15413.6
8	Ֆրանսիա	5.7	10.6	2589839	147620.8
9	Գերմանիա	4.5	9.7	3317365	149281.4
10	Հունաստան	3.5	9.2	313354	10967.4
11	Հունգարիա	5.5	10.9	138429	7613.6
12	Իռլանդիա	4.8	13.9	259018	12432.9
13	Իտալիա	4.4	9.2	2101637	92472.0
14	Ճապոնիա	3.5	9.5	4384255	153448.9
15	Հարավային Կորեա	4.4	15.3	969795	42671.0
16	Մեքսիկա	5.5	...	1022815	56254.8
17	Նիդեռլանդներ	5.2	11.5	765818	39822.5
18	Նոր Զելանդիա	6.2	15.5	135667	8411.4
19	Նորվեգիա	7.0	16.7	388413	27188.9
20	Լեհաստան	5.5	...	422090	23215.0
21	Պորտուգալիա	5.4	11.3	222758	12028.9
22	Սլովակիա	3.9	...	74972	2923.9
23	Իսպանիա	4.2	11.0	1436891	60349.4
24	Շվեդիա	7.1	...	454310	32256.0
25	Շվեյցարիա	5.8	...	424367	24613.3
26	Միացյալ Թագավորություն	5.5	12.5	2772024	152461.3
27	ԱՄՆ	5.7	13.7	13751400	783829.8
28	Չիլի	3.2	16.0	163913	5245.2
Աշխարհ		**4.5**	**14.2**	**54583788**	**2456270.5**

Ծանոթություն. Իսլանդիայի, Լյուքսեմբուրգի, Թուրքիայի վերաբերյալ տեղեկությունները բացակայում են:

Աղյուսակ 4

Եվրամիության երկրներում կրթության համար կատարված պետական ծախսերը [14, pp. 80-83, 208-210]

ՀՀ	ՏՀԶԿ երկրները	Կրթության համար կատարված պետական ծախսերը		ՀՆԱ, $մլն	Կրթության համար կատարված պետական ծախսերի մեծությունը, $մլն
		%-ով ՀՆԱ-ի նկատմամբ	%-ով կառավարության ընդհանուր ծախսերի մեջ		
		2007	2007	2007	2007
1	Ավստրիա	5.4	10.9	373192	20152.4
2	Բելգիա	6.0	12.1	452754	27165.2
3	Բուլղարիա	4.5	...	39549	1779.7
4	Չեխիա	4.3	9.5	174998	7524.9
5	Դանիա	8.3	15.5	311580	25861.1
6	Էստոնիա	4.9	14.6	20901	1024.1
7	Ֆինլանդիա	6.3	12.5	244661	15413.6
8	Ֆրանսիա	5.7	10.6	2589839	147620.8
9	Գերմանիա	4.5	9.7	3317365	149281.4
10	Հունաստան	3.5	9.2	313354	10967.4
11	Հունգարիա	5.5	10.9	138429	7613.6
12	Իռլանդիա	4.8	13.9	259018	12432.9
13	Իտալիա	4.4	9.2	2101637	92472.0
15	Լիտվա	5.0	14.7	38332	1916.6
16	Նիդեռլանդներ	5.2	11.5	765818	39822.5
17	Լեհաստան	5.5	...	422090	23215.0
18	Պորտուգալիա	5.4	11.3	222758	12028.9
19	Ռումինիա	3.5	...	165976	5809.2
20	Սլովակիա	3.9	...	74972	2923.9
21	Սլովենիա	5.8	12.7	47182	2736.6
22	Իսպանիա	4.2	11.0	1436891	60349.4
23	Շվեդիա	7.1	...	454310	32256.0
24	Միացյալ Թագավորություն	5.5	12.5	2772024	152461.3
Աշխարհ		**4.5**	**14.2**	**54583788**	**2456270.5**

Ծանոթություն. Կիպրոսի, Լյուքսեմբուրգի, Մալթայի, Լատվիայի վերաբերյալ տեղեկությունները բացակայում են:

3. Կադրերի պատրաստման ծրագրերի վերանայման և կատարելագործման անհրաժեշտությունը

Հայտնի է, որ կադրերի պատրաստման ծրագրերի մեծ մասը ժամանակակից պայմաններին չի համապատասխանում: Առանձին տնտեսագետների հետազոտությամբ, մարդկանց միայն 12%-ն է համարում, որ լսարանում որևէ ձևով ուսանելու միջոցով կարելի է ձեռք բերել աշխատանքի համար գիտելիքներ, ըստ նրանց՝ այն կարելի է ստանալ աշխատատեղում [11, c. 118]: Մարդկանց նաև անհրաժեշտ է սովորեցնել միմյանց հետ շփման արվեստին, ընդ որում՝ ոչ միայն նրանց, ովքեր գտնվում են պաշտոնների համակարգի ստորին մասում:

Նմանատիպ ծրագրերում կարևորագույն բացթողում է նաև այն, որ դրանցում անտեսված է տնտեսագիտական գիտելիքը: Մեր կարծիքով, այն խիստ արդիական է շատ երկրների, այդ թվում նաև ՀՀ-ի համար:

Ուսուցման գործընթացն անհրաժեշտ է իրականացնել՝ ելնելով այն հանգամանքից, որ մարդիկ նաև միմյանցից սովորում են, երբ աշխատում են որևէ խնդրի վրա օգտագործելով իրենց փորձը: Պետք է մասնագետներին հնարավորություն տալ և ստեղծել անհրաժեշտ պայմաններ ինքնուրույն հետազոտություններ իրականացնելու և արդյունավետ առաջարկություններ մշակելու համար: Սա հաստատում է այն փաստը, որ անհրաժեշտ է մասնագիտական ուսուցումը համադրել ընդհանուր տեսականի հետ: Այսպես, «Քրայսլեր» ընկերությունը ոչ միայն իր ապագա ինժեներներին տալիս է համապատասխան աշխատատեղեր, այլև ապահովում է կիրառական գիտելիքների ուսուցումն իր Ինժեներական արվեստի ինստիտուտում: Ընդ որում, սովորողների թվակազմի մեջ ընդգրկվում են նաև կադրեր փոքր և միջին ձեռնարկությունների համար, որոնք մտնում են ընկերության գործունեության ոլորտ [11, c. 118]:

Անհրաժեշտ է ՀՀ-ում ավելի լայնորեն տարածել կադրերի պատրաստման կոմբինացված ուսուցանումը, քանի որ այն նախատեսում է աշխատանքի և կադրերի պատրաստման տեսական ծրագրերի աստիճանական բարդացում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է կիրառել ոչ այնքան ուղղահայաց ռոտացիան (տեխնիկ-ինժեներ-ստաժոր), որքան գործառույթների հորիզոնական փոխարինումը՝ ռոտացիա ըստ ձեռնարկության տեղամասերի, բաժինների, բաժանմունքների (արտադրական, իրացման, գիտահետազոտական և այլն): Նշված երկու տիպի ռոտացիաներն իրենց բարդության աստիճանով գտնվում են համարյա նույն մակարդակի վրա: Այս գործընթացն անպայման կբերի նրան, որ կբացահայտվի աշխատողի օգտագործման լավագույն տեղը, կծանոթացվի արտադրության հետ դրա տարբեր մակարդակներում, ձեռք կբերվեն տարբեր բնույթի կոլեկտիվների հետ աշխատելու և շփվելու ունակու-

թյուններ: Այստեղ կարելի է կրկին բերել «Քրայսլեր» ընկերության օրինակը, որտեղ կադրերի ծառայության ղեկավարները գտնում են, որ ապագա ինժեներ-հետազոտողները և նախագծողներն ուսուցման գործընթացում պետք է փոխեն շուրջ 6 տարբեր բնույթի աշխատանքի տեղամասեր [11, c. 119]:

Ընդհանրապես արտադրա-բուհական ուսուցման գործընթացը սկսվել է XX դարի 60-ական թվականներից՝ պատրաստելով ինժեներների և տեխնիկների նեղ մասնագիտական կատեգորիաներ, այսինքն՝ նպատակ է դրվել ուսուցումը հարմարեցնել արտադրության կոնկրետ պայմաններին և կադրերի ռոտացիայի նպատակ չի ունեցել: Ներկայումս զարգացած արդյունաբերական երկրներում կոմբինացված ուսուցումն առավել տարածված է բարձր որակավորվածության ինժեներների շրջանում (հետազոտողներ և մշակողներ), որոնց պատրաստման մակարդակը պահանջում է ամբողջ տեխնոլոգիական շղթայի իմացություն: ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում նման ձևով պատրաստվում է ինժեներական մասնագիտությամբ ապագա մագիստրոսների և դոկտորների 80-90%-ը [15, pp. 615, 618]:

ՀՀ տնտեսության հետագա զարգացումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ արդեն այսօր անհրաժեշտ է բարձրակարգ մասնագետների պատրաստման գործընթացը փոխադրել կոմբինացված ուսուցման ուղու վրա, առավել ևս, որ այս ուղղությամբ ունենք որոշակի փորձ նախկին խորհրդային տարիներից, երբ ուսումնական գործընթացում մեծ տեղ էր հատկացվում արտադրությանը և դրանում գործող առկա տեխնոլոգիաներին: Բավական է միայն վերականգնել հինը և այն համալրել ժամանակակից պահանջներով:

Աղյուսակ 5-ում բերված են ՀՀ-ում կրթության հիմնական ցուցանիշները: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ 2000-2008թթ. ընթացքում ավելացել է պետական հանրակրթական դպրոցների քանակը (2000թ. 1433-ի փոխարեն 2008թ. կազմել է 1475), թեև զգալիորեն՝ 157,4 հազարով կամ 27,5 %-ով, նվազել է դրանցում սովորողների թիվը:

Աղյուսակ 5

Հայաստանի Հանրապետությունում կրթության հիմնական ցուցանիշները, տարեվերջին [7, էջ 104-105; 8, էջ 105-106]

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Պետական նախադպրոցական հիմնարկների քանակը	764	712	681	682	653	645	645	637	628
դրանցից երեխաներ, 1000 երեխա	46.3	44.4	44.8	46.1	46.0	48.7	48.0	50.5	53.7
Պետական հանրակրթական դպրոցների քանակը	1433	1444	1481	1439	1434	1467	1467	1452	1475
դրանցում սովորողներ, 1000 մարդ	572.2	535.5	520.6	498.5	488.1	477.9	465.4	431.3	414.8
Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	56	-	-	-	-	-	-	-	-
դրանցում սովորողներ, 1000 մարդ	5.1	-	-	-	-	-	-	-	-
Պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը	75	77	77	81	108	111	108	106	104
դրանցում՝ սովորողներ									
1000 մարդ	26.9	29.3	27.6	28.6	30.5	30.8	30.8	31.1	31.8
10 000 բնակչի հաշվով	70.7	77.1	85.8	89.0	94.8	95.7	95.7	96.4	98.2
Ընդունվել են սովորողներ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, 1000 մարդ	10.5	11.3	10.2	10.3	11.1	11.6	11.7	12.1	11.9
Պատրաստված են մասնագետներ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում									
1000 մարդ	7.8	7.9	8.6	8.0	9.4	8.7	8.4	8.2	8.6
10 000 բնակչի հաշվով	20.5	20.8	26.7	25.0	29.2	27	26.1	25.3	26.6
Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը	19	20	20	20	88*	89*	87*	85*	90*
դրանցում՝ սովորողներ									
1000 մարդ	43.6	47.4	54.1	55.9	85.1	97.8	105.8	112.2	114.4
10 000 բնակչի հաշվով	114.7	124.7	168.3	174.0	264.7	303.7	328.4	347.5	353.3
Ընդունվել են ուսանողներ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 1000 մարդ	11.5	12.6	14.9	14.8	23.0	24.6	25.6	26.2	27.7
Պատրաստված են մասնագետներ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում									
1000 մարդ	6.7	4.6	7.7	8.2	12.2	13.3	15.5	17.9	26.1
10 000 բնակչի հաշվով	17.6	19.9	23.9	25.5	38.0	41.3	48.1	55.3	80.6

* Ներառյալ ոչ պետական բուհերը:

Գործերի վիճակը վատ է հատկապես նախնական մասնագիտական արհեստագործական ուսումնական բնագավառներում: Վերջին տարիներին քայլեր են ձեռնարկվում այս ուղղությամբ, սակայն դրանք դեռևս արդյունք չեն տվել: Պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը 2000-2008թթ. ավելացել է 27,9 %-ով, իսկ դրանցում սովորողների թիվը՝ 4,9 հազարով կամ 18,2 %-ով: 27,5 %-ային կետով ավելացել է նաև 10 000 բնակչի հաշվով պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների թիվը:

Զգալիորեն ավելացել են բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը և դրանցում սովորողների թվաքանակը (ավելի քան 2,6 անգամ), ինչպես նաև 10 000 բնակչի հաշվով բուհում սովորողների թիվն՝ ավելի քան 3 անգամ: Զգալիորեն ավելացել է ինչպես բուհեր ընդունված ուսանողների, այնպես էլ դրանց կողմից պատրաստված մասնագետների թվաքանակը՝ շուրջ 4 անգամ, իսկ 10 000 բնակչի հաշվով՝ ավելի քան 4,6 անգամ: Հատկապես բարձրագույն կրթություն ստացողների թվաքանակի աճը որոշակի մտահոգությունների տեղիք է տալիս: Լավ է, իհարկե, որ մարդիկ ստանում են բարձրագույն կրթություն, հանրապետությունում ապահովվում է որոշակի զբաղվածություն, բուհերը դարձել են խոշոր հարկատուներ: Սակայն բարձրագույն կրթություն ստացողների մեծ մասը կիրառություն չի գտնում հանրապետությունում, այդ պատճառով էլ նրանք զբաղեցնում են կամ այլ աշխատանք (որպես կանոն, ավելի ցածր կամ բարձրագույն կրթություն չպահանջող), կամ թողնում-հեռանում են հանրապետությունից:

2008թ. ՀՀ պետական բյուջեի ծախսերի (գործառնական դասակարգմամբ) ընդհանուր գումարում (760631,5 մլն դրամ) կրթության ծախսերի գումարը կազմել է 99965,0 մլն դրամ (ընդամենը ծախսերի 13,1%-ը կամ ՀՆԱ 2,7%-ը): 2009թ. ՀՀ պետական բյուջեի ծախսերի (գործառնական դասակարգմամբ) ընդհանուր գումարում (824715,4 մլն դրամ) կրթության ծախսերի գումարը կազմել է 105769,4 մլն դրամ, աճը կազմել է 105,8% (ընդամենը ծախսերի 12,8%-ը կամ ՀՆԱ 3,3%-ը):

Կադրերի պատրաստման գործում նորամուծության տեսակետից որոշակի տեղ են զբաղեցնում նաև տարբեր տիպի գիտահետազոտական նախագծերը, որոնց նպատակը ոչ միայն գիտական հետազոտությունների իրացումն է, այլ նաև կադրերի պատրաստումը: Նման նախագծերի իրականացման համար ստեղծվում են ուսումնահետազոտական խմբեր, որոնք ընդգրկում են բուհերի գիտամանկավարժական կադրերին, ֆիրմայի աշխատակիցներին և անգամ ուսանողներին: Տվյալ նախագծերի գործունեության ընթացքում բացահայտվում են առավել գիտակ ուսանողները, խմբերի առաջատարները, որոնց համար ֆիրման և բուհը մշակում են անհատական ուսումնահետազոտական

ծրագրեր: Այս բոլորը հանգեցնում է նրան, որ նման նախագծերի մասնակիցների միջից միաժամանակ իրականացվում է և՛ կադրերի (ուսանողների) պատրաստում, և՛ որակավորվածության բարձրացում (բուհի և ֆիրմայի աշխատողների): Նախագծերի բազմափուլայնությունը (մշակումից մինչև ներդրումը) նախատեսում է պարտադիր կադրային փոխատեղում բուհից և գիտական ոլորտից դեպի արտադրություն և հակառակը:

Կադրերի այսօրինակ պատրաստումը տարբեր մասշտաբներով լայն տարածում է գտել տնտեսապես զարգացած բոլոր երկրներում: Այսպես, Ֆրանսիայում այդպիսի համագործակցությունը բնորոշ է միայն առաջատար ֆիրմաների և ինժեներական բուհերի միջև, Իտալիայում գերակշռող են կարճաժամկետ նախագծերը, իսկ ԱՄՆ-ում զգալի նորամուծական ակտիվություն են ցուցաբերում նաև փոքր և միջին ձեռնարկությունները: Նման ձևով պատրաստվում է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի շրջանավարտների 75%-ը [13, p. 15]:

Գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում համատեղ հետազոտությունների անընդհատությունը բուհերի և ձեռնարկությունների միջև կապը դարձնում է կայուն և հաստատուն:

Համատեղ ուսումնական ծրագրերի իրականացումը ենթադրում է կոորդինացիոն կենտրոնների առկայություն: Գիտության-կրթության-արտադրության համատեղ գործընթացը մշակումների և կիրառման որոշիչ փուլերում սահմանում է բարդ կազմակերպական կառուցվածքներ: Մեր կարծիքով, բարձրակարգ մասնագետների պատրաստման, համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացման գործընթացներն առավել արդյունավետ դարձնելու և կոորդինացնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել միջգերատեսչական մարմին (հանձնաժողով), որը կարող է կապել և կոորդինացնել ՀՀ կրթության և գիտության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների գործունեությունն այս ոլորտում, քանի որ առաջինը կազմակերպում է կադրերի պատրաստումը, իսկ երկրորդը՝ աշխատող կադրերի վերապատրաստման, վերամասնագիտացման գործընթացը: Նորաստեղծ մարմնում որոշակի տեղ պետք է հատկացվի նաև արտադրական ձեռնարկությունների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև հանրապետության խոշոր ձեռնարկությունների ներկայացուցիչներին:

Երբ առկա է որոշակի տեսական հենք, բարձրակարգ աշխատողների պատրաստման մակարդակն արտադրության ժամանակակից պայմաններին մոտեցնելու խնդիրները լուծվում են ձեռնարկության ուսումնական կենտրոններում: Սակայն պետք է նշել, որ այս կենտրոնները փոքր և միջին ձեռնարկությունների տեսանկյունից բավարարում են աշխատուժի պահանջարկի միայն փոքր մասը: Արդյունաբերության գիտատար ճյուղերի զարգացմամբ խնդիր է

դրվում պատրաստել որակապես նոր կարգի աշխատողներ ավելի բարձր տեսական գիտելիքներով: Սակայն բոլոր երկրների համար գոյություն ունի մի ընդհանուր խնդիր՝ կապված մասնագիտական կրթության համակարգի շրջանավարտների ադապտացման հետ, որը ձեռնարկություններից պահանջում է զգալի ծախսեր:

Տվյալ խնդրի լուծման բանալին, ինչպես այս երկու տարբեր համակարգերում կադրերի պատրաստման կոորդինացումն է, այնպես էլ գործընթացների շարունակականությունը, այն է՝ ուսումնական հաստատություններում տեսական պատրաստումը զուգակցել ձեռնարկություններում արտադրական գործունեությամբ և մասնակի զբաղվածությամբ, որով գիտելիքների մակարդակների բարձրացումը կամրապնդվի համապատասխանաբար աշխատանքային գործառույթների բարդացմամբ: Այս ամենը պահանջում է ձեռնարկությունների ակտիվ վերահսկողություն ուսումնական գործընթացների վրա:

Ներկայումս, բարձրակարգ բանվորական կադրերից պահանջվում է արտադրության գիտական բնույթի իմացություն, որի պայմաններում արդեն ուսումնական կենտրոնների կամ արհեստագործական դպրոցների կողմից տրված գիտական հենքը բավարար չէ: Այդ պատճառով ձեռնարկությունները ձգտում են իրենց աշխատուժի պատրաստումն իրականացնել այնպիսի ուսումնական հաստատություններում, որոնք ունեն ավելի բարձր կարգ (ԱՄՆ-ում՝ երկամյա քոլեջները, Իտալիայում՝ տեխնիկական ինստիտուտները, Ֆրանսիայում՝ տեխնոլոգիական ինստիտուտները): Կարելի է բերել ամերիկյան «Ռեմել ինժինիրինգ» կորպորացիայի օրինակը, որտեղ բարձրակարգ բանվորների պատրաստումը բաղկացած է երեք մասից: Ընդհանուր տեսական պատրաստումն իրականացվում է տեղական քոլեջում, ֆիրմայի սարքավորումների և տեխնոլոգիայի գծով ուսուցման կիրառական կուրսը՝ ձեռնարկության ուսումնական կենտրոնում: Մասնագիտության անմիջական տիրապետումն ուսմանը զուգընթաց իրականացվում է կորպորացիայի գործարաններից մեկում [11, c. 123]:

Ուսումնական հաստատությունների և ֆիրմաների փոխներգործության և կոոպերացման նորամուծական դիտարկվող մեթոդները, որոնք նպաստում են նոր մակարդակի աշխատուժի ձևավորմանը, պետք է հանդիսանան և հանդիսանում են պետական ուղղակի միջամտության արդյունք: Ժամանակակից պայմաններում անհրաժեշտ է, որպեսզի պետությունը ոչ միայն խրախուսի գիտության, կրթության և արտադրության ոլորտների կոոպերացման գործընթացը, այլև ստեղծի վերջինիս ռազմավարական զարգացման ուղիներ:

ՀՀ-ում կադրերի պատրաստման ոլորտում ուսումնական հաստատությունների և ձեռնարկությունների կոոպերացիային անհրաժեշտ է օժանդակել երկու հիմնական ուղղությամբ՝ ուղղակի և միջանկյալ գիտահետազոտական

գործունեության խթանմամբ:

Պետական ուղղակի ֆինանսավորումը պետք է կիրառվի կադրերի վերապատրաստման և որակավորվածության բարձրացման թանկարժեք համատեղ ծրագրերի կազմակերպման ժամանակ, այն դեպքում, երբ հնարավոր են արտադրությունների առանցքային վերակառուցումներ, որի արդյունքում հնարավոր են աշխատողների զանգվածային ազատումներ: Որպես օրինակ կարելի է բերել այն իրավիճակը, երբ ամերիկյան Օրեգոն նահանգի իշխանությունները, կապված 1980-ական թթ. «Փասիֆիկ Նորզերն Բել» կորպորացիայի կողմից արտադրության մեջ համակարգչային տեխնիկայի զանգվածային կիրառման հետ, տեղի համալսարաններին և մի շարք քոլեջների փոխհատուցեցին վերապատրաստման համատեղ ծախսերի 31%-ը:

Ուղղակի ֆինանսավորման դերը նաև այն է, որ խթանի, հատկապես սկզբնական փուլում, ուսումնական հաստատությունների և ձեռնարկությունների միջև նոր ձևերով համագործակցությունը: Այն լավ արտացոլված է արևմտաեվրոպական երկրներում բուհ-արտադրություն կոմբինացված ուսուցման զարգացման գործընթացում: Անհրաժեշտ պայման է տեսական ուսուցում-աշխատանք հերթագայությունը՝ հետագայում զբաղվածության երաշխիքով: Դա հատկապես վերաբերում է հետբուհական պատրաստմանը: Այսպես, Մեծ Բրիտանիայի գիտական հետազոտությունների խորհուրդը փոխհատուցում է ինժեներական և կառավարման մասնագիտությամբ մագիստրոսների և դոկտորների կոմբինացված ուսուցման ծախսերի 50%-ից մինչև 90%-ը [15, p. 623]: Այս մեխանիզմը լայնորեն կիրառվում է նաև Գերմանիայում, Ֆրանսիայում և Իտալիայում: Նման ֆինանսավորումը շատ դեպքերում կրում է նաև սոցիալական գործառույթ, քանի որ անմիջականորեն կապված է նոր աշխատատեղերի ստեղծման հետ: Իտալիայի մարզային իշխանությունները փոխհատուցում են ձեռնարկության ծախսերի 80%-ը, եթե դրանք գերազանցել են «Երիտասարդության զբաղվածության մասին» օրենքով սահմանված «կրթություն-աշխատանք» համակարգի սովորողների քվոտան [16, pp. 12-13]:

Ուսումնական հաստատությունների և ձեռնարկությունների կոոպերացիայի պետական աջակցության ծանրության կենտրոնն ուղղված է համատեղ գիտահետազոտական գործունեության խթանմանը: Դա հատկապես բնորոշ է Ճապոնիային և ԱՄՆ-ին: Այսպիսով, **տնտեսության, մասնավորապես գիտատար արտադրության ճյուղերի համար բարձրակարգ կադրերի պատրաստումը պետության նորամուծական քաղաքականություն է համարվում:**

Համատեղ գիտաարտադրական նախագծերի պետական մասշտաբով օժանդակությունը պայմանավորված է երկու հիմնական գործոններով՝ նախագծերի կապիտալատարությամբ և դրանց առևտրային ռիսկերի աստիճանով: Այլ խոսքով՝ պետության ֆինանսավորման նպատակային օբյեկտներ են հանդիսա-

նում առաջին հերթին ռիսկային երկարաժամկետ նախագծերը և, համապատասխանաբար, այդ նախագծերի շրջանակներում կադրերի պատրաստումը:

Համատեղ գիտահետազոտական աշխատանքները սուբսիդավորելիս հարմար միջոց է պայմանագրային համակարգը, երբ նախագծի պատվիրատուի և ներդրողի (կամ միայն ներդրողի) դերում հանդես է գալիս պետական գերատեսչությունը, կատարողների դերում՝ ուսումնական հաստատություններն ու ֆիրմաները: Այսպես, պայմանագրային համակարգերի միջոցով է անցնում ԱՄՆ-ում գիտահետազոտական աշխատանքների համադաշնային ծախսերի 70%-ից ավելին [17, p. 48]: Նման պայմանագրային համակարգերի իրականացման պետական գերատեսչության պատասխանատու աշխատողները երկու տարին մեկ անգամ անցնում են չորսշաբաթյա որակավորման դասընթացներ:

Անհրաժեշտ է նշել, որ պետության նորամուծական քաղաքականության շրջանակներում, գիտության, կրթության և արտադրության փոխազդեցության կազմակերպման ձևերի վերակառուցման պայմաններում, միջոցների հիմնական զանգվածը հաճախ կարող է գտնվել ոչ միայն բուհերում և ֆիրմաներում, այլ նաև դրանց կողմից ստեղծված կազմակերպական կառուցվածքներում՝ հետազոտական կենտրոններ, նորամուծական կենտրոններ և այլն: Բնական է, որ պետության կողմից ֆինանսավորումը պետք է նախատեսի կոոպերացիայի մասնակիցների կողմից որոշակի պայմանների կատարում: Այսպես, արևմտյան եվրոպական երկրներում վերջինիս դրսևորման բազմազանության մեջ կարելի է առանձնացնել մի քանի չափորոշիչ, ինչպես, օրինակ, ֆիրմայի կողմից հանդիպակաց ֆինանսավորման չափը, գիտահետազոտական նախագծերում առանձին խմբերի (ուսանողներ 10%-ից ոչ պակաս, դասախոսներ, գործող աշխատողներ) ընդգրկման աստիճանը և այլն [18, pp. 180-182]: Հաճախ պետությունը ֆինանսավորում է ոչ այնքան նախագիծը, որքան բուհերում և ֆիրմաներում դրա անմիջական կատարողներին: Ֆինանսավորման ժամկետի տևողությունը կախված է կարող ուժի որակավորվածության մակարդակից:

Բուհերի և ձեռնարկությունների կոոպերացման խթանման պետական քաղաքականության անհրաժեշտ մաս է հարկային քաղաքականությունը, որով պետք է, մեր կարծիքով, սահմանվեն որոշակի արտոնություններ: Նախ, պետք է վերացնել այն միջոցների լրիվ կամ մասնակի հարկումը, որոնք ընկերությունները և ձեռնարկություններն ուղղում են բուհերին և գիտահետազոտական կենտրոններին: Երկրորդ, ինչպես մի շարք երկրներում, այնպես էլ ՀՀ-ում, կոոպերացիայի նոր կառույցների կազմակերպման դեպքում (հետազոտական կենտրոններ, նորամուծական կենտրոններ) պետք է մտցնել շահութահարկի զեղչեր: ԱՄՆ-ում այն կազմում է 25, Ճապոնիայում՝ 20, Իտալիայում

7,5%: Վերջին հաշվով, համադաշնային պայմանագրային համակարգի մեջ մտնող ամերիկյան ընկերությունների ծախսերի շուրջ 65%-ը ընկնում է հարկային զեղչերի ազդեցության տակ [13, pp. 33-34]:

Մեր երկրում այս բնագավառում հարաբերական առաջընթացը շատ բաներով դանդաղեցված է նրանով, որ ՀՀ-ում կադրերի պատրաստման պետական ֆինանսավորումն աշխարհի մասշտաբով ամենափոքրերից մեկն է:

Աղյուսակ 6-ում բերված են աշխարհի 79 երկրների կրթության համար կատարված ծախսերը և աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը:

Աղյուսակ 6

Կրթության համար կատարված ծախսերը և աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը աշխարհի մի շարք երկրներում [14, pp. 80-83]

	Մեկ սովորողի հաշվով պետական ծախսերը, մեկ շնչի հաշվով, ՀՆԱ-ի նկատմամբ %-ով						Կրթության համար կատարված պետական ծախսերը		Նախնական ուսման ցածր աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը, մեկ ուսուցչի հաշվով այն դասարանում
	Նախնական		Միջնակարգ		Երրորդ աստիճանի		ժողովրդական եկամտի %-ով	ՀՆԱ-ի %-ով	
	1999	2007	1999	2007	1999	2007	2007	2007	2007
Հայաստան	..	..	..	..	..	..	2.7	15.0	19
Ավստրալիա	..	17.3	15.4	15.4	27.2	23.1	4.8	..	..
Ավստրիա	18.2	23.5	29.9	26.3	51.6	50.0	5.4	10.9	..
Ադրբեջան	..	..	15.4	..	..	..	2.6	12.6	13
Բելառուս	30.1	14.4	..	27.0	..	18.3	5.2	9.3	16
Բելգիա	15.8	20.2	23.7	33.4	38.3	35.1	6.0	12.1	11
Բրազիլիա	..	15.4	9.5	13.2	57.1	35.1	4.5	14.5	21
Բուլղարիա	..	24.5	18.8	23.4	17.9	24.8	4.5	..	16
Բուրկինա Ֆասո	..	36.0	..	23.3	..	236.5	4.5	15.4	48
Բուրունդի	13.4	19.9	..	77.5	1078.2	363.1	5.1	17.7	52
Կամերուն	..	7.6	16.8	41.6	64.4	126.3	3.9	17.0	44
Չիլի	..	11.1	14.8	12.4	19.4	11.8	3.2	16.0	26

	Մեկ սովորողի հաշվով պետական ծախսերը, մեկ շնչի հաշվով, ՀՆԱ-ի նկատմամբ %-ով						Կրթության համար կատարված պետական ծախսերը		սովորողների հարաբերությունը մեկ ուսուցչի հաշվով, ներառյալ ցածր-ավագ դասարանների դասավանդումը
	Նախնական		Միջնակարգ		Երրորդ աստիճանի		ժամանակի կ-ՀՆԱ-ի %-ով	ժամանակի մեջ կատարված մասնավոր ծախսերի %-ով	
	1999	2007	1999	2007	1999	2007	2007	2007	2007
Հոնկոնգ, Չինաստան	..	12.5	17.7	16.5	..	47.3	3.5	23.2	17
Կոլումբիա	..	15.6	16.9	12.6	39.6	52.7	4.9	12.6	28
Կուբա	21.6	51.1	41.4	60.1	86.6	43.5	13.3	20.6	10
Չեխիա	..	12.6	21.7	22.9	33.7	27.2	4.3	9.5	16
Դանիա	..	25.1	38.1	35.0	65.9	55.3	8.3	15.5	..
Էլ Սալվադոր	..	9.0	7.9	10.5	9.4	15.5	3.0	13.1	40
Էրիթրեա	..	9.6	38.5	9.6	444.1	..	2.4	..	48
Էստոնիա	..	19.4	27.9	23.0	32.6	18.3	4.9	14.6	11
Եթովպիա	22.1	12.5	..	8.9	..	785.5	5.5	23.3	..
Ֆինլանդիա	21.7	18.0	25.8	32.3	40.3	34.4	6.3	12.5	16
Ֆրանսիա	11.8	17.4	28.5	27.0	29.7	33.3	5.7	10.6	19
Վրաստան	..	..	..	..	..	..	2.7	7.8	..
Գերմանիա	..	16.3	20.5	21.5	..	..	4.5	9.7	14
Հունաստան	7.5	14.1	13.5	18.2	22.8	21.5	3.5	9.2	11
Հունգարիա	..	25.7	19.1	23.1	34.2	23.8	5.5	10.9	10
Հնդկաստան	..	8.9	24.7	16.7	90.8	57.8	3.2	..	..
Իրանի Իսլամական Հանրապետություն	..	15.4	9.9	22.3	34.8	27.7	5.5	19.5	19
Իռլանդիա	11.5	14.7	16.8	21.8	28.5	24.8	4.8	13.9	17
Իսրայել	..	20.7	22.4	20.5	31.7	23.1	6.3	..	13
Իտալիա	14.9	23.1	27.7	26.9	27.6	22.3	4.4	9.2	11
Յամայկա	9.9	14.6	23.6	21.5	79.0	..	5.3	8.8	28
Ճապոնիա	..	22.2	20.9	22.4	15.1	19.2	3.5	9.5	19
Քենիա	..	22.4	15.2	22.1	209.4	..	7.1	17.9	40
Կորեա	11.8	18.8	15.7	23.4	8.4	9.3	4.4	15.3	27
Քուվեյթ	35.4	9.2	..	14.1	..	79.8	3.6	12.9	10
Ղրղզստան	..	..	..	..	27.7	22.3	5.6	..	24

	Մեկ սովորողի հաշվով պետական ծախսերը, մեկ շնչի հաշվով, ՀՆԱ-ի նկատմամբ %-ով						Կրթության համար կատարված պետական ծախսերը		Նախնական ուսուցման աշխատանքային ուժի ընդհանուր մակարդակով հաշվարկված կանխատեսվող տարեկան աճ
	Նախնական		Միջնակարգ		Երրորդ աստիճանի		ժողովրդի վՀՆԱ-ի նկատմամբ %-ով	ժողովրդի վերջին մեջ մասով կատարված նախնական ուսուցման %-ով	
	1999	2007	1999	2007	1999	2007	2007	2007	2007
Լաոս	..	9.1	4.3	4.7	66.5	25.2	3.2	15.8	30
Լատվիա	..	..	23.7	..	27.9	..	..	..	12
Լիբանան	..	8.3	..	8.8	14.2	14.8	2.7	9.6	14
Լեսոտո	..	25.0	71.6	49.8	1295.1	1141.5	13.3	29.8	40
Լիտվա	..	15.9	..	20.2	34.2	18.2	5.0	14.7	14
Մադագասկար	..	9.5	..	12.7	182.1	145.2	3.4	16.4	49
Մավրիտանիա	..	9.6	35.3	24.2	77.8	39.2	2.9	10.1	43
Մորիտիուս	10.1	10.3	15.3	17.4	40.4	29.8	3.9	12.7	22
Մեքսիկա	4.8	15.1	14.2	15.6	47.8	40.0	5.5	..	28
Մոլդովա	..	33.6	..	40.7	..	41.4	8.3	19.8	16
Մարոկո	15.4	14.6	44.5	39.3	94.8	73.9	5.5	26.1	27
Նամիբիա	..	21.4	36.2	22.0	156.9	141.3	..	..	30
Նեպալ	..	15.3	13.1	11.3	141.6	..	3.8	..	38
Նիդեռլանդներ	12.1	17.7	21.1	24.2	42.8	39.9	5.2	11.5	..
Նոր Զելանդիա	17.2	17.8	24.3	20.6	41.6	26.4	6.2	15.5	16
Նորվեգիա	32.7	18.9	26.8	28.8	45.8	49.2	7.0	16.7	..
Օման	10.5	15.1	21.9	12.7	..	14.0	4.0	31.1	14
Պանամա	11.3	12.4	19.1	15.1	33.6	..	..	..	25
Պերու	..	7.0	10.7	9.0	20.9	10.5	2.5	15.4	22
Ֆիլիպիններ	..	8.6	10.8	9.1	15.1	11.5	2.5	15.2	35
Լեհաստան	..	23.7	16.5	22.2	21.1	21.4	5.5	..	11
Պորտուգալիա	16.3	23.2	27.5	34.7	28.1	27.1	5.4	11.3	11
Ռուանդա	..	10.2	30.2	35.1	699.4	372.8	4.9	19.0	69
Սենեգալ	18.9	17.9	..	32.9	..	225.2	4.8	26.3	34
Սլովակիա	..	14.8	18.3	15.2	32.6	24.2	3.9	..	17
Սլովենիա	17.4	25.1	26.0	32.0	28.3	22.7	5.8	12.7	15

	Մեկ սովորողի հաշվով պետական ծախսերը, մեկ շնչի հաշվով, ՀՆԱ-ի նկատմամբ %-ով						Կրթության համար կատարված պետական ծախսերը		Նախնական դարձ. աշակերտ-ուսուցչի հարաբերակցությունը՝ մեկ ուսուցչի հաշվով աշակերտների քանակը
	Նախնական		Միջնակարգ		Երրորդ աստիճանի		Հրատարակի ՀՆԱ-ի նկատմամբ %-ով	Հրատարակի ընդհանուր ծախսերի նկատմամբ %-ով	
	1999	2007	1999	2007	1999	2007	2007	2007	2007
Հարավաֆրիկյան Հանր.	20.2	15.6	20.0	16.7	60.7	44.3	5.4	17.4	30
Իսպանիա	11.3	19.1	24.4	23.4	19.6	22.8	4.2	11.0	14
Սվազիլենդ	6.7	15.4	26.1	43.7	388.4	343.6	7.6	..	33
Շվեդիա	45.8	25.7	26.6	33.5	52.7	41.5	7.1	..	10
Շվեյցարիա	36.1	24.5	27.7	28.3	54.5	56.2	5.8	..	13
Տաջիկստան	..	9.4	6.5	14.4	27.4	11.8	3.7	19.3	22
Թաիլանդ	11.6	..	15.5	..	35.1	28.0	4.3	25.0	18
Թուրքիա	10.7	..	14.3	..	45.5	..	..	..	..
Ուկրաինա	..	15.8	11.2	24.3	36.5	25.5	5.4	20.2	16
Արաբական Միացյալ Էմիրություններ	..	4.4	11.5	6.2	41.5	..	1.4	28.3	17
Միացյալ Թագավորություն	15.0	18.9	24.3	20.3	26.2	32.3	5.5	12.5	18
ԱՄՆ	..	22.2	22.5	24.6	27.0	25.4	5.7	13.7	14
Ուրուգվայ	7.8	8.8	11.3	10.8	19.1	18.8	2.9	11.6	20
Վենեսուելա	..	9.1	..	8.1	..	24.4	3.7	..	19
ԱՇԽԱՐՀ	**..**	**15.3**	**..**	**..**	**..**	**..**	**4.5**	**14.2**	**25**
Միջինից բարձր եկամուտներ ունեցող երկրներ	**..**	**14.5**	**18.1**	**19.7**	**38.6**	**24.2**	**4.5**	**13.0**	**20**
Բարձր եկամուտներ ունեցող երկրներ	**15.8**	**18.9**	**22.4**	**23.1**	**32.6**	**25.4**	**5.1**	**12.5**	**15**

Կրթության համախմբված միջինացված ծախսերը ՀՆԱ-ում կազմում են շուրջ 4,5%: Գերմանիայում այն հավասար է 4,5%-ի, իսկ Վրաստանում և Հայաստանում՝ 2,7%: Ներկայումս, ինչպես ԱՊՀ բոլոր երկրներում, այս ցուցանիշը համապատասխանում է 1950-ական թթ. մակարդակին: Ընդհանուր մակարդակով այս ծախսերը հավասարվել են Եգիպտոսի, Հնդկաստանի և Պորտուգալիայի մակարդակին, այն դեպքում, երբ 1980-ական թթ. այս ցուցանիշը համապատասխանում էր ԱՄՆ, Գերմանիայի, Ճապոնիայի և Շվեյցարիայի ցուցանիշներին, որտեղ գիտությանը տրամադրվում էր ՀՆԱ 2,5-ից մինչև 3,1%-ը [19, c. 349]:

Ակնհայտ է, որ պետք է հրաժարվել գիտության և կրթության զարգացման համար ներկայումս գործող բյուջետային հատկացումների մնացորդային սկզբունքից, որը կործանարար է երկրի տնտեսության համար: Եթե գիտությանն ուղղվող ֆինանսական միջոցները դիտարկենք որպես ներդրումներ, որոնք նպաստում են գիտելիքների ընդլայնմանը, խորացմանը, ժամանակակից պահանջներին համահունչ դարձնելուն և տանում են արտադրանքի, տեխնոլոգիաների կատարելագործմանը, ապա գիտության մեջ կատարված ներդրումները կարելի է գնահատել որպես գիտական կապիտալ: Վերջինիս նվազումը համարվում է ազգային հարստության կորուստ [19, c. 351]:

Մեր կարծիքով, առանցքային տնտեսական բարեփոխումները պետք է կարողանան երկիրը դուրս բերել ճգնաժամից, կարգավորել տնտեսության տեխնոլոգիական մակարդակը և բարձրացնել աշխատանքի որակը, որը հնարավոր է տնտեսության իրական հատվածում ԳՏԱ նվաճումների ներդրման հիման վրա: Վերջինս նախատեսում է աշխատողների որակավորման մակարդակի բարձրացում, որն, իր հերթին, կախված է ընդհանուր և մասնագիտական կրթական մակարդակից:

Նման եզրակացությունը հաստատում է ընդհանուր կրթության ուժեղացման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա ընդլայնելու աշխատողի պրոֆիլը:

Զարգացած երկրներում ժամանակակից կրթական համակարգն աշխատանքի շուկայի տեսանկյունից գործում է բավական արդյունավետ: Այն առանձնանում է որոշակի ճկունությամբ: Դա անհատին հնարավորություն է տալիս հետդպրոցական կրթությունից ստանալ տարբեր ծավալի և բնույթի գիտելիքներ: Ոչ պակաս կարևոր է նաև այն փաստը, որ տվյալ կրթությունը նյութապես փաստացի հասանելի է բոլոր նրանց, ովքեր ավարտել են դպրոցը: Ելնելով աշխատանքի շուկայի պահանջների փոփոխություններից՝ կրտսեր (երկու տարվա) կամ լրիվ (չորս տարվա) քոլեջներում և համալսարաններում

ուսուցման գործընթացում լիովին հնարավոր են բազմակի վերափոխումներ, կրթական ուղղվածության փոփոխություն և ցանկացած փուլում ուսուցման նույնիսկ կասեցում:

ՀՀ աշխատանքային ռեսուրսներն աչքի են ընկնում կրթական բարձր մակարդակով (*Աղյուսակ 7*): Բավական է նշել, որ 2008թ. աշխատանքային ռեսուրսների 17,8%-ը ունեցել է բարձրագույն, հետբուհական, 23,7%-ը՝ միջին մասնագիտական, 3,4%-ը՝ նախամասնագիտական (արհեստագործական), 42,8%-ը՝ միջնակարգ լրիվ ընդհանուր, 10,0%-ը՝ հիմնական ընդհանուր և 2,3%-ը՝ տարրական ընդհանուր կրթություն: Ըստ որում, քաղաքներում ավելի բարձր է բարձրագույն, հետբուհական (2008թ.՝ 23,1%) և միջին մասնագիտական (26,6%) կրթություն ունեցողների բաժինը:

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության մեջ բարձրագույն, հետբուհական կրթություն ունեցողների բաժինը կազմել է 12,2%, միջին մասնագիտական կրթություն ունեցողներինը՝ 23,0%, նախամասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողներինը՝ 2,4%, միջնակարգ լրիվ ընդհանուր կրթություն ունեցողներինը՝ 41,1%, հիմնական ընդհանուր կրթություն ունեցողներինը՝ 16,1%, տարրական ընդհանուր կրթություն ունեցողներինը՝ 5,2%:

Աշխատանքային ռեսուրսների համեմատությամբ անհամեմատ ցածր է տնտեսապես ոչ ակտիվ բնակչության որակական կազմը: Այսինքն՝ որքան բարձր որակավորում ունի անձը, այնքան մեծ է նրա զբաղվածության և, հետևաբար, տնտեսական ակտիվության հնարավորությունը: Նշված հանգամանքը երևում է հանրապետությունում ըստ կրթական մակարդակի զբաղվածության ցուցանիշից (*Աղյուսակ 8*): Զբաղվածության աստիճանը բարձր է բարձրագույն, հետբուհական կրթություն ունեցողների (2008թ.՝ 61,3%, գյուղերում՝ 83,3%), նախամասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողների մոտ այն կազմում է 60,4% (գյուղերում՝ 74,7%), միջնակարգ լրիվ ընդհանուր կրթություն ունեցողների մոտ այն կազմում է 51,2%, միջին մասնագիտական մասնագիտություն ունեցողներինը կազմում է 50,9%, հիմնական ընդհանուր կրթություն ունեցողներինը՝ 41,3%, իսկ տարրական ընդհանուր կրթություն ունեցողներինը՝ 34,8%:

Այսինքն՝ որքան բարձր է քաղաքացու կրթվածության մակարդակը, այնքան ավելի է մեծանում նրա աշխատելու հնարավորությունը: Ավելին, ըստ կրթական մակարդակի գործազրկության ցուցանիշն ուսումնասիրելիս (*Աղյուսակ 9*) պարզվում է, որ, օրինակ, եթե 2008թ. հանրապետությունում գործազրկության մակարդակը կազմել է 28,6%, ապա բարձրագույն, հետբուհական կրթություն ունեցողներինը կազմել է 24,5%:

Աղյուսակ 7

Աշխատանքային ռեսուրսները և տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունն ըստ կրթական մակարդակի, 2007-2008թթ. [20, էջ 83]

	Աշխատանքա-յին ռեսուրսներ		Քաղաք		Գյուղ		Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն		Քաղաք		Գյուղ	
	2007	2008	2007	2008	2007	2008	2007	2008	2007	2008	2007	2008
Ընդամենը	**2348.1**	**2278.4**	**1542.8**	**1503.6**	**805.3**	**774.8**	**711.1**	**623.4**	**526.7**	**490.4**	**184.4**	**133**
Բարձրագույն, հետբուհական	396.9	405.4	339.8	346.9	57.1	58.5	69.9	76.3	65.3	71.6	4.7	4.6
Միջին մասնագիտա-կան	503.1	539.2	370.2	399.4	132.9	139.8	141.5	143.5	118.7	123.2	22.7	20.3
Նախամասնագի-տական (արհեստա-գործական)	135.7	76.5	95	50.6	40.7	25.9	29.1	14.7	24.1	12.5	4.9	2.2
Միջնակարգ լրիվ ընդհանուր	983.3	976	566.2	556.1	417.1	419.9	305.6	256.4	219.9	199.3	85.7	57.1
Հիմնական ընդհանուր	255.5	227.9	141.1	125.1	114.4	102.8	121.5	100.1	76.6	65	45	35.1
Տարրական ընդհանուր	73.7	53.3	30.5	25.5	43.2	27.8	43.5	32.4	22	18.8	21.5	13.6

Աղյուսակ 8

Զբաղվածությունն ըստ կրթական մակարդակի, 2007-2008թթ. [20, էջ 84]

	Զբաղվածներ, հազ. դրամ		Քաղաք		Գյուղ		Զբաղվածության մակարդակը, %		Քաղաք		Գյուղ	
	2007	2008	2007	2008	2007	2008	2007	2008	2007	2008	2007	2008
Ընդամենը	**1167**	**1182**	**646**	**639**	**520.8**	**543**	**49.7**	**51.9**	**41.9**	**42.5**	**64.7**	**70.1**
Բարձրագույն, հետբուհական	246.6	248.7	201.9	200	44.7	48.7	62.1	61.3	59.4	57.6	78.4	83.3
Միջին մասնագիտական	254.5	274.4	160.7	172.5	93.8	101.9	50.6	50.9	43.4	43.2	70.6	72.9
Նախամասնագիտական (արհեստագործական)	77.3	46.2	47.6	26.9	29.7	19.3	56.9	60.4	50.1	53	72.9	74.7
Միջնակարգ լրիվ ընդհանուր	467.4	500.2	194	197	273.4	303.1	47.5	51.2	34.3	35.4	65.5	72.2
Հիմնական ընդհանուր	95.1	94.1	36.7	38.1	58.4	56	37.2	41.3	26	30.4	51.1	54.5
Տարրական ընդհանուր	26	18.5	5.1	4.6	20.9	13.9	35.3	34.8	16.8	18.2	48.3	50

Աղյուսակ 9

Գործազրկությունն ըստ կրթական մակարդակի, 2007-2008թթ. [20, էջ 85]

	Գործազուրկներ, հազ. դրամ		Քաղաք		Գյուղ		Գործազրկության մակարդակը, %		Քաղաք		Գյուղ	
	2007	2008	2007	2008	2007	2008	2007	2008	2007	2008	2007	2008
Ընդամենը	**470.3**	**473**	**370.2**	**374.2**	**100.1**	**98.8**	**28.7**	**28.6**	**36.4**	**36.9**	**16.1**	**15.4**
Բարձրագույն, հետբուհական	80.4	80.5	72.7	75.3	7.7	5.2	24.6	24.5	26.5	27.4	14.7	9.6
Միջին մասնագիտական	107.1	121.3	90.8	103.7	16.4	17.6	29.6	30.7	36.1	37.5	14.8	14.7
Նախամասնագիտական (արհեստագործական)	29.4	15.6	23.3	11.3	6.1	4.4	27.5	25.3	32.8	29.6	17	18.4
Միջնակարգ լրիվ ընդհանուր	210.3	219.4	152.2	159.8	58.1	59.7	31	30.5	44	44.8	17.5	16.4
Հիմնական ընդհանուր	38.8	33.8	27.9	22	11	11.8	29	26.4	43.2	36.6	15.8	17.3
Տարրական ընդհանուր	4.2	2.4	3.3	2.1	0.9	0.3	13.9	11.3	39.5	31	4	1.9

Գործազուրկների ամենամեծ թվաքանակ նկատվել է միջնակարգ լրիվ ընդհանուր կրթություն ունեցողների մոտ (219,4 հազ. մարդ), որոնց գործազրկության մակարդակը կազմել է 30,5%: Գործազրկության ամենաբարձր մակարդակը նկատվել է միջին մասնագիտական կրթություն ունեցողների մոտ (30,7%):

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ աշխատանքի շուկայում տարբեր մասնագիտական ոլորտներում ստեղծագործական աշխատանքի ունակությամբ, տնտեսության զարգացման մեջ նրա առաջատարության հաստատմամբ աշխատուժի ավելացումը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ աշխատունակ բնակչության բոլոր աշխատանքային խմբերը կունենան բարձր, առավել նշանակալի կրթական մակարդակ: Հաշվի առնելով այն, որ մեր երկրի տնտեսությունում կրճատվել է չորակավորված աշխատանքի բաժինը, նման չափանիշի իրականացումը պետք է համարել երկրի տնտեսությունը և հասարակությունը զարգացման նոր հեռանկարների հասցնելու գլխավոր ուղիներից մեկը:

Եզրակացություն

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ երկրում ձևավորված տնտեսական պայմանները աշխատողներից պահանջում են որակական նոր հատկանիշներ: Ներկայիս մրցակցության պայմաններում աշխատողը պետք է ունենա իրեն համապատասխան պահանջարկ, այսինքն՝ լինի մրցունակ, իսկ աշխատողի մրցունակությունը շատ կողմերով կախված է նրա որակավորվածության աստիճանից: Հետևաբար, առաջանում են նոր գործոններ, որոնք ներհատուկ են նոր տիպի աշխատողին: Մեր կարծիքով, մրցունակ երկրի քաղաքացիները պետք է ունենան.

1. բարձր արհեստավարժություն և ընդհանուր էրուդիցիա,
2. պատրաստվածություն նոր գիտելիքների ստացման և որակավորվածության բարձրացման անընդհատ գործընթացում,
3. մի քանի մասնագիտություն, որը կհեշտացնի աշխատուժի կադրային ռոտացիան ինչպես միկրո-, այնպես էլ մակրոմակարդակում,
4. արտադրության փոփոխվող պայմաններին հարմարվելու ունակություն,
5. բարձր արհեստավարժ շարժունակություն, այսինքն՝ ունակ լինի յուրացնել այն մասնագիտությունը, որը տվյալ պահին մեծ պահանջարկ ունի աշխատանքի շուկայում,
6. նորամուծությունների ընդունման ունակություն,
7. բարձր գործնական և անձնական հատկանիշներ,
8. անձնական ստեղծագործական ներուժի զարգացման ցանկություն,
9. տնտեսական փոփոխությունների պայմաններում աշխատողի հոգեկան կայունություն, հատկապես աշխատողների կրճատումների ժամանակ,

10. ընդհանուր տնտեսագիտության և տնտեսական օրենքների գործունեության իմացություն,
11. ինքնուրույն որոշումների ընդունման ունակություն,
12. ճկուն անհատական կյանքի պարբերաշրջան ձևավորելու ունակություն,
13. սեփական կարիերայի ընտրություն ունենալու հնարավորություն,
14. օտար լեզուների և համակարգչային գիտելիքների իմացություն:

Մարտ, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Марцикевич В.И.*, Тенденция развития и роль сферы образования: экономический и социальный аспекты, Институт МЭМО, М., 1994.
2. Trading and Development Journal, February 1989.
3. *Грейсон Д., О'Деелл К.,* Американский менеджмент на пороге XXI века. М., Экономика, 1991.
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008, Երևան, ՀՀ ԱՎԾ, 2008:
5. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», Երևան, ՀՀ ԱՎԾ, 2008:
6. *Беккер Г.,* Человеческий капитал (глава из книги). Воздействие заработка на инвестиции в человеческий капитал // США: Экономика, политика, идеология. 1993, N 11.
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, Երևան, ՀՀ ԱՎԾ, 2005:
8. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009, Երևան, ՀՀ ԱՎԾ, 2009:
9. Народное хозяйство Армянской ССР в 1988 году, Статистический ежегодник (Госкомстат Арм. ССР), Ереван, 1989.
10. Business Week, 1997, N 3304.
11. Население и трудовые ресурсы: проблемы и решения, зарубежный опыт, М., Наука, 1992.
12. Engineering Education, 1999, N 3.
13. Higher Education, 1998, N 4.
14. World Development Indicators 2009, WB, 2009.
15. Higher Education, 1997, N 6.
16. Civilta cattolica, 1997, N 3306.
17. Federal funds for research and development, Washington, 2007.
18. *Spurway A.,* Technological transfer and innovation. L., 1987.
19. Путь в XXI век: стратегические проблемы и перспективы российской экономики. Руководитель авторского коллектива Львов Д.С., М., Экономика, 1999.
20. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թվականի հունվար-դեկտեմբերին», Երևան, ՀՀ ԱՎԾ, 2010:

РОЛЬ СИСТЕМЫ ОБРАЗОВАНИЯ В ПРОЦЕССЕ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ

Ашот Маркосян, Рубен Кантарчян

Резюме

В статье представлены сущность, роль и место образовательной системы в процессе развития экономики. Авторами проанализирована ситуация по обучению кадров и в области затрат на образование как в мировом масштабе, так и для Республики Армения.

На пути повышения эффективности подготовки квалифицированных кадров для экономики предлагается, в частности, сотрудничество и кооперация образовательной системы и производственной сферы экономики. В статье представлены пути такого сотрудничества и тенденции их развития.

В работе анализируются также сегодняшние требования, предъявляемые к конкурентоспособным кадрам, и классифицируются те свойства, которые обязательны для признания специалиста конкурентоспособным.

ՎՐԱՍՏԱՆ. ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թամարա Վարդանյան[*]

Ներածություն

20-րդ դարում և 21-րդ դարասկզբին Վրաստանի հասարակական-քաղաքական զարգացումները կարելի է որակել որպես ազգային պետության կերտման գործընթաց: Դեռևս 1918-1921թթ. Վրաստանի որդեգրած «Ազգային նախագիծն» էությամբ պետականաստեղծման գործընթաց էր, որն ունեցավ շարունակական բնույթ և չդադարեց նաև Խորհրդային Վրաստանի գոյության տարիներին: Իսկ 1991 թվականից այդ գործընթացը թևակոխեց զարգացման հաջորդ՝ առավել ակտիվ փուլ և մինչև այսօր էլ քաղաքական օրակարգում է: Ընդ որում, այն դեռ երկար ժամանակ կմնա Վրաստանի իշխող վերնախավի քաղաքական օրակարգում՝ անկախ այն իրողությունից, թե ինչ գաղափարախոսական հենքով են միավորված այդ ուժերը:

Նշված հասարակական-քաղաքական գործընթացների տրամաբանությամբ է պայմանավորված նաև երկրի ժողովրդագրական պատկերի աստիճանական փոփոխությունը, որը կբնորոշենք որպես *հանրության միաէթնիկացման (моноэтнизация) գործընթաց:* Իսկ երկրի միաէթնիկացումը գործընթաց է, որի արդյունքում նվազում է երկրում այլազգիների թվաքանակը, ինչն ինքնաբերաբար հանգեցնում է նրանց կողմից հակազդեցությունների ներուժի թուլացման: Իսկ թուլացած էթնիկ հանրույթներն ի վիճակի չեն լինելու վրացական ազգայնական նախագծին որևէ հականախագիծ առաջադրել:

1983թ. ազգի և ազգայնականության խոշոր տեսաբան Է.Գելները նշում էր, որ հասարակության իդեալական մոդելն այն է, երբ ազգի և պետության սահմանները համընկնում են [1]: Ըստ տեսաբանի, ազգայնականությունն այն սկզբունք է, որի նպատակն է հենց այդ քաղաքական և ազգային միավորումների սահմանների հավասարեցումը: Այս մոդելը դիտարկվում է նաև որպես արդյունավետ միջոց էթնիկ հակամարտությունների կանխարգելման և լուծման համար:

---

[*]Նորավանք ԳԿՀ փորձագետ, պատմական գիտությունների թեկնածու:

Երկրի միաէթնիկ կազմը կարևոր է նաև ազգային անվտանգության տեսակետից: Անկասկած է, որ, օրինակ, ՀՀ-ի առավելապես միաէթնիկ ժողովրդագրական պատկերը, որը պատմական հայկական տարածքների կորստի անմիջական հետևանքներից է, այսօր ներքաղաքական անվտանգության կարևորագույն երաշխիք է: Պատմությունն ու այսօրվա իրականությունը նույնպես ցույց են տալիս, որ էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունները հաճախ արտաքին ուժերին հնարավորություն են ընձեռում միջամտել երկրի ներքաղաքական գործընթացներին, վերածել փոքրամասնություններին ազդեցության լծակների և, դրանով իսկ, փաստորեն, սպառնալ երկրի ներքաղաքական կայունությանն ու հասարակական համախմբմանը:

Անշուշտ, այս իրողությունները քաջ գիտակցելով՝ Վրաստանի ազգային վերնախավը ձգտում է իրականացնել էթնիկ և կրոնական փոքրամասնությունների ինտեգրման քաղաքականություն, որը հաճախ ծայրահեղ դրսևորումների հետևանքով նույնանում է ձուլման՝ վրացացման քաղաքականությանը: Նշված քաղաքականության գաղափարական հիմնավորման գործում մեծ դերակատարում ունի վրաց ազգայնական մտավորականությունը: Վրաց ազգայնականությունը հարուստ ավանդույթներով և պատմական ակունքներով ամբողջական գաղափարական համակարգ է՝ ձևակերպված դեռևս 1860-ականներին: Սնվելով անցյալից՝ այսօրվա ազգայնական մտավորականությունը, միևնույն ժամանակ, լայնորեն կիրառում է ժամանակակից աշխարհում ընդունված ձուլման մեխանիզմները:

Վրաստանում փոքրամասնությունների ինտեգրման/ձուլման քաղաքականությունը կրում է հետևողական և համակարգային բնույթ: Այն ներառում է կրթամշակութային, հոգևոր-կրոնական, փոխընկալումների և ստերեոտիպերի ոլորտները, նաև ընկած է պետական/ազգային գաղափարախոսության հիմքում և ներկայանում է որպես «Ազգային նախագիծ»:

Անշուշտ, այս գործընթացում առանցքային դերակատարում է վերապահված պետական վարչական մեքենային, համալսարանական կենտրոններին և ակադեմիական հանրույթին, որոնք պետք է գիտականորեն հիմնավորեն այդ գործընթացների տրամաբանությունը, արդարացիությունն ու անհրաժեշտությունն ազգային շահերի տեսանկյունից: Այսինքն՝ *Վրաստանում պետական վարչական մեքենան սպասարկում է ազգային նախագիծը:* Նշենք, որ այս իրողությունը նաև բնական և տրամաբանական է, քանի որ պետության հիմնական գործառույթներից է ազգային շահի սպասարկումը, իսկ վարչական մեքենան պետության հիմնական ռեսուրսներից է:

Տեսականորեն ցանկացած երկրի միաէթնիկացումն ընթանում է հետևյալ հիմնական մեխանիզմներով.

- Աստիճանական արտագաղթ, որը հիմնականում լատենտ (առաջին հայացքից թաքնված՝ ոչ տեսանելի) գործընթաց է, որի պատճառով չի գրավում լայն հասարակության և ԶԼՄ ուշադրությունը: Նշված շրջանակների համար այն կարող է տեսանելի դառնալ միայն ծայրահեղ դրսևորումների ժամանակ, օրինակ՝ լայնածավալ «էթնիկ զտումների», բռնի տեղահանումների և այլն:
- Դանդաղ ուծացում, որը նույնպես լատենտ գործընթաց է, ինչի հետևանքով անզեն աչքով տեսանելի չէ, հետևաբար, ԶԼՄ և լայն հասարակության ուշադրության չի արժանանում: Միայն ծայրահեղ դրսևորումներում, ասենք, բռնի կրոնափոխության, օտար լեզվի պարտադրման, տիտղոսակիր ազգի սովորույթների, մտածողության, բարքերի կոպիտ միջոցներով ներդրման պարագայում կարող է արձագանք ստանալ ԶԼՄ-ում և դատապարտվել առաջադեմ զանգվածի կողմից,
- Տարածքների ուղղակի կորուստ, որոնք հոծ բնակեցված էին էթնիկ կամ կրոնական փոքրամասնություններով (այս գործընթացն առավելապես պատերազմների կամ կայսրությունների փլուզման արդյունք է),
- Ցեղասպանություն:

Մեր հարևան Վրաստանին բնորոշ են հիմնականում առաջին երկու մեխանիզմները՝ *փոքրամասնությունների աստիճանական արտագաղթն ու դանդաղ ուծացումը,* այն էլ՝ ոչ ծայրահեղ դրսևորումներով: Ընդհանրապես այս երկու մեխանիզմներն աշխարհի տարբեր ծայրերում առավել հաճախ են հանդիպում: Այդ գործընթացները դանդաղ ընթացք ունեն և չեն հայտնվում ուշադրության կիզակետում, ուստի հասարակությունն «արթնանում» է միայն այն ժամանակ, երբ արդեն տեսանելի ու ակնհայտ են դառնում դրանց արդյունքները: Մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ այդ գործընթացները հաճախ ընթանում են խաղաղ ժամանակներում և կարող են իրականացվել առանց բռնության՝ մեղմ ու «քաղաքակիրթ» մեթոդներով:

Այնուամենայնիվ, կա ևս մի շատ կարևոր առանձնահատկություն, որը բնորոշ է այս երկու մեխանիզմներին. էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների արտագաղթը և ուծացումը լուրջ հակազդեցություններ, դժգոհություններ չեն առաջացնում քաղաքակիրթ աշխարհում: Այս գործընթացները հաճախ դիտվում են որպես զարգացման բնականոն ընթացք: Այսպես. արտագաղթը հաճախ ընկալվում և մեկնաբանվում է որպես միգրացիոն գործընթացների արդյունք, իսկ ուծացումը՝ որպես գլոբալացման և ինտեգրման անխուսափելի հետևանք:

1. Վրաստանի «Ազգային նախագիծը»

Ազգի և ազգայնականության տեսաբաններն առանձնացնում են ազգայնականության երկու հիմնական տիպ. էթնիկ և քաղաքացիական (պետական)։ Միաժամանակ, ըստ ազգայնականության հայտնի տեսաբան Հանս Կոնի, գոյություն ունի ազգերի և ազգայնականության երկու հիմնական մոդել. արևմտյան (ֆրանսիական) և արևելյան (գերմանական) [2]։ Արևմտյան մոդելին հիմնականում համապատասխանում է ինքնության և ազգայնականության քաղաքացիական տիպը, իսկ արևելյան մոդելին՝ էթնիկ ինքնությունն ու էթնիկության հիմքով ազգայնականությունը։

Այսօրվա գլոբալացվող աշխարհում սովորաբար էթնիկ ազգայնականությունը քննադատվում է, իսկ քաղաքացիականը՝ համարվում ժողովրդավարական, ուստի և ընդունելի։

Այնուամենայնիվ, վրացական ազգայնականությունն ունի առավելապես էթնիկ բնույթ, և, ինչպես իրավացիորեն նշում է վրաց հայտնի հետազոտող Գ.Նոդիան, այն ավելի նման է գերմանական մոդելին [3, p. 84-101]։ Վրաց ազգայնականության մյուս ուսումնասիրող Գ.Զեդանիան, համաձայնելով, որ վրացական ազգայնականությունն ունի էթնիկ բնույթ, այդ իրողությունը փորձում է բացատրել դրա ծագման առանձնահատկություններով։ «Երբ 19-րդ դ. ձևավորվում էր վրացական ազգայնականությունը, վրացիները գտնվում էին օտար՝ Ռուսական կայսրության տիրապետության տակ, հետևաբար, վրացիների համար ազգն ու պետությունը չէին կարող նույնացվել, ինչն էլ անհրաժեշտ նախապայման է քաղաքացիական ազգայնականության ձևավորման համար։ Այդ պատճառով էլ վրաց ազգայնականությունն առավելապես էթնիկ բնույթ ունի՝ հիմնված լեզվի, էթնիկության և կրոնի վրա»։ Այնուհետև հեղինակը նշում է, որ այդ մոտեցումը պահպանվել է մինչև մեր օրերը [4, p. 80]։

Վրաց էթնիկ ազգայնականությունը հիմնված է վրացերեն լեզվի, Վրաց Ուղղափառ եկեղեցու գերակայության, Վրաստանի պատմության ընդունված և հանրակրթության միջոցով շրջանառվող մեկնաբանության սերտման և ընդունման, հայրենիքում վրացական էթնոսի գերակայության և զարգացման հայեցակարգի և այլ գործոնների վրա։

Իսկ քաղաքացիական ազգայնականության մոդելը տեսականորեն ենթադրում է երկրում բնակվող բոլոր ազգերի ներկայացուցիչների իրավունքների հավասարեցում, նրանց ներգրավվածության ապահովում երկրի սոցիալ-քաղաքական կյանքին, էթնոմշակութային բազմազանության միջավայրի ստեղծում, այլ խոսքերով՝ նոր ինքնության կերտում քաղաքացիության սկզբունքով (այս քաղաքականությունը տեսական գրականության մեջ կոչվում է *ethnicity-blind*, այսինքն՝ էթնիկության հանդեպ կույր քաղաքականություն)։

Այնուամենայնիվ, գործնականում հաճախ քաղաքացիական (կամ պե-

տական) ազգայնականությունը ծառայում է ոչ այնքան նոր ինքնության ձևավորմանը, որքան առավելություն ունեցող ազգի կամ տիտղոսակիր ազգի ինքնության պարտադրմանը էթնիկ կամ կրոնական փոքրամասնություններին: Գ.Զեդանիան ևս այս տեսակետին մոտ դիրքորոշում է արտահայտում, երբ գրում է. «Քաղաքացիական ազգայնականություն» եզրի տակ նկարագրվող ֆենոմենը ոչ այլ ինչ է, եթե ոչ լոյալություն պետության նկատմամբ կամ հայրենասիրություն» [4, p. 79]:

Գ.Նոդիայի կողմից վերջերս ներկայացված Վրաստանի «Ազգային նախագծի» դրույթները, ըստ հեղինակի, ընդհանուր առմամբ արտացոլում են այն ուղին, որը որդեգրել է Վրաստանը՝ սկսած 1918 թվականից: Այստեղ 4-րդ կետում նշված է. «Վրաստանը հանդուրժող երկիր է և ճանաչում է փոքրամասնությունների մշակութային բազմազանությունն իր տարածքում, բայց պահանջում է նրանց լոյալությունը «Ազգային նախագծի» հանդեպ» [3, p. 94]: Իսկ նույն «Ազգային նախագծի» առաջին կետում կարդում ենք. *«Վրաց ազգի զարգացման համար միակ ընդունելի քաղաքական կառուցվածքը վրացական ազգային պետությունն է»* [3]: Այստեղ հակասությունն ակնհայտ է: Եթե «Ազգային նախագիծը» նախատեսում է ազգային պետության ստեղծում, որն իր դասական մոդելով ենթադրում է վրաց էթնոսի գերակայության հաստատում, ապա ամենևին էլ պարզ չէ, թե ինչպես է ճանաչվում փոքրամասնությունների մշակութային բազմազանությունը, ինչպես են սահմանվում էթնոկրոնական փոքրամասնությունների տեղն ու դերը հասարակության ներսում: Փաստացի, կարելի է ենթադրել, որ փոքրամասնություններից պահանջվում է միայն լոյալություն «Ազգային նախագծի» նկատմամբ:

Եթե խոսվում է հանդուրժողականության մասին, ապա փոքրամասնությունների դերակատարումը երկրի զարգացման և բարգավաճման գործում պետք է շեշտադրվի և հստակ փաստերով ներկայացվի: Ցանկացած երկրում էթնիկ հանդուրժողականության աստիճանի կարևոր ցուցիչներից են պատմության դպրոցական դասագրքերը: Եթե հանրությունը բազմազգ է, ապա այսօր քաղաքակիրթ աշխարհում ընդունված է կիրառել դպրոցական դասագրքերում բազմամշակութայնության սկզբունքը (*Multiculturalism*): Այս սկզբունքի համաձայն, պատմության դպրոցական ծրագրերը պետք է պաշտոնական պատմության մեջ ներառեն էթնիկ փոքրամասնությունների պատմությունից կարևոր իրադարձություններ, մի շարք փաստեր նրանց ունեցած ներդրումների մասին երկրի բարգավաճման, պետականակերտման գործում, ընդհանուր տեղեկություններ նրանց մշակույթի մասին և այլն: Այնինչ, Վրաստանի պատմության դասագրքերը խիստ էթնոցենտրիկ են, չեն արտացոլում երկրի ժողովրդագրական պատկերը[1]: Այդ դասագրքերը ոչ այնքան Վրաստա-

[1] Վրաստանի պատմության դպրոցական դասագրքերի համառոտ քննությունը տե՛ս *Վարդանյան Թ.,* «Աշխարհի էթնիկ պատկերը. վրացական մոդել», «Գլոբուս. Ազգային անվտանգություն» պարբերական, թիվ 2 (6), 2009թ., Երևան, էջ 69-74, նաև՝ http://www.noravank.am/am/?page=analitics&nid=1888 (հայերեն), http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=1875 (ռուսերեն):

նի պատմություն են, որքան վրացիների պատմություն, իսկ փոքրամասնություններն ամբողջովին դուրս են մղված համատեքստից:

Ինչո՞ւ ենք մենք կարևորում հենց պատմության դասագրքերի խնդիրը: Բանն այն է, որ ընդհանուր պատմություն և անցյալ ունենալու զգացողությունն էթնոսի տարբեր հատվածների միավորման գործոն է և էթնիկ ինքնության կարևորագույն բաղադրիչներից: Իսկ էթնիկ փոքրամասնություններին իրենց սեփական պատմությունից զրկելը, դրա փոխարեն ներարկելը այլ էթնոսի, տվյալ դեպքում՝ վրացիների պատմություն, ոչ այլ ինչ է, եթե ոչ ուծացման մեխանիզմ, այսինքն՝ վրացացում:

Փաստացի վրացական իրականությունն այն է, որ ղեկավարության հանդուրժողականության մասին հռետորաբանությունը չի համապատասխանում իր իսկ վարած քաղաքականությանը:

Այսինքն՝ օգտագործվում է քաղաքացիական ազգայնականության հռետորաբանությունը, սակայն գործնականում իշխում է էթնիկ ազգայնականություն:

Այսպիսով, էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների ուծացումը և արտագաղթը հնարավոր է ազգայնականության երկու մոդելների (էթնիկ և քաղաքացիական) զուգահեռ կիրառման ճանապարհով: Մ.Սահակաշվիլու օրոք Վրաստանն ազգային պետության ձևավորման ճանապարհին փորձում է հնարավորինս օգտագործել և՛ էթնիկ ազգայնականությունը, և՛ քաղաքացիական (պետական) ազգայնականությունը, ինչը ներկայիս ղեկավարին որոշակիորեն առանձնացնում է իր նախորդներից:

Քաղաքացիական ինքնության շեշտադրումներով ձուլման քաղաքականության օրինակները բազմաթիվ են: Այսպես, օրինակ, խորհրդային տարիներին ԽՍՀՄ-ում ընթացող «սովետական մարդու» կերտման գործընթացն իրականում նպաստում էր ոչ թե «նոր ինքնության» ձևավորմանը, որքան անհատի աստիճանական ռուսիֆիկացմանը, ինչը միութենական հանրապետությունների մակարդակով արտահայտվում էր հիմնականում էլիտաների ռուսիֆիկացմամբ, նաև հօգուտ ռուսների հանրապետությունների ժողովրդագրական կազմի փոփոխությամբ: Ըստ էության, նմանատիպ գործընթացներ են ընթանում նաև Թուրքիայում և, այս կամ այն չափով, գրեթե բոլոր երկրներում՝ լինեն, այսպես կոչված, ժամանակակից ժողովրդավարական, թե արդիականացման ուղին դեռ չանցած պետություններ:

Ոչ միայն պատմության դպրոցական դասագրքերի, այլև Վրաստանում առկա բազմաթիվ այլ խնդիրների առկայության արդյունքում ազգայնականության երկու մոդելներն էլ (էթնիկ և քաղաքացիական) ծառայում են նույն նպատակին, այն է՝ ձևավորել վրացական ազգային պետություն էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների ձուլման կամ դուրսմղման ճանապարհով:

2. Վրաց ազգայնականության եռամիասնությունը. հայրենիք, լեզու, կրոն

Հայրենիք

Էթնիկ և կրոնական փոքրամասնությունների վրացացման գործընթացը տասնամյակների ընթացքում զգալի հաջողություններ չէր արձանագրի, եթե չունենար կուռ, ամբողջական, համակարգված գաղափարական հենք: Բացի այդ, նշված գաղափարական հենքը, որպես կանոն, շոշափելի արդյունքներ է տալիս միայն այն ժամանակ, երբ որդեգրվում է պետական համակարգի կողմից, քանի որ այս դեպքում է, որ նշված խնդրի լուծմանը ծառայեցվում է նաև ողջ վարչական և քարոզչական մեքենան:

Գ.Նոդիան հիշատակում է, որ «1860-ականներից Ի.Ճավճավաձեն առաջարկեց եռամիասնությունը, որը հետագայում ստացավ վրացական ազգակերտման բանաձևի կարգավիճակ. հայրենիք, լեզու, կրոն *(mamuli, ena, sartsmunoeba)*»: Ի.Ճավճավաձեն Թիֆլիսում հրատարակվող «Իվերիա» թերթի էջերում հետևողականորեն արտահայտում և զարգացնում էր իր գաղափարական հայացքները:

Արդեն 20-րդ դ. սկզբին վրացական ազգայնականությունը ստացավ քաղաքական ծրագրի տեսք: Ձևավորվեց ազգային պետության ստեղծման գաղափարը: Այն արտահայտվեց «Վրաստանը վրացիների համար» կարգախոսի միջոցով՝ որպես ազգային պետականության ստեղծման նախագիծ:

Հայտնի է, որ 20-րդ դ. սկզբին Այսրկովկասի էթնիկ կազմն ու ժողովուրդների բնակեցվածությունը խիստ բազմազան էր: Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարար կոմս Ի.Ի. Տոլստոյն Անդրկովկասում տիրող իրավիճակի մասին հուշերում գրում է. «Չկա մի տարածք, որ խառը չլինի: Ոչ ոք չի կարող հստակ ասել՝ Թիֆլիսը վրացակա՞ն քաղաք է, թե՞ հայկական…, կամ կհամաձայնե՞ն արդյոք հայերը Բաքվի նահանգը ճանաչել որպես թաթարական երկիր»[1]:

Մեր տարածաշրջանում տարածքային կենտրոնացման գործընթացները մեծ թափ ստացան հատկապես 19-րդ դ. վերջերին - 20-րդ դ. սկզբներին: Ռուսական կայսրության տարածքում բնակվող էթնիկ փոքրամասնությունների շրջանում ձևավորում էին միատարր վարչական-քաղաքական միավորներ ստեղծելու քաղաքական ծրագրեր: Դրանք հետագայում ազգային պետությունների ստեղծման համար տարածքային հիմք պետք է ծառայեին:

Դեռևս 1903թ. մայիսի 1-ից Փարիզում երկու լեզվով (վրացերեն և ֆրանսերեն) սկսեց հրատարակվել «Սաքարթվելո» (Վրաստան) քաղաքական լրագիրը: Նպատակն էր վրաց ժողովրդի շրջանում արթնացնել ազգային և քաղա-

[1] Воспоминания министра народного просвещения графа И.И.Толстого (31 октября 1905г. – 24 апреля 1906г.), Серия “Мемуары русской профессуры”, кн.2, 1997, с. 122.

քացիական գիտակցություն՝ այդպիսով հող նախապատրաստելով Վրաստանի ինքնավարության համար[1]: Այնուհետև 1904թ. ձևավորվեց վրաց սոցիալ-ֆեդերալիստների ազգայնական կուսակցությունը: «...Այդ կազմակերպության կորիզը դարձավ վերոհիշյալ «Սաքարթվելո» լրագիրը՝ վրացական նացիոնալ-ֆեդերալիստների արտասահմանյան խմբի օրգանը» [5, էջ 451]: «Սաքարթվելո» ազգայնական կազմակերպության ղեկավարն էր Ա.Ջորջաձեն: Կազմակերպության կողմից որպես իրենց առջև դրված քաղաքական նպատակի հիմնական արտահայտիչ հռչակվեց «Վրաստանը վրացիների համար» կարգախոսը:

Վրաց սոցիալ-ֆեդերալիստների կուսակցության հիմնական ծրագրային պահանջը «ռուսական բուրժուա-կալվածատիրական պետության սահմաններում Վրաստանի ինքնավարության ստեղծումն էր» [6, c. 20]: Այսինքն՝ ազգային պետության կերտման համար վրաց ազգայնականությանն անհրաժեշտ էր էթնիկապես միատարր տարածք: Ինքնավարությունը պետք է ծառայեր որպես տարածքային հիմք նման վարչական–քաղաքական միավորի ստեղծման համար: Փաստորեն, վրաց իրականության մեջ տարածքային կենտրոնացման գաղափարն արդեն 20-րդ դ. սկզբին հանդես եկավ որպես քաղաքական օրակարգային ծրագիր (ի դեպ, համանման գործընթացներ էին ընթանում նաև արևելահայերի շրջանում, թեև հայ իրականության մեջ քաղաքական պայքարի ամբողջ ուշադրությունը շարունակում էր սևեռված մնալ Արևմտյան Հայաստանի վրա, իսկ կովկասյան թաթարների շրջանում այս գործընթացն առավել ակտիվացավ 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների շրջանում)[2]:

Ֆեդերալիստների նշված տարածքները, որոնք պետք է ընդգրկվեին ինքնավար Վրաստանի մեջ, էթնիկ տեսանկյունից միատարր չէին: Այնտեղ ապրում էին բավական մեծ թվով հայեր, ռուսներ, թաթարներ, չերքեզներ, լեռնային լեզգիներ և այլն, որոնք ինքնավարության պայմաններում անխուսափելիորեն կհայտնվեին ազգային փոքրամասնության կարգավիճակում:

Տեղական թիֆլիսյան մամուլում էթնիկ միատարր տարածքի ստեղծման գաղափարը նույնպես լայն արձագանք գտավ: Թիֆլիսում հրատարակվող «Ախալի Դրոեբա» թերթը նույնպես էթնիկ միատարր վարչական-քաղաքական միավորի անհապաղ ստեղծման ջատագով էր: Ներկայացնենք թերթի խմբագրության դիրքորոշումն ազգային հարցում. «Մենք այն վեհ ազգայնականության կողմնակիցն ենք, որը չի ցանկանում մյուս ազգերին այն, ինչը չէր ցանկանա ինքն իրեն, և դրա համար ոչ ոք չի համարձակվի մեզ «շովինիստ» անվանել: Մենք ազգի ամբողջական ինքնավարության կողմնակիցն ենք, քանի որ

[1] Վրաստանը և ազգային ինքնավարության հարցը Կովկասում, Դրոշակ, Ժնև, 1903, թիվ 9, էջ 147-148:

[2] Մանրամասն տե՛ս *Վարդանյան Թ.,* «Տարածքային կենտրոնացման գործընթացները (1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների լույսի ներքո), 2 մասով», «Ուխտ Արարատի», թիվ 4, օգոստոս, 2005, http://www.oukhtararati.com/amsagrer/Oukth-4.pdf (մաս 1-ին), «Ուխտ Արարատի», թիվ 6, հոկտեմբեր, 2005, http://www.oukhtararati.com/amsagrer/Oukth-6.pdf (մաս 2-րդ):

այնտեղ, որտեղ խոսում են 100 լեզուներով, անհնար է հասկանալ առանձին քաղաքացու կարիքներն ու պահանջները, հետևաբար, *անհնար է նաև համատեղ քաղաքական կյանքը»* (ընդգծումը մերն է՝ *Թ.Վ.*)[1]:

Վրաստանի միաէթնիկացման նախագիծը շարունակվեց նաև խորհրդային տարիներին, ինչի վառ ապացույց են հանրապետության ժողովրդագրական փոփոխությունները (տե՛ս ստորև): Վրաց ինքնության ժամանակակից ուսումնասիրողներից պրոֆեսոր Մարի Չխարտիշվիլին, կարևորելով հայերի դերը վրացական ինքնության կերտման գործընթացում, նշում է. «Խորհրդային տարիներին հայ-վրացական ինքնությունների միջև լարվածությունը շարունակվեց: Շարունակվեց հայերի մարգինալացումը, հայկական ազգանուններով անձինք Խորհրդային Վրաստանում պաշտոններ չէին կարող զբաղեցնել: Բայց երբ հայերը փոխում էին իրենց ազգանունների վերջավորությունները վրացականով, նրանց ավելի բարձր պաշտոններ էին շնորհում, քան վրացիներին» [7, p. 124]: Հետաքրքիրն այն է, որ այս տողերի հեղինակը սա որակում է որպես խորհրդային քաղաքականության արդյունք, բայց ոչ վրացական ազգայնական նախագիծ:

Խորհրդային Միության փլուզման վերջին շրջանում և հետխորհրդային տարիներին Վրաստանի միաէթնիկացման քաղաքականությունը դարձավ անթաքույց երևույթ: Դեռևս վերակառուցման տարիներին՝ 1989թ., «Ախալգազրդա կոմունստի» (Երիտասարդ կոմունիստ) թերթի հունիսյան համարում տպագրվեց Ռ.Միշվելաձեի նամակը, որտեղ պարզ ասվում էր հետևյալը. «Վրաստանն իրական աղետի առջև է կանգնած՝ ոչնչացման... Մենք պետք է ամեն կերպ ձգտենք ավելացնել վրացիների տոկոսային կշիռը Վրաստանում (այժմ 65% է): Վրաստանը կարող է հանդուրժել հյուրերի 5%-ից ոչ ավելի... Մենք պետք է կասկածելի արագությամբ բազմացող օտար ազգերին համոզենք, որ Դավիթ Շինարարի հողի վրա նրանց համար պայմաններ չկան»[2]:

Այս նույն գաղափարախոսությունը հետագայում որդեգրեց Վրաստանի նախագահ, ծայրահեղ ազգայնական Զ.Գամսախուրդիան (Վրաստանի նախագահ է ընտրվել 1991-1992թթ.), որի կառավարման տարիներին վիրահայությանը սպառնում էր ոչ միայն աստիճանական վրացացում, այլև տարածված էր ֆիզիկական հաշվեհարդարի տագնապը: Զ.Իոսելիանիի ղեկավարած «Մխեդրիոնի» (ձիավորներ) ոչ ֆորմալ զինված խմբերն ահ ու սարսափ էին տարածում խաղաղ բնակչության, այդ թվում՝ փոքրամասնությունների շրջանում (չնայած Զ.Գամսախուրդիայի և Զ.Իոսելիանիի միջև բացահայտ առճակատմանը): Այդ տարիներին անգամ հայաշատ Հավլաբար թաղամասում տեղի հայությունն ինքնապաշտպանության և ինքնակազմակերպման միջոցառումներ էր ձեռնարկում՝

[1] Տե՛ս газета “Кавказ”, Тбилиси, 1906, N52.

[2] http://www.otechestvo.org.ua/main/20071/520.htm

հնարավոր ավազակային հարձակումներից խուսափելու համար:

Վրաստանի ներկայիս նախագահ Մ.Սահակաշվիլու քաղաքականությունը նույնպես նպաստում է վրացական ազգային պետության ստեղծմանը, թեպետ վերջինս կիրառում է ժամանակակից հռետորաբանություն: Օրինակ, նա հաճախ է նշում, որ Վրաստանը բազմազգ երկիր է և որ Վրաստանի բարեկեցությունն ու զարգացումը հնարավոր են այնտեղ ապրող բոլոր ազգերի ներկայացուցիչների հավասարության հիմքի վրա: Թբիլիսիի փողոցներում կարելի է հանդիպել նման մոտիվներով բազմաթիվ պաստառներ: Միևնույն ժամանակ, իշխանության գալու անմիջապես հաջորդ՝ 2004 թվականը նա հայտարարում է Զ.Գամսախուրդիայի հիշատակման տարի՝ դրանով իսկ նախանշելով պետականակերտման գամսախուրդիական մոդելի ժառանգականությունը և իր հավատարմությունն այդ մոդելին:

Այդ ժառանգականության մասին նշում է նաև Գ.Նոդիան: Հիշատակելով «Ազգային նախագծի» կետերը՝ նա գրում է. «Չնայած բազմաթիվ տարբերություններին 1918-1921թթ. և հետխորհրդային տարիների միջև, նաև կարևոր տարբերություններին Զ.Գամսախուրդիայի, Է.Շևարդնաձեի և Մ.Սահակաշվիլու քաղաքական ռեժիմների միջև, վերոնշյալ կետերը մնում են վրացական Ազգային նախագծի անփոփոխ ուղեցույցներ» [3, p. 95]:

Խնդիրն այն է նաև, որ Վրաստանում ազգային պետություն ստեղծելու ծրագիրն ամենևին էլ չի հակասում տարածաշրջանում շահեր ունեցող արևմտյան խոշոր դերակատարների ծրագրերին, որոնք վրացական ազգայնականության մեջ որևէ վտանգ չեն տեսնում և խրախուսում են այն, քանի որ վերջինս առավելապես խարսխված է հակառուսականության վրա:

Օրինակ, քաղաքացիական հասարակության օղակների կողմից Եվրախորհուրդ ներկայացված զեկույցներից մեկում ասվում է. «Վրաստանում առկա հիմնական խոչընդոտները, որոնք հանգեցնում են փոքրամասնությունների համայնքների մարգինալացմանն ու մեկուսացմանը, հետևյալն են.

- Վրաստանում փոքրամասնությունների հարցերում համապարփակ քաղաքական մոտեցման բացակայությունը և որպես հետևանք՝ փոքրամասնությունների մասնակցությունն ու քաղաքացիական ինտեգրումն ապահովող համապատասխան իրավական դաշտի բացակայությունը:
- Ազգային և տեղական մակարդակներում փոքրամասնությունների ոչ բավարար քաղաքական ներկայացվածությունը:
- Տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրված փոքրամասնությունների ներկայացուցիչների գիտելիքների և հմտությունների անբավարար մակարդակը, որոնք անհրաժեշտ են համայնքների կարիքներին համահունչ համապատասխան գործունեության իրականացման համար:

- Փոքրամասնությունների ներկայացուցիչների շրջանում քաղաքական մասնակցության, մշակույթի և իրավական խնդիրների իմացության ոչ բավարար մակարդակը:
- Փոքրամասնություններով կոմպակտ բնակեցված տարածքներում տեղեկատվական շրջափակման (վակուումի) և նրանց խնդիրների հանդեպ ուշադրության ցածր մակարդակը, ինչը հանգեցնում է փոքրամասնությունների մեկուսացմանը հասարակությունից:
- Միակողմանի լեզվական քաղաքականությունը, որը հանգեցնում է փոքրամասնությունների կողմից պետական լեզվին չտիրապետելուն, մեկուսացմանը և աշխատանքի տեղավորման խնդիրների» [8]:

Թեև այս խոչընդոտները բավականաչափ հայտնի են Արևմուտքին, բայց արևմտյան ժողովրդավարական ինստիտուտների կողմից որևէ ճնշում չի գործադրվում Վրաստանի իշխանությունների վրա՝ փոքրամասնությունների իրավիճակի բարելավման հարցում և չի գործադրվի, քանի դեռ Վրաստանը կպահպանի հակառուսական ուղեգիծն արտաքին քաղաքականության մեջ: Ստեղծված իրավիճակի արդյունքում շարունակվում է փոքրամասնությունների մարգինալացումն ու մեկուսացումը: Թեպետ անգամ այս պայմաններում վրաց հետազոտողներին հաջողվում է մեղքը բարդել հայերի վրա, որոնք, իբր, վրաց հասարակությանը չեն ինտեգրվում, քանի որ ունեն համայնքային (դիասպորալ) կեցութաձևի փորձ [7, p. 125]:

Ներկայումս Մ.Սահակաշվիլու կառավարման շրջանը վրաց հետազոտողներից շատերը համարում են երկրի ժողովրդավարացման և քաղաքացիական հասարակության կառուցման շրջան: Համեմատելով Զ.Գամսախուրդիայի և Մ.Սահակաշվիլու ազգայնական նախագծերը՝ վրաց հետազոտողներից Դ.Ափրասիձեն նշում է, որ Զ.Գամսախուրդիայի ազգայնականությունն առավելապես էթնոցենտրիկ է, իսկ Մ.Սահակաշվիլունը՝ պետականամետ (քաղաքացիական) [9, p. 72]: Իրականում, այդ տարբերությունը միայն հռետորաբանության հարթությունում է, իսկ գործնականում արդյունքը նույնն է՝ երկրի աստիճանական միաէթնիկացումը և այդ հիմքով ազգային պետության ձևավորումը:

Այնուամենայնիվ, որոշ տարբերություն կարելի է նկատել. օրինակ, այն, որ Զ.Գամսախուրդիայի բացահայտ և «կոշտ» ազգայնականությունը փոքրամասնություններին առավելապես մղում էր արտագաղթի, իսկ այժմ, շնորհիվ Մ.Սահակաշվիլու՝ քաղաքացիական ազգայնականության շեշտադրումներով «փափուկ» հռետորականության, էթնիկ փոքրամասնությունների շրջանում գերակշռում է աստիճանական ուծացումը:

Լեզու

Վրաց էթնիկ ազգայնականության եռամիասնության երկրորդ կարևոր հիմնասյունն ու զենքը *վրացերենն է:* Ազգակերտման գործընթացների ուսումնասիրողներից շատերը (Օ.Բաուեր, Յու.Բրոմլեյ, Յու.Արուտյունով, Լ.Աբրահամյան և այլք) նշում են, որ լեզուն ինքնության առաջնային, տեսանելի ցուցիչն է և մեծ դերակատարում ունի էթնոգենեզի ընթացքում: Հայտնի է, որ լեզուն ունի մտահաղորդակցական և էթնոսոցիալական գործառույթներ: Ներկայիս արևմտյան հետազոտողները նույնպես նշում են, որ վրացիների ազգային գիտակցությունում խիստ զարգացած է *լեզվական կողմնորոշման ձևը:* Վրաստան ժամանողին միանգամից ապշեցնում է «վրացերեն լեզվի կենտրոնականությունը, նրա գործածականությունն ինչպես կենցաղում, այնպես էլ մշակութային համատեքստում» [10, p. 168]:

Այսպիսով, վրացերենն այն հզոր միջոցն է, որը, տարածվելով էթնիկ և կրոնական փոքրամասնությունների շրջանում, արագացնում է վերջիններիս ինքնության վերափոխումները վրացականության ուղղությամբ, գործընթաց, որի հանգուցակետը վերջնական ձուլումն է վրացական հանրույթում: «Ե՛վ Խորհրդային Վրաստանի, և՛ անկախ Վրաստանի լեզվական քաղաքականությունն արտացոլանքն է բոլոր այն քաղաքական խնդիրների, որոնք անցյալում առկա էին և այսօր էլ կան Վրաստանում էթնիկ փոքրամասնությունների ներկայության հետևանքով» [11, pp. 74-76]:

Վրացերենը՝ որպես վրաց ինքնության առանցքային բաղադրիչ, հատկապես շեշտադրված է եղել 19-րդ դ. և խորհրդային տարիներին, անգամ առավել շեշտադրված, քան կրոնական ինքնությունը: Պատճառն այն է, որ Ռուսական կայսրության կազմում գտնվելով՝ վրացական ազգային գաղափարի համար կրոնը չէր կարող ռուսներից տարանջատող դերակատարում ունենալ, այն, թերևս, կարող էր միավորել ռուսներին և վրացիներին: Այս պատճառով շեշտը դրված էր լեզվի և հայրենիքի գաղափարի վրա: Բացի այդ, երբ Վրաստանն անցավ Ռուսաստանին, վրացերենը վերացվեց որպես ժամերգության լեզու, իսկ վրացական եկեղեցին 1811թ. զրկվեց ինքնուրույնությունից: Այս պատճառով վրացերենը դարձավ աշխարհիկ գրականության լեզու և կարողացավ ազգայնականությունը սնուցող աղբյուր դառնալ: Վրաց ուղղափառ կրոնը՝ որպես ինքնության տարանջատող բաղադրիչ, նաև խորհրդային տարիներին չկարողացավ այդ գործառույթն իրականացնել: Միայն մեր օրերում է, որ այն մեծ թափ է ստացել և օր օրի ուժեղանում է:

Այսպիսով, վրացական ազգայնականության կարևոր և վրացիներին մշտապես շրջապատից տարանջատող բաղադրիչը վրացերենն է: Սա է պատճառը, որ 1978թ., երբ Մոսկվան ցանկանում էր վերացնել վրացերենի պաշտոնական կարգավիճակը Խորհրդային Վրաստանում (իսկ հայերենինը՝ Խորհր-

դային Հայաստանում), Վրաստանում ազգայնական մտավորականությունը լուրջ դիմադրություն ցույց տվեց, ինչի շնորհիվ այդ փորձը տապալվեց:

Եթե վրացական ինքնության համար վրացերեն լեզվի խիստ կարևորության տեսանկյունից դիտենք ջավախքյան զարգացումները, ապա պարզ կդառնա, թե ինչու հայոց լեզվի կարգավիճակի հարցը Ջավախքում լուրջ հակազդեցություն է առաջացնում վրացական կառավարական, հասարակական և գիտական շրջանակներում: Այնտեղ խոր հակակրանքի տեղիք է տալիս ջավախահայության՝ վրացերենին չտիրապետելու փաստը: Այսինքն՝ այս պարագան կարևոր ահազանգ է վրաց վերնախավին առ այն, որ ջավախահայության ձուլման քաղաքականությունը կարող է և հաջողությամբ չավարտվել: Գ.Խաինդրավան մի հարցազրույցի ժամանակ նշել է, որ «Ջավախքում խնդիրները կապված են ոչ թե հայերեն լեզվի հետ, այլ վրացերենի: Եվ Հայաստանի կողմից բարեկամական քայլ կդիտվեր, եթե հայկական կողմը մտահոգվեր Ջավախքում վրացերենը տարածելու խնդրով, քանի որ բոլորն առանց այդ էլ խոսում են հայերեն»[1]:

Ընդհանրապես, փոքրամասնություններին առնչվող լեզվական քաղաքականությունը միջպետական հարաբերությունների համար կարևոր օղակ է ընդունող պետության և փոքրամասնության հայրենիք պետության միջև, քանի որ մայր հայրենիքում հասկանում են մայրենի լեզվի կորստի հետևանքները: Պարզ օրինակներից մեկը վերջին շրջանում գերմանա-թուրքական բարձր մակարդակի հակասությունն է Գերմանիայում ապրող միգրանտ-թուրքերի շրջանում թուրքերեն լեզուն ուսանելու Թուրքիայի պահանջի հետ կապված[2]: Բայց ջավախահայերը միգրանտ չեն, այլ ապրում են իրենց պատմական հայրենիքի մի հատվածում, հետևաբար, որոշակի առավելություններ ունեն լեզվական իրավունքների կիրառման տիրույթում:

Այսպես, վրացերենի ներդրման միջոցով Կախեթում հազարավոր հայեր են վրացացել: Հայկական գյուղերում գործող հայկական դպրոցներն աստիճանաբար վերածում էին վրացականի, երկու-երեք տասնամյակ անց տեղի հայության մի հատվածը, թերևս, ամբողջովին *վրացացել է:*

Ի դեպ, նույն քաղաքականությունն այսօր կիրառվում է Թբիլիսիի հայկական դպրոցներում, որոնցում հայկական դասարաններին կից բացվել են վրացական սեկտորներ: Վերջին մի քանի տարիների ընթացքում հայ աշակերտներն աստիճանաբար տեղափոխվում են վրացական սեկտորներ, որտեղ վրացերենի ուսուցման մակարդակն առավել բարձր է, հետևաբար, ավելի նախընտրելի Վրաստանի քաղաքացի հանդիսացող հայազգիների համար:

[1] *Хаиндрава Гоги,* «Армяне и грузины – никакие не друзья, да и друзьями никогда не были», http://news.am/ru/news/7153.html

[2] "Учите турецкий: Турция требует открыть в Германии школы с обучением на турецком языке, http://lenta.ru/articles/2010/03/30/schulen/

Արդյունքում՝ հայկական սեկտորները զրկվում են գոյության հեռանկարից:

Մյուս կողմից՝ գործում է չգրված օրենքների մի ամբողջ համակարգ: Օրինակ, Վրաստանում, մասնավորապես մայրաքաղաք Թբիլիսիում բնակվող հայերի կողմից հաճախ կարելի է լսել այն կարծիքը, թե «փողոցում հայերեն խոսելն ամոթ է»: Միևնույն ժամանակ, բացակայում է այն հասարակական նորմը, որ «հայի համար հայերեն լեզվին չտիրապետելն առավել ամոթ է»:

Կրոն

Վրաց ազգայնականության եռամիասնության հաջորդ կարևոր հիմնասյունը *Վրաց Ուղղափառությունն է:* Վրաստանում անկախության տարիներին ընթացող ազգային համախմբման գործընթացներում որպես կատալիզատոր հանդես է գալիս կրոնը: Այստեղ ընթանում են «Մեկ ազգ, մեկ կրոն» մոդելի ստեղծման անթաքույց գործընթացներ: Ինչպես նշում է Մ.Ջավախիշվիլին, «...սկսած 20-րդ դ. 90-ականներից՝ «վրացի» և «ուղղափառ» հասկացությունների միջև դրվեց հավասարության նշան: Ամբողջ Վրաստանը պետք է դառնա միադավան երկիր, բոլոր վրացիները պետք է լինեն ուղղափառ» [12, c. 116]: Մինչև այսօր Վրաստանի այլ կրոնական փոքրամասնություններն իրավական կարգավիճակ չունեն: Վրաստանում բավական մեծ հեղինակություն են վայելում Վրաց Ուղղափառ եկեղեցին և նրա առաջնորդը: Այսպես, երբ 2003թ. նախատեսվում էր Վրաստանի և Վատիկանի միջև համաձայնագրի ստորագրումը, գործընթացն անհապաղ կասեցվեց Վրաց Ուղղափառ եկեղեցու կողմից: Վրաց պատրիարքը հայտարարեց, որ «տվյալ փաստը կարող է օգտագործվել մյուս դավանանքների կողմից՝ Վրաստանում հաստատվելու նպատակով, ինչը նոր և լուրջ խնդիրներ կհարուցի մեր պետության ներսում»[1]:

Նույն Մ.Ջավախիշվիլին նշում է, որ կաթոլիկներին Վրաստանում անվանում են «աղանդավորներ», «հերետիկոսներ», «օտարներ»: Ուղղափառ քարոզիչները հայերին նույնպես հաճախ անվանում են «հերետիկոսներ» կամ «սատանայականներ»՝ հայերի միաբնակության մասին տարրական գիտելիքների բացակայության արդյունքում [13, էջ 112]:

Բազմաթիվ փաստեր կան, թե ինչպես են իրականացվում ուղղափառ եկեղեցու շուրջ և Վրաց Ուղղափառ եկեղեցու սպասավորների կողմից հայության շրջանում հոգեորսության աշխատանքները: Այսպես, Թբիլիսիի հայաշատ թաղամասում՝ Հավլաբարում, Մ.Սահակաշվիլու օրոք կառուցվեց մեծ ու շքեղ վրացական եկեղեցի՝ Սամեբա անունով: Ներկայումս Հավլաբար թաղամասում բնակվող հայերն արդեն հաճախում են հենց նշված եկեղեցին: Նշենք տեղում հնչած կարծիքներից մեկը, որի համաձայն վրացական կողմը հոգեորսության թիրախ է դարձնում հիմնականում հարուստ ու աչքի ընկնող հայերին:

[1] http://www.centrasia.ru/newsA.php?st=1063998660

Հոգեորսության գործընթացներ տեղի են ունենում նաև Ջավախքում: Այսպես, Նինոծմինդայի շրջանի Փոկա գյուղում վրացիներ չկային: Բայց վրացիները գյուղում 5 տուն են գնել, որտեղ բնակվում են վրաց կույսերը և վանականները՝ Փոկայի Սբ. Նինոյի եկեղեցու կենվորները: Հարցազրույցի ժամանակ մայրապետ Էլիսաբեթը նշել է, որ ուղղափառ ծեսով նրան հաջողվել է մկրտել մի ամբողջ հայ ընտանիք, քանի որ, ինչպես ինքն է նշում, մկրտվողները հասկացան, որ ուղղափառ հավատքն ավելի ճշմարիտ է[1]: Հետագայում, Ս.Կարապետյանի տվյալների համաձայն, 2003թ. հաջողվել էր Վրաց Ուղղափառ եկեղեցում վերամկրտել փոկացի բազմաթիվ հայերի, ընդ որում՝ իբրև թե տեղի հայերն իրենք էին դիմում վրաց եկեղեցու ավազանում վերամկրտվելու խնդրանքով, քանի որ հասկացել էին «ուղղափառ եկեղեցու առավելությունը» [14]:

Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմն իսկապես լուրջ աշխատանք պետք է իրականացնի հոգեորսության դեմ պայքարելու ուղղությամբ: Վերջին ժամանակներում Վիրահայոց թեմի անմիջական ջանքերով հրատարակվել են եկեղեցական օրացույցներ, գրքույկներ, որոնք հնարավորություն կտան վիրահայությանը տոնել եկեղեցական տոները Հայ Առաքելական եկեղեցու տոնացույցով: Բայց առայժմ վիրահայությունն ամբողջությամբ չի պատկերացնում կրոնի միջոցով ձուլման բոլոր հնարավոր հետևանքները և մեծ մասամբ դեռ շարունակում է գտնվել Վրաց Ուղղափառ եկեղեցու հոգևոր քարոզչության դաշտում:

3.Վրաստանի միաէթնիկացումը թվերով. ժողովրդագրություն[2]

Այժմ Վրաստանի պաշտոնական ժողովրդագրական տվյալների քննությամբ ներկայացնենք այդ երկրի միաէթնիկացումն արդեն թվերով: Այս գործընթացները մեծապես պայմանավորված են հռչակված պետական գաղափարախոսությամբ, տիտղոսային ազգի էթնոմոբիլիզացիոն ներուժով, նաև էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների ներսում ներհամայնքային զարգացումների որոշ տրամաբանությամբ:

Ստորև ներկայացված գրաֆիկը պատկերում է երկրի միաէթնիկացման դինամիկան:

---

[1] *Մելիքիշվիլի Նինո,* Ռեզոնանսի, թիվ 161, 21.06.2001թ., թարգմ. Վ.Սարգսյան:

[2] Մենք հիմնվում ենք պաշտոնական վիճակագրական տվյալների վրա: Միաժամանակ հաշվի առնելով այն իրողությունը, որ հաճախ ոչ վրացի անհատը կարող է պաշտոնական հարցաթերթիկներում միտումնավոր ներկայանալ որպես վրացի, չնայած իր անմիջական շրջապատին հայտնի լինի նրա իրական էթնիկ ծագումը, և դեռ երկար ժամանակ նա, երբեմն՝ կախված իրավիճակից, իրեն ինքնանույնականացնի ըստ իր էթնիկ ծագման պատկանելության: Այս իրողությունն էլ հենց փաստում է այդ անհատի աստիճանական ուծացման (վրացացման) մասին:

Գրաֆիկ 1

Վրաստանի ժողովրդագրական կազմի դինամիկան (1926-2002թթ.)[1]



4. Վրաստանի հայերը

Վերը ներկայացված գրաֆիկից պարզ երևում է հանրության և երկրի վրացացումը, այսինքն՝ վրացիների շարունակական աճը մի կողմից, իսկ մյուս կողմից՝ էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների թվի աստիճանական անկումը: Այսպես, եթե 1926թ. պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ վրացիները կազմում էին հանրապետության բնակչության 59.9%-ը, ապա 2002թ. վրացիների թիվն ավելացել էր մինչև 83.3%: Փոխարենը, եթե 1926թ., օրինակ, հայերը կազմում էին Վրաստանի բնակչության 17.6%-ը, ապա 2002թ. հայերի թիվը նվազել էր մինչև 5.7%: Այսինքն՝ վրացացմանը զուգահեռ կարող ենք արձանագրել նաև ակնհայտ հայաթափման գործընթացը (տե՛ս ստորև Թիֆլիսի հայաթափման գործընթացը պատկերող *Աղյուսակ 2-ը* և *Գրաֆիկ 3-ը*):

Աղյուսակ 2

Վրացիների և հայերի թվաքանակը Թիֆլիս քաղաքում 1803-2002թթ.[2]

	1803	1817	1864	1876	1897	1926	1939	1959	1970	1979	2002
Հայեր	74%	75,6%	47,4%	41%	29,5%	34,1%	26,4%	21,5%	16,9%	14,5%	7,6%
Վրացիներ	22,6%	18,9%	24,9%	24,1%	26,3%	38,1%	44%	48,4%	57,5%	62,1%	84,2 %

[1] Նշենք, որ 2002թ. տվյալները ներկայացված են առանց Աբխազիայի և Հարավային Օսիայի, http;//www.geostat.ge/:

[2] http;//www.ethno-kavkaz.narod.ru/rngeorgia.html, http://www.geostat.ge/, ինչպես նաև Кавказский Календарь на 1907 год, Тифлис, 1906.

Գրաֆիկ 3

Վրացիների և հայերի թվաքանակը Թիֆլիս քաղաքում 1803-2002թթ. (%-ով)[1]



Հայերի թիվը Վրաստանում նվազում է *թե՛ աստիճանական ուծացման, թե՛ դանդաղ արտագաղթի հետևանքով:* Այսպես. 2002թ. մարդահամարի տվյալներով՝ Վրաստանում ապրող հայերի (որոնց ընդհանուր թվաքանակը 248.929 է) մի մասը հայերենը չի համարում իր մայրենի լեզուն. 56.92 մարդ իր մայրենին համարում է վրացերենը, իսկ 7525-ը՝ ռուսերենը[2]: Փաստացի, այս երկու խմբերը ներկայումս բացահայտ հեռանում են Հայությունից՝ բռնելով ուծացման (վրացալեզուների դեպքում) կամ հիմնականում արտագաղթի (ռուսալեզուների դեպքում) ճանապարհը: Այս խմբերը փաստացի այլևս չեն դիմադրում ուծացմանը կամ որևէ ջանք չեն գործադրում հայկական ինքնության պահպանման համար և գիտակցաբար հեռանում են իրենց ազգային արմատներից[3]:

Հայությունից բացահայտ հեռացող խմբերից զատ, միևնույն ժամանակ բազմաթիվ են այն հայերը, հատկապես մայրաքաղաք Թբիլիսում, որոնք իրենց մայրենի լեզուն թեև համարում են հայերենը, բայց որպես հաղորդակցման լեզու լայնորեն կիրառում են ռուսերենն ու վրացերենը՝ անգամ ազգակիցների հետ հաղորդակցվելիս: Այս խմբերի ուծացման գործընթացը, թեև կարող է ավելի դանդաղ ընթանալ, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում ուծացումն անխուսափելի է դառնալու, եթե համապատասխան միջոցներ չձեռնարկվեն:

Հատկանշական է, որ արտագաղթող էթնիկ փոքրամասնություններից հայերը քանակապես առաջին տեղում են: Այսպես, 1990-1996թթ. ընթացքում Վրաստանից արտագաղթել են 230.000 հայ, 200.000 ռուս, 170.000 ադրբեջանցի, 75.000 օս, 75.000 հույն և 85.000 այլ էթնիկ խմբեր[4]: Ընդհանուր առմամբ, այդ

[1] Նույն տեղում:
[2] www.ecmi.de/emap/download/Samtskhe_Statistics.pdf
[3] Համեմատության համար նշենք, որ ադրբեջանցիների շրջանում իրենց մայրենին վրացերենը կամ ռուսերենը համարողների թիվն անհամեմատ քիչ է (համապատասխանաբար՝ 934 և 385 մարդ), տե՛ս նույն տեղում:
[4] www.ecmi.de/emap/download/Samtskhe_Statistics.pdf

տարիներին երկրից արտագաղթել է նաև 550.000 վրացի, որը կազմում է Վրաստանից արտագաղթողների 39.7%-ը: Նույն տարիներին երկրից արտագաղթեց էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների 60.3 %-ը:

Այսպիսով, երբ քննարկվում է 1990-ականներին տեղի ունեցած արտագաղթը, վրացական կողմը նշում է, որ վրացիները նույնպես բռնեցին արտագաղթի ճանապարհը, որի պատճառները երկրում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմաններն էին և պատերազմական իրավիճակը: Բայց խնդիրն այն է, որ էթնիկ փոքրամասնությունների շրջանում արձանագրված արտագաղթն առավել մեծ էր, հետևաբար, պատճառները չեն կարող սահմանափակվել միայն վերը նշված գործոններով: Էթնիկ փոքրամասնությունների արտագաղթի խթանման կարևոր և հավելյալ գործոններից էին երկրում իշխող ազգայնամոլական տրամադրություններն ու էթնոցենտրիկ միջավայրը:

Բացի այդ, պետք է նշել, որ էթնիկ փոքրամասնությունների արտագաղթի արդյունքում նշված համայնքների ներսում տեղի ունեցավ ոչ միայն քանակական, այլև զգալի որակական անկում: Հայտնի է, որ արտագաղթի ուղին բռնեցին սոցիալապես ակտիվ զանգվածները, ինչը հանգեցրեց ընդհանուր որակական անկման ամբողջ Վրաստանում (նույն գործընթացներն առկա էին նաև ՀՀ-ում և հետխորհրդային մյուս հանրապետություններում): Բայց, օրինակ, հայերի դեպքում երկրից արտագաղթած սոցիալապես ակտիվ զանգվածի զբաղեցրած սոցիալական խորշը չհամալրվեց նոր մարդկանցով, քանի որ ստեղծված էթնոցենտրիկ միջավայրում հայազգի անհատի սոցիալական աճը հանդիպեց բազմաթիվ խոչընդոտների: Եվ արդյունքում՝ համայնքը մնաց առանց ընտրանու:

Իսկ վրացիների պարագայում սոցիալական հին էլիտային փոխարինելու եկավ նորը՝ ազգությամբ վրացիները: Իրականում այս վերափոխումը գուցե որակական անկում էր նաև վրացիների համար, բայց վրացիների դեպքում ազգային դիմագիծն ու կազմը ոչ միայն պահպանվեց, այլև ուժեղացավ ի հաշիվ փոքրամասնությունների: Հետևաբար, օբյեկտիվ չեն այն փորձագետների տեսակետները, թե Վրաստանում արտագաղթից տուժել են հավասարապես բոլոր էթնիկ և կրոնական հանրույթների ներկայացուցիչները, և որ դրանց պատճառները զուտ սոցիալ-տնտեսական էին[1]:

5. Այլ էթնիկ կամ կրոնական փոքրամասնություններ

Հարկ է նշել, որ էթնիկ վրացիների թվաքանակի աճը ոչ թե ծնելիության բարձր ցուցանիշների և բնական աճի արդյունք է, այլ հիմնականում այլ էթնիկ հանրույթների ուծացման, ենթաէթնիկ խմբերի արագ վրացացման (մեգրելներ,

[1] Նման տեսակետներ հաճախ են հնչեցվում քաղաքական գործիչների, նաև փորձագետների կողմից, տե՛ս, օրինակ, *Komakhia M.,* Georgia's ethnic history and the present migration processes, Central Asia and Caucasus, 2008, 1/16, http://www.ca-c.org/online/2008/journal_eng/cac-01/16.shtml

սվաններ, իմերեթներ, գուրիացիներ և այլն)։

Օրինակ, դեռևս 20-րդ դարի սկզբներին Ռուսական կայսրության տարածքում իրականացված մարդահամարի տվյալներում [15, cc. 108-124] և այլ աղբյուրներում հանդիպում ենք այսպիսի եզր. «քարթվելական ժողովուրդներ, այդ թվում՝ վրացիներ»։ Բ.Իշխանյանն իր արժեքավոր ուսումնասիրություններում կիրառում է երկու եզր. «վրացիներ լայն իմաստով» և «վրացիներ նեղ իմաստով»։ «Վրացիներ լայն իմաստով» հասկացությունը նշանակում էր, որ այս խմբի մեջ ներառվել են, բացի բուն վրացիներից, նաև սվանները, իմերեթները, մեգրելները։ Հետագայում արդեն վրացիների կողմից այս խմբերը համարվեցին վրացական էթնոսի ենթաէթնիկ խմբեր և ներառվեցին վրացական ազգի մեջ։ Եթե հետևենք վիճակագրությանը, ապա կտեսնենք, որ այս ենթաէթնիկ խմբերին ներառելու դեպքում, վրացիների տեսակարար կշիռն ամբողջ Կովկասի բնակչության հանդեպ ավելանում էր մոտ 50%-ով։ Օրինակ, Բ.Իշխանյանի աշխատության մեջ ներկայացված է «վրացիներ նեղ իմաստով» խմբի թվաքանակը Կովկասի համայն ազգաբնակչության հանդեպ. այն կազմում է 9.29%, իսկ «վրացիներ լայն իմաստով» խմբի քանակն արդեն՝ 14.87 % է [16, էջ 148], մոտ 50%-ով ավելի։

Երկու տարբեր եզրույթների կիրառումն ինքնին արդեն նշանակում է, որ 20-րդ դ. սկզբին դեռևս մեգրելների, սվանների, իմերեթների հանդեպ առկա էր տարբերակված մոտեցում, նրանց երբեմն ներառում էին վրացիների մեջ, երբեմն էլ առանձնացնում։ Այս փաստը խոսում է վերջիններիս մեջ վրացականից առանձնացած էթնիկ ինքնագիտակցության առկայության մասին դեռևս 20-րդ դ. սկզբներին։ Այսօր արդեն այս խմբերի շրջանում վրացական ինքնագիտակցությունը սովորական երևույթ է դարձել։ Օրինակ, մեգրելների շրջանում վրացական էթնիկ ազգայնականությունը երբեմն կարող է ավելի ցայտուն արտահայտվել, քան բուն վրացիների։ Պատճառը, երևի թե, մեգրելների բարձր ներգրավվածությունն է Վրաստանի իշխող էլիտայի շրջանակներում և այն, որ բուն վրացիները մեգրելներին չեն առանձնացնում՝ համարում են ենթաէթնիկ հանրույթ, իսկ իրենց խոսակցական լեզուն, որը գրավոր չէ, այլ միայն բանավոր կենցաղային է, վրացիները համարում են վրացերեն լեզվի բարբառներից։

Փաստորեն, Վրաստանի բոլոր էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների պարագայում նկատվում են նույն միտումները՝ ժողովրդագրական անկում (տե՛ս *Գրաֆիկ 1*)։

Թեպետ խորհրդային տարիներին աբխազներն ու օսերը Վրաստանի կազմում ունեին ինքնավարություն, այնուամենայնիվ, այս երկու էթնիկ հանրույթներն էլ չխուսափեցին ժողովրդագրական անկումից։ Այսպես. 1926թ. աբխազների թիվը Վրաստանում կազմում էր 2.6%, իսկ 1989թ., այսինքն՝ մինչև վրաց-աբխազական պատերազմը, 1.8%, իսկ օսերինը նշված տարիներին հա-

մապատասխանաբար նվազել էր 5.3%-ից մինչև 3.0%:

Վրաց հետազոտող Դ.Ափրասիձեն նշում է, որ Խորհրդային Վրաստանում տարածված էթնիկ ազգայնականությունը չներառեց երկու շրջաններ միայն՝ Աբխազիան և Հարավային Օսիան [9, p. 72][1]: Զարգացնելով այս միտքը և վերաձևակերպելով խնդիրը՝ նշենք, որ, թերևս, այդ է պատճառը, որ վրացիներին չհաջողվեց այդ տարիներին վերջնական ավարտին հասցնել աբխազների և օսերի վրացացման գործընթացը: Որպես հետևանք նման քաղաքականության, Վրաստանի տարածքում ԽՍՀՄ փլուզումից հետո ծագեցին վրաց-աբխազական և վրաց-օսական միջէթնիկ հակամարտությունները: Այսինքն՝ չնայած ամբողջ Վրաստանում ընթացող վրացացման գործընթացներին, աբխազներին ու օսերին, այնուամենայնիվ, հաջողվեց պահպանել էթնիկ ինքնագիտակցությունը: Դ.Ափրասիձեն իրավացիորեն նշում է, որ այս երկու էթնիկ հանրույթներին հաջողվեց առաջադրել վրացական ազգայնական նախագծին դիմակայելուն ուղղված սեփական ազգայնական հակադարձ-նախագիծը *(counter-project)* [9]: Անշուշտ, այս փաստն աբխազների և օսերի բարձր էթնիկ ինքնագիտակցության ցուցիչն է:

Զոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր, Ադրբեջանի ազգային ակադեմիայի դոկտոր Ս.Քորնելը նշում է, որ հետխորհրդային տարածքում, մասնավորապես Հարավային Կովկասում, էթնիկ հակամարտությունների կարևոր խթանող գործոններից էր ինքնավարությունների գոյությունը, այսինքն՝ Հարավային Օսիան, Աբխազիան և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը [17, pp. 245-276]: Իրականում ինքնավարությունների առկայությունն ինքնին չէր կարող լինել հակամարտությունների պատճառ և խթան, այլ ընդհակառակը՝ ինքնավարությունների գոյությունը քիչ թե շատ հնարավորություն էր տալիս էթնիկ փոքրամասնություններին պահպանել իրենց ազգային դիմագիծը: Էթնիկ հակամարտությունների պատճառը ոչ թե ինքնավարություններն էին որպես այդպիսին, այլ վերոնշյալ տարածքների բռնակցումը Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետություններին և այդ հանրապետությունների իշխանությունների ազգային քաղաքականության հիմքում ընկած իրական փիլիսոփայությունը, որն էլ շատ հեռու էր հռչակված սկզբունքներից:

Խորհրդային տարիների համար բացառություն են կազմում ռուսները, որոնց թիվը սկսեց աճել Վրաստանի խորհրդայնացումից հետո (1.2%-ից մինչև 10.1%՝ արդեն 1959թ.), և նույնքան արագ տեմպերով նվազեց հետխորհրդային շրջանում, նվազելով մինչև 1.5%՝ 2002թ. տվյալների համաձայն (տե՛ս *Գրաֆիկ 1*): Այս փոփոխությունները, անկասկած, նույնպես բացատրվում են իշխող քաղաքական գաղափարախոսությամբ, ինչն էլ իր գնահատականն ստացավ վրացական ժամանակակից պատմագրության կողմից՝ որակվելով որպես ռու-

[1] http://identitystudies.ac.ge/1/.

սական կայսերական քաղաքականության դրսևորում [18, c. 195]։

Ադրբեջանցիների պարագայում ժողովրդագրական տվյալների քննության ժամանակ պետք է հաշվի առնել հիմնականում բարձր ծնելիության ցուցանիշը։ Բայց անգամ այդ պարագայում, 1926-ից մինչև 2002 թվականն ընկած ժամանակահատվածում, ըստ էության, ադրբեջանցիների թվաքանակը մնացել էր նույնը (համապատասխանաբար՝ 6.4% և 6.5%)։ Հաշվի առնելով ծնելիության բարձր մակարդակը, ուծացման հանդեպ բարձր իմունիտետն ու նվազ հակվածությունը դրան՝ այս ցուցանիշը, հավանաբար, կարող է փաստել միայն նրանց շրջանում տեղի ունեցած արտագաղթի մասին, հիմնականում դեպի Ադրբեջանական ԽՍՀ-ի և արդեն 1991թ. սկսած՝ դեպի ներկայիս Ադրբեջանի, նաև Թուրքիայի տարածքներ։

1989թ. սկսած՝ երկրի վրացացման կամ միաէթնիկացման տեմպերն ավելի են ուժգնանում, իսկ փոքրամասնությունների թվաքանակը նվազում է արագ տեմպերով (տե՛ս *Գրաֆիկ 1)*։

6. Ժողովրդագրական փոփոխությունների առանձնահատկությունները

Երկրի ժողովրդագրական պատկերի վրացացման երկու հիմնական ձևերը՝ աստիճանական արտագաղթն ու դանդաղ ուծացումը, որպես կանոն, զուգահեռ ընթացող գործընթացներ են։ Թեպետ նշված երկու գործընթացների նպատակներն ամբողջությամբ համընկնում են, բայց տարբեր կարող են լինել դրանց տեմպերը, ասենք, ըստ վարչատարածքային միավորների, ըստ էթնիկ փոքրամասնությունների կամ ըստ պատմական ժամանակահատվածի։

Եթե խորհրդային տարիներին առավել ակտիվ էր ընթանում էթնիկ փոքրամասնությունների աստիճանական ուծացման քաղաքականությունը, ապա հետխորհրդային Վրաստանի առաջին տարիներին՝ 1990-ականներին, առավել ուժգնացան փոքրամասնությունների արտագաղթի տեմպերը (հույները մեծ մասամբ մեկնում էին Հունաստան, հրեաները՝ Իսրայել կամ Ռուսաստան, ադրբեջանցիները՝ հիմնականում Ադրբեջան, Թուրքիա, ցավոք սրտի, հայերը՝ առավելապես մեկնում էին երրորդ երկրներ, չնայած մի մասն էլ եկավ և հաստատվեց Հայաստանում[1] և այլն)։

Ուծացումն ու արտագաղթը տարբեր թափով են ընթանում, օրինակ, հայերի շրջանում ըստ վարչատարածքային միավորների։ Եթե ներկայումս Թիֆլիսի հայ համայնքի համար առավել բնորոշ է դարձել աստիճանական ուծացումը, ապա ջավախահայության պարագայում ուծացման միտումներն ավելի

[1] Հետաքրքիրն այն է, որ Հայկական ԽՍՀ ստեղծման առաջին շրջանում և նաև հետագա տարիներին Վրաստանից հայության ներհոսքը դեպի Հայաստան առավել նկատելի էր, քան ՀՀ անկախության տարիներին։

թույլ են արտահայտված, փոխարենը՝ արտագաղթի մասին կարող ենք խոսել որպես Ջավախքի հայաթափման հիմնական պատճառ:

Իսկ ռուսների պարագայում հետաքրքիր պատկեր ենք ստանում ըստ պատմական ժամանակահատվածի. խորհրդային և հետխորհրդային տարիների: Եթե խորհրդային տարիներին նկատվում էր ռուսների մեծաքանակ ներգաղթ, ապա անկախության առաջին իսկ օրվանից արտագաղթի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվեց հենց էթնիկ ռուսների շրջանում: Ըստ անկախ հետազոտողների, 1990-1996թթ. Վրաստանում ապրող 264.000 ռուսներից (ըստ 1989թ. մարդահամարի, առանց Աբխազիայի և Հարավային Օսիայի) արտագաղթել են 200.000-ը[1], այսինքն՝ մոտ 76%-ը:

Ամփոփում

Մեր հարևան Վրաստանը թե՛ 20-րդ դարի ողջ ընթացքում և թե՛ 21-րդ դ. սկզբին իրականացնում է Ազգային նախագիծ, որի առանցքային նպատակներից է ազգային պետության ստեղծումը: Քանի որ խնդիրը դեռ չի լուծվել, այն կմնա Վրաստանի պետականակերտման տեսլականի օրակարգում: Վրաստանի վրացացմանը նպաստելու է նաև ներկայիս նախագահ Մ.Սահակաշվիլու՝ վերջերս արած հայտարարությունն այն մասին, որ իրենք պատրաստ են Վրաստան հայրենադարձվող էթնիկ վրացիներին տրամադրել բնակարաններ շուկայականից երկու անգամ ավելի ցածր գնով[2]: Իսկ մինչ այդ հայտարարվել էր, որ արտերկրում բնակվող էթնիկ վրացիների համար պարզեցնելու են երկքաղաքացիություն ստանալու ընթացակարգը:

Օգոստոսյան պատերազմից հետո Վրաստանն աստիճանական անցում է կատարում պատերազմից հետո Վրաստանին մնացած տարածքների վրա ուշադրությունը կենտրոնացնելու և փոքրամասնությունների խնդիրները չեզոքացնելու ուղղությամբ:

Դատելով վերը բերված թվերից՝ Վրաստանում միակ էթնիկ փոքրամասնությունը, որն անկման ցուցանիշ չի արձանագրել, այլ անգամ աճել է 0.1%-ով, ադրբեջանական համայնքն է: Ընդ որում, եթե Վրաստանում տարիներ շարունակ էթնիկ և կրոնական փոքրամասնությունների շարքում առաջին տեղը զբաղեցրել են հայերը, ապա այսօր առաջին տեղում են ադրբեջանցիները:

Ադրբեջանական համայնքի ուժեղացմանն այսօր մեծապես նպաստում է թուրքական կապիտալի արագ ներթափանցումը Վրաստան, ինչն ադրբեջանական համայնքին ապահովության նոր լիցքեր է հաղորդում: Ադրբեջանական և թուրքական ծագում ունեցող ընկերություններում աշխատանքի են տեղավորվում առավելապես տեղի ադրբեջանցիները: Թուրքական և ադրբեջա-

[1] How emigration affects Georgia, Publication: Prism Volume: 4 Issue: 13, 1998, by Zaal Anjaparidze, www.jamestown.org
[2] http://www.georgiatimes.info/analysis/31344-1.html

նական կապիտալի ներհոսքի արդյունքում ադրբեջանաբնակ Քվեմո-Քարթլիի շրջանից ադրբեջանցիների արտագաղթ առանձնապես չի նկատվում, ի տարբերություն, ասենք, հայաշատ Ջավախքի, որտեղից հայերի արտագաղթն այսօր մեծ չափերի է հասնում՝ նպաստելով Ջավախքի հայաթափմանը:

Վրաստանի միաէթնիկացման ճանապարհին որպես հիմնական խոչընդոտ կարող են հանդիսանալ միայն թուրք-ադրբեջանական ներկայության շարունակական աճը երկրի տնտեսական կյանքում և ադրբեջանական բնակչության բնական աճի ավանդաբար բարձր ցուցանիշները:

Մայիս, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Gellner E.,* Nations and Nationalism, Ithaca: Cornell University Press, 1983.
2. *Kohn H.,* The Idea of Nationalism. A Study in Its Origins and Background, New York, 1961.
3. *Nodia G.,* "Components of the Georgian National Idea: an Outline", – in Identity Studies, ed. G. Zedania, Tbilisi, Ilia Chavchavadze State University, N1.
4. *Zedania G.,* "National Form and the Question of Identity", – in Identity Studies, ed. G. Zedania, Tbilisi, Ilia Chavchavadze State University, N1.
5. *Գալոյան Գ.,* Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978:
6. *Муджири А.Н.,* Политические партии и национальный вопрос в Закавказье в период подготовки и проведения Октябрьской революции, Тбилиси, 1970.
7. *Chkhartishvili M.,* "On Georgian Identity and Culture", Nine International Presentations, Tbilisi, 2009.
8. "Civil population's conditions Georgia, including South Ossetia, during the conflict between Russian Federation and Georgia", Produced with assistance of the Public Movement "Multinational Georgia", European Parliament. Brussels, 2 September 2008.
9. *Aprasidze D.,* Formation of a State and a Nation in Modern Georgia: an Unfinished Project? – in Identity Studies, ed. G. Zedania, Tbilisi, Ilia Chavchavadze State University, N.1, 2009.
10. Languge myths and the discourse of nation-biulding in Georgia, - In: Nation-biulding in the post-Soviet bordelands: the politics of national identities/ Smith G… [et al.], Cambridge University Press, 1998.
11. *Abrahamian L.,* Armenian Identity in a changing world, Mazda press, 2006.
12. *Джавахишвили М.,* Что значит быть католиком в Грузии в XX веке, Идентичность, власть и город в работах молодых ученых Южного Кавказа, сб. ст., ред. Лежава Н., Тб., Фонд имени Г. Белля, 2005.
13. *Վարդանյան Թ.,* Թիֆլիսի հայ համայնքը. նոր մարտահրավերներ, հին խնդիրներ, 21-րդ ԴԱՐ, Նորավանք ԳԿՀ տեղեկատվական-վերլուծական հանդես, թիվ 4, 2006:
14. *Կարապետյան Ս.,* Ջավախք, Գիրք Թ, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2006:

15. Распределение населения Закавказского края по вероисповеданиям и родному языку по данным переписи 1897-года. Кавказский Календарь на 1907 год, Тифлис, 1906.
16. *Իշխանյան Բ.,* Կովկասյան ժողովուրդների ազգաբնակչության կազմը, պրոֆեսիոնալ խմբավորումը, Թիֆլիս, 1914:
17. *Cornell S.,* Autonomy as a source of conflict: Caucasian Conflicts in Theoretical Perspective, World Politics 54 (January 2002).
18. Освещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств, Москва, 2009.

ГРУЗИЯ: ИДЕНТИЧНОСТЬ В ПОЛИТИЧЕСКИХ ПРОЕКТАХ И В ДЕЙСТВИИ

Тамара Варданян

Резюме

В статье представлены истоки, причины, основная логика, тенденции, контуры и цели «Национального проекта» Грузии, которые по существу лежат в основе политики грузинских властей, начиная с периода первой независимой Республики Грузия (1918-1921гг.) до наших дней. Рассматриваются важные структурообразующие элементы грузинского национализма в свете современной парадигмы грузинской национальной идентичности. Автором отмечается, что намеченные тенденции этнических процессов в Грузии присущи эпохе модернизма и периоду становления национальных государств.

Исследования в области языковых, религиозных, идеологических, межэтнических, демографических процессов в Грузии показывают, что страна последовательно идет по пути моноэтнизации. В связи с присутствием этнических меньшинств политическое руководство страны на пути последовательной моноэтнизации общества сталкивается с рядом вызовов внутреннего характера, которые прежде всего открыто проявляются в противоречиях между проводимой на практике политикой по отношению к меньшинствам и провозглашенной преданностью демократическим принципам, толерантности и идее мультикультурализма.

Резюмируя приведенные факты и очерченные идеологические контуры, автор считает, что на пути дальнейшей моноэтнизации страны основным конкурентом грузинского национального проекта становится последовательное усиление турецко-азербайджанского влияния в экономической жизни страны и традиционные высокие темпы естественного демографического роста азербайджанского населения.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Լևոն Հովսեփյան[*]

ԵՄ-ին անդամակցության համատեքստում իրականացվող ռեֆորմների տեսակետից առավել զգայուն են երկրի ազգային անվտանգության, զինվորական ոլորտին վերաբերող ռեֆորմները, որոնք նպատակ ունեն սահմանափակել զինվորականների դերը հասարակական-քաղաքական տարբեր ոլորտներում և ժողովրդավարական վերահսկողություն սահմանել անվտանգության բնագավառում: Օրենսդրական և կառուցվածքային ռեֆորմների տեսակետից Թուրքիայի անվտանգության համակարգում առավել կարևոր և էական տեղաշարժեր գրանցվեցին այդ երկրի ռազմաքաղաքական ոլորտի ամենաազդեցիկ մարմնում՝ ԱԱԽ-ում: Սակայն, չնայած օրենսդրական և կառուցվածքային փոփոխություններին, թուրքական զինվորական վերնախավը դեռ պահպանում է առաջատար դիրքերը ներքաղաքական և արտաքին քաղաքական ոլորտներում:

Ներածություն

Թուրքիայում ներքաղաքական գործընթացների և երկրի՝ ԵՄ-ին անդամակցության համատեքստում իրականացվող բարեփոխումների տեսակետից չափազանց մեծ կարևորություն է տրվում երկրի անվտանգության հետ կապված և սոցիալ-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում զինվորականների դերի սահմանափակմանն ու անվտանգության ոլորտի հանդեպ ժողովրդավարական վերահսկողություն սահմանելուն նպատակաուղղված ռեֆորմներին: Այս ուղղությամբ առաջին կարևոր քայլը Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի (*Milli Güvenlik Kurulu*) բարեփոխման հետ կապված գործընթացն է:

Հայտնի է, որ թուրք զինվորականներն էական դեր են խաղացել երկրի հասարակական-քաղաքական կյանքում, ինչն իրականացվում էր գլխավորապես ԱԱԽ ակտիվ միջամտության միջոցով: Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության շրջանակներում պայման առաջադրվեց, որպեսզի ռազմական անվտանգության համակարգը համապատասխանեցվի ժողովրդավարական չափանիշներին, քանի որ երկրում արմատացած ռազմաքաղաքական փոխհարաբերությունները միանգամայն անհամարժեք էին ԵՄ իրողություն-

[*] ՀՀ նախագահի աշխատակազմի քաղաքական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ ավագ փորձագետ, թուրքագետ:

ներին: Ուստի, երկրի իշխանությունները ձեռնամուխ եղան ոլորտի օրենսդրական և կառուցվածքային փոփոխություններին: Հոդվածում անվտանգության ոլորտի բարեփոխումները հիմնականում ներկայացված են ԱԱԽ օրինակով, անդրադարձ է կատարվում նաև ԵՄ համապատասխան գնահատականներին ու Թուրքիայի զինվորական-քաղաքացիական վերջին ժամանակների հարաբերություններին և զարգացումներին:

ԵՄ-ին լիարժեք անդամակցության ճանապարհին թուրքական կառավարությունը սահմանադրական և օրենսդրական բարեփոխումների անցկացմանը նպատակաուղղված մի շարք միջոցառումներ է ձեռնարկել, որոնք վերաբերում են քաղաքական համակարգի տարբեր ոլորտներին՝ մարդու իրավունքներ, խոսքի ազատություն, ազգային փոքրամասնությունների իրավունքներ և այլն: Այս առումով առավել խնդրահարույց է երկրի անվտանգության մարմինների հանդեպ վերահսկողության սահմանման և իշխանության ու զինվորականների միջև 1960-ականներից արմատացած կոշտ քաղաքական փոխհարաբերությունների բարեփոխման գործընթացը [1]:

2003թ. հուլիսին Թուրքիայի Ազգային մեծ ժողովն (ԹԱՄԺ) ընդունեց, այսպես կոչված, «բարեփոխումների 7-րդ փաթեթը», որը ԵՄ անդամության նախապայման էր համարվում և ենթադրում էր երկրի քաղաքական կյանքում զինվորականների դերի սահմանափակում ԱԱԽ բարեփոխումների միջոցով, ինչը որոշ հեղինակների տեղի ունեցածը «թավշյա հեղափոխություն» բնութագրելու առիթ տվեց: Որոշ վերլուծաբաններ էլ դա գնահատեցին որպես իշխող Արդարություն և զարգացում կուսակցության ոչ մեծ հաղթանակ զինվորականների դեմ մղվող պայքարում [տե՛ս, օրինակ, 2]:

Ակնհայտ է, որ ԱԱԽ-ի միջոցով ազդեցության հատուկ լծակներ ունեցող զինվորականների դերը չէր համապատասխանում «ժողովրդավարություն երաշխավորող կառույցների կայունության» և «օրենքի գերակայության» Կոպենհագենյան չափանիշներին [3, p. 12]: Դրա համար էլ ռազմական անվտանգության ոլորտում իրականացվող ռեֆորմներն առաջադրվեցին որպես առաջնահերթ նախապայման ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ճանապարհին:

1. ԱԱԽ դերը հանրապետական Թուրքիայում մինչև բարեփոխումների իրականացումը

ԱԱԽ նախատիպ կարելի է դիտարկել 1933թ. ապրիլին հիմնված Պաշտպանության բարձրագույն խորհուրդը, որը ենթադրում էր խորհրդակցություններ անցկացնել պաշտպանական ոլորտի խնդիրների առնչությամբ, նախագահի կամ վարչապետի գլխավորությամբ, ԶՈՒ Գլխավոր շտաբի պետի և նախարարների խորհրդի անդամների մասնակցությամբ [4, s. 32]:

Այս կառույցին 1949թ. փոխարինեց Ազգային պաշտպանության բարձրա-

գույն խորհուրդը, որին տրվեցին ազգային պաշտպանության ոլորտում և դրա հետ կապված տարբեր ճյուղերում որոշումներ կայացնելու և իրականացնելու լիազորություններ: Կառույցի պարտականությունների մեջ, մասնավորապես, մտնում էին. ազգային պաշտպանական քաղաքականության մշակումը, դրա դրույթների իրականացման գործընթացի վերահսկողությունը, ազգային համընդհանուր մոբիլիզացիայի պլանի կազմակերպումն ու, անհրաժեշտության դեպքում, իրականացումը, նախարարների խորհրդին ազգային պաշտպանության վերաբերյալ տեսակետներ ներկայացնելը[1]:

Այն բանից հետո, երբ 1960թ. զինվորական վերնախավը հեղաշրջման միջոցով զավթեց իշխանությունը, որպես հաջորդող քայլ, արդեն օրինական հիմքերի վրա, ստեղծվեց սահմանադրորեն ամրապնդված արդի ԱԱԽ-ն, որի միջոցով հետագայում սկսեց զարգանալ զինվորականների իշխանությունը երկրում [5, c. 181]: Սա էլ դարձավ այն գործուն մեխանիզմը, որի շնորհիվ զինվորական վերնախավը և, հատկապես, ԶՈՒ Գլխավոր շտաբի պետը, «ամրագրեցին իրենց առաջնահերթ և անվիճելի դերը» քաղաքական համակարգում: 1961թ. ընդունված Սահմանադրությունը դրեց, այսպես կոչված, երկգլուխ քաղաքական համակարգի հիմքերը՝ Նախարարների խորհրդի (որը գործում էր ԱԱԽ-ի կողքին) և զինվորական արդարադատության տեսքով (որն անկախ էր և գործում էր քաղաքացիական արդարադատության հետ կողք կողքի), ինչը մշտապես վնասում էր երկրի քաղաքական կառավարմանը [3, c. 7]:

1960թ. իրադարձություններից հետո զինվորականների դերը՝ որպես երկրի անսխալական և անվտանգ պահապանների, արմատավորվեց ինչպես քաղաքական ավանդույթում, այնպես էլ հանրային ընկալման համատեքստում: Եվ որպես այս դերի հիմնավորում զինվորական վերնախավն անվստահություն հայտնեց քաղաքական իշխանությանը՝ ելնելով վերջինիս՝ երկրի առջև ծագող խնդիրները լուծելու և անվտանգության սպառնալիքներին դիմակայելու անկարողությունից, ինչը հետագայում, ԱԱԽ ակտիվ մասնակցությամբ և կայացրած որոշումներով, հանգեցրեց մի շարք հեղաշրջումների և իշխանափոխությունների [6, p. 79]: Երկրի քաղաքական գործընթացներում զինվորականների, այդ թվում և ԱԱԽ-ի, դերի պահպանման և հզորացման կողմնակիցները վերջիններին դիտարկում էին որպես «քաղաքական չափավորության ամրոց և քաղաքական կայունության ամուր ձեռք» [1]:

1961թ. Սահմանադրությունը, փաստորեն, ամրագրեց ԱԱԽ ստեղծումը. 1962թ. ապրիլին ընդունված օրենքը (111-րդ հոդվածով) խորհրդի ստեղծման իրավական հիմքը դրեց: Նորաստեղծ խորհրդի գլխավոր պարտականությունն այն էր, որ նախարարների խորհուրդ ներկայացնի երկրի անվտանգության հետ կապված որոշումների ընդունման և դրանց համակարգման հարցերի

[1] Տե՛ս ԱԱԽ պաշտոնական կայքը, http://www.mgk.gov.tr/Turkce/tarihke_2.html

վերաբերյալ հիմնական տեսակետները [1]:

1971թ. սեպտեմբերի սահմանադրական փոփոխությունների համապատասխան՝ անվտանգության խորհրդում ուժային գերատեսչությունների՝ անդամի կարգավիճակով մասնակցող ներկայացուցիչներին գումարվեցին նաև տարբեր զորատեսակների ներկայացուցիչներ, իսկ խորհրդի կողմից կառավարությանը ներկայացվող որոշումները ստացան «հարկադիր խորհրդակցական» բնույթ, ինչն էլ ավելի ուժեղացրեց ողջ ԱԱԽ-ն [4, s. 32]: Բացի այդ, ինչպես նշել է դանիացի հետազոտող Բերթիլ Կնուդսենը, իշխանափոխության հետ կապված 1971թ. իրադարձություններն էլ հենց ԱԱԽ-ին էլ ավելի մեծ ուժ տվեցին, որն օգտագործվում էր որպես «թուրքական քաղաքականության հանդեպ կոշտ վերահսկողության միջոց» [3, c. 8]:

ԱԱԽ լիազորությունների ընդլայնումը և կառուցվածքային փոփոխություններն ավելի նշանակալի դարձան 1980թ. սեպտեմբերյան զինվորական հեղաշրջումից հետո, երբ, փաստորեն, այդ մարմինն ամբողջովին իր ձեռքը վերցրեց երկրի կառավարումը: Իշխանությունը քաղաքական գործիչներին հանձնելուց առաջ զինվորականներն օրենսդրական և սահմանադրական փոփոխություններ նախաձեռնեցին: Թուրքիայի նոր Սահմանադրության (1982թ.) 118-րդ հոդվածի համապատասխան՝ ընդունվեց նոր օրենք ԱԱԽ-ի մասին, ըստ որի՝ այդ կառույցը վերակառուցվեց՝ ստանալով էլ ավելի մեծ լիազորություններ: Նախ՝ խորհրդում ավելացվեց ուժային կառույցների ներկայացուցիչ զինվորականների թիվը, ինչը, բնականաբար, ընդլայնեց զինվորականների ազդեցությունը և նրանց վերահսկողությունն ընդունվող որոշումների գործընթացի վրա: 1983թ. ընդունված օրենքը ԱԱԽ-ի մասին դրույթ էր նախատեսում այն մասին, որ նախարարների խորհրդի օրակարգում «առաջնահերթ ուշադրություն» դարձվի» ԱԱԽ որոշումներին, ինչը հետագայում վերածվեց անվերապահ կատարման ենթակա ավանդույթի[1]: Այդ օրենքի համաձայն՝ ստեղծվեց ԶՈՒ Գլխավոր շտաբի պետի վերահսկողության ներքո գտնվող և մեծաթիվ անձնակազմ ու լայն լիազորություններ ունեցող քարտուղարություն [4, s. 33]:

Այսպիսով, անվտանգության և ազգային պաշտպանության ապահովման նպատակով ստեղծված ԱԱԽ-ն, լայն իրավասություններ ունենալով, ժամանակի ընթացքում վերածվեց քաղաքական վարչակազմի և ընդհանրապես պետական-քաղաքական գործընթացների նկատմամբ զինվորական վերահսկողության բարձրագույն մարմնի:

[1] Տե՛ս ԱԱԽ պաշտոնական կայքը, http://www.mgk.gov.tr

2. ԱԱԽ օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները Թուրքիայի եվրաինտեգրման քաղաքականության համատեքստում

Թուրքական կառավարությունը՝ Արդարություն և զարգացում կուսակցության գլխավորությամբ, որը 2002թ. նոյեմբերին խորհրդարանական ընտրություններից հետո մեծամասնություն է կազմում ԹԱՄԺ-ում, սկսեց զինվորականների և քաղաքական շրջանակների, ինչպես նաև անվտանգության մարմինների միջև հարաբերությունները ԵՄ չափորոշիչներին մոտեցնելու գործընթացը: Անվտանգության ոլորտի ժողովրդայնացումը ենթադրում է զինվորականների դերի սահմանափակում երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Հենց այս պատճառով էլ Թուրքիայում անվստահություն կար այդ բարեփոխումների առնչությամբ, և երբեմն թվում էր, թե դրանք անհնար են: Բարեփոխումների գործընթացը դժվարիրականանալի էին համարում, քանի որ այն նախաձեռնել էր իսլամական արմատներ ունեցող և զինվորական վերնախավի վստահությունը չվայելող ԱԶԿ-ն [3, c. 12]: Սակայն հարկ է նշել, որ կառավարությունը և հատկապես իշխող կուսակցությունը չէին կարող սկսել բարեփոխումների գործընթացն առանց զինվորական վերնախավի համաձայնության: Ճիշտ է թուրք վերլուծաբան Էրսել Այդընլընն, որն իր հոդվածում հավաստիացնում է, որ Անկարան բարեփոխումներ չէր անցկացնի առանց զինվորական շրջանակների համաձայնության և աջակցության, քանի որ հենց նրանք են Թուրքիայի անդամությունը ԵՄ-ին համարում երկրի վերջնական «մոդեռնիզացիա» [7]: Մեկ այլ թուրք վերլուծաբան՝ Սոներ Չաղափթայը, որպես ապացույց այն բանի, որ իշխանությունները և զինվորականները համաձայնության են եկել այս հարցում, վկայակոչում է ԱԱԽ գլխավոր քարտուղարի պաշտոնին բարձրաստիճան զինվորականի նշանակումը (մեկ տարի ժամկետով), թեև արդեն գործում է նոր, բարեփոխված կարգը, համաձայն որի՝ այդ պաշտոնը պետք է զբաղեցնի քաղաքացիական անձ [8]: Այս առումով միանգամայն բնութագրական են Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ ԵՄ ներկայացրած փաստարկները, թե, իբր, թուրքական պետության արդիականացման գործընթացն առաջ են մղում հենց զինվորականները[1]: Էրդողանի այդ հայտարարությունն առաջին հերթին նպատակ էր հետապնդում հանգստացնել բարձրագույն սպայակազմին, քանի որ առանց այդ էլ իր գլխավորած կառավարությունը վստահություն չէր ներշնչում զինվորականությանը: Բացի այդ, չնայած հակասական է հնչում, բայց երկրի բարձրագույն զինվորականությունը, քեմալիզմի գաղափարախոսության երաշխավորն ու պահապանը հանդիսանալով, հանրապետական Թուրքիայի աշխարհիկ կարգի պահ-

[1] Erdogan: “The TSK is Leading Turkey’s Modernization Process”, http://www.hri.org/news/turkey/trkpr/2003/03-06-06.trkpr.html#07

պանման, քաղաքական արդիականացման ու արևմտականացման ուղեգիծը վերագրում է իրեն:

Անվտանգության թուրքական համակարգի ժողովրդայնացման կարևոր ազդանշան հանդիսացավ Հելսինկյան գագաթաժողովը[1], որին հաջորդեցին ոլորտի որոշակի բարեփոխումներ: Առաջին հիմնական փոփոխությունները վերաբերում էին Սահմանադրության 118-րդ հոդվածին: Դրանց համապատասխան՝ Ազգային անվտանգության խորհուրդը դարձավ խորհրդատվական մարմին: 2001թ. հոկտեմբերին մտցված այդ փոփոխություններից հետո խորհրդի անդամների մեծ մասը ոչ թե զինվորական շրջանակների, այլ կառավարության ներկայացուցիչներն էին կազմում: Խորհրդի առաջարկած որոշումները կրելու էին խորհրդատվական բնույթ և նախարարների խորհրդում «առաջնահերթ քննարկում» չէին ենթադրելու, ինչպես նախկինում էր [10, s. 78]: Եվ այնուամենայնիվ, խորհրդի կառուցվածքային և կադրային առանձնահատկությունը, նրա գործունեության կարգը, պարտականությունների և իրավասությունների շրջանակը չէին համապատասխանում ԵՄ առաջադրած չափանիշներին, և այդ բացը լրացնելու համար թուրքական խորհրդարանը 2003թ. ընդունեց «բարեփոխումների 7-րդ փաթեթը»[2]: Այս փաստաթուղթն էական նշանակություն ունեցավ խորհրդի պարտականությունների և իրավասությունների սահմանափակման, ինչպես նաև կառուցվածքային-կազմակերպական վերափոխումների իրականացման առումով:

Առաջին քայլը դարձան 2003թ. օգոստոսին Ազգային անվտանգության խորհրդի և գլխավոր քարտուղարության մասին օրենքում մտցված փոփոխությունները՝ դրանք երկրի Հիմնական օրենքին համապատասխանեցնելու նպատակով: Այդ փոփոխությունները զգալի չափով նեղացրին ԱԱԽ իրավասությունների շրջանակը և նվազեցրին նրա ազդեցության աստիճանը: Բարեփոխված օրենքի համաձայն՝ ԱԱԽ գլխավոր քարտուղարին նշանակում է վարչապետը, ինչն իր հերթին ենթադրում է այդ պաշտոնին քաղաքացիական անձի նշանակում: Այսուհետ խորհրդի նիստերը գումարվում են երկու ամիսը

[1] 1999թ. դեկտեմբերին Եվրամիության երկրների նախագահների և վարչապետերի գագաթաժողովում ընդունվեց ԵՄ ընդլայնման մասին որոշումը: Թուրքիան պաշտոնապես ստացավ ԵՄ անդամակցության թեկնածու երկրի կարգավիճակ և պարտավորություններ ստանձնեց ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնել հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում: Մանրամասն տե՛ս [9, pp. 15-63]:

[2] «Բարեփոխումների 7-րդ փաթեթը» ԵՄ չափանիշներին համապատասխան օրենսդրական փոփոխությունների համալիր ծրագիր էր, որն ուժի մեջ մտավ 2003թ. օգոստոսի 7-ին՝ նախագահի կողմից վավերացվելուց հետո: Այդ փաթեթը նախատեսում էր մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք ընդլայնելու էին խոսքի, կրոնի ու տարբեր միությունների ազատության շրջանակները, մշակութային իրավունքները, բարեփոխելու էին ռազմական դատարանների, ինչպես նաև բանակ-քաղաքականություն հարաբերությունների օրենսդրական դաշտը՝ ռազմական ծախսերի նկատմամբ վերահսկողության սահմանման ու ԱԱԽ-ի մասին օրենքների բարեփոխումների միջոցով: Տե՛ս 7. UYUM YASALARI..., http://www.belgenet.com/yasa/k4963.html; 7. Uyum Paketi TBMM'den geçti, *Radikal,* 30.07.2003.

մեկ անգամ, մինչ այդ դա կատարվում էր ամիսը մեկ [4, s. 33-34]: Օրենքում կատարված փոփոխություններով վերանայվեց և ավելի հակիրճ վերախմբագրվեց խորհրդի լիազորությունների շրջանակը: Ըստ օրենքի 4-րդ հոդվածի՝ «ԱԱԽ-ն երկրի ազգային անվտանգության սահմանման ու պետության անվտանգության քաղաքականության շրջանակում ընդունում է խորհրդատվական որոշումներ պետության ազգային անվտանգության քաղաքականության սահմանման, հաստատման ու իրականացման խնդիրների հետ կապված, իրականացման ոլորտում ապահովում է անհրաժեշտ համակարգումը, կառավարությանն է ներկայացնում խորհրդատվական որոշումներն ու տեսակետները, իրականացնում օրենքով վերապահված գործառույթներ»[1]:

ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործում առաջընթացի վերաբերյալ 2003թ. զեկույցում ընդգծվում էր, որ իրականացվող բարեփոխումներով արմատական փոփոխություններ են մտցվում ԱԱԽ իրավասություններում, պարտավորություններում և գործունեության կազմակերպման մեջ: Մասնավորապես, ԱԱԽ-ի մասին օրենքի փոփոխությունները նեղացնում են խորհրդի գլխավոր քարտուղարի գործադիր և վերահսկողական գործառույթները: Այսպես, նա այլևս չի կարող նախագահի կամ վարչապետի անունից իրականացնել խորհրդի որոշումների և կարգադրությունների կատարման վերահսկողությունը[2]: Գլխավոր քարտուղարի իրավասությունների սահմանափակման առումով կարևոր քայլ էր քարտուղարության պարտականությունների և աշխատանքի սկզբունքների «գաղտնի կարգի» վերացումը: Այդ կարգը նախկինում թույլ էր տալիս ԱԱԽ գլխավոր քարտուղարությանը գործել որպես «ինքնավար գործադիր իշխանություն»: Կառավարության ընդունած նոր կարգին համապատասխան նեղացվեցին քարտուղարության իրավասությունների շրջանակները, խստացվեց կապը շտաբի հետ: Բացի այդ, վերացվեցին միջնորդական գործառույթներ իրականացնող մի շարք ստորաբաժանումներ, դրանց թիվը, նախկին 11-ի փոխարեն, հասցվեց 6-ի: Դրանց շարքում էր նաև հասարակայնության հետ կապերի նախագահությունը, որը պատասխանատու էր տեղեկատվական-հոգեբանական բնույթի գործողությունների անցկացման համար [4, s. 34]:

Բարեփոխումները նվազեցրին նաև ԱԱԽ ազդեցությունը հասարակական-քաղաքական տարբեր կառույցների վրա, սահմանափակեցին դրանց գործերին նրա մասնակցության հնարավորությունը: Լուծարվեցին խորհրդի

[1] Տե՛ս *MGK ve MGK Genel Sekreterliği Kanunu*, http://www.mgk.gov.tr/Turkce/kanun.html. Մինչև օրենքի փոփոխությունները, ԱԱԽ գլխավոր քարտուղարության լիազորությունների շրջանակը բավական մեծ էր և առնչվում էր երկրի քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներին, ինչը հնարավորություն էր տալիս միջամտել քաղաքական կյանքին:

[2] Տե՛ս 2003 regular report on Turkey,s progress toward EU accession, http://www.ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/2003/rr_tk_final_en.pdf

ներկայացուցչությունները կինո-, տեսա- և երաժշտական արտադրանքի վերահսկողության վարչությունում, թեև ԱԱԽ-ն ներկայացված էր Հեռուստառադիոհեռարձակման բարձրագույն վարչությունում և Կրթության բարձրագույն հանձնաժողովում[1]: 2004թ., Եվրահանձնաժողովի սուր քննադատությունից հետո, խորհրդի՝ այս հաստատությունների ներկայացուցիչները հետ կանչվեցին [3, c. 13]:

2004թ. ԱԱԽ գլխավոր քարտուղարի պաշտոնին քաղաքացիական անձի նշանակումն էական առաջընթաց էր ժողովրդավարական չափանիշների հաստատման գործում, զինվորական շրջանակների հետ ԱԱԽ և ընդհանրապես քաղաքական ոլորտի փոխհարաբերություններում[2]: Նախագահը վարչապետի ներկայացրած թեկնածուների ցուցակից հաստատում է խորհրդի գլխավոր քարտուղարին, ընդ որում՝ նախարարների կաբինետի ղեկավարը կարող է ներկայացնել միայն քաղաքացիական անձանց թեկնածություններ: Դա թույլ է տալիս իրականացնել քարտուղարության և Անվտանգության ազգային խորհրդի գործունեության քաղաքացիական վերահսկողություն [1]: Բացի այդ, զգալիորեն կրճատվեց քարտուղարությունում աշխատող զինվորականների թիվը (294 աշխատակցից զինվորական են միայն 15-ը)[3]: Նախկինում գլխավոր քարտուղարության՝ որպես զինվորական մարմնի, մշտական ապարատը բաղկացած էր 350 գործող և պաշտոնաթող զինվորականներից, ղեկավարում էր ԶՈւ Գլխավոր շտաբի կողմից նշանակվող զինվորական պաշտոնյան: ԱԱԽ «ապառազմականացման» և ժողովրդավարացման ճանապարհին կարևոր քայլ էր դիվանագետների նշանակումը գլխավոր քարտուղարի երկու գլխավոր խորհրդականների պաշտոնին, ինչպես նաև այն փաստը, որ 2005թ. չերկարացվեցին քարտուղարության 20 զինվորական աշխատակիցների պայմանագրերը, որոնց իրավասությունների ժամկետն այդ ժամանակ արդեն լրացել էր [4, s. 43]:

Ներկայումս Թուրքիայի ԱԱԽ-ն կարող է այս կամ այն միջոցառումն ընդունել միայն վարչապետի նախաձեռնությամբ: Նա է համակարգելու խորհրդի աշխատանքը և լուծելու ԱԱԽ և դատական համակարգի առաջադրած խնդիրները: Բացի այդ, վարչապետի օգնականն իրավունք է ստանում հետևել խորհրդի որոշումների իրականացմանը [2]: ԱԱԽ-ի և գլխավոր քարտուղարության մասին օրենքի 4-րդ հոդվածում 2003թ. օգոստոսին մտցված փոփոխություններին համապատասխան՝ վարչապետը կարող է հանձնարարել իր օգնականին նախարարների կաբինետ ներկայացնել ԱԱԽ խորհրդատվական որոշումներն ու կարծիքը, ինչպես նաև կառավարության անունից համակարգել աշխատանքը և հետևել կաբինետի հավանությանն արժանացած

[1] Տե՛ս 2003 regular report on Turkey,s progress toward EU accession
[2] Տե՛ս Turkey puts civilian over its National Security Council, reduce role, www.worldtribune.com, Dec. 3, 2004
[3] Նույն տեղում:

որոշումների կատարման ընթացքին[1]: Այսպիսով, գործադիր իշխանության գործառույթներ իրականացնող մարմինը, որում գերակշռում էին զինվորականները, դարձավ խորհրդատվական բնույթի կառույց, որը կոչված է խորհրդատվական որոշումներով օգնելու նախարարների կաբինետին և վարչապետի աշխատակազմին: Ինչպես մամուլի ասուլիսում հայտարարել է կադրային դիվանագետ, ԱԱԽ գլխավոր քարտուղարի պաշտոնն ընդունած առաջին քաղաքացիական անձը՝ Յիղիթ Ալփոհանը, «իրավասությունների փոխանցումն արդեն կատարված է, և այսօր խորհուրդը ոչ թե գործադիր, այլ խորհրդատվական մարմին է»: Ըստ նրա՝ Թուրքիայում արդեն որոշված է զինվորական և քաղաքացիական իշխանության կարգավիճակը, ինչը վկայում է այն մասին, որ երկիրը շարժվում է ԵՄ չափանիշներին համապատասխանելու ուղղությամբ, և եթե բարեփոխումները չլինեին, չէր լինի նաև առաջընթաց եվրոպական այդ կազմակերպությանն անդամակցելու ճանապարհին[2]:

Բարեփոխումների ֆոնին առավել ակնհայտ դարձավ քաղաքական իշխանության և հատկապես կառավարության մասնակցությունը Թուրքիայի ազգային անվտանգության հայեցակարգի (*Milli Güvenlik Siyaset Belgesi*) մշակման և հաստատման՝ 2005թ. հոկտեմբերի 24-ին սկսված գործընթացին: Կառավարությունը՝ իշխող Արդարություն և զարգացում կուսակցության գլխավորությամբ, հստակորեն ընդգծում էր իր առավելությունը գաղտնի փաստաթղթի մշակման գործում՝ դրանով իսկ հասկացնելով, որ վճռական խոսքը պետք է պատկանի քաղաքական իշխանությանը: Սա նույնպես համապատասխանում է ԵՄ՝ երկրի քաղաքական կյանքին զինվորական շրջանակների դերի սահմանափակման պահանջներին [11]: Մինչ այդ անվտանգության հայեցակարգի մշակումը և հաստատումը զինվորական վերնախավի արտոնությունն էր՝ ԱԱԽ գլխավորությամբ:

Եվրամիությունը դրական գնահատական է տվել այս բարեփոխումներին, սակայն ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում առաջընթացի վերաբերյալ 2004թ., ինչպես և նախորդ զեկույցում ընդգծվում էր, որ «զինվորականները, նախկինի պես, ազդեցություն են գործում զանազան ոչ պաշտոնական մեխանիզմների օգնությամբ. իրենց հրապարակային հայտարարություններում և ելույթներում, ինչպես նաև ԶԼՄ միջոցով ԱԱԽ անդամ զինվորականները հայտնում են իրենց տեսակետը սոցիալ-քաղաքական և արտաքին քաղաքական խնդիրների վերաբերյալ»[3]:

Միևնույն ժամանակ, 2004թ. զեկույցում նշվում էր, որ, օրենսդրական և

[1] Տե՛ս Թուրքիայի ԱԱԽ և գլխավոր քարտուղարության մասին օրենքը, http://www.mgk.gov.tr
[2] Տե՛ս Turkey puts civilian over its National Security Council:
[3] Տե՛ս 2003 regular report on Turkey,s progress toward EU accession, 2004 regular report on Turkey,s progress toward EU accession; Commission of the European Communities Brussels, 06.10.2004, p. 23, http://www.foreigntrade.gov.tr

կառուցվածքային բարեփոխումներին զուգահեռ, քաղաքական իշխանությունը պետք է գործնականում կատարի վերահսկողական գործառույթներ, հատկապես ազգային անվտանգության ռազմավարության ձևավորման և իրականացման, մասնավորապես՝ հարևան երկրների հետ հարաբերությունների, ինչպես նաև զինվորական բյուջեն վերահսկելու հարցերում[1]:

Եվրահանձնաժողովի 2008թ. զեկույցում Թուրքիան լուրջ քննադատության է ենթարկվել անվտանգության ոլորտի բարեփոխումների անբավարար որակի պատճառով: Անվտանգության ոլորտի հանդեպ քաղաքացիական վերահսկողության հաստատման հարցը դեռ բաց է մնում: Թուրքիայի զինված ուժերը նախկինի պես զգալի դեր են խաղում քաղաքական գործընթացներում՝ կիրառելով ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական մեխանիզմներ: Բարձրաստիճան զինվորականները բացահայտ ներկայացնում են իրենց դիրքորոշումը ներքին և արտաքին քաղաքականության, ինչպես նաև կյանքի աշխարհիկ դրվածքի, քաղաքական կուսակցությունների և այլ հարցերի վերաբերյալ, որոնք նրանց իրավասության տակ չեն գտնվում[2]:

Առայժմ անհրաժեշտ փոփոխություններ չեն կատարվել բանակի և Ազգային անվտանգության խորհրդի մասին օրենքներում, դրանք պետք է կատարվեն եվրոպական չափորոշիչների համապատասխան: Գործող օրենքները զինված ուժերի ներկայացուցիչներին հնարավորություն են տալիս տարբեր մանևրների ճանապարհով լայն լիազորություններ ստանալ ազգային անվտանգության հարցերում: Ոչ մի առաջխաղացում չկա ժանդարմերիայի վրա քաղաքացիական վերահսկողություն սահմանելու առումով:

Առաջխաղացում չկա նաև զինվորական բյուջեի հանդեպ խորհրդարանական վերահսկողության ուժեղացման հարցում: Մեջլիսի համապատասխան հանձնաժողովը դիտարկում է միայն պաշտպանության նախարարության բյուջեն, այնինչ կան արտաբյուջետային կառույցներ, որոնք վերահսկողությունից դուրս են մնում: Խոսքը Ռազմական արդյունաբերության աջակցության հիմնադրամի մասին է, որի օգնությամբ էլ ստացվում է ռազմատեխնիկական միջոցների հիմնական մասը[3]:

Հատկապես անհանգստացնող են թուրքական սպայակույտի՝ մամուլի և քաղաքացիական հասարակության ինստիտուտների հանդեպ վերահսկողություն սահմանելու փորձերը: Անցած տարվա հունիսին թուրքական *Taraf* թերթում հրապարակվեց Թուրքիայի ԶՈՒ գլխավոր շտաբի գաղտնի պլանի մասին նյութը: Հրապարակումը տեղեկացնում էր, որ մշակվել էր երկրի քաղաքական և հասարակական կյանքում զինվորական շրջանակների նախաձեռնությունը-

[1] Տե՛ս 2004 regular report on Turkey,s progress toward EU accession, p. 23.
[2] Տե՛ս Turkey 2008 Progress Report,
http://*ec.europa.eu/enlargement/pdf/press_corner/key-documents/reports_nov_2008/turkey_progress_report_en.pdf*
[3] Նույն տեղում:

ներին վերաբերող գործողությունների պլան: Փաստաթղթի նպատակը համապատասխան հանրային կարծիքի ձևավորումն էր մի շարք հարցերի շուրջ, որոնց հանդեպ թուրքական սպայակույտը խիստ «զգայուն» էր: Ինչպես հավաստիացնում են որոշ աղբյուրներ, թուրքական Գլխավոր շտաբը նույնիսկ «սև ցուցակ» էր կազմել, որտեղ հայտնվել էին երկրում հայտնի մարդիկ, այդ թվում և ներկայիս նախագահ Ա.Գյուլը, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կազմակերպությունները: Նրանց մեղադրում էին «ԱՄՆ և ԵՄ տարբեր հիմնադրամներից (որոնք ցանկանում են մասնատել Թուրքիան) ֆինանսական միջոցներ ստանալու և երկրի ներսում նրանց պլաններն իրականացնելու մեջ»: Ի դեպ, վերջին տարիներին Թուրքիայի հասարակական-քաղաքական, գիտական և զինվորական որոշ շրջանակներում ակտիվացել են արտաքին ուժերի՝ թուրքական պետությունը մասնատելու մտադրության մասին խոսակցությունները: Այս համատեքստում հատկանշական էին 2007թ. Թուրքիայի ԶՈՒ գլխավոր շտաբի նախկին պետ (1990-1994թթ.) Դ.Գյուրեշի խոսքերը, թե «Թուրքիայի համար առկա է մասնատման վտանգը, ինչը ցանկանում են թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Եվրամիությունը: Նրանց նպատակը Թուրքիայի փոքրացումն է»[1]: 2006թ. ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնն ստանձնելու կապակցությամբ ունեցած ելույթում նորանշանակ Յ.Բյուրքանըթը, անդրադառնալով Թուրքիայի համար առկա մարտահրավերներին ու հիմնախնդիրներին, նշել էր, որ «աշխարհում չկա և չի էլ կարող լինել այնպիսի ուժ, որը Թուրքիային կանգնեցնի մի նոր Սևրի առաջ»[2]: Գրեթե նմանատիպ արտահայտություններ էլ հնչեցվել էին 2007թ. փետրվարին Վաշինգտոն կատարած նրա այցի ընթացքում: Այս երևույթը կարելի է անվանել «Սևրաֆոբիա» կամ «մասնատման սինդրոմ»[3]: Թուրքական ընկալմամբ՝ դա ինչ-ոչ հաղթաթուղթ է, որն արտաքին ուժերն օգտագործում են այն նպատակով, որ հասնեն ամեն տեսակ զիջումների Թուրքիայի կողմից: Այլ խոսքերով՝ Թուրքիան «համատարած» վախենում է տարածքներ կորցնելուց, դրա համար էլ, դիմակայելով արտաքին սպառնալիքներին և մարտահրավերներին, այդ նույն ընթացքում լուծում է նաև ներքաղաքական խնդիրներ:

2009թ. հոկտեմբերին Եվրահանձնաժողովը հրապարակեց հերթական զեկույցը, որը նույնպես անդրադառնում էր Թուրքիայի անվտանգության ոլորտում առկա հիմնախնդիրներին և հետագա բարեփոխումների անհրաժեշտությանը: Զեկույցի համաձայն՝ թուրքական ԶՈՒ բարձրագույն հրամանատա-

[1] Güreş: Hakkari bir gün Barzani´nin olursa, http://www.haber7.com, 04.11.2007; ABD-AB, Türkiye'nin bölünmesini istiyor, Milliyet, 04.11.2007.

[2] Büyükanıt görevi devraldı, *Sabah,* 28.08.2006.

[3] Եզրույթն առաջացել է Առաջին աշխարհամարտի դաշնակից պետությունների և Օսմանյան Թուրքիայի միջև 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագրից, ըստ որի՝ Թուրքիան կորցնում էր Արևմտյան Հայաստանի պատմական տարածքների նկատմամբ վերահսկողությունն ու ճանաչում ՀՀ-ին դրանց պատկանելու իրավունքը:

րությունը շարունակում է տարբեր պատրվակներով միջամտել երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Այս ամենից զատ, զեկույցում նշվում էր, որ ՁՈՒ և ԱԱԽ ներծառայողական ոլորտին վերաբերող օրենքներում այդպես էլ լիարժեք բարեփոխումներ չեն իրականացվել, ինչը մաններելու հնարավորություն է տալիս ՁՈՒ ղեկավարությանը: Առաջընթաց չի գրանցվել նաև անվտանգության ուժերի, ինչպես նաև ռազմական ծախսերի ու պաշտպանության բյուջեի թափանցիկության հանդեպ քաղաքացիական վերահսկողություն սահմանելու հարցում[1]:

Թուրքիայի անվտանգության ոլորտի բարեփոխումների ու քաղաքացիական վերահսկողության հաստատման ջանքերի շրջանակում իրականացվում են փոփոխություններ, որոնք վերաբերում են անվտանգության տարբեր ոլորտներին: 2010թ. սկզբներին Թուրքիայի նախագահ Ա.Գյուլն ու վարչապետ Ռ.Թ. Էրդողանը հայտարարեցին անվտանգության ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հաստատման անհրաժեշտության մասին՝ նշելով, որ «Անվտանգության ու հասարակական կարգի ոլորտում համագործակցության մասին» արձանագրությունը (*EMASYA*) հնարավորություն է տալիս ՁՈՒ-ին ճգնաժամային իրավիճակներում միջամտել հասարակական-քաղաքական կյանքին: Հայտարարությունից ընդամենը մի քանի օր հետո՝ փետրվարի 4-ին արդեն այդ արձանագրությունը չեղյալ հայտարարվեց[2]: Դրա վերացման հետ կապված՝ Թուրքիայի բարձրագույն ղեկավարությունը նախաձեռնությամբ հանդես եկավ այն բանից հետո, երբ թուրքական *Taraf* թերթը հունվարին հրապարակեց մանրամասներ 2003թ. ծրագրված ռազմական հեղաշրջման պլանի *(Balyoz)* մասին[3]: *EMASYA* արձանագրության չեղյալ հայտարարումից որոշ ժամանակ անց թուրքական մամուլում աղմկահարույց հրապարակում հայտնվեց, թե թուրքական բոլոր հրամանատարություններին ու զորամիավորումներին է ուղարկվել գաղտնի մի հրահանգ, որում հայտնվում է, որ զանգվածային ու հասարակական իրադարձություններին միջամտության պլանավորման ու գործողությունների առումով արձանագրության վերացմամբ ոչ մի փոփոխություն չի կատարվել, և զինվորականությունն իր այդ պարտականությունները շարունա-

[1] Turkey 2009 Progress Report, Brussels, 14.10.2009, p. 10-11, http://www.abgs.gov.tr/files/AB_Iliskileri/Tur_En_Realitons/Progress/turkey_progress_report_2009.pdf

[2] EMASYA Protokolü kaldırıldı, *Hürriyet*, 04.02.2010. Արձանագրությունն ստորագրվել է 1997թ. ՁՈՒ ԳՇ-ի և ՆԳՆ-ի միջև և լիազորում էր ՁՈՒ-ին միջամտել քաղաքական կյանքին, իրականացնել ներքաղաքական հետախուզական գործողություններ: Տե՛ս Erdoğan vows to abolish EMASYA protocol, revise security priorities, *Today's Zaman,* 01.02.2010. Նշենք նաև, որ արձանագրությունն ստորագրվել է 1997թ. փետրվարի 28-ի հայտնի իրադարձություններից հետո, երբ ՁՈՒ բարձրագույն հրամանատարության վերջնագրի արդյունքում հրաժարական տվեց իսլամիստական «Բարօրություն» *(Refah)* կուսակցության կառավարությունը՝ վարչապետ Ն.Էրբաքանի գլխավորությամբ: Ի դեպ, ժամանակին այդ արձանագրությունն ստորագրել է Առաջին բանակի հրամանատար Չ.Դողանը, որը ներկայումս *Balyoz* հեղաշրջման պլանի գործով թիվ 1 մեղադրյալն է: Տե՛ս EMASYA hakkında herşey, *Yeni Şafak,* 25.01.2010.

[3] Darbenin adı Balyoz, *Taraf,* 20.01.2010.

կելու է գործադրել նահանգային կառավարման մասին օրենքի ու ԶՈՒ գլխավոր շտաբի հրամանների համաձայն[1]: Իր հարցազրույցներից մեկում գլխավոր շտաբի պետ Ի.Բաշբուղը իրենց (զինվորականության) համար ոչ էական էր համարել այդ արձանագրության վերացումը՝ փաստելով, որ զինվորականության համար դեռևս առկա են նման միջամտության լիազորություններ: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ բանակի հրամանատարության ու քաղաքական իշխանությունների միջև սկսված դիմակայության պայմաններում զինվորականությունը հեշտությամբ չի ցանկանում վայր դնել ունեցած լայն լիազորությունները և վերադառնալ զորանոցներ:

3. Բանակ - քաղաքականություն փոխհարաբերությունների շուրջ

Չնայած ԱԱԽ-ին վերաբերող օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներին, թուրքական զինվորական վերնախավը շարունակում է լուրջ ազդեցություն պահպանել: ԵՄ-ը դրական է գնահատում արված աշխատանքը, բայց, այնուամենայնիվ, հատուկ նշանակություն է տալիս մտցված փոփոխությունների գործնական կիրառմանը, բանակի և քաղաքական գործիչների հարաբերությունների կարգավորմանը և դրանց ժողովրդավարական բնույթ հաղորդելուն:

Ներքին և արտաքին քաղաքականության որոշման, տարածաշրջանային խնդիրներում երկրի դիրքորոշումների որոշակիացման հետ կապված հարցերն ավանդաբար գտնվել են ոչ թե քաղաքական, այլ զինվորական վերնախավի իրավասության ներքո: Եվ մի շարք խնդիրների առկայությունը, որոնք սպայակույտը դիտարկում է որպես սպառնալիք Թուրքիայի համար, թույլ չի տա նրան թողնել թուրքական քաղաքականության առաջավոր գիծը և «ստվերի» տակ անցնել: Բացի այդ, իսլամամետ Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության գալուց հետո քաղաքական և զինվորական վերնախավերի միջև բավական լարված հարաբերություններ են հաստատվել, ինչի մասին կարող են վկայել բազմիցս հնչեցված մեղադրանքներն Էրդողանի կառավարության հասցեին՝ երկրում ռեակցիոն տրամադրությունների աճի առումով, ինչպես նաև զգոն լինելու նախազգուշացումներն ու հորդորները: Այսպես, 2007թ. Թուրքիայի ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ Յաշար Բյույուքանըթը հանդես եկավ կոշտ և կտրուկ հայտարարությամբ և նախազգուշացրեց երկրում գլուխ բարձրացնող ընդվզման և դրան ամեն գնով խոչընդոտելու անհրաժեշտության մասին[2]: Սպայակույտի ներկայացուցիչները և հատկապես ԶՈՒ Գլխավոր շտաբի պետը խիստ կտրուկ արձագանքեցին քաղաքական գործընթացներին զինվորականների միջամտության մասին ԵՄ հայտարա-

[1] Askerden şok EMASYA kararı, Bugün, 16.04.2010.
[2] Տե՛ս http://www.aa.com.tr, 02.10.2006

ությունների: Նրանք ընդգծում էին, որ պաշտպանում են Եվրամիությանը Թուրքիայի անդամակցությանն ուղղված ջանքերը, սակայն բանակը պետք է վճռական ձայնի իրավունք ունենա ազգային անվտանգության և պետության աշխարհիկ կարգի պահպանման հարցերում: Թուրքիայի «ազգային անվտանգության մասին քաղաքական փաստաթղթում» սպայակույտն ամրագրեց թեզիսն այն մասին, որ կարվի ամեն ինչ երկրում հետադիմական տրամադրությունների աճը կանխելու համար[1]: Բարձրագույն սպայակազմի այսօրինակ հայտարարությունները ԵՄ-ը գնահատեց որպես զինվորական շրջանակների ուղղակի միջամտություն քաղաքական կյանքին: Թուրքական սպայակույտի արձագանքն ավելի քան կտրուկ էր: Թուրքիայի ռազմածովային ուժերի հրամանատար Ներ Քարահանօղլուն, 2006թ. հոկտեմբերին ելույթ ունենալով Թուզլի ռազմական դպրոցում, հայտարարեց, որ «թուրքական զինված ուժերը, որոնք հատուկ դեր են խաղում երկրի արդիականացման գործում, երբեք չեն զիջի ԵՄ-ին»: Նա նշեց նաև, որ բանակը ոչ մի կերպ չի հրաժարվի այդ դերից հանուն այն բանի, որ Թուրքիան ԵՄ մտնի[2]: Որոշ հեղինակավոր լրատվամիջոցներ զինվորականների նման հայտարարությունները Եվրամիությանը Թուրքիայի կողմից նետված մարտահրավեր անվանեցին և նշեցին, որ սպայակույտի միջամտությունը քաղաքական գործերին բացասաբար կանդրադառնա եվրոպական այդ կազմակերպությանն անդամակցելուն ուղղված թուրքական կողմի ջանքերի վրա[3]:

Ըստ էության, անվտանգության և բանակի ու քաղաքական իշխանության հարաբերությունների ոլորտներում ձեռնարկված փոփոխությունները, ավելի կամ պակաս չափով դրանց համապատասխանեցումը ԵՄ չափանիշներին չվերացրին զինվորականների ազդեցությունը քաղաքական գործընթացներում:

Զինվորականների և քաղաքական իշխանության փոխհարաբերությունների ներկա փուլում որոշակի երկվություն է նկատվում: Թուրքական սպայակույտը քեմալականության գաղափարակիրն է, որի համաձայն՝ Թուրքիայի՝ որպես արևմտյան տիպի աշխարհիկ պետության, տեղը Եվրոպայում է: Այս առումով ԵՄ-ին երկրի անդամակցության գործընթացը լրիվ տեղավորվում է քեմալական գաղափարախոսության շրջանակներում: Թուրք զինվորականները հիանալի հասկանում են, որ այդ պարագայում կպակասեցվեն բանակի իրավասությունները: Սակայն բանն այն է, որ զինվորական վերնախավը մեծ կասկածանքով է վերաբերվում ներկայիս իշխանություններին և չի ուզում թողնել քաղաքական ասպարեզը, հատկապես այն պայմաններում, երբ երկրում սուր է դրված Քրդական հարցը, տարածաշրջանում կարող են տեղի ունենալ անկանխատեսելի իրադարձություններ, որոնք կշոշափեն Թուրքիայի

[1] Տե՛ս Turkish army rejects EU criticism of political meddling, http://www.turkishpress.com, 02.10.2006
[2] Տե՛ս Turkish General Challenged the EU; http://www.turkishweekley.net, 03.10.2006.
[3] Տե՛ս http://www.ankaajansi.com, 28.09.2006; http://www.turkishweekley.net, 30.09.2006.

ազգային անվտանգության շահերը:

2009թ. ապրիլին ելույթ ունենալով Ստամբուլի ռազմական ակադեմիայում՝ Թուրքիայի ԶՈՒ Գլխավոր շտաբի ներկայիս պետ Ի. Բաշբուղը հիմնական շեշտադրումները կատարեց այն հարցերի վրա, որոնք առնչվում էին բանակի ու կառավարության հարաբերություններին, ահաբեկչության դեմ պայքարին, ինչպես նաև կյանքի աշխարհիկ դրվածքին: Նա, մասնավորապես, նշեց, որ կառավարությունը պետք է լսի բանակի խորհուրդները և հաշվի նստի նրա հետ, հակառակ պարագայում քաղաքական գործիչները պատասխանատվություն կկրեն անհաջողությունների համար[1]:

Բարձրաստիճան զինվորականը հերթական անգամ հասկացրեց, որ բանակի բարձրագույն հրամանատարությունն ուշադիր հետևում է ներքաղաքական գործընթացներին, և կառավարությունը պետք է հաշվի առնի դա: Թեև Թուրքիայում բարեփոխումներ իրականացվել են, դրանք, այնուամենայնիվ, դեռ լիարժեք չեն ապահովում անվտանգության մարմինների և զինված ուժերի հանդեպ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների ստեղծումը, և զինվորական շրջանակները, ինչպես և առաջ, միջամտում են երկրի հասարակական-քաղաքական կյանքին:

Ընդհանուր առմամբ, իշխող Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման տարիներին անվտանգության ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սահմանման բավական լուրջ քայլեր իրականացվեցին, որոնք աննախադեպ էին հանրապետական Թուրքիայի ողջ պատմության մեջ: Նույնիսկ ոչ վաղ անցյալում հնարավոր չէր պատկերացնել, որ ինչ-որ կերպ, այն էլ իսլամիստական ուղղվածության քաղաքական որևէ կուսակցություն, կարող է այդքան ամուր պահել իշխանությունն իր ձեռքում և աստիճանաբար հաշվեհարդար տեսնել բարձրագույն սպայակազմի հետ: Թե ինչով էր ավարտվում Թուրքիայում զինվորականության հասցեին կամ քեմալիզմի գաղափարախոսության ու արժեհամակարգի դեմ արված որևէ հայտարարություն, առավել ևս՝ բարձրաստիճան զինվորականի ձերբակալության անգամ փորձն իշխանությունների կողմից, հայտնի է ոչ վաղ անցյալից. 1998թ. Էրդողանն իր իսկ կրոնական մոլեռանդ հայտարարությունների համար պետանվտանգության դատարանի կողմից դատապարտվեց և 4 ամիս պատիժ կրեց բանտում:

Թուրքիայում ներկայումս շարունակվում է երկու բևեռների դիմակայությունը, ինչը նաև երկու տարբեր արժեհամակարգերի բախման հետևանք է: Թե ինչով կավարտվի դա, դժվար է ասել, սակայն բարձրագույն զինվորականությունն ինքն էլ հասկանում է, որ փոխակերպվող աշխարհում և դեպի եվրոպական արժեհամակարգ ձգտող Թուրքիայում իր դիրքերն աստիճանաբար պետք է վերանայվեն:

[1] Տե՛ս Başbuğ'dan çok kritik açıklamalar, http://www.haber3.com, 14.04.2009.

ԱԱԽ բարեփոխումների շրջանակում նվազագույնի է հասցվել զինվորականության դերակատարությունն այդ մարմնում, ինչի մասին արդեն իսկ հստակ նշում են թուրք վերլուծաբաններն ու մամուլը: Սակայն իրականում զինված ուժերը ներքին անվտանգության բնագավառում դեռ լուրջ դիրքեր ունեն, ինչը հնարավորություն է տալիս նաև որոշ առումներով ազդեցություն ունենալ ներքաղաքական հարցերում [12]: ԱԱԽ-ի հետ կապված բարեփոխումներից հետո ներկայումս օրակարգային խնդիր է ողջ ռազմական-անվտանգության համակարգի բարեփոխումների իրականացումը, որով նախատեսվում է մեծացնել քաղաքացիական վերահսկողությունը. ներքին անվտանգության մարմինների ու ծառայությունների, ռազմական բյուջեի ու ծախսերի թափանցիկություն և վերահսկելիություն, ռազմական դատական համակարգի վերափոխումներ, բարձրաստիճան զինվորականների պատասխանատվության նոր մեխանիզմներ և այլն: Այս ամենը լայնամասշտաբ բարեփոխումների փաթեթ է, ինչը նախատեսում է հաստատել ժողովրդավարական վերահսկման մեխանիզմներ անվտանգային-ռազմական համակարգի նկատմամբ և երկրի ներսում ձևավորել հավասարակշռություն անվտանգության ու ժողովրդավարության միջև [13]:

Այսպիսով, գլխավոր և առավել վիճելի հարցն է մնում մտցված փոփոխությունների գործնական կիրառությունը, ինչը ներկա պայմաններում բավական դժվարամարս կլինի, հատկապես եթե հաշվի առնենք Թուրքիայի ներքաղաքական իրավիճակը, միջազգային և տարածաշրջանային հիմնախնդիրները, որոնց հանդեպ զինվորականներն ավելի կոշտ դիրքորոշում ունեն, քան երկրի քաղաքական իշխանությունները:

Ապրիլ, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Barak Salmoni*, Turkey·s Summer 2003 Legislative Reforms: EU Avalanche, Civil-Military Revolution, or Islamist Assertion?, Strategic Insight, Vol.3, issue 9 (Sept. 2003), http://www.ccc.nps.navy.mil
2. *Justus Leicht*, Turkey: Reform limits some military powers; http://www.wsws. org / articles/2003/aug2003/turk-a19.shtml
3. *Bertil V. Knudsen*, The role of the military in Turkish politics, Copenhagen Un., Jan. 2005, http://www.videt.dk/miliduty.pdf
4. Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, Tesev Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın -2006, www.tesev.org.tr
5. *Удо Штайнбах*, История Турции, М., 2006.
6. *Mehmet Ali Birand*, Shirts of Steel, An Anatomy of the Turkish Armed Forces. London-New York, 1991.
7. *Ersel Aydinli, Nihat Ali Özcan, Doğan Akyaz*, The Turkish Military's March Toward Europe, *Foreign Affairs*, January/February 2006, http://www.foreignaffairs.

org/20060101faessay85108/ersel-aydinli-nihat-ali-ozcan-dogan-akyaz/the-turkish-military-s-march-toward-europe.html
8. *Soner Çagaptay*, European Union Reforms Diminish the Role of the Turkish Military: Ankara Knocking on Brussels' Door, The Washington Institute of Near East Policy, PolicyWatch#781, August 12, 2003, http://www.ciaonet.org/pbei/winep/policy_2003/2003_781.html. http://www.hri.org/news/turkey/trkpr/2003/ 03-06-06.trkpr.html#07
9. *Dr. Sanem Baykal*, Turkey-EU Relations in the Aftermath of the Helsinki summit: An Analysis of Copenhagen Political Criteria in Light of the Accesion Partnership, National program and the Regular Reports, Ankara Review of European Studies, vol. 2, No3, 2002.
10. Türkiye Cumhuriyeti Anayasası, Yasa Kitapları Dizisi:1, İnstanbul, 2003.
11. *А.Гурьев*, Новая концепция национальной безопасности Турции. http://www.noravank.am, 2005-11-17.
12. *Sarıibrahimoğlu L.,* Central role of Turkey's National Security Council fades away, Today's Zaman, 01.12.2008; *նույնի* Turkish Almanac Promotes Security Sector Reform, Eurasia Daily Monitor Volume: 6 Issue: 137, July 17, 2009, The Jamestown Foundation.
13. *Davutoğlu A.,* Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, Insight Turkey Vol. 10, No. 1, 2008, pp. 77-96.

РЕФОРМЫ СОВЕТА НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ ТУРЦИИ В КОНТЕКСТЕ ЕЕ ПОЛИТИКИ ПО ЕВРОИНТЕГРАЦИИ

Левон Овсепян

Резюме

В аспекте реформ, осуществляемых в контексте членства в ЕС, наиболее чувствительно протекает реформирование сферы военной и национальной безопасности страны, нацеленное на ограничение роли военных в различных общественно-политических сферах и установление демократического контроля над областью безопасности. С точки зрения законодательных и структурных реформ, наиболее важные и существенные подвижки были зафиксированы в самом влиятельном органе военно-политической сферы данной страны – СНБ. Несмотря на законодательные и структурные реформы, имеющие отношение к СНБ, турецкая военная элита все еще сохраняет за собой ведущие позиции во внутри- и внешнеполитической сфере.

Հուշագիր հեղինակին

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր (հոդվածի լեզվով) և ամփոփագիր (բնագրից տարբեր լեզուներով):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝

   1. *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   2. *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 17.06.2010թ.
Թիվ 3 (31), 2010թ.
Տպաքանակը՝ 300:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում